



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



4178

4179

4180

4181

4182

4183

9(47.925)

U-33

Franklin 38

200

Printed in Turkey

ԿԱՆՈՆԱԴԻՈՐ ԵՒ ՎԱՅԵԼՈՒԶ

## ԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՈՒ ՏԵՍՈՒԹԵԱՆ:

ԾՐԸԳՐԸԿՅՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ,

Հանգերձ զանազան ծանօթութիւններով, յաւելուածներով և  
գրասեղանների ու անատոմիկական ստուերագրերով,

Մ. Մ. ՄԻԱՆՍԵՐԵԱՆՑ:

Էն բանն արժ, վուր Աստուծու շարքումն է,  
Խըսամնիրն գըրած «Հարանց վարդումն» է,  
Երիբ բան կայ—հօքու մարմնու կարգումն է,  
Գիբ սիբ է, զալամ սիբ է, դաւթ ար սիբ է:



Ա-ՊԵՏԵՐԲՐԱԴՐՎ:

Գուգինի տպարանում, հեղինակի տառերով տպած:

1872.



ԻՄ ԸՄՈՒՄԻՇ

# ՇՈՒՇԱՆ ԱԳԱԹՈՆԵԱՆԻՆ

ԵՒ

ԶԱՏՎԱԿԱՆԵՐԻՍ

ԵԳԻՍԱՎԱԲԵՐԻՆ (Ճն.  $\frac{6}{18}$  գեկտեմբերի 1865) ու

ԱՐԱՄԻՆ (Ճն.  $\frac{20}{3}$  փետրվարի 1868)

Ն Ո Ւ Ե Բ :

Յունիսի 22  
Յուլիսի 4, 1872 թ.:

Ա. ԳԵԿՏԵՄԲԵՐՈՒՐԴ:

12918

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵ

45

ԽՈՎՃԱԿԱՐԱՔ

ՀԱՅ (6081 Հայութական 32 .86) ԺՈՂՈՎՐԴՈՒՅՑ

(8081 Հայութական 32 .86) ԺԴՄՄԴ

1949.0.0.0

6643.57

8

ՀԱՅ (6081 Հայութական 32 .86)

ԺՈՂՈՎՐԴՈՒՅՑ

ԿԱՆՈՒՆԵՏՈՐ եւ ՎԱՅԵԼՈՒՀ ԳԻՐՈՒԹԵՍՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ, ՆՈՐԸ ՊԱՏ-  
ՄՈՒԹԻՒՆԸ, ԶԱՐԴԱՐՈՒՄԸ<sup>1</sup>, ՊԱՀԱՎԱՐՈՒՔԸ, ԱՇԱԽԱԿՈՒԹԻՒՆԸ,  
ՈՒՍՈՒՑՄԱՆԵԼՈՒ (ԴԱՍԱՌՈՒԹԵՍՆ) ԵՊԵԿԱԿԱՆԵՐԸ եւ ԵԶՔՄԵՍՆ  
ՎԻՃԵԿԻ:

## § I.

Ազգային առարկերից ամենահզորը եւ կենդանա-  
պահը լեզուն է:

Ամենայն չարիք մասնեն ի միտու մարդոց յանու-  
առնութենէ: Կոյր զրկի՝ ի ճառագայթից արեգա-  
կան՝ եւ ազիտութիւն զրկի՝ ի կառարեալ կենաց:  
Լաւ է կոյր աչօք քան կոյր մօօք: Արագէս մեծ  
է հոգի քան զմարդին, այնպէս մեծ է ահսաւորու-  
թիւն մոաց քան զմարմնոց:

Կանոնաւոր և վայելուշ գրութիւնը<sup>2</sup> գիտութիւն է և  
ուշ արշեստ միայն, և, — ինչպէս միւս գիտութեանց Ճիւղ և

<sup>1</sup> Օարգացումն, յման—առաջ գալը, աճիլը, հասուն  
բերք (փարբեկ սերմից բհամ է գալիս, աճում է, զարգանում  
է բյուր; մեծանում է, տալիս ծաղիկ, պատուղ); զարգացուն—  
զարգացած, մեծացած; զարգացուցանեմ, ցուցի—մեծացնել  
առաջ տանել; զարգանալ (զարգանամ, ացայ)—առաջ գնալ,  
աճիլ, մեծանալ; développer, avancer, faire faire des progrès, agran-  
dir, accroître, se développer, prendre des accroissements; развиtie,  
развиваться; die Entwicklung, entwickeln, sich entwickeln. <sup>2</sup> Համարհա-  
րան գործ են ածում «Խելքը հասած», որ մօտ է զար-  
գացած բառին; բայց «զարգացած» նշանակում է առանել  
կատարեալ, բազմակողմեան հասուն, բացուած խելք և գա-  
տողութիւն ունեցող անձն:

<sup>2</sup> Վեր մէջ բնդունված է ասել. «վայելչ ագրութիւն»,  
այսինքն վայելուշ գրութիւն; «գեղագրութիւն», այսինքն

մարդկային սկզբնական լուսաւորութեան մի մասը —, արժանի է առաւել մեծ ուշադրութեան և կանոնաւոր ուսման, քան թէ որչափ մինչեւ այժմս մերայնոց մէջ եղել է:

Կանոնաւոր և վայելուչ գրութիւնը,—որպէս և մարդկային այլ գիտութիւնները—, ունի. 1) իւր պատմութիւնը և 2) իւր տեսականութիւնը կամ կանոնները<sup>1</sup>:

Պատմութիւնը ցոյց է տալիս սորա սկզբից մինչեւ այժմս աստիճան առ աստիճան զարգանալը, այսինքն, ինչ հայեցուած են ունեցել սկզբից այս գիտութեան վերայ, ինչպէս են սորան աւանդել և նախկին թէ հայեցուածները և թէ ուսուցանելու կերպերը և ձեւերը ի՞նչ և ո՞րպիսի փոփոխութեանց են ենթագրուել: Տեսականութիւնը պարունակում է իւրեան մէջ գիտութեան այժմեան գրութիւնը, այսինքն, ցոյց է տալիս կանոնաւոր և վայելուչ գրութեան բոլոր հիմնական կանոններն, ձեւերն և պահանջմունքներն; գասատուութեան կերպն և միջոցներն, —յարմարացնելով այս ամենը մարդկային կազմուածքի բնական կանոններին:

Վեր մէջ կանոնաւոր և վայելուչ գրութիւնը, մինչեւ այժմըս, եղել է և կայ իւրեւ արհեստ և ո՞չ որպէս գիտութիւն; ինչպէս գիտութիւն — պատմութեան և տեսականութեան աղբիւրներ չունի, իսկ որպէս արհեստ — զանազան գարերու և զանազան ձեռագիր մատեաններից, կոնգակներից և նամակագրութիւններից կարելի է ստորագրել, թէ ո՞ր գարում և ո՞ր

---

գեղեցիկ գրութիւն; բայց որովհետեւ գրութիւնը պիտի լինի, —նախ և առաջ —, կանոնաւոր —, որ և իցէ համապատշաճ կանոնի և հաշուի վերայ հիմնուած —, յայտնի, պարզ և յետոյ գեղեցիկ, այս պատճառաւ մենք ընդունեցինք, քանի մի գերմանական հեղինակներին հետևելով, «կանոնաւոր եւ վայելուչ գրութիւն» կօչումը գործ ածել:

<sup>1</sup> Տեսականն, տեսականութիւն; la théorie; теория; der Lehrsatz, die Theorie. Ալ արդապետութիւն, le dogme, догма.

սեղ որպիսի գրութեան ձևեր են գործ ածել; ո՞րպիսի գրուածոց մէջ ո՞րպիսի ծաղկազարդ և այլ գրուակներով պճնած տառեր են գործ գրել; այժմն ևս ո՞րպիսի գրութեանց ձեւեր<sup>1</sup> են գործ ածում, առհասարակ, մերազնեայք, թէ իւրեանց բուն հայրենեաց մէջ կեցողները և թէ տիեզերքի զանազան կողմերը ցրուած բնակեալները....<sup>2</sup>

Ամիսոս քեզ Հայոց Խեղճիկ ժողովուրդ,  
Յիրուցան ելաք անմեղ, անխորհուրդ:

Մասիսի անունն, Կրյայ տապանի,  
Արարատ դաշտի, սուրբ Խջմիածնի,  
Մեր Խոր-Ա իրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,  
Չմոռանաք մինչ ի օրն դատաստանի:

Հայց և այսպիսի պարագայից ստորագրութիւնը ունենալը շատ ցանկալի է և հետաքրքրական, որովհետեւ մեր նախնիք ներից շատերը մեծ ջանք են դրել մինչև անգամ թագաւորներն և մեծամեծ երեւելի իշխաններն պարագել են այսպիսի աշխատանօք, — օրինակելով սուրբ աւետարանը և այլ աստուածաբանական և պատմաբանական ձեռագիրներ, — և մեծ վարձ են տուել թէ լաւ ձեռագիր ունեցող գպիրներին և թէ ձեռագիր մատեաններ գնելու:

Չը մոռանանք, որ, հինգերորդ դարուց սկսած մինչեւ, համարեա թէ, 18-երորդ դարու վերջերը, հայերը, չունենալով գործնական կերպիւ հասարակաց, ընդհանուր ժողովրդի օդակն և պիտոյից նուիրած և յարմարացրած ազգային տպագրութիւն<sup>3</sup>, պիտոյ էր որ ձեռագրովք բաւականանային:

<sup>1</sup> L'écriture, la main; почеркъ; die Handschrift, Hand; *աշխարհաբառական* «ձեռքը», *այսինքն գրութեան ձևը*:

<sup>2</sup> Այս հարցի մասին քանի մի տեղեկութիւնք, մեր կարեցածին շափ, յիշել ենք այս շաբադրութեան մէջ, ցոյց տալով այն աղբիւրները, որոնցից օգուտ ենք քաղել:

<sup>3</sup> Թէպէտ հայ տպագրութիւնը սկսաւ. 1565 թ., Հայութիւնը.

ւին գարերից սկսած մինչև Պետալօցքի՝ ժամանակը այս  
գիտութեան գասատուութեան եղանակը<sup>1</sup> մեքենայական<sup>2</sup> էր:  
Ամեն մի աշակերտի<sup>3</sup> տետրակը<sup>4</sup> խազում<sup>5</sup> էին հա-

և Ա ենետիկ, Արդար դպրի Թուխաթցւոյ (Տօղատցւոյ, Եւ-  
դոկիայ), Հեղինակութեամբ, որ տպագրեց Սաղմոս—, որը հայ  
տպագրութեան անգրանիկը կը համարուի և օրինակը կայ  
Միլանու մեծ գրատանը; 1567, Ա.-Պօլիս, նոյն Արդարի  
աշխատութեամբ; 1584, Հռոմ, Պրուպանդանդայի (Տարածման  
հաւատոյ ժողով) տպարանը, Typis Sacrae Congregatio de Pro-  
paganda Fide; 1616, Լէմբէրգ (Լավ, Իլով, Խօսպա, Լէօ-  
պօլիս), Գալլցիայում, Ալստրիպի Լէհաստանում; 1624,  
Միլան, Հիւսիսային Խտալիայում; 1633, Փարիզ, Գաղղայի  
(Փրանսայի) մայրաքաղաքում; 1640, Կոր-Պուզա, Խապա-  
հան քաղաքին կից, Պարսկաստանում; 1660, Ամստերդամ  
(Ամստէրդամ), Հօլլանդիայում, Վատաթէու գրագրի, Ռսկան  
վարդապետի և նորա եղաքյը Աւետիս վաճառականի աշխատա-  
նօք; 1673, Վարսէլ Գալլցիայի հարաւային կողմը, Մի-  
ջերկրական ծովի եղերքում, Պրօվանս գաւառում; 1680,  
Լէյպցիգ, Պակսօնիա, Գերմանիայում; 1690, Պաղուա,  
Հիւսիսային Խտալիայում, Ա ենետիկից գէպ ի արևմուտք;  
1713, Կալկաթա և Վաղրաս, Հնդկաստան; 1715, Կրիկն  
Ա ենետիկ, Հայոց ազգի համար միշտ անմուանալի և բազ-  
մերտիստ Մինիթար Աբրաստացւոյ ջանիք; 1770, ի սուրբի  
Լշմիածին; 1776, Տրիեստ և յետոյ Ա իննեա, երբ որ, Ա ե-  
նետիկ աբբայ Ատեփանոս Վելլգումեանցի օրօքն, միաբանու-

<sup>1</sup> ՈՃ, կանոն, կարգ, եղանակ, սոլորութիւն, պայման,  
Հնարք; метода; la méthode; die Methode, Versfahrungart.

<sup>2</sup> Mécanique; механический; mechanisch.

<sup>3</sup> Աշակերտ, աշկերտ; աշակերտաբար, աշկերտօրէն, աշ-  
կերտի պէս; աշակերտակից, գասընկեր; աշակերտանոց, աշ-  
կերտարան, գպրոց; աշակերտել, աշկերտ անել սովորցնել;  
աշակերտութիւն, աշկերտութիւն; աշակերտուչի, կնիկ աշկերտ;  
հաւատացեալ:

<sup>4</sup> Le cahier; тетрадь; das Heft.

<sup>5</sup> Ligner; линовать; գիծ բաշել, խազել, դժել; liniren, Linien  
ziehen.

սարակ խազերով; Խազերի սկիզբն ուսուցիչը<sup>1</sup> գրումը սառակը, — այլքենական կարգաւ, — և աշակերտը, միայն նայելով ուսուցչի գրած օրինակին, պիտի աշխատէր մեքենայաբար օրինակել, կամ, առաւել ճիշգ ասել, դուրս նկարել նոյն տառերը այնքան ժամանակ, մինչև որ կարողանար փոքր իշտառէ յարմարացնել ուսուցչի գրած օրինակին:

թեան մի մասը հարկադրուեցաւ բաժանուիլ և ընտրել Տրենուագագում այլ արբայ, չ. Աստուածատուր Բարիկին; 1780, Սանկտ.Պետերուրգ, Առուսաստանի թագաւորանիստ մայրաքաղաքը, Գրիգոր Խաղաքարեանց Կոր-Պուղայեցւոյ աշխատութեամբ; 1790, Կոր-Կախիջեան, Գան գետի վերայ, Կաղանեների երկիրը, Առուսաստան, Յովսեփ արքեպիսկոպոս Ռողութեանցի աշխատութեամբ, Պետերբուրգոց տարած; 1793, Եշտարիսան, Աօգա գետի և Կասպից (Արկանայ) ծովի եզերքը, Առուսաստան, Կոր-Կախիջեանից տարած նոյն եափոկութիւնի հրամանաւ; 1830 թ. Մոսկով, Լազարեանց ինքսութիւնի տարած տպարանը, վերյշիշեալ և Անեսկոյ և Այնայի Վիսիթարեանց տպարաններից տարած տառերով; այս տպարանը, նորերումն, մօտ 1869 թ., Բարստ վերատեսչի ժամանակը, բոլորովին փակուեցաւ և մայրերը վաճառուեցան; այժմն Վոսկվա միմիայն կայսերական համալսարանի տպարանը ունի հայտ տառեր; 1822, Թիֆլիս, Կերոնեան ազգային և հոգեոր գաղրոցին ի Գեորգայ Ռոծրունոյ ընծայեալ Ամստերդամի տպարանի մի մասը; 1826, Շուշի, Աինեիք

<sup>1</sup> Ասուցանել, սորվեցնել, սովորցնել; ուսուցանող, ուսուցող, ուսուցիչ, սովորցնող, վարժապետ, վարպետ, վարդապետ; ուսուցանողութիւն, վարժապետութիւն; ուսուցչութիւն, ուսմունք; ուսուցում, սորվեցնելը, սովորցընելը, խրատ տալը; ուսուցչապետական, վարդապետական; ուսուցչապետութիւն, վարժապետութիւն, վարդապետութիւն; ուսումն (աման), սորվելը, զիտութիւն; 2) տեղեկութիւն, սովորութիւն, վարդապետութիւն; 3) կարգ, կանոն; ուսումնական, ուսման տեղեակ, կամ պատշաճ; Ուսումնական, ուսումնուածք, մատեմատիկա, ուսումնականութիւն; Ուսումնակից, մէկ տեղ սորված, գասակից, աշակերտակից;....

Այսպիսի նահագետական դրութեան մէջ,—կամ, որ միեւնոյնն է, դրել ուսանելիս միմիայն մեքենայաբար օրինակել առաջի գրած օրինակը,—գտանվում էր և կայ մինչև այս օր ևս վայելուչ և կանոնաւոր դրութեան դասատուութիւնը մեր մէջ։ Այն օրինակ գասատուութեան ձեր, զուրկ լինելով գատարակական հիմնական կանոններից…, ամենամեծ գժուարութիւնք է պատճառում ուսանողներին<sup>1</sup>։ Նոցա ամենափոքր մասը

(Ղարաբաղ), և այլ զանազան տեղերը զանազան ժամանակներում, զորօրինակ, Փարիզ, քանիցս անգամ, Ա.-Պօլիս, զանազան տպարաններ, Օմիւնիսա, Երուսաղէմ, Վահհիրէ, Ա ան, Ծաւողոսիա, Տիֆլիս, Բաքու և այլն… — բայց, մինչև այս գարուայ սկիզբը, նցն տպարանների մէջ տպած գրեանքը եղել են, մեծ մասամբ, եկեղեցական կամ պատմնաբան գրեանք, որոնք ժողովրդեան մէջ շատ փոքր են եղել տարածուած; կարելի է ասել որ մինչև այժմն էլ զանազան գիտութեանց վերաբերեալ կանոնաւոր և գիտութեան այժմեան գրութեան համապատասխան հայ գրքերի պահանութիւնից, մեր գալրոցների աշակերտաները, մինչև ուսուցիչները եւս. շատ և շատ ի զուր ժամանակ են կորուսանում, օրինակելով ձեռագրերից կամ գիմելով օտար լեզուաւ գրած աղբիւրներին։

Միւս կողմանէ այս էլ պիտի կրկնենք, որ այն որ և իցէ պիտանիութիւն և արժանաւորութիւն ունեցող տպագրութիւնքը, որոնք երեսումն զանազան, միմանցից հետո հայարնակ քաղաքների մէջ, զոր Ծափլիս, Ա.-Պօլիս, Ամիրնա (Օմիւնի), Երուսաղէմ, Ա իննաս, Ա ենեաիկ. . . . , որ այնպիսի գրեանքն էլ գժուարութեամբ են տարածվում; ազգի ամենագլխաւոր մասը, իսկ հետու, կամօտար, միւս տէրութեան մէջ բնակեալներից կարգացող մասը մինչև, նոցա լինելը չգիտէ; գիտցողքն էլ ամենամեծ գժուարութիւններով են կարողանում նոցա ձեռք բերելը, որովհետեւ մեր մէջ մինչև այժմն օրինաւոր

<sup>1</sup> Ուսող, ուսանող, սորվող, աշկերտ; Զ մատեմատիկոս: Ուսանիլ, սորվիլ, սովորիլ, սովորիլ; ուսած, սորված: Ուս, ուսք: Ուսանոց, վակաս: Ուսանոցակ, ուսի ծածկոց, ուսափակեղ: Ուսընդանութ — մէկ ուսէն մինչև միւս ուսին տակը:

կարողանում է, զինի բազմաժամանակեայ աշխատութիւնից, փոքր ի շատէ յարմար, նշմարելի և գեղեցիկ գրութեան ձեին ընտելանալ: Այս է ևս պատճառը այն արգասեաց<sup>1</sup>, որ, մերայնոց մէջ, հաղարւոր գրել գիտցողներից, հազիւթէ մի քանիսը կարողացել են գեղեցիկ և պարզ արագ գրել:

Վեր մէջ կայ այլ ևս պատճառ գրութեան անորոշութեանը, խառն լինելուն, այն է. նոյն իսկ գործածական

գրավաճառութիւն չկայ և, բաց ի մի քանի քաղաքներից, մէնչև անգամ հայ գրավաճառներ չկան: Ատիպողական, մասնու եւ կեանքի հարցի պէս ստիպողական պիտոյք կայ, որ այսպիսի արգելքները և գժուարութիւնները որքան կարելի է ոչնչացնել:

Որ բալոր հայոց ազգը գիտենայ թէ ինչ գրեանք կայ մեր մէջ, պէտք է, որ. 1) Առւաստան և (Օսմանեան պետութեան մէջ եղած ամենատարածեալ հայ լրագիրները, ժամանակ առ ժամանակ, օրինակի համար, տարին երեք կամ չորս անգամ, հաշիւ տային ամեն մի նոր տպագրութեանց մասին, իսկ մասնաւոր առարկաների բանիմաց վարժապետները անաշառ ըներդական հաստուածներ տպէին բոլոր եղած սկզբունքների վերայ, ցոյց տալով նոցա պարունակութիւնը, արժանաւորութիւնը և թերութիւնքը, 2) գրքի ձականագիրը, գիրքը, էջերի որքանութիւնը, տպագրութեան տեղը, ժամանակը, գինը, անպատճառ, լուրջն և կոպէկ, մէջիս և զուրուշ ֆրանկ և սանախիմ, որ հասկանալի լինի թէ սուսաստանցի, թէ օսմանեան կայսերութեան և թէ, առհասարակ, եւրոպաբնակ հայոց: Այսպիսի միջոցներով ազգը կարօղ է գիտենալ թէ ինչ և որպիսի նիւթ կայ հայ լեզուաւ ժողովրդեան թէ գաստիարակելու և թէ կարդալու համար: Գլխաւորապէս ստիպողական հարկաւորութիւն կայ մի ընդհանուր գրացուցակի բոլոր հայ տպագրութեան, որոյ հաւաքմանը մենք շատ տարի է որ նուիրել ենք մեր ուշագրութիւնը: Զանկալի էր, որ այսպիսի մի աշխատանքի ձեռնամուխ լինէր նաևս որ և իցէ հայ գպրութիւնք; le fait; факть; das Factum, die Thatsache.

<sup>1</sup> Արգիւնք, գործ, իրք, գէպք, գիտուած, հանգամանք իրաց:

տառերի անորոշութիւնը, ամեն մի առանձին դասու տառերի հիմնական խաղերի մէջ շափ և համաչափութիւն<sup>1</sup> չպահպանելը:

Մինչև Պետալօցցի<sup>2</sup> ի ժամանակը և նորանից շատ յետոյ տպած վայելուչ և կանոնաւոր գրութեան սկզբունքների մէջ շատ փոքր Նկատօղութիւնքներ են գտնվում այս գիտութեան դասատուութեան մասին և այսպիսի սկզբունքների մէջ մասը լի են զանազան գիտութեանց վերաբերեալ հարցերին օտար ծանօթութիւններով, զոր, զանազան ծածուկ գրագրութեան հնարյների վերաբերեալ; Թուղթ խաղալու զանազան ձարտարութիւնների<sup>2</sup> վերայ.... եւ այլն:

Թեանը բարին ցանկացող հայակեր ոմն, որը բնակվում լինի կողիս, որ, գոնեա, (Օսմանեան պետութեան մէջ տպած հայ գրեանց, օրագրերի և զանազան թերթերի թիւը պակաս թերութեամբ յիշուած լինին նորա ցուցակի մէջ: Վայսպիսի գործ կը կատարելագործուի քանի մի անձանց աշխատասիրութեամբ և քանիցս անգամ կրկին և կրկին տպագրութեամբ, երբ որ բոլոր ազգը տպածի թերութիւնքը ցոյց կտայ:

Վրեանց ձեռք բերելը գիւրացնլու համար, պէտք է որ ամենայն տեղ, ուր որ գրավաճառներ չկան, տեղական հոգեւոր կառավարութիւնները, գպրոցների կառավարութիւնները, հասարակաց ընթերցարանները, մայր եկեղեցեաց երեցիսահանք, քահանայք բերել տային տպագրողներից 20-25 օրինակ այն գրեանքը որոնք պիտանի են տեղական ժողովրդեան, ստանալով իւրեանց աշխատանաց 15% մինչև 20% զիջումն, որ տալիս է ամենայն հեղինակ և տպագրող: Վրեանց հետ օդտաւէտ է բերել տալ զպրոցների զանազան պարագայքը, կողմնացոյց, ջերմաչափ, քարտէզներ, թուղթ, գրիչ, մատիտ, և այլն:

<sup>1</sup> La proportionalité; пропорциональность; die Verhältnismässigkeit; համաչափութիւն, համատականութիւն:

<sup>2</sup> Le tour de passe-passe; фокусъ; աչքակապութիւն; das Fokus-pokus, Taschenspielerstück.

Ա երոյիշեալ թերութեանց և գժուարութեանց առաջն առնելու համար, հին ժամանակներից սկսած, զանազան միջոցներ են հնարել:

Կվինտիլիանոսը<sup>1</sup>, հռոմայեցի հռչակաւոր հռետորը և քերականը—, յիշում է, որ, նորանից առաջ և նորա ժամանակը, հին հռոմայեցիք գործ էին ածում մեղքամոմով պատաճ<sup>2</sup> տախտակներ, որի վերայ փորած էին այբուբենը, և այդ տառերի փորածների մէջ աշակերտը քարէ մատիտով պարագում էր գրութեամբ, ուզգելով (վարելով)<sup>3</sup> մատիտը փորած խազերի մէջ:

Այս ձեւը գործ էր ածում այժմեան դարու սկզբումը Բրունս գերմանացին ևս:

1696 թ., Լոկէ գերմանացին կարմիր թանաքով գրած տառերի վերայ գրել էր տալիս աշակերտներին սև մելանով; Կեօֆլէր գերմանացին, 1819 թ., հետեւելով վերոյիշեալի հեղինակութեանը, սկսեց պատրաստել հրահանգներ, որոնց մէջ, նոյնպէս կարմիր մելանով, գրած էր ոչ թէ ամբողջ խազերով, այլ կետերով նշանակուած տառերի ձեւը և ուսանողը սև մելանով գրումէր այդ կարմիր գիծերով պատ-

<sup>1</sup> Փաբիոս Կունտիլիանոս (M. Fabius Quintilianus) ծնաւ շուրջ, 42 թ. (հայրը փաստաբան էր); մօտ 20 տարի շուրջ դպրոց էր պահում, որին այցելութիւն էին անում մեծ բազմութիւն և որի աշակերտներից մինը երեսլի բնաբան Պլինիոս կրտսերն էր; Դոմիցիանոս կայսրը յանձնեց նորան իւր թոռները; Կարծումն, որ մինչև հիւպատոսական պատուաւոր աստիճանին էլ արժանացաւ կունտիլիանոսը: Որա հեղինակութիւններից յայտնի են. De institutione oratoria (հռետորի կրթութիւն, ճարտասանութիւն), 12 գիրք, սպուեցաւ շուրջ 1470 թ. Declamationes; De causis corruptae eloquentiae. Կվինտիլիանոսը մեռաւ մերձ 120 թ.:

<sup>2</sup> Լեսած, լեսուլ, քսել, որել; broyer, frotter; натирать; aufreiben.

<sup>3</sup> Ա արել, տանել; mener, diriger; водить; führen, leiten.

բաստած տառերի վերայ, միացնելով համապատշաճ խաղերով  
այն կետերը, որոնցից ներկայացած էր ամբողջ տառի ձեռ:

Վիւս ուսուցիչները դասաւան սեաներկ մեծ տախտակ-  
ների վերայ կարմիր ներկով գրում էին տառերը և վարժեց-  
նում ուսանօղներին, սպիտակ կաւիճով<sup>1</sup> գրել տալով կար-  
միր ներկով գրած տառերի վերայ, կամ թէ հասարակ փայտէ  
մատիտով: Քանի մի անձինք գործ էին ածում թափանցիկ<sup>2</sup>  
առարկաներ, զոր, ոսկերեայ, եղջերեայ<sup>3</sup> թափանցիկ տախ-  
տակներ, որը զնում էին վայելչագրական գաղափարի, օրի-  
նակի վերայ, որի տառերը շղում էին, գէպ ի գուրս<sup>4</sup>  
էին երեւում այսպիսի թափանցիկ նիւթի տակից և աշակերտը  
պարապումէր սորա միջնորդութեամբ, վարելով մատիտը նա-  
խագաղափարի տառերի վերայ; կային և կան այնպիսի ու-  
սուցիչներ ևս, որոնք, տալով աշակերտի ձեռքը գրիչը, բըռ-  
նում են նորա այդ ձեռը և երկոքեան, ասէս թէ, միաձեռ  
գրելով, այսինքն ուսուցիչը, վարելով ուսանողի ձեռքը, ու-  
սուցանում է թէ գրելուն և թէ ձեռքի այն ամենայն շարժ-  
մունքներին, որոնք պէտք են կանոնաւոր և վայելուչ գուր-  
թեան համար:

¶ Երոյիշեալ ձեռով ուսուցանումէին աշակերտին այբ-  
րենական կարգով գրել բոլոր տառերը, սկզբեց մինչև վերջը;  
յետոյ գրել էին տալիս բոլոր վանկերը, նոյնպէս այբբենա-  
կան կարգով (որքան ժամանակի կորուստ); յետոյ առանձին  
բառեր; յետոյ որ և իցէ փոքրիկ հատուած:

Երբ որ դասատուութեան ժամի լրանալը մօտ էր լինում,  
ուսուցիչը նստում էր իւր սեղանի վերայ և աշակերտները,

<sup>1</sup> La craie; мѣлъ; die Kreide.

<sup>2</sup> Diaphane, transparent; երկելի; прозрачный, просвечивающий; durchsichtig.

<sup>3</sup> De corne; роговой, костяной; hörnern, knochen.

<sup>4</sup> Briller à travers; просвечивать; durchscheinen.

մինը միւսի ետևից, գալիս էին նորան ցոյց տալու իւրեանց գրածը և ուսուցիչը ամէն մի ուսանողի տետրի մէջ առանձին նշանակում էր կարմիր, կամ կապոյտ, կամ սեւ մելանով նոցա ամենանշմարելի սխալները, համեմատ իւր սեպհական ճաշակին, վասն զի ուսուցչի սեպհական գրութիւնն էլ, ընդհանրապէս, չէր հիմնուած ոչինչ գրական հաշուի և կանոնի վերայ և, որովհետեւ, ամէն մի աշակերտի գրածը այլեայլ էր, ուսուցիչն էլ պիտոյ էր ամէն մինի տեսրը առանձին ուղղեր: Կաժուար չէ երկակայել թէ ինչ կարգ և յառաջագիմութիւն կարող էր լինել այսպիսի դասատան և դասատուութեան մէջ և որքան ժամանակի կորուստ պիտոյ է լինէր, մանաւանդ եթէ յիշենք, թէ որքան ժամանակ պիտի գործ ածէր վարժապետը ուսանողաց գրիշները կտրելու:

Ա երոյիշեալ ձեռվ դասատուութիւն անօղ ուսուցիշները գեռ չին մտածում, թէ, նախ և առաջ, պիտոյ են, ա) յառաջընթաց<sup>1</sup> վարժումը<sup>2</sup>, անոր համար, որ, խոշոր գրելով պիտոյ գլխաւոր հիմնական գիծերը, որոնցից բաղկանում են, կազմվում են բոլոր տառերը, մարզուին, զարգանան, արագշարժութեան ընտելանան ձեռքի բոլոր մասերի գնդերը<sup>3</sup>; բ) բաժանել կամ շարել տառերը առաւել բնական կերպով, համեմատ (<համաձայն>) այն սկզբնական համանման հիմնական խաղերին, որոնցից բաղկացած են զանազան համաձեւ (<համակերպ>) տառերը, զարդինակ, ս, ա, ո, տ, . . . , կամ ը շ դ դ ջ . . . և այլն; գ) վարժել գրել տառվ ուսանօղներին նոյն տառերը նախ խոշոր և յետոյ մանրաձեւ, ինչպէս որ պիտոյ է գործա-

<sup>1</sup> Կախակարգ; յառաջագոյն, յառաջընթաց, յառաջընծայ, նախընթաց; préalable, préliminaire, antécédant; предварительный, предшествующий; zuvörderst, zuvor, vorher, vorlaufig.

<sup>2</sup> Ա արժումն, վարժութիւն, վարժք, հրաշանդք, կըսթութիւնն, մարզումն; l'exercice, l'occupation; упражнение; die Übung, Beschäftigung.

<sup>3</sup> ՎԿունք, դընդերք; le muscle; мышца; der Muskel.

ծական լինի առօրեայ, հասարակ արագագրութեան մէջ, և  
ոչ թէ ինչպէս այժմն մեր մէջ կայ, որ արագագրութեան մէջ  
մի համանման տառը անորոշելի է միւսից և շատ մանր; Դ)  
նայել, որ ուսանողը պատշաճաւոր կերպիւ բանէ և վարէ դը-  
րիչը և սովորի որացզից և բնչպէս սկսել և որպէս վերջաց-  
նել տառերը; Ե) սկսել դիւրին և հասարակ խաղերից և  
վերջացնել առաւել մանուածոյ, դժուար և խան խաղերով:

Արդի պէտագօգիկան և գիտակտիկան չեն համաձայնում  
և արամարանօրէն էլ հասկանալի է, որ կանոնաւոր և վայե-  
լուչ գրութեան դասատուութիւնը չէ կարօղ և չէ պիտոյ լինի  
հիմուած միայն լոկ մեքենական սկզբանց վերայ, այլ, այս  
գիտութիւնն էլ ինչպէս որ և բռլոր այլ գիտութեանց,—  
նա ևս և արուեստից, —սկզբունքը և ուսումը ուսանողը պիտի  
ըմբռնէ մտօք, հասկացողութեամբ, խորհելով, մտածելով,  
հասկանալով այն ամենայն հիմնական կանոններն, որի վերայ  
հիմուած է աւանդելի առարկան և որ այս առարկան, իւր  
կանոնաւոր, պարտ ու պատշաճ դասատուութեամբ, լինի աղ-  
թիւր և միջոց խորհելոյ, մտածելոյ և մտաւոր և հոգեոր  
(ինչպէս գեղարուեստ) զարգացման աշակերտի: Իսայց, որով-  
հետեւ, կանոնաւոր և վայելուչ գրութիւնը որքան գիտութիւն  
է, այնքան և արհետու է, այս պատճառաւ վերայիշեալ և, առ-  
հասարակ, որեկից օժանդակ<sup>1</sup> միջոցները կարելի է գործ  
ածել միայն իբրև սկզբնական, նպաստաւոր միջնորդ, — այն  
ևս գործի սկզբեց, —ձեռքը, ձեռքի գնդերը կանոնաւոր վար-  
ժելու և մարզելու համար: Իսայց նախ և առաջ ուսանողը  
պիտոյ է լաւ հասկանայ, թէ բնշու համար պիտոյ է գրել  
այսպէս և ոչ այլապէս; Բնչ հաշիւ կայ և համեմատականու-  
թիւն, կամ յանդութիւն<sup>2</sup> զանազան տառերի համանման<sup>3</sup>

<sup>1</sup> Auxiliaire, subsidiaire; вспомогательный; helfend, behülflich.

<sup>2</sup> La correlation, rapport; соотношение; die Weschselbeziehung.

<sup>3</sup> Epareil, conforme, analogue; подобный; analogisch.

Հիմնական խաղերի մէջ; հասկանայ տառերի հակումն<sup>1</sup>; խաղերից ո՞րը պիտոյ է լինի հաստ և ո՞րը բարակ (մաղաւոր, մազանման); ի՞նչպէս պիտոյ է բանել և վարել գրիչը; ի՞նչպէս պիտի լինի բոլոր մարմին և թղթի գրութիւնը գրելու ժամանակ և այլն.... միով բանիւ, գործին ձեռնամուխ լինի պարզ եւ կատարեալ հասկացողութեամբ այն կանոնների, որոնք պիտի կատարէ:

Այս կերպ լինելու է,—առանց բացառութեան,—ամենայն դիտութեանց և արշեստից ուսումը, այսինքն, ամէն մի շարժողութիւնը և գործողութիւնը, չափը, ձեր; գործողութեան ամենագիւրին, գործնական և յարմարաւոր կերպերը; միջոցների կազմուածքը, նիւթը, նոցա զանազան գործածութիւնը, պատրաստելը, և այլն.... աշակերտն պիտի հասկանայ և իւրեան սերպհականացնէ; բաց ի սորանից, բոլոր դիտութիւնները և արշեստները պիտոյ է. 1) Հաղորդեն, ուսուցանեն իւրեանց մէջ պարունակուած դիտութիւնը, կամ արշեստը և 2) զարգացուցանեն աշակերտելոց խորհելոյ, մտածելոյ, ըմբոնելոյ, երեակայելոյ, տեսանելոյ, լսելոյ, շարժելոյ և գործելոյ ընդունակութիւնքը, ընաւորութիւն շինելով աշակերտի համար, որ միշտ շարժի և աճի որպէս անձնհաստատ, ինքնագոյ, ինքնագործունեայ, ինքնաշարժ բանական անձն, որ իւր յոյսը միայն իւր վրայ լինի, ոչ այլոց վրայ ամենեւին, ոչ կարօտ այլոց օգնականութեան:

**ՈՂորմութեամբ թո՛ղ մուրացիկն ապրի,**  
**Մուրացիկն միշտ ստրուկ է օտարին:**

**Օտարի շահը թոյն է մահաբեր,**  
**Վէք է կուրացնում, միտք է պըղտորում,**  
**Գերի է գարձնում մարդ ազատասէր,**  
**Ոսկի շղթայով ձեռոք — ոտք է կապում:**

<sup>1</sup> La pente; наклонъ; der Abhang.

Աներ յոյսը միայն մեր վըրայ լինի,  
Այսինքն օգտի մեր ընդհանրութեան,  
Վզքատ ու հարուստ տուած թե թեփ,  
Այսպէս միայն կայ մեղ ճար փրկութեան:

Տայց այն ամենայն անգամ՝ երբ որ ուսուցչի կարօտութիւն կայ, կամ իւր ձեռքը կանոնաւորել կամեցողը արգէն հասակաւոր անձն է, բոլոր այսպիսի վերոյիշեալ և մեր առաջարկած զանազան օժանդակ միջոցներից նշմարելի մեծ օգուտ կարող են քաղել եւ կարծ ժամանակի մէջ իւրեանց գրութիւնը (ձեռքը) կանոնաւորել եւ գեղեցկացնել 1) հետեւով այն կանոններին, որ մեկնած է այս գրքոյկի մէջ, և 2) վարժելով իւրեանց ձեռքը սպիտակ մելանով տպած գաղափարների վերայ:

### § II.

Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, եւ մոօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան ըզբաղումն....

Կանոնաւոր և վայելուչ գրութեան գասատուութիւնը նոր քայլափոխ արաւ անցեալ դարսու վերջին: 1) Ուսանողի վարժումը սկսումէին խոշոր, մեծածե տառերից; 2) առաջ գրումէին հասարակ, գիւրին խաղեր և աստիճան առ աստիճան փոխում գժուար և մանուածոյ խաղերով; 3) այրենական կարգի տեղ, սկսեցին տառերը համանման խաղերի համաձայն շարել (գասել գումարել); 4) առաջ գրել էին տալիս այն տառերը, որոնք երկու խաղերի մէջ էին տեղաւորվում և հիմնական, ուղիղ խաղերից էին բաղկացած զոր: ս, ա, ո, տ; յետոյ այն տառերը, որ եր-

<sup>1</sup> Rond; круглый; rund.

<sup>2</sup> Oval; овальный; oval, eirund.

կու խաղերի մէջից ևս գուրս էին գալիս. զ, կ, ց.... և, սորա համար, երկու հարթ — հաւասար<sup>1</sup> նոր խաղեր էին աւելացնում: Ա երոյիշեալ նորաձեռութիւնը թեպէտ թերակատար էին, բայց, այնու ամենայնիւ, նոր բայլափոխ էին կանոնաւոր և վայելուչ գրութեան դասառութեան ասպարիդում:

**Այս շրջանի<sup>2</sup>** գրականութիւնից ականաւոր աղբեկները.

1. *Rossberg. Systematische Anweisung zum schöngeschwindschreiben.... mit vielen Kupfern, in 4 Abtheilung. Dresden und Leipzig. 1793—1811.*

*Küsel.* Das ganze Schönschreibkunst.... Praga und Leipzig. 1824.

Որանից յետոյ դասառութիւնը լինումէր սոյն կերպ. ուսուցիչը գրումէր դասատան տախտակի<sup>3</sup> վերայ մի տառ (յետոյ բառեր և պարբերութիւններ), ցոյց էր տալիս և մեկնում տառի հիմնական խաղերը, նոցա մեծութիւնը և մազաւոր խաղով միաւորութիւնը, այնպէս, որ ուսանողքը, — բոլորեքեան միասին, նախ և առաջ նայելով տախտակի վերայ գրածին և իմանալով բոլոր կանոնները, չափը և գրելու կերպը, — յետոյ բոլորեքեան միասին և միւնոյն ժամանակ, ամենը իւր տետրի մէջ, սկսումէին գրել ուսուցչի ցոյց տուածը: **Այս ձե դասառութիւնը ուներ յետագայ գերազանցութիւնները<sup>4</sup>.** բոլոր

<sup>1</sup> Horisontal; горизонтальный; հորիզոնական; wagerecht, horizontal.

<sup>2</sup> Période; периодъ; der Zeitraum.

<sup>3</sup> Եթէ դասատան աշակերտները շատ են, տախտակի վերայ կաւիճով գրածը շատերին, թէ ի հեռուստ և թէ տախտակի հանդէպ չնստածներին, նշմարելի չէ; վասն որոյ ուսուցիչը կարող է ցոյց տալ միւնոյնը կամ տպած օրինակի մէջ, կամ առաջուց պատրաստելով տանը, մեծ թերթի վերայ, կամ դասատան տախտակը զանազան կողմեր գարձուցանելով (շրջելով), որ ամենեցուն պարզ տեսանելի լինի:

<sup>4</sup> La préférence; преимущество; առաւելութիւն; der Vorzug.

ուսանողները միաժամանակ գրում էին մի և նոյնը; ուսուցիչը, առանց ժամանակը կորուսանելը, դիւրութեամբ կարօղ էր նայել և հսկել ուսանողների կանոնաւոր կերպիւ պարապմանց վերայ և ուղղել նկատած թերութիւնները; աշակերտները գրում էին հաստատուն վստահութեամբ, համոզմամբ<sup>2</sup> և գիտակցութեամբ, հասկանալով բոլոր կանոնները և նոյա իրագործելու ձեւը; դասատան կարգապահութիւնը<sup>3</sup> անվրդով էր մուսմ, որովհետեւ ամենեքեան միաժամանակ միենացն գործով էին պարապած ուսուցչի հսկողութեան տակ; ուսուցիչը, միենացն ըեկնելով բոլոր դասատանը և իւր վերայ դարձնելով բոլորեցունց ուշագրութիւնը, շարժումէր ուսանողաց այդ ուշագրութիւնը; դասատուութիւնը ստանումէր միակերպութիւն; ուսանողը սովորում էին միատեղ, բազմութեան մէջ, միաժամանակ ուշագրութիւն դարձնել որեիցէ առարկայի մէկնութեանը և այլն:

**Այս շքանի գրականութեան գլխաւոր աղբիւրները.**

*Heinrich Müller. Anleitung zum Schönschreiben.... Nurenberg und Altdorf. 1797.*

*Clausius. Vortheilhafte Methode beim Unterricht in der Kalligraphie.... Frankfurt. 1806.*

*Hermann Weber. Abhandlung über deutshen currentschrift. Cassel. 1825.*

Պեօլմանը պահանջումէր, որ ուսուցիչը, մանրամասնաբար մէկնելով ուսանողին գրութեան բոլոր կանոնները և ձեւերը,— զարգացնէ նորա հասկացողութիւնը մինչև այն կէտը, որ նա պարզ ըմբռնէ ոչ թէ այն միայն, ինչ որ պիտոյ է գործէ, այլ և, թէ ինչպէս, ինչ կերպ պիտոյ է գործէ, այսինքն ուսանողը պարզ եւ կատարեալ հասկացողութիւն ունենայ, թէ.

<sup>1</sup> Le persuasion; сознание; die Erkenntniss.

<sup>2</sup> La discipline; порядокъ, дисциплина; die Disciplin, die Zucht.

ի՞նչպէս և ի՞նչ ձեւով պիտոյ է գրէ ամէն մի տառը; Համեմատ յարդարէ<sup>1</sup> (յարմարացնէ) տառի ամէն մի մասը, միաւորէ<sup>2</sup> նախորդ տառը յաջորդի<sup>3</sup> հետ և կարողանայ ինքն ուղղել բոլոր արած սիսալները յառաջադոյն տուած շափի<sup>4</sup> և կանոններին համաձայն: Կանոն գարձաւ, որ,—մինչև ուսանողի ձեռքը և գրութիւնը կատարեալ կերպիւ չը վարժուի կանոնաւոր գրելու այն քանի մի ուղղեց և կոր<sup>5</sup> հիմնական խաղերը, որոնք գտանվում են ամեն տառերի մէջ,—ոչ մի քայլ առաջ չը գնալ: Այս պարագամունքը, վարժութիւնը նախապատճառական էր համարվում:

Որանից յետոյ ուսուցանողը գրում էր տառերը ո՛չ թէ նոցա այլրենական կարգաւ, այլ նոցա համանմանութեան համեմատ և ցոյց էր տալիս, թէ ո՞րպիսի կերպիւ և ի՞նչ ձեւրով հիմնական խաղերից գոյանում են զանազան համանման տառերը և ի՞նչ ձեւով և կանոնով սոցա պիտոյ է գրել այսինքն. հիմնական հաստ խաղերը զանազան կերպ միացնելով իրար հետ մազաւոր (բարակ) խաղերով, գրել այս կամ այն տառը, նոյն համանման խաղերից բաղկացած:

Ժակարտա արգէն 1538 թ. երկելի Վլըրեխտ Պիւրերը<sup>6</sup> բոլոր այբուբենը հիմնաւորեց երեք սկզբնական (հիմնական)

<sup>1</sup> Յարդել, յարդարել; proportioner; соразмѣрять; anmessen, anpassen.

<sup>2</sup> Կոր, ծուռ, ծուծ; courb ; кривой; schief, krumm.

<sup>3</sup> Post rieur; послѣднію; folgend.

<sup>4</sup> L' chelle; масштабъ; der Maßstab; չափ մղոնաց և աստիճանաց:

<sup>5</sup> Կոր, ծուռ, ծուծ; courb ; кривой; schief, krumm.

<sup>6</sup> Վլըրեխտ Պիւրեր (D rer), երկելի գեղարուեստ (նկարիչ). գրոշալ և ճարտարապետ, ծնաւ Վիւրեմըրերդ, 1571 թ., վարժանեցաւ 1528: Պիւրերի նկարած պատկերների թիւը շատ է, բայց ամենականաւորները յետագայքն են. Վդամեւ Եւեա, Վրիստոս խաչի վերայ, Վոգերի երկրպագութիւնը: Տերդերը ամրացնելու համար էլ Պիւրերը հնարած է առան-

Խազերի վերայ, այսինքն, ուղեղ<sup>1</sup>, բոլոր ակ և քառ անկիւն, նոցանից կազմելով բոլոր տառերը և շարելով համաձայն նոցա համեմատութեան, <sup>2</sup> բայց Դիւրերի մետօդը իրագործեցաւ 250 տարիից յետոյ, Պեստալօցի՛ի, Օսբերգ՛ի, Միւլեր՛ի և, մանաւորապէս, Ատեֆան՛ի գործակցութեամբ:

Տառերը կազմում էին հիմնական խազերից, նախ այն տառերը, որոնք բաղկանում են ուղղորդներից, զոր, ս, ա, ո....; յետոյ գրում էին կիսաբոլրակ կամ բոլրակ, կոր և ուղղորդ խազերից շ. չ. ջ. կ, ն և այլն...., մինչև բոլոր այբուբենի գրելը:

Ուսանողներին խրախոյս տալու համար թոյլ էին տալիս, որ նոքա, քանի մի հիմնական խազեր և նոցանից բաղկացած տառերը ուսանելուց յետոյ, գրեն մի ամբողջ բառ, զոր, ս, ա, տառերից կազմում էին, ասա, աստ, սաստ, տաս և այլն:

Պահանջում էին, որ ուսանողը գրիչը ուղեղ վարէ և բռնէ, ընտելանայ բոլը հիմնական խազերը հաւասարաչափ հաստութեամբ գրել և միացնել նոցա մազաւոր խազերով; տառերը սկսել գրելը, փոփոխաբար, և հաստ և բարակ խազերից: Ծանդակ միջոցներից գործ էին ածում բոլոր սկզբնական (հարթ հաւասար) խազերը և յետոյ, երբ ուսանողը բաւականին վարժվում էր, սկսում էին տողացոյցների (տողաշարների) գործածութիւնը:

### Գրականութիւնը.

Pöhlman. Schreiblektionen. I Auflage. 1803. Furth.  
II Auflage, Nürnberg. 1813.

Ճին յարմարութիւններ, որոնք, առաջուայ ժամանակները, մեծարժանաւորութիւն ունեին:

<sup>1</sup> Ուղեղ գիծ; ligne droite; gerade; прямая линия. <sup>2</sup> Ուղղորդ; отвѣсъ. Ուղղահայեաց; препредicуie; перпендикуляръ.

<sup>2</sup> Զափակութիւն, նմանութիւն, յարմարութիւն; analogie, symetrie; сходство; die Gleichheit, Ähnlichkeit.

*Dr. Stephani.* Ausführliche Beschreibung der genetischen Schreibmethode für Volkschulen. Erlangen, 1815.

*Mädler.* Lehrbuch der Schönschreibkunst. Berlin, 1825.

Ուելերը յետոյ աստղաբաշխութեան ուսուցչապետ էր  
Դորպատեան համալսարանում:

### § III.

Ուր որ գլնաս, ինչ տեղը լնիս,  
ասստատ մընաս — լուս հաւատիս,  
Չը մոռանաս այոց ազգիս,  
Միշտ հանապազ նըրան օգնիս,  
Վմենայն ժամ միտքըդ ձգիս —  
այրենեացըդ պիտոյ լինիս:

Ինչ որ մինչև այժմ զանազան հեղինակներ մշակել էին  
կանոնաւոր եւ վայելու գրութեան համար, այս բոլորն միա-  
տեղ գումարեց եւ կանոնաւոր կերպիւ մեկնէց Չիլի ուսու-  
ցիչը, իրագործելով իւր աշխատութեան մէջ բոլոր դաստիա-  
րակական սկզբունքները և ձեւրը, որոնք առաջարկել էին.  
Պեսուալօցցի, Կիմեկեր, Պենդել աւրնիշ Պիստերվեդ և  
սոցա նման ականաւոր եւ բանիբուն մանկավարժները:

Աշակերտելոց չձանձրացնելու համար, գործ էին ածում  
զանազան մինչև այն ժամանակ մշակած ձեւրը, պարապում  
էին, կամ, առնձին հիմնական խաղերից կազմելով տառերը,  
Հետևելով համադրական<sup>1</sup> (սինտետիկական) ձևին (մետօդին);  
կամ, ընտրելով որ եւ իցէ տառ, բաժանում էին նորան այն  
ամէն մի հիմնական խաղերի վերայ, որոնցից տառը բաղկացած

<sup>1</sup> ամագրութիւն, յօդականութիւն, համագրական, յօդա-  
կան, յօդաւոր, համագրական պայմանաւ; синтезисъ, синтетиче-  
ский; la synthèse, synthétique; die Syntesis, syntetisch.

էր.—Հետեւելով լուծական<sup>1</sup> (անալիտիկական) ձե ին; ցոյց էին տալիս թէ Բ՞նչպէս, համագրական ձևով,—զանազան առանձին հիմնական խաղերից կազմվում են այբուբենի բոլոր տառերը; կամ թէ,—լուծական մետոդով—, Բ՞նչպէս այբուբենի ամեն մի տառը կարելի է բաժանել, լուծել այն ամեն մի հիմնական խաղերի վերայ, որոնցինց այն տառը բաղկացած է:

Վործածական չորս զուգահեռական<sup>2</sup> խաղերին, որոնց մէջ գրում էին տառերը, աւելացրին նոր,—վերուստ ի վայր,—, խաղած գծեր, միմեանցից հաւասար և միաշափ հեռաւորութեամբ, որոնց հակումը<sup>3</sup> և միմեանցից հեռաւորութիւնը ցոյց էր տալիս,—միենոյն ժամանակ—, նոյն իսկ տառերի հակումը ևս, եւ տառերի թէ միմեանցից և թէ ամեն մի տառի հիմնական խաղերի մէջ եղած հեռաւորութիւնը (տարածութիւնը) եւ չափը:

Վանի մի ուսուցիչը բաւական էին համարում միմիայն մի հատ այսպիսի խաղ քաշել ամեն մի իջի (տողի) ձախ կողմից, այսինքն, տողի սկզբումը, բայց, այսպիսի գիպուածքում, երբ որ վերուստ ի վայր խաղը մի հատ էր, ուսանողը կարող էր նկատել միմիայն տառերի հակումը, իսկ նոցա մէջ եղած հեռաւորութիւնը և չափը պահել չէր կարօղ: Այլ ուսուցիչներ (զոր,՝ Օատօրպ վարժապետը) տետրի ամեն երեսի ձախակողմեան կէսը (տողի կէսը) խաղում էին այսպիսի խաղերով, իսկ միւս կէսը ոչ; այս ժամանակ ուսանողը առաջի

<sup>1</sup> Լուծումն (լուծումն առնելով վերլուծանել); լուծական, վերլուծաբար; վերլուծող, վերլուծիչ; վերլուծութիւն; une analyse; analyseuse, de l'analyse; un analyste; анали..ъ, аналитика, аналитисъ, аналитический; аналитикъ, аналистъ; die Analyse, Zerlegung; analytisch, der Analytiker.

<sup>2</sup> Հաւասար հեռաւոր, զուգահեռական; հաւասար հեռաւոր գիծ, գիծ զուգահեռական; parallèle; параллель; der Parallelkreis.

<sup>3</sup> Հակումն, թեքումն; l'inclinaison, la pente; der Abhang; զառ ի վայր; զառ ի ժափ:

կէս երեսի վերայի խազերի օգնականութեամբ պահում էր տառերի հակումը, նոցա միմեանց մէջ եղած հեռաւորութիւնը; իսկ երեսի միւս կէսը գրելիս պիտոյ էր ինքն իրան, կամ նայելով ձախակողմեան գրած կիսին, աշխատէր պահպանել տառերի միւնոյն հակումը և համաշափութիւնը:

Երրորդները տետրի բոլոր տողերը խազում էին վերոյիշեալ վերուսա ի վայր խազերով, այնպէս որ տետրի ամէն մի երեսը (էջը) դառնումէր աղթականաման խազած տողաշար (տողացանց):

Այսպէս էր շարունակվում գործը մինչև Կարստեր անդիւցաց շարագրութիւնը հրատարակուիլը: Կարստերը կամեցաւ ցոյց տալ գերմանացւոց, թէ ինչ որ նոքա մինչև նորա ժամանակը արել էին այս գիտութեան ասպարիգում, իբրև թէ և գլխաւորապէս, արտաքին ձեւերի մեքենական կատարելագործութեանցն է վերաբերում; թէ գերմանացի հեղինակները շատ փոքր մտագրութիւնք են արել ֆիզիոլոգիկական պահանջմունքների մասին կանոնաւոր եւ վայելուչ գրութեան վերաբերութեամբ, այս ինքն, վերաբերելով մարդուս ձեռաց բնական կազմուածքին և ձեռքի շարժողութիւններին:

Կարստերից առաջ վարժուած ուսանողները գիտէին, թէ ինչպէս է կազմվում ամէն մի տառը հիմնական խազերից; գիտէին, թէ ինչպէս պիտի վարել ձեռքը և գրիչը; գիտէին տառերի մեծութիւնը, նոցա ամէն մի խազի շափը, բայց, սովորած լինելով միշտ հանգարտ<sup>1</sup> գրելուն, նոքա չէին կարօղանում նոյնպէս վայելուչ գրել այն ժամանակ, երբ որ պիտոյ էր արագ<sup>2</sup> գրել այնպէս որ ամէն մի ուսանողը, ասես թէ, երկու զանազան ձեռագիր, կամ գրութեան ձեւ ունէր, մինը, առաւել վայելուչ, երբ որ հանդարտ էր գրում; միւսը, խառն, անորոշ և անվայել

<sup>1</sup> Յամբ, յամբանաց գնացիւք; յամբութիւն, դանդաղանք; lentement; le lenteur; медленно; медленности, медлительность; langsam, saumseelig; die Langsamkeit, Saumseiligkeit.

<sup>2</sup> Արագ, vite, скоро, schnell.

երբ որ արագ էր գրում: Ծայց որովհետև կանոնաւոր եւ վայելուչ գրելուսուցանելու նպատակն այն է, որ ուսանողն թէ հանդարտ և թէ արագ գրելիս, միշտ, ամենայն առօրեայ պարապմանց ժամանակ, միևնոյն վայելուչ և կանոնաւոր կերպիւ գրէ, վասն որոյ, կանոնաւոր եւ վայելուչ գրութեան զասատուութեան կատարելութեան համար, պիտոյ էր յազթել վերոյիշեալ թերութիւները: Այս կատարուեցաւ երեք մետոգներով. 1) Կարստերի, 2) Չափաւոր, կամ ամանակաւոր մետոգով և 3) Հակմանի:

#### § IV

Մարմեղ եւ հոգւոյ միտք եւ կառաւար, եւ որպէս առ մի մարդ, այսպէս առ բոլոր աշխարհօս:

Իմաստունի հետ քար կրի, յիմարի  
հետ փլաւ մի ուտիլ:  
Խելօքին մին, յիմարին քանի կողես:

Կարստերը, ոչ սակաւ ժամանակ գրութեան վարժապետ գոլով, միևնոյն ժամանակ, ապրուստի միջոցների պակասութեան պատճառաւ, ազատ ժամերը, պարապում էր Հալլ (Hall) գրասենեակում: Կարստերը նկատեց, որ, մինչև ինքը կարողանում էր օրինակել մի նամակ, Հալլը կարողանում էր, — միևնոյն ժամանակի միջոցում — , պատրաստել չորս օրինակ: Այս նկատողութիւնքը գրգռեց Կարստերին հաւասարուիլ արագագրութեան մէջ Հալլի հետ և սորա համար ևս Կարստերի մետօգը կոչումն արագագրութեան մետօգ<sup>1</sup>:

<sup>1</sup> Այս ծրագիրը կարգալուց յետոյ գիւրին է հասկանալ, թէ ի՞նչ կանոններով և մերձաւորապես, որքան ժամանակի մէջ կարելի է ուսանել կանոնաւոր, վայելուչ արագ գրութիւնը, կամ ուղղել իւր անորոշ գրութիւնը; առհասարակ, ի՞նչ կանոնների

առաջին երեք մատները այնպէս, որ գրիչը մնայ նոցա մէջը անշարժ; միւսով կապում էր վերջի երկու մատը այնպէս, որ նոքա չ'կարողանան արգելք լինել միւս երեք մատին, գրելու ժամանակ: Այսպիսի կապերն ուսանողը գործ էր ածում այնքան ժամանակ, մինչև որ սովորէր գրել այն խաղերը, որոնք գրում են թամբի շարժողութեամբ; վերջը ուսանում էր այն խաղերը, որոնց գրութիւնը կատարվում է մատների շարժողութեամբ:

Կարստերը ամենեին չեր գործ ածում ոչինչ օժանդակ միջոցներ, կամ տողացոյցներ, որոնք մեծապէս դիւրացնումեն պարապմունքը նոր սկսողների համար: «Ա, բաժանել էր իւր առաջարկած պարապմունքը 19 մասը, զանազան խաղերից և տառերից բաղկացեալ, որոնց ամեն մինը — ուսանողները պիտոյ էր գրէին մեծաձև տառերով, սկզբից մինը միւսի տակ, յետոյ մինը միւսին կից և միացնելով իրար հետ:

Պէտք է ասել այն ես, որ Կարստերը իւր մետոդը իրագործեց հասակաւոր ուսանողների հետ, մանաւանդ այնպիսի անձանց հետ, որոնք արգէն գիտէին գրել որեւէ կերպ; վասն որոյ նորա մետոդի մէջ եղած անյարմարութիւնքը այնպէս չէին նշմարելի, ինչպէս որ պարապելով մանուկների և առաջին անգամ գրել սկսողների հետ:

Դրութեան հիմնական կանոնը այն է, որ պիտի սկսել դիւրին շարժողութիւններից և շարունակել, փոխանակել, աստիճան առ աստիճան, խթիններով; վասն որոյ (Կարստերի ասածին հակառակ) պիտոյ է, նախ և առաջ, սկսել այն խաղերից, որոնք գրվումեն, գլխաւորապէս, մատների շարժողութեամբ:

Ուսանելու սկզբին Կարստերի առաջարկած կապերը պիտոյ չեն, որովհետեւ սկզբից աշխատումեն, նախ և առաջ, մատների ազատ շարժողութիւնը զարգացնել: Այսպիսի կապերը կարելի էր գործ ածել այն ժամանակ միայն, եթի որ ուսանողը արգէն հասակաւոր անձն էր և ստացել էր սովորութիւն գրիչը անկանոն

բոնել: Առօրա համար առաջարկումենք հետագայ առաւելդիւրին, հասարակ և յարմար հնարքը գործ ածել կանոնին համեմատ բոնել գրիչը աջու ձեռքով; ուր տեղ որ բուժ մատը էլ չի շշափում գրչին ձախ կողմից, նոյն կէտի մեջ ուղղակի մի գնդասեղ ցցել այնպէս, որ այն գնդասեղը, արգելք չլինելով որ գրիչը լինի ձեռքում կանոնին համեմատ, միենոյն ժամանակ արգելք լինի բուժ մատին վեր քաշուելուն; այսպէս բուժ մատը, կամայ ակամայ, կանոնաւոր կերպիւ կը լինի գրչի վերայ ձախ կողմից և կը հարկադրէ միջի մատը ևս նոյնակէս կանոնաւոր կերպիւ բանել գրիչը աջ կողմից; կը մայ միմիայն ցուցամատը, որի արձակ, աղաս և կանոնաւոր բոնելը գրչի վերայ և նորա վերեկից բոլորովին գիւրին է, երբ որ միւս երկու մատները կը լինին գրչի վերայ կանոնաւոր կերպիւ, որովհետև գրողի երկու, — բուժ և միջամատներն են, գլխաւորապէս, գրում, իսկ ցուցամատը առաւել ուղղութիւն տվողը է գրչին և պահպանողը, որ գրիչը մատանց մեջը ամուր կենայ և չգուրս ընկնի: Իսութով և միջամատով, առանց ցուցամատի օգնականութեան, գիւրին է վարել գրիչը և գրել նոյնը բուժ մատի և ցուցամատի միջնորդութեամբ, իսկ առանց բուժ մատի անկարելի է գրել:

Քանի մի ուսուցիչը գործ են ածում մի առանձին կերպիւ շինած մատանի, որը հագնումեն բուժ մատի վերայ, որ նա հարկադրէ ուսանողին կանոնաւոր կերպիւ բանել գրիչը; բայց այսպիսի մատանին անյարմար է, որովհետև ծանրութիւն է պատճառում մատին, մանաւանդ երեխայից, և, առ հասարակ, սոյնպիսի մատանին ունենալով մատին, գծուար է ազատութեամբ վարել գրիչը: Հասակաւոր անձանց, իբրև քանի մի անգամի փորձ, այսպիսի մատանին կարող է շատ փոքր օգուտ բերել:

Վրելու պարագայքը վաճառողների մօտ կարելի է տեսանել առանձին գրչի կոթեր, որոնց վերայ երեք տեղ ամբացրած են բոլորակ թիթեղի կտորներ, որոնց մեջ պիտոյ է գրող երեք մատի ծայրերը լինին; սոյնպիսի կոթը շատ փոքր մանկանց

գժուար է գործ ածելը, իսկ հասակաւորները կարօղ են, փոքր ի շատէ գժուարութիւն կրելով, օգուատ բաղել սորանից:

Ա երոյիշեալ կերպիւ գնդասեղ գործածելը առաւելյարմար է և գիւրին, իսկ ամէնից նախամեծար պիտոյ է համարուի կանոնին հետեւելը և, աստիճան առ աստիճան, ընտելացնելուսանողներին կանոնների կատարմանցը:

### § V

Երբ որ իմաստութեան սէրն

Մէկ ազգի միջն տարածուեց,

Իմացիր, երկնային Տէրն

Գլժած, նորա բաղտը բացուեց:

Ենբանը հաց ուտելիս առողջա,  
բանելիս հիւանդ:

Ենուստայ փեշակը հարամ ա:

Եռաջինը, որը միւսներից առաւել մեծ ուշադրութեամբ պահանջում էր և աշխատում ուսանողներին հաշուով գրել ուսուցանելը, գաղղիացի (Օդյիե՛ն (Audoyer) էր, Կարստերի աշակերտը; յետոյ Նադելին<sup>1</sup> (Nädelin), Շաբեիեր<sup>2</sup> և այլք:

<sup>1</sup> Ուսուցիչ Շառուտգարտ, հարաւային Գերմանիայում, Աիւրտեմբերգի մայրաքաղաքն: Եայս քաղաքը հոչակաւոր է բոլոր Գերմանիայում իւր հարուստ եւ պատուական թանգարաններով, զանազան գործնական գիտութեանց և արհեստներին վերաբերեալ և նոցա մոգելներով (կաղապարներով, տօնելու). Պարձնում ենք հայազգ Եւրոպա ճանապարհորդների ուշադրութիւնը չձանձրանաւ և զոհել քանի մի օր Շառուտգարդտի այս թանգարանները իմաստասիրելու և նոցա կաղապարները այնպիսի նիւթերի և առարկաների, որոնք շինումեն այսաստանում և հայաբնակ քաղաքներում, բերել քանի մի օրինակ տեղական դպրոցների համար, որ հայ արհեստաւորները, տօն օրերը, գան և, նայելով այնպիսի կաղապարներին, կատարելագործեն իւրեանց արհեստը և գործած առարկաները:

<sup>2</sup> Ուսուցիչ Եյգելբերգ Բագենի երկրում, Գերմանիայի

Աշշուով<sup>1</sup> ուսուցանելը լինում է յետագայ կերպով. բոլոր  
ուսանողները միեւնոյն տառի ամեն մի բարակ (մազաւոր) եւ  
հաստ (հիմնական) խաղերը, բառի վանկերը եւ, առ հասարակ,  
ամեն մի որ եւ իցէ տառը կամ բառը եւ նոցա ամեն մի մասերը  
գրում են բոլորեքեան միեւնոյն ժամանակում (միաժամանակ) եւ  
միեւնոյն անգամ; այսինքն, որքան մանրերկրորդում<sup>2</sup> գրում է  
մի ուսանող ամեն մի մազաւոր կամ հիմնական խաղերը որեւիցէ  
տառի, նոյնըան եւ նոյն իսկ մանրերկրորդներում գրում են մի-  
ենոյն խաղերը բոլոր միւս միատեղ ուսանող աշակերտները կամ  
աշակերտու հիները, հետեւելով հաջութն, որը բարձր ձայնով  
արտասանում է ուսուցիչը եւ որին ունին գնելով. բոլոր ուսա-  
նողները, ամենեքեան միահետ (միաժամանակ), գրում են միե-  
նոյն խաղերը և տառերը և բառը, հետեւելով միենոյն հաշութն:

Այլ և այլ ուսուցիչք այլ և այլ սովորութիւն ունին այս  
հաշիւը, կամ չափը, պահելու համար:

Ոկրից ուսուցիչը գրում է գասատան սե տախտակի վերայ  
այն տառը, որը ուսանողը պիտի գրեն; յետոյ բաժանում  
այն տառը նորա հիմնական ու մազաւոր խաղերի վերայ և ցոյց  
տալիս ուսանողներին որքան բարակ և հաստ խաղերից է բաղ-  
կացած այն տառը; որքան հաշուով եւ որպէս պիտոյ է սկսել  
գրել այն խաղերը եւ նոցանից, հետեւելով նոյն հաշութն, կազմել  
նոյն իսկ տառը: Օքորինակ, եթէ վեր առնունք ձեռագիր «ո»  
տառը, տեսնումնը, որ սա բաղկանումէ. 1) նախ եւ առաջ տառի

---

արեմտեան—հարաւային կողմը: Եյդելբերգը ականաւոր հա-  
մալսարան ունի, ուր ստացել են իւրեանց ուսումը քանի մի հայ  
երիտասարդներ եւ:

<sup>1</sup> Тактъ музыкальныи, счетъ по такту; la mesure musicale, batte la mesure; <sup>2</sup> Հաշիւ, չափ, երաժշտական երգոց չափ, ամանակ, ամա-  
նակ տալ, ամանակ իսփել, զարնել; der Tact, der Tact schlagen, mit  
Tact schlagen.

<sup>2</sup> Ամանրերկրորդ, մի վայրկենի կամ բոպէի վաթմներորդ  
մասը; la seconde; секунда.

կէս երկայնութիւնով բարակ մազաւոր (մազանման բարակ) խաղց, ներքեւից վերև բոլորակ տարած; 2) մի հիմնական, հաստ խաղց, վերուստ ի վայր, միացրած առաջին մազաւոր խաղի հետ; 3) միւս մազաւոր խաղց, առաջին մազաւոր խաղի չափով և որը միացնումէ առաջին և երկրորդ հիմնական խաղերը միմեանց հետ. 4) միւս (երկրորդ) հաստ խաղց, առաջի, — հաստ խաղի —, մեծութիւնով եւ ձեւով; 5) երրորդ բարակ մազաւոր խաղց, որը սկալում է երկրորդ հաստ խաղի վերջից եւ բոլորակածեւ գնում ձախից վերեւ եւ աջ: Վ.յս կերպ կարելի է բաժանել բոլոր այբուբենի տառերը:

Ամէն մի խաղի համար ընդունուած է մի առանձին հաշիւ, այնպէս որ, որքան առանձին հաստ կամ՝ բարակ խաղ կայ մի տառի մէջ, այնքան էլ հաշիւ: Հաշիւները արտասանելիս, առաւել մեծ որոշութեան և պարզութեան համար, մազաւոր խաղերի վերաբերեալ հաշիւը արտասանումեն փոքր մի արագ; իսկ հիմնական խաղերին վերաբերեալ հաշիւը արտասանումեն առաւել հանդարտ, յամր:

Ո երաբերելով մեր ասածը վերոյիշեալ «ո» տառին, ուսուցիչը վարվում է այսպէս. 1) բարձր ձայնով ասումէ, «ի վեր», կամ «վեր»; —մինչեւ որ ուսուցիչը արտասանումէ այս «վեր» բառը (կամ հաշիւը) —, ուսանողք, միեւնոյն ժամանակ, պիտոյ է գրեն «ո» տառի առաջին բոլորակածեւ մազաւոր կիսախազը; 2) յետոյ վարժապետը առաւել հանդարտ, յամր արտասանումէ. «ի վայր», կամ «վայր», եւ միեւնոյն ժամանակը, բոլոր ուսանողք գրում են ո տառի առաջին հաստ խաղը, ձախ կողմից միացնելով արգէն գրած մազաւոր կիսախազին, վերուստ ի վայր գրելով; 3) յետոյ ուսուցիչը ասումէ, «վեր» եւ ուսանողք, միեւնոյն ժամանակ, գրումն «ո» տառի երկրորդ մազաւոր կիսաբոլորակածեւ խաղը, առաջին հաստ խաղին կից, ձախ կողմից գէպ ի աջ; 4) յետոյ ուսուցիչը արտասանումէ, «վայր», եւ բոլոր ուսանողք, միեւնոյն ժամանակ, գրումն «ո» տառի երկրորդ համար հաստ խաղը, վերուստ ի վայր եւ կից, ձախ կողմից, երկ-

բորդ բարակ խաղին; 5) յետոյ ուսուցիչը ասում է, «վեր» եւ ուսանողք, միեւնոյն ժամանակ, գրութեն «ո» տառի երրորդ մազաւոր խաղը, կիսաբոլորակաձեւ, ձախից աջ եւ դեպի վեր, կից «ո» տառի երկրորդ հաստ խաղին (չանդին):

«Ա եր», «վայր» բառերի տեղ կարելի է գործ ածել եւ թուաշամար, զոր, մէկ<sup>1</sup>, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինն, տասը (տասն) եւ այլն. վարուելով ինչպէս վերեւը ասացինք, այսինքն, մազաւոր խաղերը գրելիս հաշիւը կարճ արտասանել, իսկ հաստ խաղերի հաշիւը առաւել հանդարտ, յամր: Այսպէս վերսոյիշեալ կերպիւ «ո» տառը գրելիս, կը լինի. 1) «մի», կարճ արտասանելով, ուսանողքը կը գրեն «ո» տառի առաջին մազաւոր բոլորակաձեւ կիսախաղը; 2) հանդարտ արտասանելով, «Երկու», ուսանողք կը գրեն «ո» տառի առաջին հաստ խաղը, վերուստ ի վայր, ձախ կողմից եւ վերեւից կից առաջին մազաւոր խաղին; 3) արագ արտասանելով. «Երեք», ուսանողքը կը գրեն երկրորդ մազաւոր խաղը, ձախ կողմից եւ վերեւից կից առաջին հաստ խաղին; 4) հանդարտ արտասանելով, «չորս», ուսանողքը կը գրեն երկրորդ հաստ խաղը, ձախ կողմից եւ վերեւից կից երկուրդ:

<sup>1</sup> Վի, միոյ, կամ միոջ, միում, ընդ մի համար, միանգամայն, մի մի, միոյ միոյ, մէկ մէկ, ամէն մէկը, մի զմի, մի առ մի, մէկ զմէկ, մէկ զմէկու, մի ոմն, մի ինչ: Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութներորդ, իններորդ, տասներորդ:

Տասն ու մէկ (տասնըմէկ, տասն եւ մէկ, մետասան, մէտասաներորդ); տասուերկու (երկոտասան, տասն եւ երկու, տասներկու, (տասուերկուերորդ); տասուերեք (տասուերեքերորդ); տասնուշորս (տասնուշորսերորդ); տասնուշինդ, տասնուվեց, տասնուեօթը, տասնուութը, տասնուինը, քսան, քսանումէկ, երեսուն, քառասուն, յիսուն, վաթուն, եօթանասուն, եօթանասունումէկ, ութսուն, իննասուն, հարիւր, հարիւր մէկ, հինգ հարիւր, հաղար, հաղար մէկ, հաղար վեց հարիւր, երկու հաղար, մէկ միլիոն:

արտասանելով, «հինգ», ուսանողք կը գրեն երրորդ մազաւոր բոլորակաձեւ խաղը, ներքեւից դեպ ի վեր եւ ձախ կողմից կից երկրորդ հաստ խաղին:

Ա երյիշեալ երկու կերպ հաշիւ պահելու եւ հաշուով գրել ուսուցանելու ձեւերից, որը կամենայ նոյնը կարող է ընդունել ուսուցիչը, միմիայն պիտոյ է որ, 1) թուահամարը (հաշիւը) արտասանելու ժամանակը, այնչափ արագութեամբ կամ հանգարտութեամբ արտասանէ, որ աշակերտները կարօղանաննորա արտասանելու հետ միասին միաժամանակ սկսել եւ վերջացնել գրելու խաղը; 2) ուսուցիչը պէտք է արտասանէ, ա) միաչափ ժամանակում բոլոր այբուբենի հաստ, հիմնական խաղերը եւ բ) միեւնոյն արագութեամբ բոլոր այբուբենի մազաւոր խաղերը գրելիս, զոր, «ա», կամ «ո», կամ «բ», կամ «զ», կամ «զ» տառերի հիմնական խաղերի հաշիւը արտասանվում են միեւնոյն չափ ժամանակի; նմանապէս նոյն տառերի մազաւոր խաղերի թուահամարն էլ միեւնոյն արագութեամբ:

Կան ուսուցիչներ, որոնք, հաշիւը գիւրացնելու, կամ առաւել ձիշդ ասելով, արագացնելու համար, պահումն միայն հաստ խաղերի հաշիւը, իսկ մազաւոր խաղերի հաշիւը բաց թողնում, ասելով թէ, որովհետեւ ուսանողը, առաջուց գիտենալով գրելու տառը, կամ բառը, արգէն դիտէ թէ բնչպէս ամէն մի տառի հաստ խաղերը իրար հետ կապուած են մազաւոր խաղերով։ Այս մեկնութիւնից երեւումէ, որ սկիզբն պիտոյ է ուսուցանել պահել հաշիւը թէ հաստ եւ թէ բարակ խաղերինը, իսկ յետոյ, կարծութեան համար, մազաւոր խաղերի հաշիւը բաց թողնում: Կրելիս, զոր, «ա» տառը, համարումն, մի, երկու երեք; «ասա» բառը գրելիս երեք հաշիւ կայ; «ա» տառի համար, մէկ, երկու, երեք; «ս» տառի համար, մէկ, երկու; «ա» տառի համար, մէկ, երկու, երեք; իսկ բոլոր բառը գրելիս հաշվումն այսպէս. 1, 2, 3; 1, 2; 1, 2, 3: Կարելի է այսպէս էլ հաշուել «ասա» բառը գրելիս, ա, ա, ա; ս, ս; ա, ա, ա:

Հ մուտ ուսուցիչները, որպէս Դիթլեն (Diethlein), ուսա-

Նողներին չ'գժուարացնելու համար, հաշիւը պահում են մինչեւ  
տասը թիւը, եւ երբ պատահի, որ առանձին որ եւ իցէ պարբե-  
րութիւն գրելիս, տասը թուից առաւելէ լինում, այն ժամանակ,  
տասից յետոյ, կամ նորանից առաջ, նորից սկսումեն համարել-  
1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10.

Ներսելը<sup>1</sup> պահանջում էր, որ հաշիւը (մի, երկու, կամ,  
վեր, վայր) արտասանելու տեղ, ամէն մի գրելու տառը  
բարձր արտասանեն են այնքան անգամ, որքան այն  
տառը ունէր հաստ, հիմնական խաղեր, եւ ամէն մի անգամ  
արտասանելուց յետոյ աւելացնում էր. «Ե», կամ «ու»; այս  
«եւ» կամ «ու» շաղկապները արտասանելը նշանակում էր եւ  
բռնում էր հաշիւը այն մազաւոր խաղերի, որով գրելու տառի  
ամէն մի հաստ խաղերը իրարու հետ միաւորվում են, զոր. «ա»  
տառը ունէ երեք հաստ խաղ եւ, այս տառը գրելիս, ուսուցիչը  
պիտոյ էր. մի, երկու, երեք թուի տեղ, ասէր, ա, եւ ա, եւ ա:  
Պարապմունքը չը ձանձրացնելու համար, առաջին եւ երկրորդ  
կերպ հաշիւները, մի ամբողջ կամ զանազան բառեր գրելիս,  
մինը փոխարինում էին միւսով:

Չելլի (Zschilli) ուսուցիչը բարձր ձայնով արտասանում էր  
տառի ամէն մի խաղը, տարրը, զոր. ես գերանունը<sup>2</sup> գրելիս,  
առաջուց ասում էր ուսանողներին, թէ ի՞նչ բառ ունին գրելու;  
յետոյ սկսում էր (ե գրելու). երկար (այսինքն խաղ) դէպ ի  
ներքեւ; կորնթաձև<sup>3</sup> խաղ գեպ ի աջ; հաստ խաղ աջ; յետոյ,  
ս տառը գրելու համար. մազաւոր կամար դէպ ի աջ, հաստ  
խաղ դէպ ի ներքեւ, մազաւոր խաղ աջ; հաստ խաղ ներքեւ,  
մազաւոր կամար աջ:

Երաժշտական երգոց շափիը, ամանակը, նախամեծար պիտոյ  
է համարել գրել ուսուցանելիս, մանաւանդ փոքր ի շատէ հա-

<sup>1</sup> Hertel, Երբեմն ուսուցիչ | Եյպիկ քաղաքում:

<sup>2</sup> Le pronom; мѣстоимѣніе; das Fürwort, Pronomen.

<sup>3</sup> Կղեղնաձեւ, կամարաձեւ, աղեղն, կամար; դуга; un arc, der Bogen.

սակաւոր աշակերտներին, որոնք որ այնքան պիտոյ է լնդելանան<sup>1</sup> ամանակին, որ, երբ ուսուցիչը կ'առէ սկզբից գրելու բառը եւ ինքը կը համարէ, պահէ քանի մի հաշիւ (տակտը), յետոյ ուսանողքը իւրեանք կարողանան, ցած ձայնով արտասանելով բոլոր մնացորդ յետագայ հաշիւը, գրել բոլոր էջը:

**Ա**յսպիսի հաշիւը (տակտը) պիտոյ է լինի ոչ թէ նպատակ, այլ միայն միջոց<sup>2</sup> կանոնաւոր եւ վայելուչ արագագրութեան ընտելանալուն; իսկ նպատակն այն է, որ ուսանողն, վերջապէս, կարողանայ, կանոնաւոր եւ վայելուչ գրութեան պահանջմանց եւ կանոններին յարմար, դրէ արագ, առանց որ եւ իցէ օժանդակական միջոցների օգնականութեան:

**Ա**մանակով գրելը աշակերտներին գիւրացնելու համար, զանազան ուսուցիչներ զանազան միջոցներ են գործ ածել:

**Ը**տրալենգորֆը<sup>3</sup> գործ էր ածում ամանակաչափ<sup>4</sup>, որը նման էր մի փոքրիկ կողովի մեջ ամրացրած ժամացոյցի ճօճանակին<sup>5</sup>, միայն ծայրը դէպ ի վեր: **Ճ**օճանակը, միաչափ ժամանակով աջեւ ձախ շարժելով, ցոյց էր տալիս, թէ ինչպէս պէտք է պահէլ ամանակը (տակտը):

**Վ**իւսները, ամանակաչափի տեղ, գործ էին ածում ջութակ<sup>6</sup>:

<sup>1</sup> **Ռ**նտեյանալ, լնդելանամ, լնդելացայ; s'habituer, s'accoutumer, se familiariser; освоиться, свыкнуться; sich etwas eigen machen, sich zueignen.

<sup>2</sup> **Տ**ակտը նպատակ է եւ միջոց երաժշտութեան մէջ:

<sup>3</sup> **Ե**րբեմն ուսուցիչներին, արևմտեան հիւսիսային Վերմանիայում, Մեյին գետի վերայ: Կեօլինի, կամ Կոլոնի անուշահոտ արուեստական ջուրը հաչակաւոր է ամենայն տեղ:

<sup>4</sup> Le métronome, metronôme; метрономъ; der Tactmesser, das Metronom. L'instrument, գործիք, инструментъ, das Instrument.

<sup>5</sup> Le pendule, balancier; маятникъ; der Pendel, die Unruhe; ճօճանակ, կշռոց:

<sup>6</sup> **Շ**իւսնուր, քառաղի, չորեքաղեան քնար; le violon; скрипка; die Violine; jouer du violon; ջութակ հարկանել, ճիանուր ածել; играть на скрипке. **Զ**այնաչափ; sonomètre; звукометръ; ժամանակաչափ, хронометръ.

Տօնիսօն<sup>1</sup> գործ էր ածում առանձին հնչիւնով հնչական ամանակաշափ<sup>2</sup>, որը ձայն էր արձակում, հնչում էր: Տօնիսօն ասում է, թէ աշակերտաների ամանակաւ միատեղ հաշուելը նախամեծար է, քան թէ ամեն մի աշակերտի առանձին, առանձին հաշուելը, որովհետեւ առաջինը, եթէ ուսանողքը ընտելացել են ամանակահաշուին, առաւել մեծ զօրութեամբ է յափշտակում, դրաւում<sup>3</sup> բոլոր ուսանողների ուշագրութիւնը:

Վմանակահաշուին ընտելացնում են ուսանողներին յետագայ աստիճանաւորութեամբ, նախ ուսուցանում են ամեն մի աշակերտին առանձին, մինչեւ որ նա սեպհականացնում է իւրեան ամանակահաշուով կանոնաւոր գրելը; յետոյ, այսպէս ամանակահաշուին ընտելացած աշակերտաներից, կազմում են առանձին, 5—10 ուսանողներից բաղկացած, խումբեր, որոնց գրել են տալիս մի աժամանակ եւ մի եւ նոյն աման ակաշափով; երբ որ բոլոր դասատան ուսանողները այսպէս խումբ, խումբ կը վարժուին միաժամանակ եւ միեւնոյն ամանակաշափով գրելը, այն ժամանակ ուսուցիչը սկսում է միատեղ ուսուցանել ամանակաշափով բոլոր դասատան աշակերտուհիներին եւ աշակերտներին:

Վմանակի շափը ցոյց տալու համար ուսուցիչը, շատ անդամ, գործ է ածում մի փայտի (գաւաղնի, ցուպի) կտոր, երաժշտապետների<sup>4</sup> նման, եւ նորանով ամանակը տալիս, զարնելով գաւաղնի կտորը սեղանին եւ այսպէս, ուսանողաց լսողութեան միջնորդութեամբը, օգնում նոցա ամանակը եւ ամանակի հաշիւը պահելու:

<sup>1</sup> Tognino, Տօնիսոն, ուսուցիչը հիլեֆիւդ:

<sup>2</sup> La Sonnerie; կազմածք հնչող մասին ժամացոյցի, հնչիւն զանգակաց; մետрономъ съ боемъ.

<sup>3</sup> Entraîner, seduire; увлекать, увлечь; hinreissen.

<sup>4</sup> Le maître de chapelle, chef d'orchestre; капельмейстеръ; der Capellmeister. La chapelle, musique de la chapelle; капелла; die Capelle, Musik von der Capelle; նուագածուք, երաժիշտք եկեղեցւոյ:

Ո՞իշտ պիտոյ է ի մտի ունենալ եւ ուշադրութեամբ նայել,  
որ, ամանակաչափով ուսուցանելիս, աշակերտը նախ եւ առաջ  
հանդարտ գրէ (եւ ճշգութեամբ հետեւի ամանակին) մինչեւ  
որ նորա ձեռքը հաստատութիւն եւ կանոնաւորութիւն ստանայ  
եւ ինքը, աշակերտը, ամանակին ընտելանայ; սորանից յետոյ  
կարելի է, աստիճան առ աստիճան, ամանակի հաշիւը արա-  
գացնել, կարձացնել, նայելով ուսանողների հասակին եւ նոցա  
մտաւոր եւ մարմնաւոր զարգացմանը: Այսպիսի աստիճանաւո-  
րութիւնը պէտք է իսկութեամբ պահպանել, եթէ ոչ, ամա-  
նակով ուսուցանելու բոլոր արգասիքը եւ օգուաները, կամ  
անպառուղ, կամ շատ թերի կլինին; կարօղ են մինչեւ անդամ  
վեսակար եւս լինել. այսպիսի աստիճանաւորութիւնը ամա-  
նակով ուսուցանելու օգտաւէտութեան, արդինաւորութեան  
ստիպողական պայմանն է: Այսպիսի չափաւորութիւնը (աստի-  
ճանաւորութիւնը) պահելու համար, պիտոյ է որ ուսուցչին ծա-  
նօթ լինի ամեն մի ուսանողի ոյժը, զօրութիւնը, կազմուածքը  
եւ նա աշակերտելոց հոգեւոր եւ մարմնաւոր զարգացմանը հա-  
մապատասխան չափաւորէ իւր պահանջմունքը եւ յարմարացնէ  
դասատուութիւնը:

Կանոնաւոր եւ վայելուչ գրութեան ժամանակ, ինչպէս որ  
ամենայն մեքենայական աշխատանաց մէջ, գործող անդամները,  
այսինքն ձեռքը պիտոյ է հանդարտ, չափաւոր եւ աստիճան առ  
աստիճան մարզողութեամբ ստանայ, նախ եւ առաջ, հաստա-  
տութիւն, ամրութիւն եւ կանոնաւորութիւն, իսկ սորանից յե-  
տոյ արագութիւն: Այսպիսի կանոնաւորութեանը եւ ուղղու-  
թեանը նպաստամատոց է լինում ամանակով գրելը, որը աստի-  
ճան առ աստիճան ընդելացնում է աշակերտին կանոնաւոր եւ  
վայելուչ արագագրութեանը:

Դմանակով եւ բոլոր դասատան « միատեղ » դասատուու-  
թիւնը մեծ նշանակութիւն ունի եւ արդինաւոր հետեւանքներ  
թէ կանոնաւոր եւ վայելուչ գրութեան կարգաւորեալ (սիստ-  
մատիկական) դասատուութեան եւ թէ, առ հասրակ, ման-

կանց դաստիարակութեան համար: Պար գալըւ ժամանակ մենք նկատում ենք, թէ որ աստիճան ոգեւորվում է պարը և յարմար է գնում, երբ որ գաշնակառ եւ յարմար երաժշտութեան նուագակցութեամբ է լինում<sup>1</sup>:

Գլխիայի<sup>2</sup> «Աեանս վասն արքայի» (жизнь за царя) կոչեցեալ օպերայից<sup>3</sup> մազուրկան, կամ «պեստեր եւ իւրիստեն վալսերը», կամ «ռունոյի «Փառաստ» ասացեալ օպերայի վալսը եւ սոցա նման պարահատուածները լսելիս եւ սոցա հետ, միեւնոյն ժամանակ, նոյն իսկ պար գալը տեսնելիս, կամ, առաւել եւս, պար գալուս, կարելի է նուրբ զգալ, թէ ինչ է նշանակում երաժշտութեան յարմարապէս նուագակցութիւնը պարի հետ միասին:

Վըհեստաւորները, մշակները, հընձողները իւրեանց միատեղ եւ միաժամանակ աշխատութիւնը կարգին կատարելու համար եւ,—այսպիսի կարգաւորութեամբ,—, գիւրացնելու—նպատակաւ, բարձր ձայնով հաշիւ են անում, կամ երգում, երգի հաշիւը, տակտը այնպէս պահելով, որ երգի եւ գործողութեան (մշակութեան) ամեն մի շարժմունքների ամանակը (տակտը) միաժամանակ լինի: «Աոյնը կարելի է նկատել ամենայն ուրեմք, ուր որ—զինսամարդութեամբ են պարապեցնում զինուորներին; Օօրքի գնացքը (մարշը) ոչ մի ժամանակ այնպէս ոգեւորուած եւ կանոնաւորուած չէ լինում, զօրքի ճակատը<sup>4</sup> այնպէս լարի նման ուզիւլ, որպէս որ, երբ կանոնաւոր կերպիւ մարզած զօրքը երգի յարմար նուագակցութեամբ է կատարում իւր շարժողու-

<sup>1</sup> «Նուագակից, ձայնակից լինել; accompagner; акомпанировать; begleiten.

<sup>2</sup> Ուստաց ամենաերևելի գուսանական բանաստեղծ (композиторъ).

<sup>3</sup> (Օպերա, գուսաներգութիւն, գուսանական խաղ, նուագաւոր թատր; Opéra; Опера; die Oper.

<sup>4</sup> Փորություն; լատիներեն frons—(փրոնս) ճակատ բառից, որի սեռականը frontis (փրոնափա):

**Թիմները:** Այստեղ չէ պիտոյ մոռանալ, որ երաժշտութիւնը երկու գործ է գործում. ա) գործողութեանը (շարժմունքների) յարմարացրած նուագով ոգեւորում է թէ գործողների և թէ լսողների հոգին և ուշադրութիւնը; բ) իւր երաժշտական չափով (տակտով) կանոնաւորում է լսողների գործողութեան շարժմունքների ընթացքը, պահումէ նոցա չափը, ամանակը; ոգեւորում է տակտը և այսպէս, ոգեսրելով կարգը, նպաստամատոյց է լինում գործի կարգագրութեանը եւ յառաջադիմութեանը:  
**Ո՞իկենոյնը լինում է երբ որ աշակերտներին ընտելացնում են տակտով գրելուն:**

Ամանակով գրելը ունի այն օգտաւէտ եւ արդիւնաւոր հետեւանքը (արգասիքը) եւս, որ օգնում է գասատան կարգապահութեանը, որովհետեւ բոլոր ուսանողները պարապած են լինում միեւնոյն գործով, որը կատարվում է միաժամանակ և միաչափ հաշուով:

Այսպէս, ամենայն գործողութիւն, որով միաժամանակ և միատեղ պարապում են բազում անձննք (աշակերտուհիք, աշակերտներ, խումբ աշխատաւորաց, զինուորաց), կատարելով այն գործը միեւնոյն կանոնիւ, միեւնոյն անձի ազգեցցութեանը և հրակողութեանը հետեւելով և հնազանդելով. — բոլոր սոյն ձեւ միախումբ, միադաս կանոնաւորեալ պարապմունքը, շարժմունքը զարգացնում են այս կերպ աշխատողների մէջ միա սին աշխատելու բնաւորութիւն, սովորութիւն; զարգացնում են միաւորութեան, իրար հետ միաբանվելու հոգին:

Ոյն հետեւանքները ունին, նմանապէս, երգեցկաց<sup>1</sup> միատեղ երգեցողութիւնը, նուագելը; աշակերտուհեաց կամ աշակերտների միատեղ մարմարղութեամբ<sup>2</sup> և, առհասարակ, որ և իցէ մի ակերպ և մի աժամանակ խաղովը, խաղալիքով պարապելը; ուսանողների միատեղ սուսերօք մըցելը<sup>2</sup> (զինա-

<sup>1</sup> Կամ երգեցկաց, գուսանք, երգ գասուց; le choeur; хоръ—певчихъ; der Chor.

<sup>2</sup> La gymnastique, гимнастика, der Gymnastik — ամենայն ակը

շարժութիւնը); ուսանողների, միատեղ որ և իցէ ձանապարհ գնալիս, կարգաւ, զոյդ զոյդ (երկու շար), մինը միւսի ետևից, միաշափ քայլով գնալը (մարշ), ինչպէս զօրքն է գնում:

Արովշետե մերայնոց մէջ այսպիսի յատկութիւնը, այսինքն, միատեղ, չաշտ, միևնոյն ժամանակ և միևնոյն գործի մէջ կարգաւ չամաճայն շարժիլը, առանց աղմկի, անկարգութեան եւ անտեղի վիճաբանութեան, գեռ սովո-

պիտոյ է դաս տալ և նոյն աստիճան հարկաւոր է, որքան կարգաւ և գրել գիտենալը: Վարմանարզութիւնը,—կանոնաւորեալ աստիճան աւորութեամբ պարապեցնելով աշակերտուհեաց և աշակերտներին,—, ամենից առաւել լաւ է զարգացնում մարդու կազմուածքի ամեն մի մասը; պատրաստում է ապագայի համար ուժեղ, առողջ, համբերատար, համարձակ և ինքնէակ սերունդ; բաց ի սորանից, շատ հիւանդութիւններ կան, զոր, անմարսողութիւն, թանձ (մայասիլ հեմորոյ), թոյլութիւն մկանց (գնդերաց) և այլն, որոնք առողջապահական գիմնաստիկայով միայն կարող են լաւանալ; առանց դեղ ընդունելու:

Aerztliche Zimmerygymnastik..., von Dr. D. G. M. Schreiber. 12 Auflage. Leipzig. 1869.

Домашняя врачебная гимнастика Шребера. Перев. съ немецкаго. Второе Издание. Спб. 1860. 12°, стр. 120; ц. 75 коп. См. Народн.Школа. 1869, № 3.

Гимнастика для дѣвичъ.... Клевезалия. Спб. 1869. Ц. 1 руб. 50 коп. См. Учитель, 1869, № 23, стр. 759—764.

Домашняя врачебная гимнастика..... Андреевскаго. Спб. 1869, Ц. 1 р. 50 коп. См. Учитель, 1869, № 23, с. 759—764.

О значеніи гимнастики въ воспитаніи и медицинаѣ. Др. Берглиндъ. Спб. 1869. ц. 20 коп. См. Народн.Школа, 1869, № 8, стр. 62.

Руководство къ педагогической и гигиенической гимнастикѣ. В. Ухова. Часть первая, о вольныхъ движеніяхъ. Спб. 1870. Ц. 2 рубля.

Журналъ Семья и Школа, за 1871 и 1872 годы....

Журналъ Учитель, за разные годы.

Педагогический Сборникъ издаваемый при Главномъ Управлениі Военно-Учебныхъ Заведеній. Спб. 1871. Катехизис гимнастического искусства. Отдѣл I. Историческое развитіе гимнастики отъ древнѣйшихъ временъ до настоящаго времени, съ библиографическими указаниями, относящимися къ важнѣйшимъ эпохамъ. Годъ հասուածիթարդիւնը և տպագրութիւնը քանի մի հայ հանդեսնէրի մէջ, զորորինակ. Վեցու հայաստանի և Վշակ (Տիֆլու),

բութիւն չի դարձել, սոյն նպատակաւ դաստիարակիչները, դպրոցների կառավարիչները, հոգաբարձուները, ծնօղքը... եւ այլք... պիտոյ է մեծ ուշադրութիւն դարձնեն և դործ գնեն անդադար և ամենայն տեղ բոլոր այն միջոցները, որոնք որ զարդացնում են աշակերտուհեաց և աշակերտների (բոլոր ապագայ սերնդի) մէջ սովորութիւն, բնաւորութիւն, բազմութեամբ միատեղ և միաժամանակ կարգաւշարժելոյ, խորհելոյ, դործելոյ,

**Արարատ (Ա ալպարշապատ), Մասիս (Լ. Պոլիս), Վաշալյու Արարատեան (Ամբրնա, Օմբունիա), Սիսն (Երուսաղեմ) — մեծ օգուտ կը լինէր մերայնոց համար:**

Ճողովրդեան պիտի քարոզել, որ ո՛չ թէ արգելուլ այլ ամենայն կերպ և ամենայն միջոցներով քաջալերել պէտք է թէ մանկանց այն ամենայն խալերը, որոնք զարդացնում են նոցա մարմինը և թէ, մասնաւորապէս, քաջարել որ նոքա լաւ և համարձակ ձի նստեն, հրացան (հրետ) նետեն, լող տալ իմանան, մարմնամարզութեամբ, զինաշարժութեամբ պարապին, ընտելանան երկար ժամանակ ճանապարհ հետևակ գնալուն, մանաւանդ լինուտ տեղերը.... և այլն:

Հիւանդու և թոյլ ծնօղներից առաւել ևս թոյլ և հիւանդու սերունդ կ'առաջանայ և այսպէս, օրէց օր, ապագայ սերունդի կազմուածքը կը թուլանայ և այլն.... իսկ եթէ ամենայն միջոցները դործ գնենք, որ այդ սերունդը առողջ, ուժեղ և ամուր կազմուածք ունենայ — միենոյնն է թէ աշխատած լինինք բոլոր ազգի առողջութեան համար.... և այլն:

Իաց ի սորանից, խելք ունեցողները թող հասկանան, սիրտ ունեցողները թող զգան, ականջ ունեցողները թող լսեն, որ, եթէ միազգի — բոլոր ժողովրդեան, գիւղացւոց մէջ—, սովորութիւն դարձաւ մարմնամարզութեամբ և զինաշարժութեամբ պարապիը, նոյն ժողովրդի մէջ գժուար կը լինին այն տիսուր անցքերը, որոնք լինում են մեր մէջ, զորօրինակ Ա անայ, Մշե և այլ կողմերը, ուր տեղ ստրկութիւնը այնպէս է թուլացյել մերայնոց հոգին և մարմինը, որ նոցա մէջը կարելի է լինում պատահել այնպիսի անցքեր, որոնց մասին Եշուսաղեմայ Արօն ամնագրի, 1869 թ, № 7, էջ 156 կարգում ենք յետագայ տողերը, «Մեր Մշեցի, Բաղրմացի, Աղերացի, Ա անցի և Պայա-

պարագելոյ, խաղալոյ և, ընդհանրապէս, որ և իցէ գործ բազմութեամբ միասին և համաձայն կատարելոյ:

Վայսպիսի քանի մի անձանց միաւելու և միաժամանակ պարագմանց արդիւնաւոր արգասիքը այն է ևս, որ ամեն<sup>1</sup> մի անհատը, միւսների ներկայութեան ժամանակ, աշխատում է առաւել խօրհել և մտածել, որ արածը որքան կարելի է լաւ անէ, ընկերներից և տեսանողներից, եթէ կարելի է, թերի կամ պակաս չ'լինի; առաւել զգուշութեամբ է վարվում; զգուշանութիւններից և գոր-

զիացի ազգակիցները, եթէ կը փափաքին իրենց նախատինքը բառնալ և իրենց մարդկային կոչման համեմատ օրինաւոր տեղ գրաւել պատմութեան մէջ, պարտաւոր են, ոչ թէ տղայի նման լալ պառակի նման անիծանել և սորիկաբար աղաղակել Քիւրտերը պար այսպէս կ'ընեն, այնպէս կ'ընեն; մենք չենք կարող գիմանալ; մենք պիտի գաղթենք և այլն.... այլ պարտական են, իրենց կրօնի և ընտանեկան սրբութեան համար, իրենց մարդկային կոչման և արժանաւորութեան համար,—պաշտպանողական սուրբ նախապատիւ համարել—սորիկական վատասրտութենէն, արիական նախանձախնդրութիւնը — տղայական լաց ու կոծէն և պատուաւոր մահը — անպատիւ կեանքէն: Վայ կը պատուիրեն օրէնք և մարդկութիւն; այս կը պահանջեն իրաւունք և պարտք:»

Եթէ քիւրտերը խմանային, որ դրացի հայ գիւղացիները ընտելացած են մարմամարզութեան, զինաշարժութեան և հրացանի նետելուն; եթէ նոքա գիտենան, որ դրացի հայ գիւղացիները, մի հայումն գողացած եղի տեղ, հայերը կը խլեն դրացի օտարական գիւղացիներէն հարիւրը; եթէ նոքա գիտենան, որ դրացի հայերը, մի հայու անպատութեան վրէժինդրութեան համար, միւս աշխարհ կ'ուղարկեն տասնական քիւրտեր; եթէ նոքա գիտենան, որ մինչեւ հայոց գիւղերի մօտ թափառելը անդամ անվեսա չէ աւաղակ քիւրտերի համար,— նոքա հեռու ման կը գան հայ գիւղօրէից և կը զգուշանան նոցա վրէժինդրութիւնը գրգռել: Վոքա խեղճի զալում են և զալումի խեղճ:

<sup>1</sup> Վայէն և ամեն, այսինքն «ե» և «է» տառերով կը գրուի:

ծողութիւններից; նորա մէջ սկսում է արմատանալ ինքնախորհեշտութեալ, մատած ելոյ, ինքնագործործ եան, ինքնակայութեան սկզբունքները և բնաւորութիւնը ընկերակցութեամբ գործ կատարելը; միւս կողմանէ, նա սովորութիւն է շնուրմիւրեան համար հասարակութեան, բազմութեան մէջ խորհելոյ, շարժելոյ, գործելոյ այն պէս հանգիստ և հանգարտ, ինչպէս որ իւրեան սենեակում, միայնակ եղած ժամանակը: Ոյնպիսի սովորութիւնը ամենքը չունին, շատ կտրիձ անձինքներ կան, որոնք հասարակութեան մէջ շփոթվում են, մոլորվում են, չեն կարողանում աղատ, համարձակ և այնպիսի ուղիղ տրամաբանութեամբ խօսիլ, ինչպէս մի փոքր, ընտանի ժողովի մէջ, որովհետեւ չեն ընդելցած<sup>1</sup> բազմութեան առաջև գործ գործել, ատենաբանել շարունակ քանի մի ժամ որ և իցէ առարկայի վերայ, տալով կանոնաւոր մեկնութիւն կամ խոհեմ և հիմնաւոր քննողութիւն: Իացի սորանից, ընկերակցութեամբ գործ գործելով, ուսանողը ակներեւ սկսում է հասկանալ, թէ ո՞րքան մի և նոյն գործը արագ է գնում, բազմարդիւն է լինում, երբ որ կատարվում է միակ անոն, մի ախոր հուրդ գ, միակ ամ և համաձայն (առանց տարածայնութեան) աշխատակցութեամբ; այսպիսի հայ պարապի հրացանի և ատրճանակի գործածութեամբ; թող Եւրոպայէն միշտ մի կամ երկու հրացան բերէ և գիւղացի հայոց ձեռքը տայ; թող մեր մէջ ել կազմուեն ընկերութիւնք, հանդէսք.... և այլն..., մարմնամարզական, հրացան նետելու... և այլն.... տպուին հատուածներ, սկզբունքներ...:

<sup>1</sup> Ո՞սելանալ և ընդելանալ այսինքն և «տ» եւ «գ» տառով կը գրուի:

ամենայն կերպ աշխատել, որ ապագայ սերունդը (իւր ուսման ժամանակ) միաքանութեան սովորութիւն ստանայ, իւրեան համար բնաւորութիւն շինէ ընկերակցաց հետ միասին և համաձայն աշխատելոյ, մի և նոյն է թէ հասարակաց և թէ մասնաւոր անձնական օգտաւուծութեան պատակին հասանելու համար:

«Օ, ուգութիւնն (միաբանութիւնն) է մայր բարեց, անզուգութիւն — ծնող չարեաց (Եղիշէ):

«Իրք մեծամեծք՝ ի միաբանս միշտ հաստատին,

Խակերկպառակս լինին յաւէտ վայրավատին»:

## § VI.

Են ջրիցը վախեցիր, որ ոչ թշում ա, ոչ խշում:

Ընչանք չի գայ յետինը, չի յիշուիլ առաջինը:

Ուրի կտրածը կը սաղանայ, լեզուինը չի սաղանալ:

Եշի քացուցը բեգամաղ մի ընիլ:

Հակմանի եղանակը (մետօդը).

Յէպէտ գրութեանը վարժեցնելու համար արդէն 1720 թուականից սկսած գործ էին ածում տողաշարներ, սակայն չակմանը առաջինն էր, որ մասնաւորապէս ուշադրութիւն դարձրեց տողաշարի գործագրութեամբ վարժեցնել ուսանողներին գրութեան մէջ: Հակմանի օրինակը և նորա աշակերտների ցցց տուած յառաջադիմութիւնը միջնորդեցին տողաշարի տարածելուն գրութեան մէջ վարժեցնելու համար, թէ փոքրերին և թէ հասակաւորներին:

Բայց հակմանը կարծում էր, թէ գրութիւնը միմիայն մեքենական արհեստ է, որին, իբրու թէ, բաւականին արագ

կարելի է ընդելանալ, սովորութիւն գարձնելով իւրեան համար. 1) գրելու ժամանակ ուղիղ նիստ ունենալ; 2) հաստատվարելով մատը, թաթը և բազուկը: «Այս գործ էր ածում այնպիսի մի ցանցանման<sup>1</sup> (ցանցառ) տողաշար, որի գծերը սահմանափակում, որոշում էին տառերի գրութիւնը:

Այսպիսի ցանցի մէջ նշանակած էին բոլոր տառերը կապոյտ կամ կարմիր մելանով: Երբ որ ուսանողը, սկզբից, գրում էր մեծաչափ տառերը, ցանցը արդէն պատրաստի էր նորա տեսրի մէջ; իսկ երբ որ ուսանողը, վարժուած լինելով լաւ գրել մեծածեն տառերը, սկսում էր նոյն տառերը մանրաչափ գրել, այն ժամանակ վերոյիշեալ ցանցը գործ էին ածում ինչպէս տողաշար (և ոչ որպէս նոյն իսկ գրելու տեսր), գնում էին նորան բարակ և թափանցիկ թղթի տակը և ուսանողը նորա օգնականութեամբ գրում էր նոյն տառերը, որոնք, արդէն գրած լինելով տողաշարի վերայ, ըստ բաւականին պարզ երևում էին բարակ թղթի տակից:

Ոյնպիսի տողաշարի<sup>2</sup> օգնականութեամբ ուսանողը և,

<sup>1</sup> Հանց, le réseau, сътка геометрическая, das Netz; գործած հիւսկէն, փոքրիկ ուռկան, ձուկ և ուրիշ կենդանիներ բանելու համար հիւսած բան; ցանցառ—նոսր, ցանցի պէս, միջոցով, քիչ մի հեռու: Ժողովրդեան մէջ «ցանցառ» բառը, շատ անգամ, յիմար բառի տեղ գործ կ'ածուե.

<sup>2</sup> Գաղղիայում շինում են այնպիսի հաստ ապակոյ տախտակ, որի տակը զնում են գրելու գաղափարը և առանձին շինովի մատիտով գրում ապակիի վերայ, ինչպէս որ յարկի քարի տախտակի վերայ (առողջայ ճօռա): Գալիքա, Գերմանիա... շինումնեն, երեխայոց զուարձութեան համար, բարակ թիթեղնի տախտակներ, որի մէջ գուրս են կտրած այբուբենը: Այսպիսի թիթեղը գնելով թղթի վերայ, —վրձինով ներկում են միջոցներ (արանքներ) և թղթի վերայ նկարվում է այբուբենը:

Գիւղերի մէջ, ուր որ գրեանքը հազուագիւտ են, կարելի է թիթեղնի տախտակների մէջ բոլոր այբուբենը (տպագիրը

Համարեա թէ, բոլոր դասատունը բաւական կարծ միջոցում սովորում էին կանոնաւոր և վայելուչ գրութիւնը, բայց, գրելով միշտ տողաշարի օգնականութեամբ, ուսանողների գրութիւնը շատ ծանր էր և իրարու նման:

Ոռուանալով, որ, կոյք զկուրոյն (կուրաբար) հետեւելով  
չակ մանի ձեմին, ուսանողները թէպէտ կը սովորին կանո-  
նաւոր և վայելուչ գրել, բայց շատ յամը և հանդարս գրելը  
և տողաշարի օգնականութեամբ; նոքա շատ կը գծուարանան  
միւնոյն կերպ կանոնաւոր և վայելուչ գրել, երբ որ արագ  
գրելու լինին և առանց տողաշարի:

Բայց որովհետեւ ուսուցանելոյ նպատակն է . և կանոնականութեաւը ու վայելուչ գրելը, և, միևնոյն ժամանակ, ազատ և արագ գրելը; միւս կողմանէ, որովհետեւ ոչինչ գասատուութիւն, ոչինչ ուսում չէ պիտոյ լինի լոկ մեքենայական, այն պատճառաւ, եթէ կամենում ենք, որ. 1) գասատուութիւնը լինի համապատասխան պետագօդիգական հիմնական կանոններին և 2) ուսանողաց գրութիւնը լինի, միևնոյն ժամանակ, և կանոնաւոր ու վայելուչ, և ազատ ու արագ, հարկաւոր է, որ. ա) աշակերտուհեաց և աշակերտաներին ուսուցանելիս, մեկնել նոցա բոլոր կանոններն ; բ) սկսել դիւրին խաղերից և, աստիճան առ աստիճան<sup>1</sup>, փոխարինել գժուարներով և այլն.... ինչպէս որ այս ծրագրական փորձառութեան մէջ մեկնած ենք:

և ձեռագիրը (վերջնինը մեր տպած գալաքիաբներից օրինակելով) մեծամասնությունը կտրել տալ և եկեղեցիների և դպրոցների պատերի դրսի կողմից, — եթէ կամբցող լինին, մասնաւոր անձանց ընակարանների վերայ էլ—, նկարել որ ժողովրդեան եւ մասնաւոր մանուռկների աչերը ընտել լանձն կանոնաւոր եւ վայելուչ գրութեան: Մի օրինակ այսպիսի թիթենընի մէջ գուրս կտրած այրութենոր բաւական է հազարաւոր գիւղերի համար:

<sup>1</sup> Фуффр ап. фуффр, ашкавт ап. ашкавт, мало по малу; аштибдаш ап. аштибдаш, аштибдашнарар, постепенно; үбет үзбет, одно за другимъ, посѣдовательно.

## § VII.

Իրութեան կուժի ունկը որ գիշը ուզի,  
էն գիշը կը շինի:  
Երկար խօսելով փառ չե եփուիր,  
բրինձ ու եղա հարկաւոր:

Կրութեան վայելուչ լինելը և նորա գեղեցկութիւնը ունի  
հիմնական կանոններ, առանց որոյ գրութիւնը, որպէս անկանոն,  
այսինքն ոչ մի կանոնի և հաշուի վերայ չը հիմնուած, չէ կարող  
լինել ոչ կանոնաւոր և ոչ գեղեցիկ:

Այսպիսի կանոնները են.

1) Բոլոր համանման տառերի մէջ խաղերի միաշափ բարձրու-  
թիւնը, նոցա շափակցութիւնը<sup>1</sup>.... զօր, ա, ս, ո; կամ լ, զ,  
շ, չ; կամ ի, իւ, ֆ, տառերի մէջ:

2) Խաղերի միակերպ, միաձև հակումը (թեքումն):

3) Միաշափ լայնութիւնը խաղերի մէջ, զօր. «ա» տառի  
երեք հիմնական, հաստ խաղերը (Ճանկերը), լինելով միւնոյն  
երկայնութեամբ և հաստութեամբ, նմանապէս պիտոյ է որ  
ամեն մի ճան գ ը միւսից միաշափ հեռու լինի; նմանապէս «ո» և  
«ս» տառերի ճանկերի մէջ; նմանապէս «զ» և «շ» տառերի  
մէջ.... և այլն:

4) Ամեն մի առանձին տառը մի և նոյն բառի գրացի տառից  
միաշափ հեռաւորութեամբ պիտոյ է լինի, կամ ամեն մի բառի  
տառերը մինը միւսից պիտոյ է լինին մի և նոյն տարակացու-  
թեամբ:

5) Պարբերութեան մէջ, ամեն մի բառը պէտք է այնքան  
տարակացութիւն ունենայ նախընթաց և յետագայ բառից, որ  
ամեն մի բառը որոշաբար լինի կարգացվում; առանձին  
բառերի բոլոր տառերը այնպէս որոշաբար և կարգաւ լինին

<sup>1</sup> Զափակցութիւն, համաշափութիւն; la proportion, conformité;  
соподобность, пропорциональность; die Angemessenheit.

շարուած, որ մի բառի սկզբնական տառը շատ մօտ չ' լինի նախընթաց բառին, իսկ վերջի տառը յետագայ բառին:

Վրութիւնը պիտոյ է լինի «Հաւասար աշակ հաւատ»; այսպիսի հաստատութիւնը կախուած է գրիչը կանոնաւոր կերպիւ ձեռքին բոնելուց և վարելուց, ձեռքի բնական կազմուածքին և ֆիզիօլոգիդական պահանջման համապատասխան; կանոնաւոր կերպիւ տեսրը գրողի առաջ սեղանի վերայ լինելուց, կանոնաւոր նիստ ունենալուց և գրութեան կանոններին ընտելանալուց:

Այս կանոնները անթերի ճշգութեամբ կատարելը ուսանողին բնաւորութիւն պէտք է գառնայ և ուսուցիչը պիտոյ է համբերութեամբ, անտագար հսկողութեամբ, առանց վիրաւորելոյ ուսանողներին մեկնէ նոցա սոյն կանոնների ստիպ ողական կարեւորութիւնը, եռութիւնը եւ ընդելացնէ ուսանողներին նոյն կանոններին միշտ հետեւիլը:

Այս տեղ առաջարկում ենք կանոնների մեկնութիւնը, իսկ առանձին պատկերների վերայ ցոյց է տուած թէ ինչպէս պիտի լինի գրողի նիստը, գրիչը բոնելը, սեղանի շէնքը եւ ձեւը:

Գրիչը բոնել երեք մատերով<sup>1</sup>, ցուցամատը գրչի վերեւից թեթև, ցուցամատի եղբնգի տակ եղած ձախակողմեան կակող մասով; բոյթ մատը պահպանում է գրչի գրութիւնը ձախ կողմից; միջամատը իւրեան ծայրի ձախ կակուղ մասով պահպանում է գրչի գրութիւնը աջ կողմից: Մատները չեն պիտոյ ոչ շատ ներս ծաւել, ոչ շատ եւ ուղիղ և առաջ ձգել; մատները պէտք է լինին, համարեա թէ, այնպէս աղատ, ինչպէս որ թաթի աղատ

<sup>1</sup> Պատ, le doigt, палецъ, der Finger; բոյթ, le pouce, большой палецъ, der Daumen; ցուցամատն, l'index, указательный палецъ, der Zeigefinger; միջամատն, le doigt du milieu, средний палецъ, der Mittelfinger; մատնեմատ (լսաժ մատ), l'annulaire, der Ringfinger, безымянный или перстневой палецъ; ձկոյթ (ձկոյթ), l'auriculaire, мизинецъ, der kleine Finger; լզունգ, լզունգ, un ongle, ноготь, ein Nagel.

դրութեան ժամանակ; մատները պիտի բռնեն գրիչը բաւական թոյլ և այնքան հաստատ, որքան որ հարկաւոր է որ գրիչը ձեռքից դուրս չընկնի և ազատութեամբ ու հաստատութեամբ վարել նորան; այսբանից առաւել ամուր բռնել գրիչը, ոչ թէ միմիայն անօգուտ է, այլ խափան կ'լինի ազատ և արագ գրութեանը, և շուտով կը յոգնեցնէ ձեռքը: Վրիչը առաւել ամուր է պահվում բոյթով (բթով) եւ միջամատով; ցուցամատը առաւել ազատ է, այնպէս որ, փորձելու համար, ուսանողին կարելի է քանի մի բառ գրել բայց ոչ սկզբից առաջարկելով նորան, որ նա բռնէ գրիչը միմիայն բոյթի և միջամատի օգնականութեամբ: Վրչի վերի ծայրը ուղղած է գէպի աջ ուսը; մատնեմատը ներս է ծուած, գէպ ի թաթը; ծկոյթը (Ճկոյթ) փոքր ուղիղ է և իւրեան ձախ կողմի փափուկ մասով և եղունգով շշափում գրելու թուղթը:

Այսպէս գրելով, ձեռքի դաստակի<sup>1</sup> ծալուածքը թղթին չի շշափի եւ ձեռքը ազատ կ'լինի շարժում յետ ու առաջ, գրելու ժամանակ:

Ոովորութիւն է աջու ձեռքով գրելը; Նմանապէս նկարել, կարել, մօրուսը սափրել (ածլել) եւ այլն...; եթէ լինում է բացառութիւն և պատահում է, որ մինը կամ միւսը ձախու ձեռքով է բան անում, նորան, ծալրածութեամբ, կոչում են «ձախլիկ»: Անդհակառակը, մենք խորհուրդ կ'տանք, փոքր ի շատ է հասակաւոր անձանց, 12—14 տարեկաններին, փորձել միւնյնը կատարել տալ ձախու ձեռօք, ինչ որ նոքա կատարում են աջ ձեռօք.—գրել, կտրել, կարել, ուտել, մաղերը խուզել և ածլել, ողորկել, արդկել... և այլն... վասն զի. 1) մի ձեռքը երբ որ յոգնի, կարելի է բանել միւսով; 2) կեանքի մէջ—հիւանդութիւնից, պատերազմից, ձախորդութիւնից աջու ձեռքը կարօղ է առ ժամանակ ցաւել; կարօղ է բոլորովին նուազել, թուլանալ; շատ անգամ պատահում է աջու ձեռքը կորուսանել...

<sup>1</sup> Le poignet, ручная кисть, die Faust, դաստակ ձեռաց:

և այլն; բոլոր այսպիսի դիպուածներում՝ մարդս կարօղ է բանել ձախու ձեռքով; մեծ հասակը հասած գժուար է սկսել ձախ ձեռօք սովորել գրելը... և այլն: Պատահած է մենչեւ, որ մարդս, կորուսած երկու ձեռքն, բայց ինքն դեռ առողջ գոլով, սովորել է աջու ստով գրելը, ինդրելով այլոց ամրացնել գրի չը ստի մատերի մեջ:

Ունեար անձինք պիտոյ է չխնայեն որ գրելու թուղթը որբան կարէլի է լաւ, սպիտակ, մաքուր և հաւասար լինի, որ գրչի ծայրը արձակ վարէ թղթի վերայ, սահի<sup>1</sup>: Ուսուցանելիս սագի<sup>2</sup> գրիչը նախամեծար են համարում, քան թէ պողպատինը, միմիայն պիտոյ է նայել, որ գրիչը որբան կարելի է լաւ լինի գուրս կտրած և, գրութեան հաստութեան կամ բարակութեան, յարմար, ոչշշատ կոշտ և ոչշշատ կակուզ: Ուեծածե տառերի գրութեան համար գրչի ձեղքը առաւել երկար և ծայրը հաստ, մանր գրութեան համար ձեղքը առաւել կարճ և ծայրը բարակ և սուր պիտի լինին: Ճ'եղքը պիտոյ է լինի բոլորովին ուղիղ, գրչի ծայրերը հաւասար:

Ուսանողի թանաքը<sup>3</sup> պիտոյ է սև լինի նոյն խոկ գրելու ժամանակ, որ ուսանօղը որոշաբար նկատէ իւր գրութեան կերպը; այն մելանները, որոնք գրելիս փոքր ինչ սպիտակագոյն են և գրելուց յետոյ են սեւանում, կարօղ են գործ ածել ամեներեան, բայցի կանոնաւոր և վայելուչ գրութիւն ուսանողներից:

<sup>1</sup> Աաշել սաշեալ; glisser; скользить, скользнуть; gleiten, schlüpfen seyn.

<sup>2</sup> Աագ (ղազ) ի, աց; լու; ցւս; die Gans: Բագ, ու, ուց, կամ ի, ից (էօրտէկ, պաթ); le canard; չтка; die Ente. Տիֆլիսու կողմերը սագ բառի տեղ գործ են ածում, սխալմամբ, բագ բառը, հետեւելով Ա բացոց, որոնք սագին կոչումն «բատի»:

Աակ, ի, աւ, կամ ով, ից—որոշած, կտրած, կարգ գրած; պայման,... Աակ արկանեմ, գին կտրել գաշն գնել; առ սակ; սակ ըստ տեղւոյն: Աակ—որոշեալ տուրք, եկամուտ:

<sup>3</sup> Թանաք, ի, աւ կամ ով, մելան; լ'енере, լ.; чернила; die Tinte. Թանաք, ի, ից—երկաթէ թիթեղ, թէնէքէ:

Որ տեղ որ լաւ սագի գրիչ գտանելը գժուար է, կամ թէ լաւ գրիչ յերիւրիչ (դուրս կարող) չի գտանվում և ուսանողը ստիպուած է պողպատեայ (քրայական) գրչով սկսել գրելը, պիտոյ է նայել, որ ուսանողների գործ ածած պողպատի գրիչը, բացի միջին ձեղքը, ունենայ երկու այլ ևս ձեղք, միջի ձեղքեց աջ և ձախ, առաւել ազատ և դիւրին գրելու համար; ծայրը լինի այնպէս հաւասար, որ թղթի վերայ բոլորովին ազատ գրէ, սահի: Ճանդուած կամ արձակ, ազատ չը գրօղ պողպատէ կամ քրայական<sup>1</sup> գրիչչ գործածելը լիսս է:

Շատ անձինք, նայելով այն գժուարութեանցը, որոնք պատահում են սագի գրչի լաւը ընտրելը, նոցա լաւ յերիւրելը և այլն, ոչինչ անշարժմարութիւն չեն տեսանում, մինչեւ լաւագոյն ևս են համարում պողպատեայ գրիչ գործ ածել, բայց ընտրելով միշտ ամենալաւը: Պողպատեայ գրչով<sup>2</sup> գրելուց յետոյ, պիտոյ է նոցա ծայրը ցամաք պատափի կտորով մաքրել, որ ոչ ազտոտ մնայ, ոչ էլ խօնաւութիւնից ժանդուածուի ու շուտ փշանայ:

Գրել ուսոցանելը կարելի է սկսել վեց տարեկան հասակից յետոյ, որովհետեւ մինչեւ այդ հասակը մանկանց կազմուածքը դեռ այնքան զարգացած չեն, որ կարօղանան գրիչը վարել; կան հիւանդուած մանուկներ, որոնք մենչեւ 8—10 տարին էլ այնքան նուազ են, որ նոցա ձեռքը գրիչ տալ չէ կարելի: Անենք ընդհանուրի վերայ ենք խօսում և ոչ բացառութեան:

Երեխայոց մատները զարգացնելու համար, առողջ երեխանց 4—5 տարեկան հասակից կարելի է տալ ձեռքը մատիտ և զանազան դիւրանկար խազեր և առարկաներ նկարելը ուսոցանել, այն խազերը կամ նկարները գնելով բարակ թղթի տակ, որ թղթի տակից պարզ երեխ և մանուկը կարօղանայ օրինակել; կամ սպիտակ, կապոյտ կամ կարմիր թանաքով տպած ցան-

<sup>1</sup> Քրայական, մետալական; métallique; металлический; metalisch.

<sup>2</sup> Անեսալլական, քրայական գրիչները ամենալաւը Անդլիւայէն կը բերեն:

ցերի խաղերը նորից քաշել տալով մատիտով եւ այլն.... ինչպէս որ Գրեօբէլի մետղով ընդունուած է Յ—Յ տարեկան երեխայոց պարապեցնել:

Յարմարաւոր և կանոնաւոր նիստ ունենալու համար պէտք է, որ, նախ ևառաջ, գրասեղանները և նստարանները կանոնաւոր կերպիւ լինին շինած և ուսանողների հասակին և կազմուածքին համապատասխան: Այս պատճառաւ, այսինքն, մանկանց աւողջութիւնը պահելու համար, գիտութեամբ աշակերտաց զանազան հիւանդութեան պատճառաւ չ'լինելու համար, պիտոյ է որ գասատան սեղանները և նոցա նստարանները, այն գասատան ուսանողների հասակին և կազմուածքին նայելով, լինին ամենայն գասատան մէջ Յ—Յ մեծութեամբ և չափով, առաւել ցածերը առաջ, առաւել բարձրերը յետ և ուսանողներն էլ նստած լինին նոցա հասակի մեծութեան և կազմուածքին յարմար. փոքրերը առաջեւ և մեծերը յետեւ, աստիճանաւ: Ուսանողաց այսպիսի նիստը ունի այն յարմարութիւնքը ևս, որ ամենքը նոքա տեսնումն ուսուցչին և նորացոյց տուածը; իսկ ուսուցանողը, բոլոր գասատան ուսանողներին միշտ առաջի աչաց ունենալով, գիւրութեամբ է պահպանում գասատան կարգը:

Ուսանողի, գրողի նիստը պիտոյ է լինե բոլորովին ուղղորդած, չ'կորացած<sup>2</sup>, ուսերը (թիկունքը) առաջ չ'եկած, կուրծքը (զօշը) շատ մօտ, բայց ամենեին չը շօշափի գրասեղանին, փոքր ազատ,—ներս չհաւաքած: Այս կարելի է կատարել այն ժամանակ, երբ որ սեղանի և նստարանի բարձ-

<sup>1</sup> Հաստիճանս աստիճանս, en amphithéâtre, амфитеатромъ, amphitheatralisch.

<sup>2</sup> Կոր, ծուռ, թիւրեալ; կորանալ, կորացուցանել, ծուռել; ծոռւել; courbe, tortu, tordre, se tordre, se courber; кривой, кривить, кривиться; krumm, schief, krumm machen, krümmen, sich krümmen.

բութիւնը և նստարանի հեռաւորութիւնը<sup>1</sup> սեղանից գրօղի հասակին յարմար կ'լինի և ուսանողը չի լինի պարտաւորուած ակամայ կորացնել իւր մէջքը, որ հասանէ սեղանին, և կարօղ կը լինի ազատ գրել:

Կատօղների ոտները պիտոյ է լինին գետնի<sup>2</sup> վերայ հաստատ, ուղղորդ՝ ձախ ոտքը փոքր առաջ որ գրօղի նիստը առաւել հաստատ և ամուր լինի; մարմնոյ աջը կողմին և աջը ձեռքին, որով կատարվումէ գրութիւնը, պիտոյ է առաւել ազատութիւն տալ:

Ձեռքերը պիտի լինին սեղանի վերայ մինչև արմուկը<sup>3</sup>, ոչ առաւել; ձախու ձեռքը ծուած (կորացեալ) մօտ գէպ'ի մարմինը; աջու ձեռքը ուղիղ, թղթի վերայ, աջու թիկունքին հանգէպ: Տեսրը պէտք է լինի սեղանի վերայ, սեղանի ներքի ափին<sup>4</sup> հաւասար; տեսրի շարժողութիւնը լինում է ձախ ձեռքով:

Ուսուցիչը կարօղ է անատոմիկական քարտեղների վերայ ցոյց տալ մարդոյ կմախերը, ողնաշարը և ներսի բոլոր կազմուածքը; այն ժամանակ ակներեւ կարօղ է ապացուցանել ուսանողներին, որ ուղղորդապէս նստիլը նոցանից պահանջում են բնական օրինաց և մարդկային կազմուածքին հետեւելով: Միմիայն այսպիսի ուղղորդ դրութիւնը (նիստը) ունենալով թէ պարապմանց և թէ, առ հասարակ, ամենայն ժամանակ, երբ մարդս նստած է, անկողնի մէջ պառկած չէ, միմիայն այսպիսի ուղղորդապէս նիստի ժամանակ մարդուս կազմուածքի բոլոր մասերը կարօղ են ունենալ իւրեանց բնական գրութիւնը և ազատ շարունակել իւրեանց գործողութիւնը; ոչ մինը նոցանից չի սեղմուիր մի կողմից, որպէս սապատողի (կուղիանի պէս)

<sup>1</sup> La distance, разстояние, die Entfernung

<sup>2</sup> Տախտակամածք, յատակ; le plancher; подъ; die, Diele.

<sup>3</sup> Le coude, локоть, der Ellenbogen.

<sup>4</sup> Ափն, — զբաղ, եղք; նաւի կող; le bord; край, берегъ; der Rand, Saum, das Ufer.

Նստած ժամանակը և չի լինի լարուած միւս կողմից, վասն որոյ կը պահպանուի առողջութիւնը և, միւս կողմանէ, գրութիւնը կարօղ է առաւելկանոնաւոր և յարմար կերպիւ շարունակվիլ:

Եւրոպացւոց և Վարդիկացւոց գրականութիւնները հազարաւոր հեղինակութիւններ ունին, որոնց մէջ ցոյց է տուած այն սաստիկ և բազում անգամ անբուժելի հիւանդութիւնները, որոնք յառաջ են եկել սեղանների անյարմարութիւններից և անկանոն շինուածքից և, նմանապէս, ուսանողների անկանոն, կոր, թէք նստելուց և ոչ ուղղորդ: Լաւ կ'լինէր որ բոլոր հասակաւոր այս կարգացողները աշխատէին իւրեանց համար սովորութիւն շինել կանոնաւոր նիստ ունենալը և իւրեանց տան սեղանները յարմարացնէին մեր ցոյց տուած օրինակի պէս, և մասնաւորապէս իւրեանց զաւակաց գրասեղանները անպատճառ շինել տան այնպէս, ինչպէս որ հարկն է: Ասակաւոր անձինք, որոնք արդէն ունին իւրեանց համար մեծ և սուլ գնով գնած սեղաններ, կարող են, գրելու համար, ունենալ առանձին մի կողմից բարձրացած տախտակներ (գրակալ, pupitre), ասուիով (մահուգ, չորսայ) վրէն կ պցրած, որը եթէ գրվի սեղանի վերայ, գրողի առաջև, բոլորովին այն ձեր և գրութիւնը ունենայ, ինչպէս այս գրքի մէջ առաջարկած և նկարած սեղանը: Այսպիսի շարժուն տախտակի կտորը, երբ հարկաւոր չէ, կարելի է որմի (պատի) վերայ կախ արած պահել:

---

Լոյսը պիտոյ է լուսաւորէ ամենայն կողմից հաւասար, իսկ մասնաւորապէս առջևից և ձախ կողմից առաւել, որովհետեւ գրիչը գրում է ձախից աջ և մարգս նայում է առաջ և ուղիղ: Լուսի առաջուց և ձախ կողմից լուսաւորելու հարկաւորութիւնը, նմանապէս սեղանների այն ձեր, որ ցոյց է տուած այս գրքի մէջ առանձին նկարով, սեղանի և թրղթի վերկի ծայրը փոքր բարձր լինելը ներքի ծայրից—,

Հիմնուած է մեր ձախից աջ գրելու<sup>1</sup> և մարդկային աշաց և  
բոլոր մարմնոյ կազմուածքի վերայ: Աաղեւ կայ մարդ, որ  
անձամբ անձին չ'ընի փորձած այս, զօր, երբ, գիշեր ժամանակ,  
լոյսը փոքր է, կամ հեռի, մենք շըջումնենք թղթի կամ գրքի  
կարդալու էջը գեպի լոյս, ձախ կողմից; լաւ լոյս ժամանակ,  
գրած թուղթը կամ տպած գիրք կարդալու, մենք, մօտա-  
ցնելով կարգալու էջը, վերեկի ծայրը փոքր բարձր ենք բը-  
նում:

Կրկնումնենք, որ միշտ կանոնաւոր և ուղիղ նիստ ունենալը—  
թէ գրելու, թէ կարդալու, և թէ, առ հասարակ, ամենայն  
ժամանակ, այսպիսի նիստը իւրեան համար բնաւորութիւն  
շինելու և, միւս կողմանէ, երեխայոց գրելու սեղանները և  
նստարանները նոցա հասակին, կազմուածքին և կանոններին  
յարմար շինելը—առողջաբանութեան հիմնական հարցերից մինն  
է և այս կանոնի ճիշդ և խելացի պահպանելը և կատարելը  
ապագայ սերունդի բարօրութեան համար ամենաստիպողական  
կարեորութիւն ունի, առողջապահութեան միւս կանոնների հետ  
միասին: Այս հարցի մասին քանի մի մասնաւոր տեղեկութիւններ  
կայ գրքի վերջին, առանձին, § X մէջ, կանոնաւոր գրասե-  
ղանի և նստարանի ստուերագրերի<sup>2</sup> հետ միասին:

<sup>1</sup> Եշրբ որ գրութիւնը աջ կողմից ձախ է լինում, որպէս  
արաբի, տաճկի, պարսից և այլ լեզուների մէջ, այն ժամանակ  
լոյսը առաջուց և աջ կողմից պիտոյ է առաւել լուսաւորէ:

<sup>2</sup> Ստուերագրեր, գրաց; le dessin, ébauche; die Zeich-  
nung.

## § VIII.

Հասկացողին մէկ, չհասկացողին հազար:  
Լաւ հաւը իրա ճուտերի վրայ ման կըգայ:  
Կատուի գունչը մըսին չի հասաւ, ասեց.  
Էս օր ուրբաթ ա:

Ուսուցիչների և ուսանողների պարապմունք-  
ների կերպը և յարաբերութիւնները:

Կանոնաւոր և վայելուչ գրութեան ուսուցիչները, — որպէս  
որ և այլ գիտութեանց վարժապետները, — պիտի կանոնաւո-  
րապէս զարգացած և ուսումն ստացած անձինք լինին, որով-  
հետեւ ներգործում են ուսանողների վերայ,   
ուսուցանում են նոցա — ; նմանապէս պիտի մաս-  
նաւորապէս տեղեակ լինին կանոնաւոր և վայե-  
լուչ գրութեան պատմութեանը, տեսականին և  
արհեստին; գաստիաբակական գիտութեան հմուտ  
լինին; ունենան ընդունակութիւն այս առար-  
կայի գասատուութեանը, սէր գէպ ի ուսանող-  
ները; քնքուշ՝ զաւակասէր անձինք լինին:

Իւր անձնական յատկութեամբ, զարգացողութեամբ, արժա-  
նաւորութեամբ, աշխատասիրութեամբ, գիտութեամբ, կատո-  
րեալ համբերութեամբ, անաշառ արդարութեամբ և անկող-  
մնապահութեամբ, առհասարակ, իւր բարզյական ներգործու-  
թեամբ ուսուցիչը պէտք է գրաւէ ուսանողների սէրը և  
համակրութիւնը թէ առ իւր սեպհական անձը և թէ առ այն  
առարկայն, որը նա ուսուցանում է; միևնոյն ժամանակ ուսու-  
ցիչը ամենամեծ զգուշութեամբ պիտի պահէ որքան իւր սեպ-  
հական անձնական պատիւը, այնքան էլ (ոչ պակաս) աշ-  
կերտելոց պատիւը:

Քայտնի է, որ ուսանողը, մանկական հասակում, իւր  
երեակայութեան մէջ վարժապետին միաւորում է նորա ուսու-

ցած առարկայի հետ; այսպիսի գիպուածում մանուկ ուսանողը այնքան է սիրում ուսանելի առարկայն, որքան իւր անձը սիրել և յարգել է տալիս այն առարկայի ուսուցիչը; որչափ նա հնարք է գտնում գրաւել ուսանողի ուշադրութիւնը և համակրութիւնը:

Կրգուելով ուսանողաց ուշադրութիւնը պարզ, հասկանալի, գիւրիմաց և ոգեսորուած բացատրութեամբ և մեկնութեամբ գրութեան բոլոր կանոններին, նոցա իրագործելու, կատարելու ձևին; միշտ համբերութեամբ և հանդարտութեամբ կրկնելով այն կանոնները, երբ որ ուսանողը կամ մոռացել է, կամ գժուարանում է նոցա իրագործելուն; ցոյց տալով այն կանոնների գործնական գործադրութիւնը; ընտելացնելով աշակերտելոց, որ նոքա ինքեանք էլ կարողանան վերահասու լինել գործին. անձնական աշխատութեամբ, սեպհական մտածողութեամբ և խորհելով հասկանան ուսանելի առարկայն, նիւթը, նոցա կանոնը, և այսպէս զարգացնելով ուսանողների հնարագութիւնը:

Ամենայն ուսուցիչ միշտ, անդադար ի մտի պիտոյ է ունենայ, որ նա երկու վեհ և խորհրդաւոր պաշտօն է կատարուամ. 1) ընդհանրապէս դաստիարակել զարգացնել հոգեորապէս և մարմնաւորապէս նոցա, որոնց նորան յանձնել են; 2) ուսուցանել այն առարկայն, գիտութիւնը կամ արհեստը, որը նա մասնաւորապէս ուսուցանում<sup>1</sup> է; Ոյն պատճառաւ ուսուցիչը պիտոյ է միշտ կատարելագործուի թէ իւր մասնաւոր դասատուութեան առարկայն իմաստափելով, նորա մէջ կատարելագոր-

<sup>1</sup> Այս երկու նպատակը պէտք է միշտ աշաց առաջե ունենան ամենայն ծնող, վերակացու և վերատեսուչ մանուկների մասին,—արհեստաւոր վարպետը իւր աշկերտի մասին և այս ծրագրի մէջ մեկնած ձեւրով, սկզբունքներով ուսուցանելիւրեանց և այլոց զաւակներին և աշակերտելոց:

ծուելով և թէ, առ հասարակ, գաստիարակական դրուածները  
և այլ հեղինակութիւնները իմաստափրելով։ Ոչ մի ժամա-  
նակ ուսուցիչը (եւ ամենայն մարդ) չէ պիտոյ մոռանայ, որ  
կարելի չէ բաւականանալ ունեցած գիտութեամբ, սառած  
մնալ մի որ և իցե կետի վերայ, վասն զի, ինքը գիտութիւնը  
օրեց օր յառաջ է գնում, կատարելագործվում է....; ուսու-  
ցիչը ինքն էլ պիտոյ է ամենայն օր քանի մի ժամ պարապէ  
պիտանի գրեանց ընթերցանութեամբ, կատարելագործելով իւր  
սեպհական գիտութիւնը...:

Միշտ յառաջ, միշտ յառաջ, անսասան։  
Վաջ, արի գէպ ՚ի գործ; ձեռք շարժիր,  
Աշխատիր, վաստակիր անձանձիր,  
Ա երջումը,—աներկմիտ գու կացիր—,  
Այս աշխարհ կամակոր, ախտակիր,  
Գիտութեան ոտքի մօտ կ'սոնարհի։

Գէպ ի կրթութիւն, յանուն սուրբ իսաշին,—  
—Այս է պահանջում մեր դար լուսաւոր։

Ուսուցիչը միշտ պիտոյ է ամենայն կերպ աշխատէ գիւ-  
րացնել ուսանողների համար իւր գաստուութիւնը, բայց,  
միևնոյն ժամանակ, ոչ մի քայլ կանոնն երից ո՛չ աջ,  
ո՛չ ձախ չը շեղելով, որովհետեւ գիւրացնելը ամենեին չէ  
նշանակում պակաս, կամ թերի ուսուցանելը։

Կատարեալառաքինի և աշխատասէր սերունդ պատրաստելու  
հիմնական միջոցներից մինը այն է, որ ման կական հասակից  
բնաւորութիւն շինեն երեխաւին. 1) օգտաւէտ  
և անգամար պարապմունքը մարմնաւոր և մը-  
տաւոր, և 2) որ և իցէ գործի, առարկայի, ար-  
հեստի կամ ուսման ամենափոքը, ամենաշնչին մա-  
սը կատարել այնպիսի կատարեալ և կանոնաւոր  
կերպիւ, ճշգութեամբ, կանոնաւորութեամբ,

մաքրութեամբ, հաւատաբմութեամբ և արդարութեամբ, ինչպէս որ մի ականառոր, երեւելի գործ: Վայն ազգը, որի մէջ առաւել կը լինի այսպիսի միշտ ջանասէր, միշտ մտածով, խորհելով աշխատօղ և այսպիսի ազնիւ և հաւատարիմ անձինք, այն ազգը և նորա անդամները յարգ և պատիւ կ'ունենան ամենայն ազգերի մէջ; յարգանքի և պատուի հետ համակրութիւն; համակրութեան հետ հաւատ, հաւատի հետ ամենայն յառաջադիմութիւն և մարմնաւոր և մտաւոր բարօրութեան ամենայն արգասիքը; այսպիսի ազգը ստրուկ չի մնար, այլ իւրեան մշակ կը շնչէ իւրեան շրջապատօղ և իւրեանից թերի ուսումն և զարգացումն ունեցող ազգերին:

Թողարկացողութիւնը ունէ, որը չէ բաւականանում միմիայն իւր փորը կշտացնելով, այլ գիտէ իւր սեպհական և իւր ազգի յարգանքն և պատիւը, միշտ լաւ միտը պահէ և չը հասկացողին հասկացնէ, որ մենք կենում ենք այնպիսի ժամանակ, որ ոչինչ ազգայնութիւն չէ կարող իւրեան ապահով համարել, ոչ իւրեան իրաւանց մէջ և ոչ մինչեւ իւրեան վեճակի (կայանի) մէջ, եթէ նա կամ չունէ, կամ շուտ չի ձեռք բերէ, չի տարածէ իւր ազգի մէջ կանոնաւոր կրթութեան, դաստիարակութեան և ուսման ամենահարկաւոր պարագայքը և միջոցները: Դոլոր մեր ազգային հարցերը և խնդիրները այս գլխաւոր հարցին պիտոյ է ստորագրուին, մեծաւ—մասամբ...:

Ուսուցիչը պիտոյ է ներգործէ ուսանողի այն հոգեոր զօրութեան վերայ, որով նա սեպհականացնում է իւրեան այն գիտութիւնը, որը ուսել է: Մարմնոյ այն գործարանները,—որոնք շարժում են գրութեան ժամանակ—, ստանում են գրգումն<sup>1</sup>

<sup>1</sup> Instigation, excitation; возбуждение; die Anregung, Erregung; գրգիւ, գրգումն, թելազրութիւն, հրապոյրք: Կրգեմ, գեցի; գրգել; գրգեցուցանեմ; գրգիչ գրգող; գրգուլ շարժել; գրգուղ:

վերոյիշեալ զօրութիւնից և այն տեղեկութիւններից, որոնք,  
որ ուսանողը աստիճան առ աստիճան ստանում է դասատու-  
ութեան ժամանակ: Ուսուցիչը, նախ և առաջ, այդ զօրութեան  
վերայ պէտք է ներգործէ:

Դասատուութիւնը—կ'ունենայ արդիւնաւոր հետևանքներ  
այն ժամանակ, երբ որ կատարելապէս կը գրաւէ ուսանողների  
ուշադրութիւնը, որը կը գրգռուի, կը գրգռուի այն ժամանակ,  
երբ որ ուսանողի հետաքրքրութիւնը կը շարժուի կենդանի  
և հասկանալի դասատուութեամբ, երբ որ ուսանողը դասատու-  
ութեան օգուտը շշափելի և դիւրին կերպիւ կը զգայ և կը  
հասկանայ, վասն զի օգուտը և ուշադրութիւնը իրարու հետ ան-  
րաժեան են. ուր որ կայ օգուտ, այն տեղ կայ ուշադրութիւն ևս:

Հետաքրքիր և ընդունակ ուսուցիչը դիւրութեամբ կարող  
է նկատել գրգռուած է արդեօք ուսանողների ուշադրութիւնը  
թէ ո՛չ: Աշակերտուհեաց և աշակերտների ուրախ գէմքից;—  
նոցա եռանդուն շարժողութիւններից, աշխատանքը սկսելու  
ժամանակ; նոցա հարցմունքներից, երբ խնդրում են մեկնել  
կամ ցոյց տալ այս կամ այն, ինչ որ նոքա կամ չեն հաս-  
կանում, կամ լաւ չեն սեպհականացրել իւրեանց;—այն կար-  
գապահութիւնից, որ լինում է այնպիսի դասատան մէջ, որ տեղ  
որ ուսանողները սիրով են պարապում իւրեանց գործով;—այն  
եռանդից<sup>1</sup>, որով նոքա իւրեանց գրութիւնը ցոյց են տալիս  
ուսուցչին;—այն տիրութիւնից<sup>2</sup>, որը երևումէ նոցա երեսին,  
երբ գործը անյաջող է գնում՝ բոլոր այս և սոցա նման նշան-  
ները ակներե ցոյց կը տան ընդունակ ուսուցչին, թէ մինչեւ  
որ աստիճան են գրաւուած ուսանողները այն աշխատութեամբ,  
որով նոքա պարապում են<sup>3</sup>:

<sup>1</sup> Le zèle, empressement; յըրծի; der Eifer; փոյթ, եռանդ:

<sup>2</sup> Le chagrin, dépit; досада; der Verdruss; տիրութիւն, ցասում,

նեղութիւն, տառապան:

<sup>3</sup> Կարօղ է պատահիլ հարաւային երկիրներում, շոգ ժա-

Ոսուցչի կողմից ցասմունքը<sup>1</sup>, Հայհոյանքը և սպառնալիքը, նմանապէս ուսանողների փառասիրութիւն գրգռելը չեն կարօղուչ մի ժամանակ շարժել (կամ շատ և շատ կարճ ժամանակ) ուսանողների ուշագրութիւնը և հետաքրքրութիւնը, եթէ ուսուցիչը չէ գրգռում այդ հետաքրքրութիւնը և ուշագրութիւնը իւրեան ազգու և ոգերուուած դասատուութեամբ, պարզ և յափշտակիչ<sup>2</sup> մեկնողութեամբ; բացի սորանից, Հայհոյանքը և սպառնալիքը սաստիկ խանգարում են մանկանց

մանակ, ճաշից ետոյ, երբ որ գեռ երեխայի փորը կուշտ է, կամ նա յոգնել է որ և իցէ պատճառաւ (հեռուից է եկել; տանը աղքատ ծնօղաց օգնել է նոցա մշակութեան մէջ,... տան առնելիքն է առել...), այսպիսի ժամանակ բանիմաց ուսուցիչը հնարք կը գտնէ նոցա ուշագրութիւնը արթնացնել զանազան յարմար և օգտաւէտ կերպերով, զօր, բոլոր դասատան մի լաւ ազգային երգ երգել տայ; մի քանի զուարձալի և դաստիարակիչ անցըերի վերայ պատմէ, Հայոց կամ օտար ազգերի պատմութիւններից առած; մի քանի մարմնամարզական շարժմունք և այլն....: Լաւ կը լինէր, որ սովորութիւն դառնար ամեն մի նոր ուսանողին բոլոր գպրոցի ուսանողները երգերով ընդունէին առաջի անգամը և ցոյց տային բոլոր իւրեանց խաղերը, գպրոցի կարգը ու կանոնը; լաւ քաջալերէին այնպէս, որ նորեկ ուսանողը խնդութեամբ լինի շտապում գպրոց գնալը: Մարմնամարզական քանի մի և յարմարութեամբ ընարած շարժողութիւնները, ձեռքերով, մէջքով և ոտներով շատ օգտաւէտ է թէ մանուկների և թէ հասակաւորների համար օրը հինգ, վեց անգամ կատարել, ամեն անգամ տասը բոպէի չափ: Այսպիսի շարժողութիւնները մանաւանդ մեծ օգուտ կը բերէին եթէ կատարէին վայելչագրութեան դասատուութեան ժամանակ, գասից կէս ժամ սկսելուց յետոյ և ամեն մի դասի վերջանալուց յետոյ, երբ որ մի վարժապետի դասատանից դուրս գնալուց յետոյ և մինչև միւս ուսուցչի գալը անցանում է 10—15 րոպէ: 36—37 էջերի 2-րդ ծանօթ. մէջ

<sup>1</sup> Le ménace, угроза, die Drohung, սաստ, պատուհաս:

<sup>2</sup> Entraînant, seduisant, увлекательный, hinreissend, յանկուցիչ, ձգիչ:

բնաւորութիւնը, ստրկացնում են նոցա հոգին, մանուկների խորամանկութեան, երկչոտութեան, խաբեբայութեան և պյլ վատ և վասակար բնաւորութեանց պատճառ են դառնում:

Վայնտեղ, ուր որ կայ ծեծ, գան և հայհոյանք—ուսանողները վատ բնաւորութիւն են ստանում ծածկել ուսուցչից իւրեանց արածը; փարիսեցութեան սովորութիւն են ստանում,

---

մենք ցցց սուինք Պедагогический Сборникъ *Малыкаварժақаш* аմսագրի *Մարմամարզութեան վերաբերեալ* մի հատուածը, ուր որ այս գիտութեան գրականութեան մի մասն էլ կայ յիշուած, բայց որովհետեւ նոյն ամսագիրը մերայնոց մէջ տարածուած չէ.... վասն որոյ նոյն հատուածից քաղզում ենք մի քանի միւս շարադրութեանց ձակատագրերը մարմամարզութեան վերաբերեալ (книжки VIII, IX и X).

Die Gymnastik aus dem Gesichtspunkte der Diätetik und Psychologie, von Dr. Koch. Magdeburg, 1830.

Das Turnen und der Kriegsdienst, von Dr. W. B. Mönnich. Stuttgart, 1843.

Die deutschen Turnübungen, eine Vorschule für den Kriegsdienst, von Dr. W. B. Mönnich. Stuttgart 1861.

Das Turnen in den Handübungen für beide Geschlechter, von Dr. Schpiess. Basel, 1842. (1 Thlr.).

Das Turnen in den Stemmbübungen, von Dr. Schpiess. Basel, 1843. (1 Thlr. 20 Ngr.).

Das Turnen in den Gemeinübungen in einer Lehre von den Ordnungsverhältnissen bei Gliederungen einer Mehrzahl für beide Geschlechter, von Dr. Schpiess. Basel, 1846. (Thlr. 20 Ngr.).

Turnbuch für Schulen als Anleitung für den Turnunterricht durch die Lehrer der Schulen, von Dr. Schpiess.

Die Uebungen für die Altersstufe von 6—10 Jahre bei Knaben und Mädchen, von Dr. Schpiess. Basel, 1847. (1 Thlr. 21 Ngr.).

Die Uebungen für die Altersstufe von 10—16 Jahre, von Dr. Schpiess. Basel, 1851. (2 Thlr.).

Neue Jahrbücher für die Turnkunst. Freie Hefte für Erziehung und Gesundheitspflege (Jährlich 4 Hefte) Von M. Kloss. Schönteld, Dresden, 1855.

Die weibliche Turnkunst. Ein Bildungsmittel zur Förderung der kloss. Turnkunst. 2 Aufl. Gesundheit und Anmuth des Frauengeschlech-

իաբել ուսուցչին արտաքին բարի ձեռքով, արտաքին ամօթ-  
իածութեամբ, արտաքին արիութեամբ։ Կան և հայհոյանք  
սովորաբար գործ են ածում, մեծ մասամբ, իւրեաց անձը  
զսպել ըստ կամեցող ուսուցիչները, — չ' գիտենալով այլ կերպ  
պահպանել կարգապահհութիւնը աշակերտների մէջ, ծոյլ ու-  
սուցիչները, — չ' կամենալով գլուխ գնել ուսանողներին հա-

tes. Mit 140 Abbildungen, 12 ein- und zweistimmigen Liedern und 4 Musikbeilagen zur Begleitung der Schrittweisen, Reigen und Spiele. Von M. Klooss. Leipzig, 1855. (2 Thlr. 20 Ngr.).

Weibliche Hausgymnastik. Eine leicht verständliche im Hause und Zimmer ausführbare Selbstanweisung zu Gesundheitsgemässer und heilkräftiger Körperübung. Als Beitrag zur Gesundheitslehre für das Weibliche Geschlecht aller Altersstufen bearbeitet, Von M. Kloss. Mit 30 Abbildungen. Zweite vermehrte Auflage. Leipzig 1860. (24 Ngr.).

Huntel-Büchlein für Zimmerturner. Ein Beitrag zur praktischen Gesundheitspflege, von M. Kloss. Mit 20 Abbildungen, zweite Auflage. Leipzig, 1860. (10 Ngr.).

Die Turnschule des Soldaten. Systematische Anleitung zur körperlichen Ausbildung des Wehrmannes ins besondere für den Feld- und Kriegsdienst. Von M. Kloss. Mit 82 Abbildungen. Leipzig, 1860 (1 Thlr. 15 Ngr.).

5) Das Turnen im Spiel oder lustige Bewegungsspiele für muntere Knaben. Von M. Kloss. Mit 16 Figurentafeln. Schönfeld, Dresden, 1861.

Die Gymnastik nach dem System des schwed. Gymnasiarchen P. H. Ling.

- I Abschnitt: Das Wesen der Gymnastik.
- II   »      Die Pedagogische Gymnastik.
- III   »      Die Heilgymnastik.
- IV   »      Die Wehrgymnastik.
- V    »      Die Estätische Gymnastik, von H. Rothstein. Berlin Schröder. (7 Thlr.).

Die gymnastischen Freiübungen nach Ling's System, von H. Rothstein. Berlin, 1860. (20 Sgr.).

Die gymnastischen Rüstübungen, nach P. H. Ling's System, von H. Rothstein. Berlin, 1855. (20 Sqr.).

Die Heilgymnastik oder die Kunst der Leibesübung angewandt zur Heilung der Krankheiten nach dem Systeme des Schweden Ling. von Dr. Neumann. Berlin, 1852. (2 Thlr. 25 Ngr.).

*մողելու:* Ուր տեղ որ ուսանողները, մանկուները ոչինչ չեն  
թագուցանում ուսուցչի առջև, վերջնը գիտէ ինչ որ լինում  
է նոցա մ.ջ; Նա կարօլ է մանուկներին զգուշացնել հաղար մի  
սխալանքից իւր սիրալիր և աղդու քարոզութեամբ, ցոյց տալով  
ամօթն և ամենավխաս հետեւանքները այս կամ այն գործերի: Ինչ  
և իցէ, մենք, այերս, գիտենալով որ գանը (ծեծը) և հայ-

Die Heilung der chronischen Unterleibsbeschwerden durch schwedische Heilgymnastik. von Dr. Eilenburg. Berlin, 1856. (20 Ngr.).

Athenäum für rationelle Gymnastik, Berlin, 1854—1857.

Manuel d'éducation physique gymnastique et moral, par F. Amoros. Paris, 1830. (Nouv. edit. 1848).

Gymnastique pratique de M. N. Laisné. Paris, S. Dumaine. 1850.

Instruction pour l'enseignement de la gymnastique dans les corps des troupes et les établissements militaires. Paris, librairie militaire de S. Dumaine, 1847.

Extrait de l'instruction pour l'enseignement de la gymnastique etc. Paris, Dumaine, 1850.

Kalisthenie oder Uebungen zur Schönheit und Kraft für Mädchen, von Klias, mit Vorwort von A. Meckel. Bern, 1829.

Die Leibesübungen hauptsächlich nach Klias, von Dr. H. H. Fögeli. Zürich, 1843.

Traité élémentaire de gymnastique rationnelle ou cours analistique et gradué d'exercices propre à développer et à fortifier l'organisation humaine, précédé de la gymnastique de la première enfance et de vieillards, suivie d'une esquisse de gymnastique militaire. Accompagné d'un Atlas de 12 grandes planches. Genève et Paris, 1853.

Schweizerische Turnzeitung. Nationalorgan für Pflege und Bildung des Leibes. Herausgegeben von J. Niggeler. Zürich, Fürrer.

Das Turnen, sein Einfluss und seine Verbreitung, von J. Niggeler. Bern 1852.

Turnschule für Knaben und Mädchen von J. Niggeler. Zürich, 1860.

Calisthenies, or the elements of bodily culture, on Pestalozian principles: a contribution to practical education, by H. de Laspée. London, Darton and Co. 1856. (Mit 2000 Fig. 7 Thlr.).

Das Turnen vom ärztlichen Standpunkte aus Leipzig von Dr. Schreiber. 1843. (10 Sbgr.).

Հոյանքը ամենից շատ են ստրկացնում մարդուս հոգին, խանգարում նորա բնաւորութիւնը և, միւս կողմանէ, աչաց առաջնունենալով և ավագ տալով այն վատ հետևանքների վերայ, որոնք ամենայն օր կրում ենք և զգում մեր անցեալ ստրուկութիւնից, մենք այերս ամենից շատ և մասնաւորապէս պարտական ենք աշխատելով որ մեր ապագայ սերնդի դաստիարակութեան ժամանակ ծեծ և հայհոյանք չը գործ ածուին, որ ո՛չ ոք չը համարձակի հայհոյէ անպատիւ իսօսքերով և ծեծ տայ հայ մշակին, արհեստաւորին, գեղացուն.... և այլն..., որմեր կեանքի մէջ ստրկութեան բոլոր սովորութիւնները, ձևերը և վատ հետևանքները վերջանան; մանաւանդ բոլորովին հեռու լինին որ և իցէ ստրկական յարաքերութիւնները հոգեռորականաց մէջ, ժամկոչից սկսած մինչև կաթուղիկոսը, որոնք ամենայն րոպէ ի մտի և աչաց առաջն պարտական են ունենալ, որ ստրկական յարաքերութիւնը ամենասասատիկ և հիմովին ընդգէմ է մարդկային

Kinesiatrik oder Gymnastische Heilmethode, von Dr. Schreiber. Leipzig, 1852. (2 Thlr.).

System der ärztlichen Zimmerymnastik. Ebnd. 1856. (1 Thlr.).

Organon der physiologischen Therapie, von Dr. E. Richter. Leipzig, 1856.

Berichte über die neuere Heilgymnastik.

Die neuere Gymnastik und deren therapeutische Bedeutung, von Dr. H. Meyer. Zürich, 1857.

Որ տեղ կան զինուորներ, որոնք պարապում են զինուորական մարմնամարզութիւնով, զինաշարժութիւնով եւ հրացան նետելով, օգտաւետ է ուղարկել վերոյիշեալ զինուորների պարապմոնքը նայելու հայ երախաններին, երբ որ նոքա ազատ են: Խորդ հայերը չը մոռանան, որ վերոյիշեալ պարապմոնքները հարկաւոր են այն պատճառաւ ես, որ շատ մօտ է այն րոպէն, երբ որ զինուորագրութիւնը կը դառնայ հայոց թէ պարտականութիւն եւ թէ իրաւունք: Ամենայն իրաւունք ունի իւր պարտականութիւնը, երբ կրումնք պարտականութիւնը, — նորա համապատասխան իրաւունքների իրաւունքն էլ ստանում ենք:

արժանաւորութեան, բոլոր աւետարանին և Վրիստոսից մեզ  
տուած քարոզներին և օրինակին; ընդգէմ է Տեառն մերոյ  
այն խոնարհութեան օրինակին, որն կտակեց բոլոր մարդկու-  
թեան, լուանալով իւր աշակերտելոց ոտները և ի խաչ ելա-  
նելով բոլոր մարդկութեան համար:

Այս խոնարհութեան, հեղութեան և մարդասիրութեան  
օրինակները և զոհերը ցոյց տուեց ինքն Աստուած Տէրն մեր  
Հիսուս Վրիստոս, և ոչ թէ առաջուց պահանջեց իւր ստեղ-  
ծուած ստորագրեալներից:

Ասսկացօղին մէկ չ'հասկացօղին հաղար:

Աեծ քաղաքներում ինքը հասարակութիւնը պիտոյ է  
աշխատէ դատաւորի և տէրութեան առաջեւ հրապարակ հա-  
նել և լրագրերի միջոցներով ցոյց տալ այն վատ ներգործու-  
թիւնները, որոնք կորուսանում են շատ և շատ մանուկներ,  
խանգարում նոցա բարքը, վարքը և բոլոր ապագայն: Ինքը  
ժողովուրդը լաւ գիտէ իւրեանց քաղաքի պակասութիւնները,  
ամենայն փշութեան ծակ ու մուտերը, վասն որոյ, եթէ ունի  
կամք և խելք, այդ բոլորը ի լոյս կը հանէ ի գիտութիւն  
ամենեցուն....:

Աանկական հասակը իւր մէջ արդէն ունի հետաքրքրու-  
թեան բնական ձգտումը ամենայն ինչ հարցանելոյ, փորձելոյ,  
իմանալոյ: Թէ գպրոցի և թէ ծնօղաց տանը մանուկը, սկսելով  
զանազան խազեր գծագրել, մասամբ կատարում է իւր սրտի  
ցանկացածը: Ուսուցչի պարտքն է, նորա ընդունակութիւնից  
և գիտութիւնից է կախած այսպիսի բնական ձգտումը երե-  
խայի, նորա բնական հետաքրքրութիւնը շարժել առ այն  
առարկայն, որը նա ուսուցանում է; պարզ, ոգեօրուած, ման-  
կանց հասկանալի մեկնութեամբ ուսուցանէ նոցա: իւր ասածը  
և մեկնածը ցոյց տայ գործով, մեկնելով, թէ ո՞րպէս, ի՞նչով,  
ինչ նիւթի վերայ են գրում:—ցոյց տալով այն նախամեծա-  
րութիւնը, որ ունէ կանոնաւոր և վայելուշ գրողը վատ

գրողի առաջն; -- վայելուչ և կանոնաւոր գրելու կարեռութիւնը, ստիպողական հարկաւորութիւնը ամեն դասի անձանց համար, թագաւորներէն և կաթուղիկոններէն սկսած մինչեւ վերջին արհեստաւորը:

Եթէ ամօթէ է կամ անվայել կեղտոտ հաքուսը, առաւել ամօթէ է կեղտոտ և վատ գրութիւնը; ամենայն մարդ ստիպուած է լինում, կենաց զանազան հանգամանքներում, հաշիւ, նամակ, շարադրութիւն, հրաման գրել; հաշուատեսութիւն պայել; գտաստանական գրագրութիւն անել; գտաստանական ատեանները խնդրանօք դիմել; մարդս առանց գրել իմանալու ամենամեծ գժուարութիւններ է կրում; բազում անգամ նա մի քայլ չէ կարօղ անել; առանց այս գիտութեանը; անչափ և անսելի են այն տառապանքը, զրկանքը, որ կրում է մարդս անուսումնութիւնից, իսկ գրութիւնը ուսման հիմն է, առաջին աստիճանը..., և այլն...,

Աեանքի մէջ, բնութեան մէջ, շրջապատող առարկաների մէջ միենոյն առարկաներից մարդս ընտրում է այն, որը առաւել գեղեցիկ է: Երկու թուղթ օրինակողից առաւել մեծ գին են տալիս նորան, որի գրութիւնը առաւել կանոնաւոր և վայելուչ է; երկու միենոյն արժանաւորութեան տէր ստորագրեաներից, մեծաւորը իւր զանազան գործերի վերաբերեալ գրագրութիւնը յանձնում է նորան, որի գրութիւնը առաւել կանոնաւոր և վայելուչ է և այսպէս մօտացնում նորան իւր մօտ, մերձաւոր անձն է գարձնում և իւր շնորհը նորանից անպակաս անում: Խշանութիւն ունեցող անձինք շատ անգամ ուշագրութիւն չեն գարձնում այն խնդիրներին, որոնք անվայել են գրած; վատ գրած շարագրութիւնը կամ գասերը կարգալիս առաւել շատ են յոգնում, ձանձրանում, աչաց տկարութիւն ստանում; կանոնաւոր և վայելուչ գրութեան հմտութիւնը ունենալով, մենք կարօղ ենք ինքներս ուսուցանել մեր զաւակներին, ազգականներին; շատ անգամ այս գիտութեամբ միայն կարօղ ենք օրական ապրուստը ձեռք բերել..., և այլն...,

Բաւական չէ միայն գրգռել ուսանողների ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը, այլ պիտոյ է որ այդ ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը անդադար շարունակուին մինչև ուսման վերջը —, կատարեալ հսկողութեամբ պահպանելով և իրագործելով բոլոր կանոնները, և զգուշութեամբ նայել որ ուսուցչի պահանջմունքները ուսանողների հոգեոր և մարմնաւոր կարողութեանը և զարգացմանը համեմատ և համապատասխան լինեն և ոչ առաւել նոցա կարողութիւնից:

Երբ որ թէ մանուկից, թէ հասակաւորից պահանջներ նորա զօրութիւնից, նորա կարողութիւնից և հասկացողութիւնից առաւել, նա կամայ և ակամայ չէ կարող կատարել նորանից պահանջածը; սոյն պատճառաւ նորա արածը թերի, անկանոն և վատ կը լինի; անսանելով իւր անյաջողութիւնը, նա կ'սկսի ձանձրանաւալայն պարագմունքներով, որոնք անյաջողեն գնում, կ'ատէ այն առարկայն; ողորմելի ուսանողը բոլորովին անսարդար ծոյլի անուն կ'ստանայ, նորա անձնանիրութիւնը սաստիկ կը վիրաւորուի և նա կ'սկսէ իւրեան անընդունակ կարծել: Որքան մանուկներ այսպէս տարապարտ և ի զուր կորուսուել են, այն ինչ այս կորստեան և անյաջողութեան պատճառը եղել է ուսուցիչների կամ կատարեալ տգիտութիւնը, կամ թէ անուշադրութիւնը; շատ անգամ երկուքն էլ միասին:

Երբ որ ուսուցչի գասատուութիւնը պարզու կանոնաւոր, դիւր ըմբռնելի և գրաւեիչ մեկնութեամբ շարժում է աշակերտուհիների և աշակերտների հետաքրքրութիւնը, ուշադրութիւնը, ընդունակութիւնը և սէրը; երբ ուսուցիչը, քննելով և ձիշդ հասկանալով աշակերտելոց հոգեոր, մտաւոր և մարմնաւոր զօրութիւնը, կարողութիւնը, — յաջող կերպիւ յարմարացնում է իւր պահանջմունքը աշակերտելոց այն զօրութեան և կարողութեան հետ, և նոցա ունեցած կարողութիւնից շատ առաւել չէ պահանջում —, այնպիսի ժամանակ ուսումը շա-

բունակվում է արդիւնաւոր կերպիւ և այսպիսի գասատու-  
ռոթեան ժամանակ ծոյլ աշակերտներ չեն կարող լինել:

Եթէ մի ուսումնարանի կամ գասատան որ և իցէ առար-  
կայի գասատուռութեան մէջ չկայ կանոնաւոր և շարունակ  
յառաջադիմութիւն, լաւ կարգապահութիւն, աշակեր-  
տելոց առողջութիւնը, նոցա մտաւոր զարգացումն պակաս են,  
մի ակ պատճառը և մեղաւորները դպրոցի հանդա-  
գամանքները են, կամ միջոցներ չունենալը; կամ հո-  
գաբարձուների, կառաւարիչների տգիտութիւնը, ծուլու-  
թիւնը և անհոգութիւնը; ուսուցիչների անուսումնութիւնը  
և այն.... եւ ոչ թէ մանուկ աշակերտուհիների և  
աշակերտների չը կամենալը կամ ծուլութիւնը:  
Այս միշտ և հանապաղլաւ միտը պահեն այն ամենայն անձինք,  
որոնց կամ յանձնուած է մանկանց գասատիարակութիւնը կամ  
որոնք ունին որ և իցէ իշխանութիւն և ներգործութիւն ման-  
կանց գասատիարակութեան կամ ազգային գլորցների վերայ....:

Ուսուցանողի պահանջմունքը, համապատասխան լինելով  
ուսանողի մտաւոր և մարմնաւոր կարողութեանը,—պիտի,  
միենոյն ժամանակ, և աստիճան առ աստիճան առաջարկէ աշա-  
կերտին այնպիսի գործ, նորա պարապմունքը շարունակէ այն-  
պիսի աստիճան առ աստիճան յառաջ խալացմամբ, որ այս-  
պիսի պարապմանց կատարումը հարկադրէ ուսանողին խորհել,  
մշակել, ջան զնել<sup>1</sup>, մի փոքր «Ճգնութեամբ» կատարել  
նորան առաջադրած գործը, պարապմունքը<sup>2</sup>, վասն զի,  
երբ որ և իցէ գործ կատարվումէ մի փոքրիկ ճգնութեամբ,  
փոքրիկ գուարութեամբ և արդիւնաւոր հետեւանքով, այն  
ժամանակ այսպիսի ճգնութիւնը գրգռում, մարզում է ուսանողի

<sup>1</sup> Faire ses efforts, employer ses forces; напрячь силы, д'влать усилие; seine Kräfte anstrengen, sich anstrengen; Ճգնել, գուն գործել, աշխատանք քաշել.

<sup>2</sup> Le problème, задача, առաջարկութիւն, առաջարկ, առաջա-  
դրութիւն, գրութիւն, առեղծուած, die Aufgabe.

մտաւոր զօրութիւնը և շարժում է նորա հետաքրքրութիւնը  
շարունակելոյ գործը մինչև վերջը: Այս կերպ, սակաւ առ  
սակաւ, աստիճանաբար մարզելով իւր կարողութիւնը, դիւ-  
րին խնդրից անցանելով գետ ի առաւել գժուարը և լուծա-  
նելով այն գժուարութիւնները մասամբ ուսուցչի օգ-  
նականութեամբ, մասամբ իւր անձնական ճգնութեամբ; ունե-  
նալով իւրեան առաջնորդ այն կանոնները, որը որ ուսմամբ  
է սեպհականել, ուսանողը սկսում է զգալ իւր անձնական  
կարողութիւնը, ստանում է բնաւորութիւն անձամբ անձին,  
ինքն իւրմէ, սեպհական զօրութեամբ առաջ գնալ; լուծանել  
պատահած գժուարութիւնները սեպհական ճգնութեամբ:

Ենքնագործունէութիւնը, անձնական մտածո-  
ղութեամբ, հնարագիտութեամբ և աձնաշխատու-  
թեամբ առաջ գնալը շինել իւրեան համար բնաւորու-  
թիւն — ամենայն կերպ արգիւնաւոր հետեանքների  
գրաւականն է և այսպիսի բնաւորութիւնը ման-  
կական հասակի մէջ արմատացնելը գասափարա-  
կութեան ամենագլխաւոր և ամենագիւնաւոր հի-  
մըն է ձանաչվում եւրոպացւոց ամենալուսաւոր  
ազգերի մէջ, մանաւանդ. Խնդիբացւոց, ուր տեղ թէ սոս-  
րին, թէ միջին և թէ վերին գլորցների, ընդհանրապէս,  
բոլոր դաստիարակութեան գլխաւոր ուղղութիւնը այն է, որ,  
ամրացնելով և զարգացնելով մանկական հասակի բոլոր հոգեոր  
և մարմնաւոր ոյժը, պատրաստել այնպիսի սերունդ,  
որի ամեն մի անդամը (պատանի և պատանեկուհի) կա-  
րողանայ կեանքի զանազան հանդամանքների  
մէջ շարժիլ իբրև բանական ինքնէակ, ինքնա-  
կամ, ինքնատունը, անձնաշխատ զարգացեալ անձն,  
որը արիութեամբ պահպանում է իւր անձնական  
իրաւունքը և պատիւր և, պատահած ժամանակ,  
բոլոր հասարակութեան իրաւունքը, լաւ հաս-  
կանալով, որ հասարակաց օգտի, բարօրութեան

և ապահովութեան մէջ պարունակուած է ամեն մի անհատի բարօրութիւնը և ապահովութիւնը:

Եթէ ուսանողը վատթար սովորութիւն ստացաւ որ և իցէ գործ մեքենայաբար գործել, առանց հասկացողութեան, առանց խորհելոյ, մտածելոյ, քննելոյ, նշմարելոյ, հաշուելոյ, անդիտակցաբար, նորան կարելի է ասել մեքենայ և ոչ բանական, զարգացեալ մանուկ: Այսպիսի մեքենական կեցութեան բնաւորութիւնը սպանում մարդկային ընդունակութիւնը, անձնաւորութիւնը — (personalité, լիчностъ), — այդ նորան Աստուածանից տուած ամենաթանկագին ձիրքը, ստրկացնում է մարդկային հոգին և լինում պատճառ այն ամենայն չարեաց և տառապանաց, որ կրում են ամենայն անուսում թէ ազգեր, թէ մասնաւոր անձննք, զուրկ կ լին ելով անձնական, ազատ, առանց նախապաշտ րմունքի հասկացողութիւնից, ամենայն գործի էութիւնից, ամենայն լիրական յարաբերութիւններից (իրաւանց և պարտաւորութիւններից) և այդ յարաբերութիւնները կանոնաւորելու կերպերից թէ առ իւրեան հաւասար, թէ նորանից բարձր և թէ նորանից ստորագրեալ անձանց և դասուց գէմ:

Իսյց, միենոյն ժամանակ, թէ ուսուցիչ, թէ գաստիարակ և թէ ծնող ոչ մի ժամանակ չէ պիտոյ շողոքոր թէ մանկանց կամ աշակերտելոց: Մեծի խօսքը պիտոյ է լինի միշտ ուղիղ ձիշդ, պարզ, առանց խաբերայութեան կամ շողոքորթութեան ստուերի (նշոյլի), հասկանալի լսողներին, ազգու իւրա ապացուցութիւններով և ուղիղ տրամաբանութեամբ, յարմար կարգաւորեալ (տրամագրեալ): Արք որ այսպիսի խօսակցութիւնը լսում են այնպիսի ուսուցչեց, որը գրաւել է նոցա յարգանքը և սէրը, անկարելի է, որ ուսանողները իւրեանց սիրութ չը բանան նշոյնպիսի ուսուցչի առաջմ, անկարելի է որ նորա առաջը ծածկեն ինչ որ և իցէ և անկարելի է որ այնպիսի գլուխութիւնը մէջ ամենապատուական բարոյականութիւն և կարգապահութիւն չը լինի:

Ուսուցիչը պարտաւոր է օգնել ուսանողներին, առաջնորդել նոցա և կանոնաւորել նոցա պարապմունքը յետագայ կերպիւ:

Ընդհանրապէս ընդունուած է, որ առողջ երեխային կարելի է սկսել ուսուցանել կանոնաւոր և վայելուչ գրութիւնը — վեց տարեկան հասակը լրացած: Այս հասակից, գրիչը ձեռքը տալուց առաջ, քանի մի ժամանակ վարժել մատիտով այն նպա տակաւ միայն, որ մանուկ ուսանողը ընդելանայ, փոքր ի շատէ, ամուր և կանոնաւոր կերպիւ մատիտը ձեռքին բռնելուն և վարելուն: Աորա համար է առաջարկած մեր վայելուչ և կանոնաւոր գրութեան օրինակների առաջի էջը:

Ուսուցիր սկսում են օրինակով ցոյց տալով, թէ որպիսի նիստ պէտք է ունենալ այսինքն, մանրամասն ցոյց տալով թէ ինչպէս պիտոյ է լինին գրողի սաների, ձեռների, իրանի, ողնաշարի, գլխի և տետրի գրութիւնը, սեղանի և աթոռի ձեր; միենոյն ժամանակ մեկնել բոլոր կանոնները:

Ենտոյ ցոյց են տալի մատների վերայ, թէ ինչպէս է հարկաւոր բռնել գրիչը և վարել նորան և պարապեցնում են ուսանողին քանի մի սկզբնական կրթութիւններով (Վարժումն):

Երբ որ ուսանողը, մի 5—8 չափ գասից յետ, ընդելացաւ փոքր ի շատէ հաստատ մատիտը ձեռքին բռնելուն և վարելուն, ուսանողին տալիս են գրիչ և ընդելացնում գրիչը կանոնաւոր կերպիւ ձեռքին բռնելուն, նորան վարելուն և, ընդհանրապէս, նորանով գրելուն:

Ուսանողը կ'սկսի պարապիլ մեր առաջարկած հրահանգների 2 էջը գրելով, նայելով, որ, այսպիսի պարապմանց ժամանակ, իւրեան համար սովորութիւն շնչէ ուղիղ և հաստատ նիստ ունենալը, ուղիղ մատիտ և գրիչ բռնելը և շարժելը զանազան կողմեր, աջ, աջեակ, վերև, ներքեւ, որ նորա ձեռքի բոլոր մասերի, մասների, թաթի և բաղկի գնդերն զարդանան և սովորութիւն ստանան ազատ և արձակ զանազան կողմն կանոնաւոր շարժողութեանց և մատիտը ու գրիչը ուղիղ և հաստատ վարելուն:

Այսպիսի սկզբնական պարագմանց ժամանակ, երբ երեխայն ամենայն բովէ կարող է մոռանալ նորան ցոյց տուած կանոնները, որոնց գեռ լաւ իւր միտը չէ կարողացել պահել, և որոնց կատարելը գեռ իւրեան համար սովորութիւն չէ դարձրել, — այս ժամանակ պիտոյ է, որ ուսուցիչը աշալուրջ և շարունակ հակողութեամբ և համբերութեամբ ընդելցնէ ուսանողներին նստելու և գրելու կանոնների ամենաճիշդ և անթերի կատարմանցը:

Երբ որ ուսանողները սկսելու լինին գրել այն հիմնական զանազան խաղերը, որոնցից կարելի է կազմել մեր այլուրենի բոլոր տառերը, ուսուցիչը նախ և առաջ զանազան համանման տառերից ընտրում է մի քանիսը, զորօրինակ, ա, զ, ի, ն.... այս տառերը պարզ և մեծաձեռ գրում դաստան սեւաներկ տախտակի վերայ կարիճով<sup>1</sup>; եթէ այսպիսի գրած տառերը բոլոր ուսանողներին, կամ դաստան շատ աջ կամ շատ ձախ կողմն նստողներին անշամարելի կ'լինի, ուսուցիչը կարող է մեծ սպիտակ թղթի վերայ առաջուց գրել այդ տառերը և բերել դաստառուն, կամ թէ նոյն իսկ վայելագրական տպած օրինակից ընտրում է տառեր և ցոյց տալիս ուսանողներին, ինչպէս այն ընտրած տառերը կազմվում են վերոյիշեալ հիմնական խաղերից: Այսպիսի պարագմունքը պիտոյ է անոր համար միմիայն, որ ուսանողները համոզին, թէ այն հիմնական խաղերը ոչ թէ միայն սկզբնական վարժմունք են ձեռքի զանազան մասերի գնդերը զարդացնելոյ համար, այլ և իրեւ այլբենական տարերք; նախապատրաստական վարժմունք են նոյն իսկ այլուրենի գրելը ուսանելուց առաջ:

<sup>1</sup> Պէտք չէ մոռանալ, որ այս ծրագրի մէջ խօսում ենք ոչ թէ «կարգալ և գրել» ուսուցանելու վերայ, այլ այն ուսանողների վերայ, որոնք գիտեն արգելն այլուրենը և պիտի «կանոնաւոր և վայելուչ գրութեանը» ընդելցնան, այսինքն մեր խօսակցութեան առարկայն, «կանոնաւոր և վայելուչ գրութեան» գիտութիւնն է:

Որովհետեւ բոլոր այսպիսի պարագմունքը սկզբնական և նախապատրաստական են այնպիսի անձանց հետ, որոնք դեռ նոր են սկսում կանոնաւոր և վայելու գրութեան ուսումն, որոնց ձեռքի դնդերը գեռ նոր են սկսում զարգանալ ու կազմուրավիլ, որ աղաս ու արձակ շարժողութեան կարողութիւն և սովորութիւն ստանան; — Երբ որ գեռ ուսանողը իւրեան համար պիտի բնաւորութիւն գարձնէ, — գրելու ժամանակ —, ուղեղ և հաստատ նիստ պահելը, գրիչը վարելը, խաղերի շափը, նոցա մէջ եղած չափակցութիւնը և հակումը պահելը; — Երբ որ ուսանողի տեսութիւնը զարգանալու վրայ է և պիտի ընտելանայ չափին, չափակցութիւնը պահելուն, — այս հանգամանաց մէջ —, նպատակին առաւել մօտ և համապատասխան կը լինէր, եթէ ուսուցիչը այսպիսի սկզբնական պարագմունքը ցոյց տար և բոլոր կանոնները ուսուցանէր մէկ անգամից որքան կարելի է ուսանողաց փոքր քանակութեան (quantité, количестве), զորօրինակ, 3—5 աշակերտելոց, որովհետեւ բոլոր գաստանը, մանաւանդ եթէ միանգամից ուսանողաց թիւը շատ է, գժուար է ուսուցչին նկատել, արգեօք բոլոր ուսանողները լավ հասկացան նորա մեկնածը, թէ ոչ, համոզուեցան նոքա, թէ ոչ: Այսպիսի նախապատրաստական մեխնութիւնը և պարագմունքը ամեն մի աշակերտին առանձին ցոյց տալ ստիպողապէս հարկաւոր է այն պատճառաւ ևս, որ այս և առաջիկայ պարագմունքը (վարժքը) և գրութեան և նատելոյ բոլոր կանոնները ուսուցիչը պիտոյ է փորձէ, հարցանէ և իւր աշաց առաջեւ կատարել տայ անպատճառ ամեն մի ուսանողին առանձին այնքան ժամանակ, մինչև որ լաւ և մանրամասն քննողութեամբ վերահսու չի լինի, թէ ամեն մի ուսանողը, առանց բացառութեան<sup>1</sup>, հիմնաւորապէս գիտէ, պարզ հասկանում է

<sup>1</sup> Exception, exclusion; исключение; բացառութիւն, հանելնի բացը, die Ausnahme.

բոլոր նորա մեկնած կանոնները, նոցա իրապործելու ձևերը  
և կերպը:

Վնքը աշակերտը (ուսանողը) պիտի պարզ հասկացողու-  
թիւն ունենայ թէ ի՞նչ է կարող նա, ի՞նչ է պարտա-  
կան և ի՞նչ է կամենում կատարել, և երբ այս երեք  
պայմանները<sup>1</sup> իրարու հետ հաշտ և համապատշաճ կը գոր-  
ծեն, այն ժամանակ ուսանողները արդիւնաւոր նպատակին կը  
հասանին:

Բանիմաց և խելացի ուսուցչին այսպիսի «ծանր ու բա-  
րակ» սկզբնական պարապմունքը, հարցաքննութիւնը ոչ ձանձ-  
րալի և ոչ գժուար պիտի թուին, որովհետեւ նա լաւ կը հաս-  
կանայ, որ ուսանողը որչափ որ լաւ հմուտ տեղեակ լինի հիմնա-  
կան բոլոր կանոններին և որքան որ նոցա կատարելուն լաւ ըն-  
տելացած լինի, այնքան այնուշետ և այնպիսի ուսանողների  
հետ յետագայ քանի մի տարիների պարապմանց շարունակու-  
թիւնը առաւել դիւրին և ուրախութեամբ կը կատարուի ի  
բաւականութիւն թէ ուսանողների և թէ ուսուցիչների: Վե-  
ևնոյնը պարտաւոր են կատարել ամենայն թէ գիտութեանց եւ  
թէ արհեստների ուսուցիչները և վարպետները, նմանապէս  
անփորձ կամ գեռահասակ սպասաւորաց տեարքը (տէրերը):  
Տնող ամեն մինը նոցանից, 1) միշտ իւր միտը բերէ իւր ման-  
կութեան հասակը, ինչպէս ուսուցչի կամ տգիտութիւնը, կամ  
կողիտութիւնը, կամ ծուլութիւնը, կամ գործը ուսուցանելու  
կերպը չը գիտենալը, կամ համբերութիւն չունենալը—եղել  
է պատճառ բազմամեայ դառն տանջանաց թէ աշակերտելոց և  
թէ նոցա ծնողներին, և որքան ժամանակ են կորուսել ողոր-  
մելի մանուկները այսպիսի անարժան ուսուցիչների պատճա-  
ռաւ; 2) թող ամենայն ուսուցիչ և դպրոցի մէջ որ և իցէ իշ-  
խանութիւն ունեցող անձը մանկանց հետ թէ պարապելիս և  
թէ, առ հասարակ, վարուելիս, ամենայն բոպէ իւր միտը բերէ,

<sup>1</sup> La condition; условие; պայման, հանգամանք; die Bedingung.

թէ ինչպէս որ նա կը կամենայ որ օտարք գգուեն, համբերութեամբ և պարզ մեկնեն նորա ուսանող զաւակին որ և իցէ առարկայն, գիտութիւնը և արշեստը և ինչպէս որ նա կամենում է որ օտարք վարուին նորա սեպհական, նորա համար քաղցրիկ և քնքոյշ զաւակի հետ, նոյնպէս և նոյն համբերութեամբ և քնքուշութեամբ նա ուսուցանէ և վարուի միշտ օտարների զաւակների հետ: Եւ մի՞թէ կարելի է ասել, որ հայ ուսուցչի համար հայու զաւակը օտարը է:

Ա երօյիշեալ բոլոր պարապմունքները — ուսանողը գրում է կամ սպիտակ մելանով տպած օրինակի վերայ, վարելով գրուիչը եւ գրելով արդէն գունակ (կիսասկ) թանաքով տպած խաղերի վերայ սեւ թանաքով; կամ, եթէ այսպիսի գունակ մելանով տպած օրինակներ չկան, սեւ մելանով տպած օրինակը դնում է այնքան թափանձիկ գրելու թղթի տակ, որ տպածը պարզ երեւում լինի թղթի տակից եւ այսպէս վարում գրիչը տպածի վերայ<sup>1</sup>: Այսպիսի խաղերը գրելու ժամանակ գեռ վաղ է հաշուով (ամանակով) գրել տալը:

Որանից յետոյ ուսուցիչը տալիս է ուսանողին կամ այնպիսի տետրակները, որոնց մէջ կայ պատրաստ միայն տողացանցը առանց վերօյիշեալ հիմնական խաղերի, կամ, եթէ այնպիսի տետրակներ չկան, մեր № 1 տողացանցը դնել է տալիս այնպիսի թղթի տակ, որ տողացանցի բոլոր գծերը պարզ երեւն, և այսպէս գրել է տալիս, ունենալով աչաց առաջեւ գրելու գաղափարը, որի վերայ տպած են վերօյիշեալ հիմնական սկզբնական խաղերը:

Տողացանցի և, ընդհանրապէս, տողաշարների օգնականութեամբ պիտոյ է գասատուութիւն անել եւ օգուտ քաղել այն ժամանակ, երբ որ. 1) ուսանողը մանուկ է եւ նոր է սկսում; 2) հասակաւոր անձը կամենում է իւր գրութիւնը փոքր ի շատէ կանոնաւորել, որոշ գրութեանը ընդելանալ:

Ակզեից, երբ որ ուսանողը պիտի ուսանի, հասկանայ և իրա-

գործէ միեւնոյն ժամանակ քանի մի կանոններ, զորօրինակ. ուղիղ նիստ ունենալը, տետրը ուղիղ ունենալը, գրիչը ուղիղ բռնելը եւ վարելը, գժուար է նորան, որ նա մի անդամից եւ բոլոր վերսիշեալը կատարէ եւ աչաց առաջև դրած գաղափարից ձիշդ օրինակէ, գուրս նկարէ տառերը, որի ամեն մի խաղը չափաւորուած է: Այսպիսի գործի սկզբից ոչ մանուկը եւ ոչ հասակաւորը չեն կարող միանդամից կատարել: Այն պատճառաւ, սկզբից, գունակ մելանով տպած օինակների, տողանցանցի եւ տողաշարի խելացի կերպիւ գործածելը շատ մեծ եւ արդիւնաւոր օգուտ է բերում եւ, համարեա թէ, կարելի է ասել, որ առանց սորան չէ կարելի յառաջ գնալ, բայց այն ուսուցիչները, կամ ուսանողները, որոնք բոլոր իւրեանց յոյսը միմիայն այս օժանդակական միջնորդների վերայ կը դնեն, շատ մեծ սխալ կը լինին արած, եւ երբէք կանոնաւոր եւ վայելուչ արագագործեանը չեն ընդելանալ: Ամենայն ուսանող, նախ եւ առաջ, մանրամասնաբար և հիմնաւորապէս պիտի — տեղեակ լինի կանոնաւոր եւ վայելուչ գրութեան բոլոր կանոններին եւ նոցա իրագործելուն, գործածելուն, գիտենալով կանոնները եւ նոցա գործածելը, սկսէ պարապմունքը եւ շարունակէ գունակ մելանով տպած օրինակների եւ տողացանցի օգնականութեամբ, սկիզբը առանց ամանակի եւ յետոյ ամանակահաշուով, յետոյ հասարակ միագիծ տողաշարով եւ ամանակահաշուով; յետոյ առանց տողաշարի, բայց միակ ամանակահաշուով; յետոյ առանց մինի եւ միւսի գրել ուսուցչի ասածից (dicter, ճիշտութեան):

Հասակաւոր անձինք, որոնք կամենում են ուղղել իւրեանց գրութիւնը, կանոնները հասկանալուց յետոյ, եթէ քանի մի ժամանակ պարապին գունակ (կիսասկ) մելանով տպած օրինակների վերայ գրելով եւ յետոյ տողացանցի օգնականութեամբ և ինքն իրան պահելով ամանակահաշիւը, տարակոյս (կասկած) չկայ որ 60—80 թերթ գրելով սկզբնական խաղերն և նոյնքանը միւս վարժութիւնները, — բաւականին ականաւոր յառաջադիր-

մութիւն կանեն և իւրեանց գրութիւնը շատ եւ շատ կը կանոնաւորեն և կը գեղեցկացնեն, եթէ վերսիշեալ պարապմունքը կատարեն պատշաճաւոր ուշադրութեամբ մեր առաջարկած կանոններին: Յետոյ գալիս են, շարօնակաբար, միւս վայելչագրութեան մէջ ցոյց տուած հրահանգները, այն տողացանցերով, որով գրած են գաղափարները, միւնոյն վերսիշեալ կերպիւ և աստիճանաւորութեամբ, այսինքն, նախ գունակ մելանով տպածի վերսի գրելով, կամ թէ այսպիսի տետրակներ չկան, գաղափարը թափանցիկ թղթի տակ գնելով; յետոյ գաղափարը գրողի առաջեւ եւ թղթի տակ միմիայն մեր առաջարկած տողացանցի (առանց տառերի) օգնականութեամբ; յետոյ գաղափարը աչաց առաջ ունենալով և հասարակ միախաղ տողաշարի օգնականութեամբ, բայց ամանակահաշուով, որպէս որ վերեւը մեկնած է; երբ որ ուսանողը սկսեց  $1\frac{1}{2}$  միլիմետրի մեծութեամբ (փոքր) տառեռերով գրելը, նորա վերջին պարապմունքը պիտոյ է լինի առանց որ եւ իցէ տողաշարի օգնականութեամբ եւ առանց ամանակի, որ նա ընդելունայ խսկապէս կանոնաւոր և վայելուչ արագգրութեանը, առանց որեւիցէ միջնորդական հնարների, կամ գործիքների:

Վայելութեական տառերը գրել ուսանելիս գրում են նոցահանման ու թեան հետեւելով եւ նոյն համանման տառերից առանձին բառեր յօրինելով: Երբ որ ուսան առաջին կարգի համանման տառերը, աւելացնելով քանի մի տառ միւս կարգի համանման տառերից, բաղկացնում են նոցանից եւ գրել են տալիս քանի մի առանձին բառեր եւ այսպէս շարունակում են մինչեւ բոլոր միւս կարգերի համանման տառերը, այսինքն, բոլոր այբուբենը: Տառերը գրել ուսուցանելիս, ուսուցիչը ցոյց է տալիք, թէ ո՞րպիսի խազերից եւ ո՞րպէս են այն տառերը բաղկացած (անալիտական կամ վերլուծական մետող); կամ թէ վեր է առնում առանձին խազեր եւ նոցանից կազմում կամեցած տառը (սինտետիկական, համագրական մետող), ցոյց տալով թէ ի՞նչպէս այն խազերից կազմուեցաւ ցոյց տուած-

տառը։ Ուսանողը քաջալերվում է, երբ որ տեսնում է, թէ նա, ուսանելով գրել քանի մի տառեր, կարող է արդէն նոցանից, կամ օգնականութեամբ միւս կարգի երկու կամ երեք տառերի առանձին բառեր կազմել և գրել։ Այսպիսի առանձին բառերի գրութիւնը ունի նաև այն հետևանքը, որ ցոյց է տալիս, աստիճան առ աստիճան, տառերը միմիանց հետ, — առանձին բառերի մէջ —, կարգաւ գրելու և իրար հետ միացնելու ձևը և չափը, զորօրինակ, ս, ո, ա, ւ, օ, ու... տառերից կարելի է բաղկացնել յետագայ բառերը, առատ, ասա, առաւօտ, առու, ուռ, սուտ,...; աւելացնելով, կ, գ, դ... տառերը, յետագայ բառերը, սաւուզ, առագաստ, առակ, և այլն։

Այսպէս, տառերի համանմանութեան և ոչ թէ այլբենական կարգին հետևելով —, ուսուցանում են բոլոր այբբենը գրելը № 1 տողացանցով, — կազմելով ամեն կարգի ուսած և գրած տառերից քանի մի առանձին բառեր։ Առանից յետոյ առանձին պարապում են գլխագիրերը գրելը — նաև գաղափարը թափանցիկ. թղթի տակը գնելով, յետոյ տողացանցի օգնականութեամբ, առաջև ունենալով գաղափարը, յետոյ հասարակ միախաղ տողաշարի օգնականութեամբ; յետոյ առանց տողաշարի —, ունենալով աչաց առաջև միմիայն գաղափարը։ Յետոյ գալիս են միւս վարժմունքը, որոնց գրութիւնը կատարվում են վերոյիշեալ կանոններին հետևելով։

№ 2 տողացանցի մէջ պարունակուած և սոյն, երկրորդ մեծութեան տառերով գրելիս, տառերից յետոյ ուղղակի սկըսում են գրել բառերը, գլխագրերով միասին, հետևելով վերոյիշեալ կարգին և տողացանցի ու ամանակահաշուի գործածութեան կանոններին։

№ 3 եւ № 4 տողացանցի մէջ պարունակուած եւ սոյն, երրորդ մեծութեան, տառերով պարբերութիւններ գրելիս, կարելի է ուղղակի տողացանցից սկսել, եթէ ուսանողները լաւ յառաջագիմութիւն են ցոյց տալիս, բայց հետևելով ոչ այնքան

տողացանցին, որոյ հարկաւորութիւնը ուսանողքը էլ նոյնչափ չպիտի զգան, այլ ամանակահաշուին: Այս №№ 3 և 4 տողացանցերով գրութիւնը եւ երբորդ մեծութեան տառերը գրել, պարագմունքը պիտի վերջանան ուսանողաց այնպիսի առաջադիմութեամբ, որ նոքա կատարեալ կերպիւ, մագուր և սիրուն «կանոնաւոր և վայելու արագագութեանը», ընդելցած լինեն:

Ուսուցիչը մանրամանաբար պիտի մէկնէ ուսանողներին տառերի ձեւը, ամեն մի խաղի մեծութիւնը, չափը, գրելու կերպը, թէ ի՞նչպէս պիտոյ է սկսել ամեն մի տառը և ի՞նչպէս վերջացնել, ի՞ր տեղ հաստ և ո՞ր տեղ բարակ, մազանման խաղով; ո՞րպէս պիտոյ է վարել ձեռքը, գրիչը; ո՞րպիսի նիստ պիտոյ է ունենալ... և այլն:

Վինչեւ ամեն մի աշակերտ հիմնաւորապէս չը գիտենայ և չը կարողանայ պարզ, հասկանալի կերպիւ պատմել և կատարել բոլոր կանոնները, չափը, գրելու կերպը,... և այլն..., ուսուցիչը չէ պիտոյ նախորդ պարագմունքից միւս պարագմունքը անցանէ:

Կանոնաւոր և վայելու գրութեան ուսուցիչը մոռանալու չէ, որ նա, — ինչպէս միւս բոլոր գիտութեանց ուսուցիչները, — պիտի պահանջէ, որ ուսանողը իւր գիտցածը և պատմածը արտայայտէ պարզ հայերէն լեզուաւ, առանց օտար լեզուի բառերը գործածելոյ, կանոնաւոր կերպիւ կազմելով պարբերութիւնները և մատէմատիկական ճշգութեամբ յայտնելով իւր միտքը, առանց շատ ախօսութեան, առանց աւելութեան գործածեան:

Վենք ևս չենք ասում ոչինչ այն անհամ ոճի պաճուճաբանութեան և զարդախօսութեան վերայ, որը, մնարով մեղիբեկ ժառանգութիւն սխոլաստիկական վատ ժամանակներից, այնքան հաճոյ է շատերին մեր մէջ մինչև այժմ ևս: Իսայց ամենից ցաւալի տեսարան են ներկայացնում այն ճառերը և ոտանաւորները, որոնք դպրոցների մանկունք, և շատ անդամ՝

մինչև ուսոցիչներ ևս, կարգում են իւրեանց մեծերի առաջև; այն ճառերի մէջ գործածած ածականները, սուտ գովասանութիւնները, շողոքորթութիւնները և աւելաբանութիւնները տեղի են տալիս ենթագրել, թէ այն ճառերի գրողները և նոցա հաճոյութեամբ լսողները դաստիարակութեան և բարոյականութեան տէր չեն: Ա երոյիշեալ նման անձանց շատ լաւ է յարմարացրած Մշակ շաբաթագրի (1872 թ. № 1) յետագայ խոսքերը. «Փոխանակ ասելու, թէ «կատուն մկանը կերաւ», դեռ հարեանցի մկան անզօրութիւնն են ճարտասասանօրէն նկարագրում, ու յետոյ դրանից կատուի ոյժն են տրամաբանօրէն հետեւացնում»:

«Ում ուղումես գովիր, ինչքան գովեստներ կուզես լսիր, առաջինում սուտ ես ասում — կեղծաւոր չեն համարում; երկրորդում հաւատում ու յիմար չեն կարծում»:

Տեսականը, բոլոր կանոնների հիմնարապէս գիտնալը և պարզ հասկանալը հարկաւոր է ուսանողին այն պատճառաւ, որ, մինչև այն բոլը իւր հասկացողութեամբ պարզ չըբառնէ, նա չէ կարող ցոյց տալ կանոնաւոր յառաջագիմութիւն, անօգուտ կը կորուսանէ շատ ժամանակ և պեղագօգիկական<sup>1</sup> կողմանէ սաստիկ արգելեալ վեսասկար բնաւորութիւն կ'ստանայ (ամենայն նորա վատ հետևանքներով բոլոր կենաց մէջ, ապագայում) մեքենաբար պարապելը: Պարապմունքը, որի կանոնները նա ըը գիտէ և որը, սոյն պատճառաւ, առաւել մեծ և աւելորդ գժուարութիւններ պիտի պատճառէ ուսանողին, կը ձանձրացնէ նորա աշխոյժ բնութիւնը և նա միեւնոյն ձանձրութիւն կը զգայ այլ առարկաների պարապմունքների մէջ ևս, մանաւանդ որ վատ և վեսասկար սովորութիւն կը-

<sup>1</sup> Մանկավարժութիւն, կրթութիւն, դաստիարակութիւն;

ստանայ կատարել որ և իցէ գործ առանց հասկանալոյ, մեքենայաբար, անզգայակցութեամբ, անբան անասնոյ նման:

Ի՞այց որովհետեւ ուսանողը միշտ չէ կարող ունենալ իւր աչքի առաջեւ կանոնաւոր և վայելուչ գրութեան գաղափարը, այսինքն բոլոր կանոնները, նա պիտի ունենայ իւր ըմբռնոցութեան, երեակայութեան, հասկացողութեան մէջ, որ առանց գաղափարի ևս ուզիղ գրէ և արած սխալները կարողանայ ինքն իրան ուղղել:

Ուսուցիչը աշխատելու է, ոչ թէ միայն ուղղել ուսանողի սխալը, այլ մեկնելով նորան թէ ի՞նչ պատճառաւ գրածը սընալ կամ անկանոն է, ի՞նչ և ո՞րպիսի կանոն պիտի կատարել, որ նոյն սխալը չկրկնուի, — աշխատէ միշտ ուսանողների սընալ անելու առաջը առնուլ<sup>1</sup>, զգուշացնել նոցա սխալմունքից, որովհետեւ գասատուութեան առաջին և վերջին նպատակըն, գլխաւոր նպատակն ոչ թէ սխալների ուղղելն է, այլ սընալանքից ապահով ապահով գաղափարը բոլոր արածը կանոններին համապատասխան և գիտակցաբար կատարէ: Ուսանողների կանոնաւոր և վայելուչ գրութեանը պիտոյ է որ նայեն, քաջալերեն, նպաստամտոյց լինեն դպրոցի բոլոր ուսուցիչները և վերատեսուները, պաշանձելով, որ նոցա դաս տուած առարկաններն ևս գրած լինեն կանոնաւոր և վայելուչ կերպիւ, մեկնելով աշակերտները կանոնաւոր և վայելուչ գրութեան ստիպողական կարեռութիւնը:

Փոյթ չէ եթէ այս կամ այն վարժապետը ինքը լաւ չէ գըրում; թող նա խօստովանուի ուսանողների առաջեւ իւր թերութիւնը; այսպիսի վեհանձն խօստովանութեամբ առաւել եւս ցոյց կ'տայ ուսանողներին, որ այսուհետեւ, ապագայում այս-

<sup>1</sup> Ըստաջել, զառաջս ունել, զգուշանալ; предупреждать, предупредить; prevenir, devancer; zuvorkommen.

պիսի թերութիւնները առաւել զգալի կը լինին և շատ անգամ վնասակար հետեանքներ կունենան չգիտեցողների համար:

Կըսուտփանելով սեպհական թերութիւններից նոր ապագայ սերունդը ազատ լինի, բոլոր առարկաների և գիտութեանց ուսուցիչները առաւել համակրութիւն կը դրաւեն ուսանողների կողմից, ցոյց տալով իւրեանց ճշմարտասիրութիւնը, խոհեմաւթիւնը և ունեցած սէրը աշակերտուհեաց և աշակերտների ապագայի համար:

Ամենայն վարժապետ (և վարպետ, ուստայ) և դաստիարակ իւրեան անձնական յաւակութիւններով պիտի կենդանի օրինակ լինի ուսանողների համար:

Վրդարագատութիւն, վեհանձնութիւն՝ <sup>1</sup> մինչև առ անձնական արիւնարբութիւնամիս; անրիծ պահել իւր սեպհական մարդկային պատիւը թէ խնդրելիս, թէ խօսալուս, թէ հրամայելիս, ում առաջն որ և իցէ, մեծի, հաւասարի և թէ փոքրի; զգուշանալ վիրաւորել, գիպչել այլոց մարդկային պատուին, — թէ մեծի և թէ ամենափոքր ստորագրեալի և ծառայի պատուին; սէր առ մարդկութիւն, մանաւանդ ուսանողների և ապագայ սերնդի համար; արիւնաթիւն նեղութեան մէջ, ժուժկալութիւն բազգաւոր օրերին, միշտ խոհեմութիւն, քաղաքավարութիւն; զգուանք և արհամարհանք լրտեսների, բանսարկուների, խարերաների, ստախօսների, մնապարծների <sup>2</sup>, ծոյլերի, դողերի, այլոց բարին կողղպտիչների, մանաւանդ որբոց և այրեաց, և ամենայն անպիտան անձանց գէմ; միշտ և հանապաղ անդադար մոտաւոր և մարմաւոր աշխատութիւն, փոխարինելով մինը միւսով, որ մարզս չյոգնի; ջանալ հասարակաց օգտին, լաւ համոզուած լինելով, որ հասարակաց օգտի մէջ պարունակված է ամեն մի անհատի օգուտը և բարօրութիւնը և մինչև բոլոր

<sup>1</sup> Մեծանձնութիւն, մեծահոգիութիւն; великолушie; magnanimité.

<sup>2</sup> Պարծենկոտ, անձնագով:

աղքը այդ հասարակաց օգտին պաշտպան չ'հանդիսանայ, մինչև  
այն ժամանակ նորա մասնաւոր օգուտը ապահովութիւն չի  
ունենալ; — այսպիսի օրինակներով, քարոզութիւններով, ա-  
պացուցութիւններով և վերսիշեալ սկզբանց համապատասխան  
պարունակութիւն ունեցող գրեանց կարդացնելով — պիտոյ է  
աշխատել մեծացնել և զարգացնել բոլոր այսց աղքի ապա-  
գայ սերունդը:

Ուրբ Աւետարանից յետոյ, մարդկային գրագիտութեան  
մէջ հաղիւ թէ կը գտնուին շատ գրեանք, որոնք որ Պլու-  
տարքոսի երկելի<sup>1</sup> արանց կենսագրութեան պէս անջինջ տը-  
պաւորում լինէին մանկութեան սրտի և լիշողութեան մէջ  
վեհանձնական զգացմունքները և նոցա նմանելու (չետելու)  
յօժարութիւնը, ցանկութիւնը:

Այս գրականութեան մէջ կայ գրաբառ թարգմանութիւնը  
Աւետիկոյ Ախիթարեան միաբան հ. Եղիայ վարդապետ  
Ժամամատեանինը. «Պլուտարքեայ Քերովնացւոյ զուգակշիռք»;  
Աւետիկ, 1835 թ. հատ. 1—6, եե. 579, 671, 712,  
561, 686 եւ 644,—բոլորն 16-ծալ մանր տիպ. Պինն է  
50 ֆրանկ (մօտ 16 բուրլի), ճանապարհի ծախքով առաւել:  
Որովհետեւ այս թարգմանութիւնը Խթթին գրաբառ լեզուաւ  
է, որը մանուկները գեռ չգիտեն, իսկ հասակաւոր անձինք,  
որոնց կենսական ուղղութիւնը և սովորութիւնները այնպէս են  
կազմուել, որ նոքա թէպէտ բաւականութիւն կ'ստանան Պլու-  
տարքոսի կարգալուց, բայց այդ կարդացածի տպաւորութիւնը  
հազիւ թէ կարող է փոփոխել նոցա սովորութիւնները և ուղ-  
ղութիւնը, վասն որոյ ամենամեծ, ամենարդիւնաւոր և իսկ  
աղքասիրական ծառայութիւն կանեն հայ մանկութեան, ապա-  
գայ սերնդի համար այն անձինք, որոնք որ գլուխ բերեն  
պարզ, գիտրիմաց և գրաւող ոճով աշխարհաբառ թարգմանու-  
թիւնը և տպագրութիւնը բոլոր Պլուտարքոսինը<sup>2</sup>:

<sup>1</sup> Անուանի, հպակապ, հռչակաւոր, համբաւաւոր:

<sup>2</sup> Արբոյ Աջմիածնի և Տիֆլիսու Կերսեսեան աղքային և

ԱԵՆՔ կարծում ենք, որ մեր ասած նպատակին հասնելու և գործնականապէս շարժելու համար երկու զանազան տպագրութիւն է պիտոյ, արևելեան, կամ այաստանի աշխարհաբառ 1, և արևմտեան 2, կամ Պօլսեցւոց աշխարհաբառ լեզուներով։ Այսպիսի թարգմանութիւնները պիտի ունենան, ծանօթութեանց մէջ, մեկնութիւն Խրթին, գժուարիմաց բառերի, նա ևս աշխարհաբառական և պատմաբանական ծանօթութիւններ, որոնք կարելի է քաղել Պլուտարքոսի գերմանական, գաղղիական, անդղիական թարգմանութիւններից։ Ուուսերէն թարգմանութիւնը 1816—1821 թ., Պլուտարխու կազմութեան պատմութեան մասնաւութեան մասին առաջին աշխարհաբառ է պատմութեան մասնաւութեան մասին առաջին աշխարհաբառ։

Պարտաւոր ենք աշխատել, որ ապագայ սերունդը միշտ ընտիր, առաջնակարգ գրուածներ և չեղինակութիւններ կարդայ ամենայն գիտութեան մէջ և ամենայն գիտեցած լեզուներով և կարդացածը ուշագրութեամբ կարդայ, մինչև որ լաւ հասկանայ։ Ամեն բանի մէջ լաւ վարպետին պէտք է գիտէլ, կարդալու մէջ չմուտ, վարպետ, առաջնակարգ չեղինակութիւնները պիտի կարդալ և ոչ թէ ամենայն չնչին գրուածները, որոնց չեղինակները ինքեանք կարօտ են ուսման։

Հոգեոր գպրոցների աշակերտելոց գրագարանները ունին Պլուտարքոսի գրաբառ թարգմանութիւնը։

<sup>1</sup> Ա. Պալասանեան, Փիլիպ. Ա արդանեանց, Աբգար Յովհաննիսիսեան, Բարխուդարեան, Ռուչուկբեկեանց և սոցա պէս թարգմանութեամբ գրողների միջնորդութեամբ։

<sup>2</sup> Խոր. եպիսկ. և Ամբ. Գալֆայեանք, Ամուռեան, Խւթիւննեան, Վլարէգեան, Գար, եպիսկ, Վայվազեան, Վելք. (Պարեգին) վարդ, Առուրագեան և սոցա նման թարգմանողները։ Արագիոն Տէտէեան (Ամիրնա) և Արամ (Կ. Պօլս) գրավաճառ — տպագրողները եթէ կարողանային այսպիսի գործ կատարելը, առաջարկելով թարգմանութիւնը վերոյիշեալ նըման անձանց երեքին կամ չորսին և, երբ թարգմանութիւնը պատրաստ լինի, նախկին ստորագրութիւն հաւաքելով։ Ո՞ գիտէ, կարելի է որ գործը գլուխ գայ այս կամ այլ կերպ։

Ու այնքան գրեանց քանակութեանը, որքան  
նոցա արժանաւուրութեանը պիտի ուշադրութիւն  
դարձնել:

## § IX.

Թէ հոգով սկսես,  
Աստուծով կը վերջացնես:  
Օ արարի կիսիցը յետ գառնալը խէր ա:  
Ձագաւորն էլ թագին լսյաղ պիտի:  
Հացի կտրածը, թուրը չի կտրիլ:  
Ո՞ի ծաղկից օձը թոյն ա շինում,  
Ճանճը մեղք:  
Ո՞ինչև թուրը եկավ, լեզուն  
գլուխը կտրեց:  
Լեզուի կտրածը գժուար կը սաղանայ:

## Ե.

Հայաստանում գտել են և շարունակում են գտանել սե-  
պաձե կամ բենուաձե զրեր (սեպագիր, բենուագիր), որոնց  
մասին աւալորդ չենք համարում ցոյց տալ մեր գիտեցած աշ-  
բիւրները:

Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes  
hiéroglyphiques et cunéiformes; <sup>13</sup><sub>25</sub> Avril, 1871, *M. Brosset. Mélanges Asiatique*, tom VI, p. 389—400, tiré du Bulletin de l'Académie Impériale des Sciences de St. Petersbourg, tom XVI, p. 332—340.

*Lenormant, François. Lettres Assyriologiques sur l'histoire et les antiquités de l'Asie antérieur. Tom I.*

Paris, 1871. Sur l'éthnographie et l'histoire de l'Armenie avant les Achéménides.

*Oppert, Jean.* Expédition Scientifique en Mesopotamie, tom II. Déchiffrement des inscriptions assyriennes. Paris, 1859.

Несколько словъ о названіяхъ Армянскихъ мѣсяцевъ. *К. П. Патканова.* Спб. 1871, 8°, стр. 43.

Г. J. գրքուկի մէջ համառօտարար ցոյց է տուած (քաղուած լենօրմանի գրքից) ինչ որ մինչև այժմս սեպագրութեան մեկնութիւնը յայտնել է այս և այսատանի վերայ:

*Mordtmann A. D.* Ueber die Keilinschriften zweiter Cattung. 73—84, въ ZDMG. 1870. B. XXIV. XIII, 1850, էջ 704—805.

*M. J. Kästner,* dans le Bulletin de l'Academie Impérial des Scienses, t. V, p. 428; t. VII, p. 275—281.

Лерхъ, П. И. академикъ. О двухъ клинообразныхъ надписяхъ, открытыхъ г. Кестнеромъ въ Россійской Арменіи. Записки Императорской Академіи Наукъ, 1862, т. II, с. 136—142.

Մեսրոպը վարդապետ Ամբատեանցի օրինակած բնեուագրերը, աևս Մոսկվայի ամբաւարեր Ուսուիոյ հանդէսում, 1862, № 37 և 1863, № 45, 53; Արբոյ Լոմիածնայ Արարատ ամսագրի, 1869 թ., թիւ զ և է, հոկտեմբեր և նոյեմբեր, էջ 138:

Ինեուաձև գրերի այն մեկնութիւնները, որոնց մինչև այժմ հասել են, ցոյց են տալիս որ այսատան գտած սեպագրերը հայոց լեզուաւ չեն գրած... և այլն... բայց այդ սեպագրերը մեծ նշանակութիւն ունին այս հինգ պատմութեան շատ տեղերը կամ ու գելու և մէկնելու, կամ պահասորդը բովանդակելու, լրացնելու:

Ագաթանգեղոս, յորում պարունակի պատմութիւն Տրդատայ արքայի, սրբոյն Գրիգորի և աստուածախօս վարդապետութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Ա. Պոլս, յօթագիւղ, 1824, 8. ծալ. եե. 363<sup>1</sup>:

Ագաթանգեղոսը ազգաւ շառմայեցի էր, Տրդատ թագաւորի յետ շում քաղաքից եկած իբրև արքունի քարտուղար և գիտէր լստիներէն և յունարէն: Իւր պատմութիւնը, ինչ պէս երեւում է, արքայի հրամանաւ է գրել. « ասեալ առ իս հրամանի ՚ի մեծ արքայէն Տրդատայ, կարգել ինձ ի ձեռնարկութենէ նշանագիւտ ժամանակա-գրացն զհայրենեացն գործս քաջութեան»:

Ագաթանգեղոսինը կը համարէին նաև «Պաշանց» կոչուած թուղթը (սուտ, խարեբայութիւն և ոչ այլ ինչ), իբրութէ, Լուսաւորչի և Տրդատի, Կոնստանդիափինոս մեծի և պապ Աւղքեսարոսի հետ գանձ կապելու և նոյնը, իբրութէ, մելանի տեղ, Քրիստոսի արիւնով ստորագրուած լինելուն. Տես. ։ Միքայէլ վ. Չամչեան, Պատմութիւն այսոց, հատոր Ռ, էջ 10 և 643; ։ Պուկաս վ. Խճիճեան, Նախօսութիւն այստանեայց, հատոր գ, էջ 258, ի ծանօթ. ; Մատթէոս կաթուղիկոս ամենայն այսոց, Շուաքալ ամսագիր, Մոսկվա, 1861, հատոր բ, տետրակ ժե, էջ 235—244; տետրակ ժե, էջ 253—260:

«Պաշանց թղթոյ քննութիւնը ու հերքումը արար Կարա-

<sup>1</sup> Միւս տպագրութիւնքը. Ա. Պոլս, 1759; Ա ենետիկ, 1835 և 1862; Խտալերէն թարգմանութիւնը Ա ենետիկ, 1843: Գրաղղիարէն թարգմանութիւնը, նոր ծանօթութիւններով, տես. Collection des historiens anciens et modernes de l'Arménie par Victor Langlois. Tome I, p. 99—200: Այց սորան, էջ 203—310, Փաւաստոս Բիւղանգացւոյ պատմութեան գաղղիարէն թարգմանութիւնն է Ա. Յ. Համբիկ:

պետ վարդապետ Շահնազարեանց, միարան որբոյ Խջմիածնի:  
Փարիզ, 1862, 12-ծալ, եե. 144: «Տինն է Յ ֆրանկ»:

Վգաթանգեղոսի մասին տես նաևս. Պատմութիւն Հայերէն  
պարութեանց ի պէտս ուսման պղպային վարժարանաց. ։ Պա-  
րեգին Օարբանալեան: Ա ենետիկ, 1865, 16-ծալ, եե. 649:

Վգաթանգեղոսը (տիպ 1824, էջ 61; տիպ 1835, էջ 140) պատմելով Տրդատայ սրբոյ Հռիփսիմէի հետ պսակուե-  
լու ցանկութիւնը ունենալու վերայ, ասում է. «Ոմանք ՚ի մեծ  
սպասաւորացն արքունի ընթացան անգրէն պատմել թագաւո-  
րին զամենայն բանս նոցա, քանզի գիպեցան անդ նշան ա-  
գիրք, որ գրեցին զամենայն խօսսն և ընթեցան առաջի թա-  
գաւորին»:

Կոյնը (տիպ 1824, էջ 34; տիպ 1835, էջ 89) «Երրորդ  
չարչարանք սրբոյն Կրիդորի (լուսաւորչին):

Եւ արդ մինչ գեռ նա կախեալ կայր այնպէս, խօսեցաւ  
զայս ամենայն, և գրեցին ատենակալ գաղիրքն նշան ա-  
գրացն...» Որովհետեւ նշանագիր բառը կը նշանակէ նշան-  
ներով գրած, վերցիշեալ Վգաթանգեղոսի երկու տեղերից  
եղբակացնում են, որ, իբրու թէ, մեր նախնիքը, բաց ի այրու-  
թենը, ունեցել են նաև առանձին նշանագրեր, որոնց շա-  
տերը կան Մոսկվայի Ազարեան Խնտիտուտի գրատանը (ձե-  
ռագիր № 72) գրած 1621 թ.. Յակոբ գրադրի ձեռօք, Ա.  
Պօլիս Մելքիսեդէկի պատրիարքութեան ժամանակը: Իայց,  
այսպէս ասողներին, կարելի է պատասխանել, թէ. 1) մեր  
գրականութեան մէջ ինքը այբուբենն էլ կոչվում է, շատ տեղ  
և բաղմից, «նշանագիր»; 2) եթէ սոյնպիսի նշանագրերը (և  
ոչ այբուբենը), որին տալիս են հայ երօգլիփների նշանակու-  
թիւն, գործ էին ածվում այշաստանում, այս կարող էր լինել  
այն ժամանակ, երբ որ այշաստանում ոչ չին հայոց, ոչ յու-  
նաց, ոչ ասորոց և ոչ պահլաւական կամ զենդի գրոց այբու-  
բենի կիրառութիւնը չկար, բայց այսպիսի գրութեան մէջ  
այշաստան կարող էր լինել, օրինակի համար, Վրիստոսից

3—6 դարեր առաջ և ոչ Տրդատ արքայի օրերին; 3) վասն որոյ վերոյիշեալ Ագաթանգեղոսի «Նշանագիր» գործ ածած բառը կը վերաբերի Տրդատի օրօքը այսաստանում ասորոց, կամ յունաց, կամ զենդի կամ պահլաւացի այբուբեն նշանագրերին ոչ թէ հայոց հին երօգլիքի պէս նշանագրերին . . . և այլն . . .: Այս հարցը, առհասարակ, անվճիռ է դեռ ևս:

Երօդլիֆի պէս ասուած նշանագրերը օրինակել է պ. Մը կրտիչ Յովանիկեան Խմինը և Մովսէս Խորենացւոյ սուսերէն թարգմանութեան (История Армении Моисея Хоренского. Переведъ съ армянскаго и объяснилъ Н. Эминъ. Москва. 1858. 8°, стр. 383. Վին է 3 բուրլի) վերջին նուիրած է թէ այս նշանագրերին և թէ հայոց այբուբենին առանձին Յաւելուածք, էլ 361—383, ուր որ օրինակած են և վերոյիշեալ նշանագրերը:

### Գ.

Կորիւն պատմիչը<sup>1</sup> գրում է. «Ապա ելանէր նոցա պարգեական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ

<sup>1</sup> Կորիւն վարդապետի, Մամբրէի վերծանողի եւ Դաւթի անյալթի մատենագրութիւնք: Ա ենետիկ: 1833, 8-ծալ, եե. 1—29; 35—88—Մամբրէ վերծանող; 101 թուղթ Գիւտայ առ Դաւթի; 102—599 — Դաւթիթ անյալթ; 603—629 — Արիստոտելի թուղթ: Կորիւնի երկրորդ տպագ. Ա ենետիկ, 1854:

Կորիւն վարդապետը (վարժապետը, ուսուցիչը) հինգերորդ դարու հեղինակը, մեր բազմերախտ թարգմանչաց երկրորդ դասէն էր, իւր ուսումը կատարելագործեց Բիւզանդիան (Ա. Պոլիս), եղաւ Երուսաղէմ սրբոյն Կիւրեղի ժամանակ; Աահակ կաթողիկոսից Ա բաց եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և վախճանեցաւ այդ պաշտօնի մեջ: Բաց ի զանազան թարգմանութեններէն, Կորիւն եպիսկոպոսը, Յովսէփ կաթողիկոսի և իւր աշակերտակիցների յորդորանօք, գրեց սրբոյն Մեսրու-

իորհուրդն երանելի միաբանելոցն, և գիրս նշանագրոյ  
այստան ազգին, հասանել բազում հարց փոք-  
ձի. և քննութեան զանձինս պարապեցուցեալ և  
բազում աշխատութեանց համբերեալ, ազգ առ-  
նէին ապա և զկանիագոյն ինդրելին իւրեանց  
թագաւորին այսց, որոյ անուն կոչէր Առամ-  
շպուշ:

Յայնժամ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասո-  
րոյ եպիսկոպոսի աղնուականի Պանիէլ անուն կոչեցելոյ, որոյ  
յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի: Եւ  
իրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն 'ի Պանիէլէ,  
յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ  
նա առաքէր զոմն Ա աշրիճ անուն հրովարտակօք առ այր մի  
երէց, որոյ անուն աբէլ կոչէին. որ էր մերձաւոր Պանիէլի  
ասորոյ եպիսկոպոսի:

Իսկ աբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ  
Պանիէլն, և նախ ինքն տեղեկանայր 'ի Պանիէլի նշանագրոյն,  
և ապա առեալ 'ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն այսց,  
'ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա 'ի նա հասուցա-  
նէր: Իսկ արքային հանգերձ միաբան սրբով Աաշակաւ և  
Վաշնոցիւ ընկալեալ զնշանագիրսն 'ի աբէլին, ուրախ լի-  
նէին: Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւ-  
տըն, ինդրէին հայցէին ևս յարքայէ մանկունս մատաղս, որով

---

պայ կենսագրութիւնը, բայց շատ համառօտ: Կորիւնի արս գը-  
րութեան զաղղիարէն թարգմանութիւնը, տես. Collection des  
historiens anciens et modernes de l'Arménie publiée en français avec le  
concours des principaux arménistes par Victor Langlois. T. II. Corioun.  
Biographie de bienheureux et saint docteur Mesrop. Avec introduction par  
Jean—Raphael Emine. Pp. 3—16. Յառաջաբանութեան 3—8 էջե-  
րը հայ այբուբենի պատմութեանը և նորա վերայ գրած հա-  
տուածների քննողական հայեցուածներին է վերաբերում:  
Dr. B. Welte. Goriun's Lebensbeschreibung des heiligen Mesrop.... Tübin-  
gen, 1841. 4°.

զնշանագիրսն մարթեսցեն։ Եւ յորժամ բազումք՝ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կըթթել, որով և յաստիճան խակ վարդապետութեան գեղցիկ երանելին հասանէր, և իբր և ամս երկու կարգեալ ըդ վարդապետութիւն իւր, և նովին նշանագը ովք տանէր։

Խակ իբր և՝ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս և զկապս հայերէն լեցւոյն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ այլոց գպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան։

«Ետ այնորիկ գարձեալ կրկին անգամ՝ի նոյն հոգս գառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ։»

Ա ասն որոյ առեալ երանելցյն Աաշթոցի դաս մի մանկոյ հրամանաւ արքայի, և միաբանութեամբ սրբոյն Աահակայ, և հրաժարեալք՝ի միմանց համբուրիւ սրբութեան՝ խաղայր դնայր՝ի հինգերորդ ամի Ա ուամշապհոյ արքային այսոց, և երթեալ հասանէր՝ի կողմանս Արամի՝ի քաղաքս երկուց Ասորոց, որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդն Ամիգ անուն։

Խակ աշակերտամէրն վարդապետին՝ զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի գպրութեանն կարգէր, և զոմանս յունական գպրութիւնն։ Անտի՝ի սամուսատական քաղաքաքանեալք, և զարդ զտարական արտասոսւալից, զիստամբերութիւնս, զհոգս զաշնարհաշեծս, յիշելով զասացեալսն մարդարէին, եթէ «Քորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես։»

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ աղգին բարեաց ինչ օճան գտանելոյ, Որում պարզեց իսկ վիճակ յամենաշնորհողին Աստուծոյ, հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովի իւրով, նշա-

նագիրս հայերէն լեզուիս: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուաննեալ և կարգեալ. յօրինէր ո իղութայիւք և կապօք: Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն սամոստացւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր: Եւ անդէն ՚ի նմին քաղաքի գրի չոմի հելլենական գպրութեան ։ ռոփանոսանուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնն նշանագրոյն զնրբագագոյնուն զկարձն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ՚ի թարգմանութիւնն գառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհանն անուն կոչէին, յԵկեղեցեաց գաւառուէն, և երկրորդին Յովհուէփ անուն՝ ՚ի պաղանական տան տանէն» (Էջ 8—11):

Պաղար Փարպեցին<sup>1</sup> (տպագրութիւն 1793թ., Էջ 24—30) գրում է, «Իսկ իբրև մերժեալ լինէր Խոսրով ՚ի թագաւորու-

<sup>1</sup> Պաղար Փարպեցւոյ պատմութեան (1388—485թթ.) նիւթը համարեաթէ միևնոյննէ, ինչ որ Եղիշէնը, բայց ափսոս որ նորա պատմութիւնը այնքան տարածուած չէ: Փարպեցւոյ գրուածը առաւել ընդարձակ տեղեկութիւնն է տալիս և ոճն էլ Եղիշէնից պակաս չէ: Տպագրուեցաւ Անեստիկ 1793 և 1807թ.: Պաղպիարէն թարգմանութիւնը յառաջաբանութեամբ և ծանօթութեամբ, ։ Ամուել Վեստրեանինը, տես. Collection des historiens anciens et moderns de l'Arménie, tom II, pp. 255—368. Պաղար Փարպեցւոյ պատմութեան նոր տպագրովը, եթէ գաղղիարէն թարգմանութեան յառաջաբանութիւնիցը և ծանօթութիւններիցն էլ բոլոր օգուտը քաղէ և նոր տպագրութեան մէջ՝ մուծանէ շնորհակալութեան արժանի կը լինէ հայուէր անձանց կողմանէ և իւր ծախքն կը վերագարձուցանէ: Կոյնապէս մեծ հարկաւորութիւն կայ «Առաքել վարդապետ Պաւուրէժացւոյ» պատմութեանը, որը տպած է, 1669 թ., Ամստերդամ, (12-ծալ, Էջ 650), և շատ հաղուագիւտ է,

թենէն, խնդրէին հայք ընդ Շապուհ այլ թագաւոր իւրեանց, և նա հաւանեալ թագաւորեցուցանէր նոցա զլ ռամշապուհ զեղբայր նորին Խոսրովու՝ յազգէն Արշակունեաց, և թագաւորեցուցեալ զլ ռամշապուհ արձակէր՝ ի այս:

Ի ժամանակս սորա թագաւորութեանն, տուան շնորհ հոգովութեան յամենախնամէն Աստուծոյ՝ առն միում ճշմարտի Աշթոց<sup>1</sup> անուն կոչեցելոյ, որ էր՝ ի գաւառէն Տարունյ, ՚ի այցեկաց գեղջէ, որդի առն որում անուն էր Արդան, ՚ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ գպրութիւն զյոյն, զենուորեալ՝ ի գուան հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատնագիր արքունի գպրացն, վասն զի ասորի և յոյն

նորից տպագրել, կանոնաւոր սրբագրութեամբ, կետագրութամբ և աշխարհագրական և պատմաբանական ծանօթութեամբ և եհաստանի և եհացւոց վերաբերեալ: Ա երջին տեղեկութիւնները ոչ այնքան և եհացւոց, որքան զերմանական ընտիր մասնաւոր աղբիւրներից է քաղելու:

«Ղ ազար Փարպեցոյ թուղթը առ Ա աշան Տէրն— Ամփկոնէից ի լոյս ընծայեաց Մ. Լիմին»: 1853, 8-ծալ, էջ 68:

«Ղ ազար Փարպեցոյ թուղթը— Անշագրութիւն ստախօս արքազաններին: Թարգմանութիւն և բացարութիւն Աիբայէլի Կալբանդեանց»: Տպագրութիւն Մ. Տէր Գրիգորեանց: Պետքարուրգ: 1868 թ.: 8-ծալ, էջ 84:

Փարպեցոյ այս գրուածքը մեր պատմութեան թանկագին նշխաններից մինն է, արժանի ամենամեծ իմաստասիրութեան հայ գպրութեան աշակերտեց: Կարաբառ տպագրութեան հետ, մանաւանդ բազմիցս կարգալու է աշխարհաբառ թարգմանութիւնը, որովհետեւ Կալբանդեանցը այս թարգմանութիւնը իւր աշխատութիւններից ամենալաւն էր համարում, իսկ, միւս կողմանէ, մենք խորհուրդ ենք տալիս ամենայն հայ երիտասարդներին որ այս աշխարհաբառ թարգմանութիւնը քանի մի անգամ ուշագրութեամբ կարդալ, նորա արդի աշխարհաբառ կանոնաւոր լեզուին ընտելանալու համար:

<sup>1</sup> Սուրբն Անուրու:

գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորին հայոց արքունի դպիրքն, զվճոցն և զհրովարտական կարգաւորապէս առանց եպերանաց: Յետ այնորիկ տենչացեալ կարգի վանականութեան, երթայ'ի վանս բազմութեան եղարց, և ընկալեալ զկերպարանս վանականութեան, լինէր ընտիր յամենայնի և երևելի. հրաժարէր յամենայն աշխարհազրօս երկրաւոր ըզբազմնեց, ապա յանապատական կրօնս փոխեալ՝ զարմանալի երնէր և հոչակաւոր, և կայր յանապատս ՚ի բազում տեղիս քարանձաւաց մեծաւ առաքինութեամբ և խստամբեր վարիւք, բազում և այլ ուրուք վարուք կրօնաւորօք և աղօթասէր եղբարբք, մինչև յամս հինգերորդ արքային հայոց Առամշապհոյ եղօր Խոսրովու: Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւատեաւ՝ ՚ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան՝ աշխերտի նորին երանելոյն Առաջոցի կարգացեալ տեղեկացի զվարս կենաց նորա, և զիւր հայերէն նշանագրացն, թէ երբ, կամ ուր, և կամ յոյր ուրուք ձեռն գտանէ. թագաւորին հայոց Առամշապուհոյ ջերմեռանգն Խնդրելով, զոր կարգեաց գրելով ճշմարտապէս յառաջագրեալ այրն հոգեոր Կորիւն: Ուստի և մեր բազում անգամ կարգալով տեղեկացեալ հաւաստեաւ:

Եւ այսպէս բազմաժամանակեայ մտածութիւնն երանելոյ առն Առաջոցի ընկալեալ յամենախնամ մարդասիրէն Ասունծոյ, զօրացոց զնա հոգւով, ողբրմութեան իւր յ. քանզի հոգացեալ յարաժամ տրտմէր երանելի այրն Առաջոց, տեսանելով զմեծաջանն ծախս մանկանցն այստան աշխարհիս: Արք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք, և բազմաժամանակեայ զեղերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ՚ի դպրոցս ասորի գիտութեան, քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին, ՚ի վանորայս և յեկեղեցիս հայաստան ժողովստոցս. յորմէ ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծաշխարհի, յանլրութենէ լիզուին ասորոյ.

Զայս ՚ի բազում ժամանակս զմտաւ ածեալ երանելի առն

Առաջնորդի, և փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ գոն  
նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է  
ինքեան ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով  
շահել զոդիս արանց և կանանց առհասարակ, յա-  
մենայն եկեղեցիս բազմութեանն, զօրացեալ՝ ի սուրբ հոգւոյն  
յորդորմամբ, և եկեալ առ սուրբ կաթուղիկոսն հայոց Աա-  
հակ, զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածու-  
թեան զննդիրն, և ընկալեալ՝ ի նմանէ քաջալերութեան աւե-  
տիս թէ զօրացեալ պինդ կաց:

Առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս՝ ի բահանայից, զոր  
ես պատուիրեմ. և ուր տկարանայք՝ ի կարգել զհեգենայն,  
բերեալ առ իս ուղղեմ զայն. քանզի յոյժ դիւրին է գիւտ  
իրացդ՝ զոր հայցես; Իայց նախ արժան է մեզ զգացուցանել  
թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարեւոր խնդրոյ. վասնորոյ  
և քան զաւուրս ինչ յառաջ, ոչ բազումն առեալ բանք յեկե-  
ղեցւոչ յաղագս կարօտութեան այդպիսի պիտոյից, առացեալ  
է ուրեմն ցարք այ թէ տեսի նշանագիրս հայերէն  
առ ուրեմն եպ իսկոպոսի՝ ի գեօղ միում, և թագա-  
ւորն յիշէր զասազեալսն, բանզի և ինձ նա պատմեաց:

Եւ մտեալ սրբոյ կաթողիկոսին հայոց Աահակայ հանդերձ  
երանելեան Առաջնորդիւ առ թագաւորն Առամշապուհ, և  
իմացեալ նմա զպէտս իրացն, յիշեաց և ինքն թագաւորն բզ-  
խօսելսն վանականին վասն նորին իրացն ընդ նմա, զոր և նորա  
պատմեալ ուրախացոյց: Եւ նոցա լուեալ զայս՝ ի թագաւորէն,  
փութացուցանէին զնա ասելով, թէ ձեպեալ յաղագս մեծ օգ-  
տաբեր աշխարհիս հայոց գիւտիս այսորիկ՝ ի ժամանակս քո,  
որ շատ աւելի առ յապայսն բերէ քեզ շահ յիշատակ անմո-  
ւաց, և օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն թագ-  
ւորութեանդ քո. և կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքն  
քո էին յազգէն Աբշակունեաց:

Եւ թագաւորին լուեալ զայս և խնդալից եղեալ ետ փառս

Աստուծոյ, որ 'ի ժամանակս թագաւորութեան նորա, զայսպիսի  
հոգեոր կենաց փափաք ժաւանգեաց զաշխարհիս հայոց:

Ա աղվաղակի ստիպով առաքեալ դեսպան զԱ ահրիձ ոմն  
անուն կոչեցեալ 'ի ծնողաց իւրոց՝ հանգերձ հրովարտակաւ,  
առ այր մի էրէց ձարէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջա-  
գոյն ցարքայ. որ և մերձաւոր էր առն բարեպաշտի Պանիէլի  
եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն հայ էր էն կա-  
յին, և երանելոյն ձարէլի ընկալեալ զՀրովարտակն 'ի Ա ահ-  
րիձէ և լուեալ զիրսն փութանիկի հասանէր առ սքանչելի  
եպիսկոպոսն Պանիէլ, և նախ անդէն 'ի նմին Պանիէլի ինքն  
տեղեկանայր զկարգ նշանագրացն, և առեալ 'ի նմանէ առ թա-  
գաւորն և առ սուրբ հայրապետն հայոց Աահակ և առ երանե-  
լին Աաշթոց հասանէր:

Խակ արքայն հայոց, սուրբ կաթողիկոսաւն Աահակաւ և  
երանելեան Աաշթոցիւ, ընկալեալ զնշանագիրսն 'ի ձարելէ,  
ուրախ լինէին: Բայց տեղեկացեալ գիտացին: ոչ լինել բաւա-  
կան այնու նշանագրօք, ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայ-  
կականաց հագներգաբար, մուրացածիւն այնուիկ գծագրու-  
թեամբ:

Զինի այսորիկ ինքնին Աեսրովը իշանէ 'ի Աիշագետու  
հանգերձ աշակերտօք առ նոյն Պանիէլ, և ոչ աւելի ինչ գը-  
տեալ քան զաւացինն անցանէ յԵղեսեայ առ Պղատոս ոմն ճար-  
տասան հեթանոս, իշխան դիւանին, և նորա խնդութեամբ ըն-  
կալեալ, և զոր ինչ միանգամ 'ի միտ առնոյր բան հայերէն,  
յինքն առեալ և շատ զանացեալ և ոչ օգտեալ, զտգիտութիւն  
խոստովանեաց հաւտորն, և զայլ ոմն ասելով յոյժ հասու վար-  
գապետ իւր լեալ յառաջագոյն, և ապա առեալ զՃարտարացն  
գրեան 'ի նոյն գիւանէն Եղեսեայ, և գնացեալ քրիստոնէու-  
թեան հաւատաց, որոյ անունն Եպիփանոս, զոր խնդրեալ գըտ-  
ցես լցուցանել զփափաքդ քո:

Յայնժամ Աեսրովը օգնականութիւն 'ի Բարելուէ  
եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ 'ի Աամոս գիմէ.

քանզի Աշումիանոս վճարելով զկենցազս, թողեալ լինի աշակերտ մի անուանեալ ռուսիանոս, հրաշալի արուեստիւ հելեն գրչութեան, որ ՚ի սամոս էր միայնացեալ: Առ սա երթեալ Անսորովբայ, և յայսմ ևս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ՚ի քուն երազ, և ոչ յարթեութեան տեսիլ, այլ ՚ի սրտին գործարանի երես թացեալ հոգւոյն թաթ ձեռին աջոյ գրելով ՚ի վերայ վկիմի, զի որպէս ՚ի ձեան վերջը գծին ունէր քարին, և ոչ միայն երեսութացաւ, այլև հանգամանք ամենայնիցն որպէս յաման ինչ ՚ի միտս նորա հաւաքեցաւ, և յարուցեալ յաղօթիցն եստեղծ զնշանագիրս մեր հանդերձ ռուսիանութեանէր, կերպաձեեալ զգիրն առ ձեռն պատրաստ Անսորովբայ, փոխատրելով զշայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիզոբայիցն ՚ի հելենացւոյն:

Եւ այսպէս գիտեալ գիւտի նշանագրացն, ձեռն ՚ի գործ արկանէր երանելին Աաշթոյ՝ յերիւրելով զնա սուրբ հայրապետին հայոց Աահակայ, գիւրահնար ձանապարհ ցուցանելով կարգագրութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան: Տալով նմա օգնականս և այլ արս բանիբունս և մտացիս ՚ի քահանայիցն հայոց, որք էին սակաւ մի և նոքա, որպէս երանելին Աաշթոյ՝ մերձաւորեալք ՚ի յունարէն հեգենայինսն, որում առաջնոյն անուն էր յ(Օ)հան ՚ի գաւառէն Եկեղեաց: Եւ երկրորդին՝ Յովսէփ, ՚ի Պաղանական տանէն: Եւ երրորդին՝ տէր, ՚ի Խորձենոյ: Եւ չորրորդին՝ Աուչէ, ՚ի Տարօնոյ: Արոց օգնելով զօրէր երանելին Աաշթոյ, հանդիպեցուցանէր զշայերէն աթութայսն ըստ կարգման սալովբայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ՚ի սուրբ կաթուղիկոսէն ՚ի Աահակայ զաթութայիցն գալափար, ըստ անսայթաքութեան յունին: Ա ասն զի ոչ լինէին բաւական՝ ՚ի վճարել անսիալ ուղղակի առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Աահակայ, որ յոյժ առլեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք յունաց, և եղեալ կատարելապէս հմուտ երգողական տառիցն, և հուետորական յորդասաց յայտնաբանութեան, ևս առաւել տեղեկացեալ գիլխուփայական արուեստիցն ցուցանիւք:

Կարգեալ այնուհետեւ փրկչին առաջնորդութեամբ զգիր գրենոյն հայերէնի, և հելենացին ուղղեալ յօրինուածս, ցանկային կարգել գպրոցս, և ուսուցանել բազմութիւն մանկանց. քանզի ամենայն անձն յօրդորեալ փափաքէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս 'ի խաւարէ' յասորի տանջանացն զերծեալը 'ի ըստ' խնդային: Տայց տարակուսեալը կասէին յանչքութենէ գրոց սրբոց. քանզի ոչ գոյին գեռես հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցւոյ: Եշւ երանելին Աշմեց, և որ ընդ նմա պատուական քահանայք էին, ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարեռը գործ, թարգմանել գիրս 'ի յոյն լեզուոյն'ի հայ բարբառ+ վասն զի ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման»:

Հատ ու կտոր տեղեկութիւնները հայկական այրութենի մասին գտանուում են Առվակս<sup>1</sup> Խորենացւոյ պատմութեան, գիրք 3, գլ. ծբ; եր. 145—247:

<sup>1</sup> Առվակս ծնած է չորրորդ դարու վերջին Տարօն գաւառի Խորենի կամ Խորօնք գիւղումը և ծննդեան տեղից կոչուած Խորենացի: Արքյն Անեսրոպի քեռորդին էր, առաջին ուսումը և գաստիարակութիւնը ստացաւ նորա մօս; միւս նորա աշակերտների հետ գնաց իւր ուսումը կատարելագործելու համար Եղեսիա, Ինդանդիոն (լ. Պօլի), Անտիոք, Աթէնք, Հռոմ, Պաղեստին և Ալեքսանդրիա (Եգիպտոս): Երկար ճանապարհորդութիւններից յետոյ երբ որ վերագարձաւ հայրենիքը, Աաշակ ու Անեսրոպը վախճանած էին, այսպատճանը անուսումնութենէ և անիշխանութենէ սաստիկ անկարգութեան մէջն էր.... և այլն: Եղնը կայ կողը ացւոյ մահուց յետոյ Իագորեանդ և Արշարունեաց գաւառաների եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Կարծում են, որ Խորենացին մօս հարիւր տարի լինի ապրած, մինչև մօս 488 թ.: Տարօն գաւառի սուրբ Առաքելոց վանքի եկեղեցւումը ամիսովեցին Խորենացու մարմինը: Ը վերգացի Իրենները, Առոկվա բանստարկեալ գոլով, իւր բանտի ընկերակից Յավհաննէս Իարդուղիմէոս Յակինթեան դոմինիկեան տեղեակ հայ լեզուի կրօնաւորի օգնականութեամբ թարգմանեց Առվակսի պատմութիւնը լատինի լեզու, քաղե-

Յովշաննէս կաթուղիկոսի Պարասիանակերտցւոյ այցոց պատմութեան էջ 32 (երեք տող միայն); Ատելիաննոս<sup>1</sup> մականուաննեալ «Ասողիկ» (աշուղ, երգիչ) կամ Տարօնեցի (Տարօն ծնած), իւր Տիեղերական պատմութեան էջ, 74—75, իսկ ոռուերէն թարգմանութեան էջ 50, ուժը տող միայն, այն էլ Կորիւնի և Պաղար Փարպեցւոյ ասածների վերայ հիմուե-

լով կամ Համառօտելով, և յետոյ, 1733 թ., տպագրեց Ատոկ-Հոլմ, Ը վեցիայի մայրաքաղաքում, զանազան ծանօթութեամբ հանդերձ; Գուլելմոս (Ա իշլելմ) և Գեորգ Ա իստոն եղբայրները, անգլիացիք, 1737 թ. տպագրեցին Լ ոնդոն, Ենգլիայի մայրաքաղաքում, նոր Հատիներէն թարգմանութիւնը Խորենացւոյ. Մատերդամ 1695 թ. պատմութեան և 1668 թ. աշխարհագրութեան տպած օրինակներից: Եսցա Հայրը, Գուլելմոսը, Նորկաստանի Վագրաս քաղաքում Հայազգի Գրրիգոր Շաղափիրեանի որդւոց վարժապետ գոլով, սովորեց նոցանից Հայերէն լեզուն և, Լ ոնդրա վերագառնալուց յետոյ, սովորցրեց իւր վերոյիշեալ երկու որդոցը: Լ ը՛Ա այլեան դը Քլորիվալը, 1836 և 1841 թ., տպագրեց գաղղիարէն թարգմանութիւնը Խ րենացւոյ պատմութեանը, զանազան ծանօթութեամբ հանդերձ, բայց ոչ առանց սխալանաց; նոր, առավել ճիշդ և գերազանց Քրանչողերէն թարգմանութիւնը, Ա ենետկոյ Վիսիթարեանց օգնականութեամբ, տպագրեց Հանգուցեալ և մեր ազգի Համար բարեյիշատակ Ա իկոնոր Լ անգլուան — տես. Collection des historiens anciens et modernes de l'Arménie, tom II, pp. 44—175, Հանգերձ բազում և Հետաքրքրական ծանօթութեամբ: Ուսւսերէն թարգմանութիւնը, 1809 թ., Յովսէփ Վարկաւագ (Օհաննիսնանցինը (Ա. Պետերսուրդ) շատ պակասութիւններ ունի; 1858 թ., նոր թարգմ. Ա. Յ. Յամինի Խորենացւոյ ամենալաւ թարգմանութիւններից մինն է Համար:

<sup>1</sup> Ատելիաննոս վ. Տարօնեցւոյ (ժ. գարու) Տիեղերական պատմութիւնը, մինչև 1004 թուականը, առաջին անգամ տպագրեց Փարիզում, 1852 թ. (8-ծալ, եր, 308), Կարապետ վարդապետ Ծ աշնազարեանցը; ոռուերէն թարգմանութիւնը ՎԿրտչի Ղամին, Պոսկայ, 1864, 8°, էջ 208 և 211—335 Հետաքրքրական ծանօթութիւններ:

**Հովկ:** Չամչեանի պատմութեան հատ. 1, եր. 755—765, լի թիւր մեկնութիւններով: Աամուէլ Վնեցին<sup>1</sup> և Կիրակոս Գանձակեցին<sup>2</sup> (Էջ 15) յիշում են այս մասին, նմանապէս հիմունելով Կորիւնի և Պաղարայ Փարոպեցւոյ վերայ, քանի մի տող միայն և բոլորովին հարևանցարար; Ա արդան Բարձր-բերդցւոյ Տիեզերական պատմութեան Էջ 70; Ն. Պոկաս վ. Խնձիճեանի Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց Աշխարհին, 3 հատորի, Էջ 70—80, կան մանրամասն տեղեկութիւններ հայ գրութեան վերաբերեալ, թէ հայոց և թէ օտար մատենագիրներից քաղած: Ա.փոսո, որ այժմեան մեր գործոցներից ունենորները իւրեանց գրադարանի մէջ չ'ունին (ամեն մինը նոցանից) 2—3 օրինակ Ն. Խնձիճեանի այս շարադրութիւնը, որից հարուստ տեղեկութիւն կ'ոտանային Հայաստանի անցեալի և գրականութեան վերայ և, միենդյն ժամանակ, կը տեսնէին թէ ինչպէս շատերը, վերջի ժամանակ-

**Վում:** Խտալերէն թարգմանութիւնը J. Capelletti, 1841 թ., և 1849 և 1850 թ., երկու տպագրութիւնը, Տօմազեռ խտալացւոյն վերաբերեալը: Ա երջինը Միսիթարեանց թարգմանութիւն է և Տօմազեռն միմիայն խտալական թարգմանութեան խմբագրութիւնն է արած: Գերմանական թարգմանութիւնը, այժմն Կոբենց (Բեյին գետի վերայ) բերգաքաղաքի զօրաց քահանայ Ն. Լառերինը, տպուեցաւ Բեգենսբուրգ, 1869 թ., Էջ IV և 240:

<sup>1</sup> Աամուէլ Վնեցի, կամ Երէց, 12-դ դարու, գրեց ժամանակագրութիւնը մինչև 1179 թ., Գրիգոր Պահլաւունի կաթուղիկոսին իննդրանոք: Լատիներէն թարգմանութիւնը ծիրանաւոր Մայքնը, 1818 թ., Ո.իլան: 1839 թ., Նոոմ:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի (Գանձայ, Ալխաւետօպօլ), ժգ դարու, գրեց համառօտ պատմութիւնը Գրիգոր Լուսաւորչի ժամանակից մինչև իւր օրերը, 300 թ. մինչև 1264: Տպագրուեցաւ 1858 թ., Մոսկվա, 8-ծալ, Էջ 244, աշխատասիրութեամբ Ռոկան Տէր-Գեորգեան Յովհաննիսեանց, Ա ենետիկ, 1865, 8-ծալ, Էջ 265.

ները, կրծատել են այս շարագրութիւնը: Հ. Խնձիճեանի բազմարդիւն աշխատութիւնը ժողովրդեան և դպրոցների համար համառօտ տպագրեց (շատ միջակ աշխատութիւն է): Ամսուէլ վ. «Քաջունի: Ա Ենետիկ: 1855, 16-ծալ, էջ 303: Ա. Օ. Թմինъ. Объ армянскомъ алфавитѣ. Четвертое приложеніе къ переводу Исторіи Армениі Моисея Хоренскаго (стр. 361—376). Москва, 1856. 8, стр. 131; примѣчанія и приложенія стр. 235—183; оглавленіе стр. VIII.

Գետերման գերմանացի հայկաբան և բերլինու համալսարանի ուսուցչապետի փոքր, բայց ականաւոր հատուածը «Ա ասն Հայկական գրոց», Արօն ամսագրի (*Եշրուսաղէմ*) 1869 թ., թիւ 4, ապրիլի 30, էր. 85—86: Journal Asiatique, février, 1867, p. 200.

Արիստակէս Գրիչն, հեղինակը «Արուեստ գրչութեան» գրքի, 13-ր դարու հեղինակ է: Նորա ձեռագրի մէջ (մինչեւ այժմն տպած չէ) կարելի է, որ մեր խօսեցած նիւթի մասին էլ տեղեկութիւններ լինին:

«Հայերէն հին ձեռագիրներու վրայ», տես Եւրոպա լրագրի, 1848, № 6, էջ 24; № 8, էջ 34; № 9, էջ 38; 1849 թ. № 8, էջ 16; № 5, էջ 20 և № 8, էջ 32:

Ա երայիշեալ գրուածների և նոցա վերայ արած քննութիւնների վերայ հիմնուելով, այժմն ընդունում են, որ Պահլաւացի (Պեհլևի) տառերը Օւենգից հնագոյն են: Հայկական այլբուրենն էլ Օւենգից հին է:

Հայկական տառերի ստեղծումը շատ և շատ հին է, գոնեա Ա աղարշակից առաջ (այսինքն՝ Քրիստոսից 150—200 տարի առաջ): Այս այն տառերն են, որ տեսել էր Ա ուամշապուհ հայոց թագաւորը (400 թ. Քրիստոսից յետոյ) Միջագետում, Ասորի Դանիէլ եպիսկոպոսի մօտ պահած իբրև հընութիւն և որից այդ տառերը ստացաւ սուրբն Մեսրոպ:

Այժմն ապացուցուած է, թէ Փոքր Ասիայ, Եգիպտոս և

Եւրոպիայ բնակեալ ազգերի (Հին Արամեացւոց, Պալմիրացւոց, Փիւնիկեցւոց, Հին Երայեցւոց, Հին Ետրուսկների, Հին Հունաց, Դունական նշանագիրքը, Ասմարացւոց, Եթովպացւոց, Հարեցացւոց... և այլն...) այրուբենների սկզբնատիպը, գաղափարը, որից կամ օրինակել են կամ որին յարմարացրած են իւրեանց ազգային սեպհական տառերը, բարելական այրուբենն է, որին կոչում են նաևս քառանկիւնեան: Հաւանական են համարում և նմանութիւնից էլ երեսում է, որ հայոց այն հին այրուբենի՝ ազգիւրն էլ միւնչյնն է:

Հին հայոց այրուբենի տառերը պակաս էին, նոցա մէջ չկար այն ամեն մի տառը, որոնց օգնականութեամբ կարելի լիներ բոլոր հայոց լեզուի ձայները նշանակել; մասնաւորապէս, քրիստոնեական գարում թարգմանել բոլոր այն քրիստոնէութեան վերաբերեալ գրեանքը, որոց թարգմանութիւնը մեր առաջին լուսաւորիչները թէ քրիստոնէութեան ամրանալու և թէ ազգի լուսաւորութեանը համար անշուշտ հարկաւոր էին համարում; այս էր պատճառը որ սուրբն Անեսոպ, ինքն գործով փորձելով իւր աշակերտների վերայ յիշեալ գժուարութիւնները, հարկադրուեցաւ աշխատել այն հին ազգային այրուբենի պակասորդը լուցնել: Որովհետեւ բարելացւոց և փիւնիկեցւոց այրուբենքը 22 տառ ունեին, հաւանական են համարում որ հին հայոցն էլ ուներ 22, իսկ սուրբն Անեսոպ հնարեց հայկական այժման այրուբենի մացորդ 14 տառը, որպէս Արգան պատմագիրն էլ վկայում է:

Որոնք են հին 22 և որոնք սրբոյն Անեսոպից 14 նոր յօրինած տառերը, վճռուած չեն: Իննանը և միւսները (Renan, Hist. des lang. sémit. 2 p. 299. Michaëlis, Gramm. Syr. § 7. Assemani, Biblioith. Orient. t. I, p. 64 et 521; t. III, part 2, p. 378) ապացուցին, որ ասորւց տառերը չ'ունեին ձայնաւորներ և 8-րդ գարում թէոփիլէս Եղեսացին յունաց ձայնաւորները մուծեց ասորւց այրուբենը կատարելագործելու

Համար; սորանից անտեղի չել լինել եղակացնել, որ մեր ամենահին այլուրենն էլ չուներ ձայնաւորները:

Ո. Եմինի կարծիքով, սրբոյն Ո՞եսրովպի հնարած նոր տառերը, բաց ի 7 ձայնաւորներից—ա, ե, է, ը, ի, ո, ւ, յետագայ եօթը բաղաձայներն են—թ, ձ, զ, ջ, ր, փ եւ ք:

Այս և Ո՞եսրովեան տառերը երկաթագիր էին.... Ա, Բ, Գ, այսինքն այժմեան տպած գլխագիր տառերը, որին կը կոչեն բուն երկաթագիր ես:

Այս հին դարերուն (Վ-դ և յետոյ) մեջ գործ ածած երկաթագրի ձեռով ձեռագրերը, մագաղաթի վերայ գրած, այժմս հազուագիւտ են: Երկաթագիր կոչումը ոմանք կարծում են, իբրու թէ, երկաթէ գրիչով գրելուն է առած; իսկ միւսները ասում են, թէ թանաքի պատճառաւ, որ երկաթի ժանկից էին շինում: Այս ձեռագիրները երեք տեսակ նիւթի վերայ են գրուած. մագաղաթի, մինչև 10-դ դարը; թղթի, 10-դ դարուց մինչև 13—14-դ դարը, ու բամբակէ թղթի վերայ, 13—14-դ դարուց սկսած, երբ որ սկսեցին բամբակէ թուղթ շնուր:

Ճամանակաւ, հայ կական այբուբենը, — ին չպէս որ և բոլոր միւս ազգերի այբուբենները,— քանի մի փոփոխութեանց ենթագրուեցաւ և զանազան գարերուն գրած ձեռագրերը զանազան ձև ստացան:

Այս, բուն Երկաթագրի գործածութիւնը, առանց երեելի փոփոխութեան, տեսեց մինչև թ (9-դ) դարը:

Ո, դարումը, տառերի գրութիւնը գիւրացնելու համար, սկսեցին նոցա վերի և ներքի կողմերը ուղիղ (շիտակ) գրել, այնպէս որ բուն երկաթագիրը նոր, փոքրացած ձև ստացաւ և բուն երկաթագիրը սկսեցին գլխագրի տեղ գործ ածել: Այս նոր տեսակ գրին, որը տեսեց մինչև 12-դ դարը շատ քիչ փոփոխութիւններով, միջին երկաթագիր կամ միջակա գիւրին էր կ'ասեն: Ուշպէս միջակագրով առաւել գիւրին էր

գրելու քան թէ բուն երկաթագրով, բայց վերջինը առաւել դիւրին և կարդալու համար քան թէ միջին երկաթագիրը:

Ժա—ժք (11—12-ր) գարերումը, վերսյիշեալ գրերը առաւել ևս փոքրացնելով, հնարեցին բոլորագիրը, որը այժմ տպած մատեանների մէջ են գործ ածում, տպածի փոքր տպաւերը (տողատառերը) — ա, բ, գ, դ....

Այս ձեւ տառերով գրած ձեռագրերը մետաքսեալ, — Ապատի ասած —, թղթի վերայ են գրուած և, սորանից յետոյ, բամբակի թղթի վերայ սկսեցին գրելը:

Ժդ և ժե (14—15-ր) գարերումը հնարեցին նօտր առած գիրը, որը, իբրու, նման է նօտարաց (Notaire, նոտարիուս) տ, տ, թ, ա, բ, շ, չ, լ արագագրին: Այս գիրը չափից դուրս փոքրացրած բոլորագիրն է, ասես թէ կետերից և կարճ խազերից բազկացած:

Խօտրագիրը (cursive) գործ ածելիս գրիչը պիտի այնպէս գուրս կտրել և ձեռքին բռնել, ինչպէս որ պարսկերէն կամ արարերէն գրելիս, որը մեր այժմեան գրութեան, ձեռքի կազմուածքին և արագութեան հիմանցը բոլորովին հակառակ է, մանաւանդ որ մենք ձախից աջ ենք գրում և ոչ աջից ձախ, վասն որոյ գրիչը այնպէս ձեռքին բռնելը, ինչպէս պիտի բանուի նօտրագրով գրելիս, մենք բոլորովին հակառակ ենք շարժում մեր ձախից աջ գրելու կարգին:

Վնկանոնութիւնը սովորութիւն, բնաւորութիւն դառնալով թէ մասնաւոր անձինքների և թէ ժողովրդի համար, դառնում է իբրև կանոն, բայց սորանից չէ կարելի եղբակացուցանել որ ապագայ սերունդն էլ, ակներև, յայտնի, բնական կանոնի տեղ անկանոնութիւնը պիտի իւրեան բնաւորութիւն շնչէ:

Սորանից յետոյ, փոքր ի շատէ եւրոպացւոց ազգերի ազգեցութեան տակ, առաջ եկաւ շեղագիրը (շղագիրը, coulée, գար ու վար, պառկած), որը նօտր գրից առաւել բարակ, դիւրին գրելու և որոշ է և որի Արարատեան գաւառում,

Դարաբաղ, «Առողջուղա» և արեմտեան հայերի գրութեան ձեւի մէջ փոքր ինչ զանազանութիւն կայ:

Վոսկվայում, 1855 թ., տպած յեղբարց Խնդիրաձեանցների այկական գեղագրութեան օրինակներում, էջ 4—5—, արեմտեան հայոց շեղագիր կարելի է անուանել; էջ 6, Առարատեան գաւառի; էջ 7—8, Դարաբաղու: «Առողջուղայի ասած գրութեան մէջ տողին զուգահեաական (պարալել) երկար խաղերը, զօր. զ, լ, զ, չ, շ տառերի մէջ, առաւել երկար են, ուղղորդներինը (ուղղաձիգ վերուստ ի վայր, perpendicular, перпендикуляри, перпендикулярныи) առաւել կարճ, իսկ միւս տառերի ճանգերը, զորօրինակ, ս, ո, ա, չ... առաւել չափաւորուած:

Կ, Ր բագիր (բոլորակ գիր) կոչումն այն ձև գրութիւնը, որը յարմարացրած է այժմեան եւրոպացւոց գրութեան ձեին, որը ընտրեցինք և մենք ի նորքոյ գրեալ պատճառներով:

Բաց ի սորանից, հին գրութեան մէջ գտանվում են փոփոխութիւններ, որոնց կարելի է կոչել կամ աղաւալութիւն կամ ըստ կամաց մուծեալ նորաձեռութիւններ գրութեան մէջ:

Գրամագիր, որը բուն երկաթագիրն է, սուբինեանց Կիլիկիոյ թագաւորաց գրամների վերայ փորագրողաց և ձուլղների անձարտարութիւնից փոխած: Չը մոռանանք, որ այժմը ապացուցուած է, որ Ուսուբինեանց ժամանակից առաջ ձուլցած հայ գրամ և հայերէն տառերով մինչեւ այժմս չէ գտնուած, և այն նորանից շատ հին գրամները, որոնց վերայ տեսանվում է իբրու թէ հայոց այբուբենի նման տառեր, Պահլաւացի գրոց հայոց այբուբենի հետ նմանութիւնը շատերին, ինչպէս ։ Ինձինեանին ևս, կարծել տուեց, թէ շատ հին հայոց գրամներ են:

։ Ինձինեանը գրում է (78—79 էջ).

«Լոնդակագիր: Լիբր «Զիֆրա» կոչեցեալ գիրն եւրոպացւոց, սովոր գրեալ գոլով կոնդակաց ինչ նախնեաց՝ յայս անուն կոչեցաւ: Որոյ և օրինակ այբուբենի գտանէր առ մեզ կարգաւ գրեալ մեծաւ ճարտարարութեամբ, տառքն էին որպէս զգիսաւորս, բայց յամին 1815 ընդ այլ գրեանց մերոց հրկեղ եղեւի Ծիփանդիա:

Փառագիր: Յայս անուն կոչեն զամենայն ձևս, դորս գրիչը յեօթնեւասներորդ գարուն հնարեցին՝ զնախնի երկաթագիրն կերպածեալ՝ ՚ի ձև զանազան զարդուց և ՚ի ձև զանազան ճնճղկանց, և անուանեալ «Ճնճղագիր»։ կամ «Ճագագիր»։ Նաև ՚ի ձև մարգոյ: Արում անտեղեակ գոլով Շղմիթ անգղիացի, յերկհատորեան գիրս իւր՝ յորջորջեալ ետազօտութիւն որ յաղագս Շինաց, և եղեալ ՚ի նմա զապատկեր հայկական այբուբենի ՚ի ձև այսպիսի ձագագրոց, ճգնի ցուցանել թէ նաև տառք Ճայոց ըստ Շինաց են մի մի բառք նշանականը և նորհրդականք: Այս օրինակ սմին նման է տեսանել և ՚ի սկզբնաձառն բազմաթղուեան գրոց Ա ալդոնի անգղիացոյ: ՚ի թղթ 12, ուրանօր նախ եղեալ հայկական այբուբենն բոլորագիր, ապա զբանն և տառս ՚ի նոցունց ուրոյն դասեալ՝ գնէ ՚ի վերայ խորագիր: «Տառք, որք ունին զնմանութիւն ինչ կերպարանաց»։ Համարելով թէ այլ տառք իցեն:

Փակագիր: Մի և նոյն երկաթագիր վերածեալ ՚ի բազում տարից բաղադրութիւն, հնարեալ ՚ի գրչաց առ համառոտութիւն. և ՚ի մատանիս և ՚ի տապանագիրս ինչ ՚ի վար արկեալ մինչև ցայծմ:

Ա արագագիր: Յիշատակի ուրեք առ մատենագիրս մեր վասն Շապիչյ Պարսից թագաւորի՝ գրեալ ունել ՚ի վերայ մատանւոյ սովին գրով, զոր օրինակ յասելն Ատեփաննոսի (Օրպելեան, «Ա Ճիռ կնքեալ Ա արաղագիր մատանեաւ»): Արդէա և առ Խուզանգայ գ, 53, յիշատակի նոյնպէս ՚ի վերայ մատանւոյ: Յորմէ հաւանեալ կարծեմ ոչ սակս տարբերութեան ձեռյն այսպէս անուանեալ՝ քան թէ սակս տարբերութեան փորագրութեանն ՚ի վերայ մատանւոյ, կամ ՚ի խոր՝ կամ յաւետ ՚ի բարձր»:

Վետագրութիւնը կարգաւորեցին ժղ գարումը:

Վկղըումը, բուն երկաթագիր, միջակ երկաթագիր և բոլորագիր այբուբենը երկու խաղի մէջ հաւասար երկայնութեամբ

կը գրուէին, ինչպէս որ մինչեւ այժմն մնացել է երկաթագրի մէջ; յետոյ, բոլորագիրը չնարելուց յետոյ և, մանաւանդ, շեղագիր ձեկի ընդունելուց, այրութենի տառերը մի քանիսը մնացին երկու խաղի մէջ, միւսները երկարացան վերև և ներքեւ, զորօրինակ, մ, ն, հ, է, ժ, ծ, չ, ՛, ս, ո, ա, տ, ու, ւ; բ, գ, դ, զ, լ, թ, ձ, դ, շ, յ, շ, չ, պ, ջ, ր, ց, ի, իւ, կ, վ, փ, ք, ֆ:

Ըոլորագիր կոչումը ցոյց է տալիս, որ մեր պապերը, ինչպէս որ եւրոպացիները ես, բնականաբար դգացին, որ բոլորագիր ասած գրութիւնը, որը տպածի մէջ բոլորակելու չէ, այլ ուղիղ անկիւններից է կազմած, իսկապէս բոլորակելու (կօլու շինելու) է, որովհետեւ ձեռքով դժուար է գրել այնպիսի տառեր, որոնք, տպածի պէս, ուղիղ անկիւններից են կազմուած; այս էր պատճառը շեղագիր և նրբագիր գրութեանց ձեերը յօրինելուն, որոնց գրելը, ձեռքով, առաւել գիւրին է և յարմար, քանի թէ այն տպած բոլորագիր ասած ձեւ, որը, իրապէս, բոլորակած չէ: Ոյն ճանապարհը և, համարեա թէ, սոյն կերպ փոփոխութիւնների ենթադրուեցան եւրոպացւոց հին գրութիւնները մինչեւ նոքա այժմեան գոյծ ածած ձեւ ստացան, այն զանազանութեամբ (Խորութեամբ) միայն, որ եւրոպացիք, իւրեանց գրութիւնը մանրամասն քննութեան տակ ձգելով, բոլոր համանման տառերը համաչափեցին իրար հետ, ամեն մի տառին որոշ ձեւ տուին, բոլոր տառերը միակերպ բոլորակեցին:

Վեր մէջ, Ասիայի զանազան կողմերը, բոնակալութիւնը, ծայրը հասած ստրկութիւնը, յաճախ պատերազմները և արիւնիւնութիւնները ուսման բոլըսները մինչեւ անհետացրին և ոչ թէ վայելուչ և կանոնաւոր գրութեան գիտութիւնը միայն, այլ բոլոր գիտութիւնները, բացի քանի մի ընտրեալ անձիններից, ժողովրդեան անծանօթ մնացին:

Ա երայիշեալ պատճառներով մեր զանազան շեղագիր գը բութեան ձեերը չեն համապատասխանում գիտութեան, տեսա-

կանի այն պահանջմունքներին, որոնք վերևը յիշել ենք մեր այս ծրագրական փորձառութեան մէջ:

(Օրինակի համար, տպագիր բոլորագրի մէջ «ա» տառի երեք ձանգերը միաչափ են և իրարից հաւասար հեռաւորութեամբ, Պարաբաղու և այլ շեղագրերի մէջ միենոյն տառի ձանկերը, ընդ հակառակն, մինը միւսից կարճ, նոյնը «ս» և «ո» տառերի մէջ; «Հ», «Ճ» տառերը մնացել են համարեա թէ ըբռոլրակած, համեմատելով նոցա «ա» կամ «ս» տառերի բոլորակութեան հետ; «Ղ», «Լ», «Շ», «Չ», «Ձ», «Շ», «Վ» տառերի վերջի խազերը բոլորակած չեն, ուղիղ անկիւններից են բաղակացած... և այլն...: Այն շեղագիրը, որը գործ են ածում արևմտեան հայերը, հասարակ նամակագրութեան, մասնաւորապէս արագագրութեան մէջ, լաւ հայոց լեզու չիմացողի համար գժուար է կարգալը, տառերի թէ մանրութիւնից և թէ անորոշութիւնից, մանաւանդ, որ բոլոր վերոյիշեալ շեղագիր տառերը, իրապէս, ոչինչ ճիշդ հաշուի տակ չեն ձգած; տառերի համանման խազերի մէջ որոշ համաչափութիւն չկայ... և այլն:

Ո՞ւր ընդունած նրբագրի մէջ մենք ոչինչ չենք արել, բաց ի մեր յօրինած և մատեմատիկական ճշգութեամբ չափաւորած տողացանցի մէջ տեղաւորել ենք մեր շեղագիրը, ճշգութեամբ՝ համաչափ փելով համանման տառերը; բոլորակելով այն տառերը, որոնք շեղագրի մէջ չէին բոլորակած; առ հասարակ, ամեն մի տառի ամեն մի խազը հաշուի, շափի և կանոնի տակ ձգելով, չետեւելով այս գիտութեան տեսականին և պետագորիկական պահանջմունքներին այժմ մեան եւրոպացւոց լուսաւոր ազգերի մէջ:

Ո՞ւր նպատակը եղել է առաջարկել հայ ուսուցիչներին և աշակերտելոց.

ա) Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և

տեսականը, կանոնները, որոնց մեկնութիւնը մինչև այժմն մեր  
մէջ չէ եղած:

բ) Վայնպիսի կանոնաւոր և վայելու գրութեան օրինակ-  
ներ, ուր որ ամեն մի խաղի չափը, տառերի մէջ եղած խազերի  
համաչափութիւնը և չաշխիւր յայտնի, ակներեւ ապացուցուած  
լինի, որ ուսանողը միշտ ակներեւ տեսանէ, որ գրութիւնը իս-  
կապէս կանոնաւոր է, ակներեւ կանոնների և չափի վերայ հիմ-  
նուած:

գ) Կարութեան պարագմանքը և վարժութիւնը նոյն աս-  
տիճանաւորութեամբ առաջարկել, որպիսի աստիճանաւորու-  
թեամբ պահանջում են, թէ տեսականը և թէ լուսաւորեալ  
աղքերի փորձառութիւնը:

դ) Աերոյիշեալ կանոնների և չափի վերայ հիմնուած  
գրութեան սոլացանցներ:

Անք աշխատել ենք պահել, որքան կարելի է, սովոր-  
քական գրութեան ձևը, զգուշութեամբ վարուել այսպիսի քըն-  
քոյշ հարցի մէջ և, բայց ի տեսականը և հայ վայելչագրու-  
թեան օրինակները իմաստասիրելուց, շատ և բազմիցս հարց ու  
փորձ ենք արել զանազան անձանց, գերեզմանաքարերի արձա-  
նագրեր փորոշներից օկսած մինչև լաւ հայագեաները, որոնք  
կամ զանազան երկիրների հայոց գրութեան են ընտելացած,  
կամ իւրեանք բաւականին գեղեցիկ են գրում, կամ հին հայ  
ձեռագրութեան են հմուտ... և այլն..., Տիեզիս, Պոսկով,  
կ. Պօլիս, Ա իեննա, Փարիզ, Պետերբուրգ և այլ տեղերը:  
Ըստ օրինակներ կան մինչև այժմն մեր մօտ, մեր խնդրանոք  
գրած վերոյիշեալ քաղաքներում; այս գրութիւնները զանա-  
զան կերպ փորձի տակ ենք ձգել, գիտութեան կանոններին  
համեմատ:

Աեր տօղացանցի յօրինելը վերջացրենք 1867 թ. և նոյն  
տարուայ սեպտեմբերին, Ա իեննա եղած ժամանակ, տունք  
երեկոյ մատեմատիկական գործիներ շնոր վարպետին E. Kraft  
et Sohn, in Wien, պղնձի վերայ փորագրել երկու օրինակ

քանոն, որի վերայ բոլոր խաղերը և չափը միլիմետրի վերայ հաշուելով են փորած:

Այն քանոնը և նորանից ձեռքով օրինակած տողացանցը Ա. Պետերբուրգի 1870 թ. արշեստաշնորհնեումն էին և բարձրագոյն հաստատած Յանձնաժողովը, 1-ից յուլիսի 1870 թ. № 4314, ուղարկեց մեղ, ելեմոնից նախարարի հաստատութեամբ, պատուաւոր վկայական «մեր ինքնուրոյն և սիստեմատիկան աշխատանք համար»:

Խաղելով թղթի վերայ №№ 1, 2, 3 և 4 մեր տողացանցերը և յօրինելով նոցա վերայ գաղափարի օրինակները, մենք խնդրեցինք մեր մեծայարգոյ և պատուական բարեկամ՝ Արքէն վարդապետ Այտնեանին, Ա իեննայի Միսիթարեանց միաբան, — որի անունը ծանօթ է ամենայն գրագետ հայու և որը պատուական գրութեան տէր է և լաւ նկարիչ —, տպագրելու օրինակները գրել: Օ անազան մարդկային կենաց մէջ ընկերակից անյաջող հանգամանքները արգելք եղան այս գործի կատարմանը 1867-ից մինչև այս 1872 թ., որոնց վերայ տեղեկութիւն տալու համար, իբրև ապացոյց, որ այս գործի մէջ անձնական խորհրդակից և օգնական ունեցել ենք, բաց ի զանազան հեղինակութիւնների և գրութիւնների, և վերոյիշեալ հմուտ և ազգային լեզուին և գրութեան տեղեակ վարդապետի պէս պատուական անձն, — այս տեղ նորա նամակներից միմիայն քանի մի տողերն ենք բերում.

Կ. Պոլիս  $\frac{1}{13}$  Ապրիլ 1870:

• . . . . բարեկամ.

Կատ ժամանակէ ՚ի վեր թուղթ մը ընդունեցայ հրամանոցմէն, որով հայ գեղեցկագրութեան օրինակները փափառում էիք ունենալ:

Այս թղթումը գուք ասում էք այսպէս. «1867 թ. վերջին ուղարկեցի Պոլիս աղայ №№ —, որ Զեղ հացնէ. (ա նամակ, թ) խաղած թղթեր, գ) գրելու օրինակներ: Ես

կամենում եմ որ Ձեր գրածից, իբրև գաղտփարից, տպվե  
կամունաւոր գրութեան օրինակներ, և այլն»:

Այս, ազա ԱՆ-ը նոյն տարին ինձ հետ տեսութիւն մի  
ըրաւ, բայց միայն ձեզանից ինձ յանձնած (Ա իննայում)  
հայերէն ոռուան մի ինձանից ընդունելու համար, և ուրիշ  
բանի խօսք չէլաւ . . . . .

Եթէ հաճիք վերստին ուղարկել ինձ ինչ որ պէտք է,  
նմանապէս տպագրութեանց օրինակները, ես պատրաստ եմ  
ամենայն սիրով Ձեր ինդիքքը կատարելու . . . . .

Հ. Արուեն Այտնեան, կը. ԱՌ.

Ա. Պօլես  $\frac{21}{20}$  Յունի 1870:

բարեկամ.

Չորս նամակ ընդուներ եմ այս ամառ հրամանոցմէն, (1  
մայիս, 2 յունիս, 3 և 4 յուլիս ամսէն)

Հ. Արուեն վարդապէտ Այտնեան:

Ա. Պօլես  $\frac{3}{15}$  Ապրիլ, 1871:

բարեկամ.

բաւական և աւելի քան զբաւականն անագա-  
նեց այս փոքրիկ գործը և անհաւատալի կերպիւ յերկարեցաւ  
սոյն ինդիքը:

Ոինչև ցայս օր որբան փութաց Ձեր աղնուութիւնը, որ-  
չափ ջանացի ես, նոյն չափ անկարելի եղաւ գործոյն կառա-  
րումը զանազան արգելքներով . . . . .

(Հորս երես նամակ, մեծ փոստայի թերթի վերաբ)

Արակեն Այտնեան կը, Ո՞ւ.

24 Օգոստասի  
5 Սեպտեմբերի 1871. Փանքալտի Ա. Պօլսոյ:

..... և վշտացեալ բարեկամ:  
Ա Երջին թերթերնիդ հասաւ ձեռքս այն վայրկենին, որ  
ծանօթ գործոյն ամեն մասը լմնցած և միայն ճակատըն էր  
մնացած

Ես ուրախ եմ, որ այս առաջին փոստիւ  
վերջապէս գոյացուցիչ կերպիւ պա-  
տասխանել կարողացայ: Կ'ըսեմ «գոյացուցիչ կերպիւ» ըստ  
որում այս անվերջանալի փոքր գործը, տարիներէ ՚ի վեր ոգե-  
սպաս կերպիւ Չեր աննման համբերութիւնն ու երկայնմտու-  
թիւնը խիստ ու ամենախիստ փորձերու ենթարկել է ետև, այս  
անգամ ձեռքերնիդ կը հասնի: Բայց թէ արդեօք գործոյն ներ-  
քին հանգամանքըն ու որպէսութիւնը է գոհացուցիչ, այն է  
ինդիրը:

ապահով եմ, որ փորագրողին շատ դիւ-  
րին է չափաւոր օրինակ մը աշազ առաջլ ունենալով՝ մաքուր  
և գեղեցիկ փորագրել: բաւական է որ քաջ արուեստաւոր լինի՝  
և քաջ հասկանայ և ըմբռնէ:

Այս տեղ այն տեղ նիւթական փոփոխութիւններ, (բառերի,  
և այլն) Չեզի անտարբեր բան պիտի լինի, սակայն այն մա-  
սերը անցեալ տարի էի գրել, այսինքն Չեր վերջին հրահանգ-  
ներից (Instructionներից) յառաջ, վերջին մասերը աւե-  
լի ճշգիւ օրինակած եմ

Դ'ակատը յօրինեցի պարզ՝ ինչպէս կը բաղձաք և հեղինակութիւնը միայն մէկ անուան տալս՝ յուսամ որ իրաւացի կը գըտնէք, որովհետեւ իմ յայսմ մասին՝ գործակցութիւնս ոչ թէ հեղինակութիւն այլ մանաւանդ լոկ գործիութիւն էր, ինչպէս փորագրողն ալ գործակցութիւնը պիտի լինի այդ գործոյն համար: Եթէ իմ այս գործակցութիւնն կարենայ մասամբ իւկի զանեղ գոհ լինել, երջանիկ կը համարեմ ինք զինքս:

Ընդունելով  
մատուցանելով առանձին ողջոյն յարգանաց  
նաև զիս, աղօթարար և ցիեանս բարեկամ,  
• Արսէն Այտնեան կրօնաւոր:

Ուեծաւ շնորհակալութեամբ յիշում եմ նաևս իսկապէս մանկավարժ կանոնաւոր և վայելուչ գրութեան ուսուցիչ պարոն Յակոբ Ուեսերին (գերմանացի է) այն պատրաստականութեան համար, որով նա իւր կարեցած օգնութիւնը ցոյց տուեց տեսականի աղբիւրները հաղորդելով մեզ:

Այսպէս, հետեւելով վերոյիշեալ հիմունքներին և գիտութեան կանոններին; նայելով մեր այժմեան այլ և այլ երկիրներ ցրուեալ ազգայնոց գործական գրութեան զանազանութեանը, անորոշութեանը, նոցա մէջ չափ ու կանոն չը լինելուն; միւս կողմանէ, հետեւելով մեր տպագիր տառերի ձեւն և չկամենալով ոչինչ աւելորդ նորաձեռւթիւններ մացնել ժողովրդական գործական գրութեան մէջ, այլ միայն կանոնի համեմատ և համաձայն գրել մեր տառերը, — մենք կարծել ենք, որ բաւական է, եթէ սովորական արագագրութեան մէջ այն տա-

ուերի մեծութիւնը, որոնք ինչպէս ո, ա, ո, տառերը, պարունակվում են երկու տողի մէջ, լինին երկու միլլիմետրի շափմեծութեամբ, համաձայնեցնելով այս չափին միւս տառերը:

Ի՞այց որովհետեւ գրութիւնը ուսուցանելիս պիտոյ է նախ և առաջ ընտելացնել երեխային գրիչը ձեռքին հաստատ և ուղիղ բանելուն և վարելուն, ուղիղ նիստ ունենալուն, թուղթը կանոնին համեմատ պահելուն; 2) յետոյ, շարունակելով վերսիշեալը, զարդացնել ձեռքի գնդերը; 3) շարունակելով վերսիշեալները, պարապացնել մեծաձեւ տառեր գրել տալով, նոցանից բարգած բառեր; միջակաձեւ տառեր և նոցանից կազմած բառեր.... և այլն.... ոյն նպատակին համեյլու համար վայելուն և կանոնաւոր գրութեան սկզբին առաջարկել ենք (կանոնաւոր և վայելուն գրութեան գաղափարների երես I) զանազան նախապատրաստական հրահանգները մանուկ երեխայոց քանի մի ժամանակ մատիտով պարապեցնելու համար, որ նոքա այս խաղերի վերայ առաջ ընտելանան մատիտը ձեռքին ամուր բռնել և վարել, իսկ յետոյ գրիչով սկսել գրելը:

Այսն գաղափարների 2-ր երեսի հրահանգները բաղկացած են այն հիմնական խաղերից, որոնցից բաղկանում է, կամ կարելի է կազմել բոլոր հայկական այրուբենը:

ՄԵՐ առաջարկած տողացանցը չափաւորած է յետագայ հաշուի վերայ:

Տողացանցը № 1 բաղկանում է հինգ միլլոցներից<sup>1</sup>, որոնք պարունակվում են վեց խաղերի մէջ: Առաջին և վերջին միլլոցների լայնութիւնը ընդունուած է երեք միլլիմետրը, միւս միջին երեք միլլոցները վեց միլլիմետր:

Այս հակեալ կամ թեքեալ խաղերը (անկիւնագծերը), որոնք ցոյց են տալիս տառերի ամեն մի հիմնական խաղի հակումը<sup>2</sup> և այդ խաղերի միմեանցից հեռաւորութեան չափը

<sup>1</sup> Espace, intervalle; սրություն; անջրապետութիւն (անջրապետ):

<sup>2</sup> Այս թեքեալ (անկիւնագծի) խաղերի վերայ գրվում են

(տարակացութիւնը) նշանակուած են այս № 1 տողացանցի մէջ հինգ միլիմետր հեռաւորութեամբ, ասել է թէ, զորօրինակ, «ո» տառի առաջին ճանգը կամ հիմնական խաղը միւս ճանգից 5 միլիմետր հեռաւորութեամբ է:

№ 2 (Երկրորդ) տողացանցի շափը մենք ընդունել ենք, բաժանելով երկուսի վերայ առաջի (№ 1) տողացանցի միջոցները, այսինքն, № 2 տողացանցի առաջին և հինգերորդ միջոցները ընդունուած է 1½ միլիմետր, իսկ միւս երեք միջոցները 3 միլիմետր տարակացութեամբ: Տառերի հիմնական խաղերի մէջ եղած տարակացութիւնը ընդունուած է այս № 2 տողացանցի մէջ երեք միլիմետր հեռաւորութեամբ, այսինքն, օրենակի համար, «ո» տառի առաջին ճանգը կամ հիմնական խաղը միւս խաղից երեք միլիմետր հեռաւորութեամբ է:

№ 3 (Երրորդ) տողացանցը ունի երեք միջոց, առաջին և երրորդ միջոցները 3 միլիմետր, իսկ միջինը երկու միլիմետր լայնութեամբ: № 4 (չորրորդ) տողացանցը ունի մի միջոց, նմանապէս երկու միլիմետր տարակացութեամբ և երկուսի մէջն էլ երկու տողի մէջ պարունակուած հիմնական խաղերի մէջ եղած տարակացութիւնը ընդունուած է նմանապէս երկու միլիմետր:

Վանձին բառերի մէջ, նոցա որոշաբար կարգալու համար, բաւական է որ ամեն մի բառը իւր դրացի բառից ունենայ — մինչև հինգ միլիմետր հեռաւորութիւն, զգուշութեամբ պահպանելով այն կանոնը, որ մի որ և ից բառի պատկանեալ տառերը որոշաբար և կարգաւ իրարու մօտ լինին շարած, այնպէս, որ կարդացողը մի բառի տառը սխալմամբ դրացի բառին չը վերաբերի:

---

և տառերը; այսինքն, տառի երկարութիւնը այս խաղով է շափում և որովհետև այս խաղը, թեքեալ գոլով, ուղղորդից փոքր երկար է, վասնորոյ տառերն էլ այնքան երկար կը լինին, որքան նոյն միջոցների թեքեալ խաղերը միւսոյն միջոցների ուղղորդ խաղերից երկար են:

Վլխագիրների մեծութիւնը տեղաւորուած է մօտ 15 և 12  
միլիմետր երկայնութեամբ; աշխատել ենք, որ տառերը, որքան  
կարելի է, պարզ լինին, ընդհանրապէս գործածական տառերի  
նման, առանց աւելորդ պաճուճաւոր գծերի և արագագրութեան  
համապատասխան<sup>1</sup>:

**Տառերի միաչափ և միակերպ հակումը:**

Եթէ վեր առնենք քառանկիւն, վերեկի կողմը բաժանենք  
չորս հաւասար մասը և վերջին երեք բաժանման կետերից ան-  
կիւնագծով (դիաゴնալ) միացնենք ներքեկի ձախակողմեան ան-  
կիւնի հետ, կ'ստանանք այնպիսի քառանկիւն, որը մեր տաղած  
տողացանցերի վերայ և գրութեան գաղափարների մէջ ցոյց է  
տուած: Առաջին առ հակումը ունի եւրոպացւոց գրութեան  
հին ձեւ և այժմս գործ են ածում սիոլաստիկական հնացեալ  
կանոններին հետևող ուսուցիչները; սորան մօտ է ևս մերայ-  
նոց մէջ գործածական ձեւ: Այսպիսի հակմամբ տառերը գը-  
րելիս, գրողի ձեռքի առաջնաբառն զկի վերեկի դնդերը  
առաւել կ'լինին ձգուած<sup>2</sup>, քան թէ միւս զնդերը:

Երրորդ օճ հակումը ունին հին գերմանական տառերի  
գրութեանները: Այս հակմամբ տառերը գրելիս, ձեռքի բազ-  
կի (վերեկի) աջու զնդերը և առաջնաբառնի վերեկի զնդերն  
են առաւել ձգած, քան թէ միւսները:

Գերմանացիք, մանաւանդ տպագրութեան մէջ, շատ և  
շատ անգամ գործ են ածում ընդհանուր լատինական այբու-  
բենը, ինչպէս որ և բոլոր իսաւացիք, իսպանիացիք, անգ-

<sup>1</sup> 1 մետրը (le mètre) =  $22^{1/2}$  վերշոկին = 100 սենտիմետ-  
րին = 1000 միլիմետրին:

<sup>2</sup> Ձգտել, ձգել, լարել, ձգուած, ձգեմ, երկարացնել, փը-  
ռել, քաշել; ձգարան, չուան, թոկ, ձգիչ, քաշող; ձգձգել—  
քաշքշել, ձգողական — քաշող, քաշելու, երկընցնելու:

լիացիք, դանիմարկացիք, սուէդները, ֆինլանդացիք, և այլն... որոնք լատինաձև տառերի գրութեան մէջ և գերմանական այբուբենի նոր գրութեանը հետեւում են երկրորդ, ի ներքոյ ստորագրեալ տառերի հակմանը:

Երկրորդ եճ հակումը ունին այժմեան եւրոպացւոց գործածական գրութիւնը, որին կ'անուանեն նմանապէս կուրքեն տ շրիփտ, կամ անգղիացւոց շրիփտ (գրութեան ձև): Այսպիսի հակմամբ տառերը գրելիս, բազկի բոլոր գնդերը (եթէ գրիչը կանոնաւոր է բանած ձեռքին և նիստը ուղիղ և ինչպէս հարկն է) միաշափ և միազօր են լարած և արագագրութիւնը առաւել աղատ է լինում, վասն որոյ ձեռքի բնական կազմուածքը ցոյց է տալիս, որ տառերի գրութեան այսպիսի հակումը առաւել բնական և գիւրին է; սոյն պատճառաւ էլ այս հակմամբ գրութիւնը տարածվել է բոլոր Եւրոպայում և այս պատճառաւ մնաք ևս պարտ ու պատշաճ համարեցինք ընտրել մեր առաջարկած հրահանգների մէջ այսպիսի հակումը և կանոնաւոր և վայելուչ գրութեան գաղափարների №№ 1, 2, 3 եւ 4 օրինակների և առանձին տպած տողացանցերի վերայ օրինակներով ցոյց տալ այսպիսի հակումը թէ ուսանողաց իրապէս համոզուելու և թէ նոցա հայեցուածքին ընտելացնելու համար:

Եյպցիդ Ռոկհառուզի մօտ, գերմանացի վարպետ — արհեստաւորի հետ, անձամբ անձին պարապել ենք երեք շաբաթ: Ոկղեից, պղնձի վերայ փորած մեր քանոնից փորել ենք տուել և տպել մեր №№ 1, 2, 3 եւ 4 տողացանցները; յետոյ նոյն կապուտ մելանով տպած տողացանցի վերայ գրել տուել, բոլոր մեր աշաց առաջև, մեր այժմ տպած կանոնաւոր և վայելուչ գրութեան գաղափարները, առաջի աշաց ունենալով ։ Արսէն վարդապետի մեր տողացանցի վրայ գրած օրինակը և մեր ։ Վայելախ նորից պատրաստած գաղափարը,

մեկնելով վարպետին թէ ինչպէս պէտք է լինի ամեն մի տառի ամեն մի խաղը: Երբ որ մի օրինակը պատրաստ էր, կրկին սրբագրել տուեցինք վարպետին միևնոյնը, նմանապէս տողացանցի վերայ, և յետոյ,  $\frac{\text{Սուրբեմբերի}}{\text{Հոկտեմբերի}} \frac{25}{7}$  1871թ., դուրս եկանք Եյպցիդէն:

Երբ որ գրած գաղափարը քարի վերայ փորուեցաւ, մեզ ուղարկումէին կորբեկտուրէն (սրբագրելու օրինակը), որը, կրկին և կրկին ուղղելով, դարձուցանում էինք Եյպցիդ ուղղելու և նորից մեզ ուղարկելու:

Տաց ի վերոյիշեալ հեղինակութիւնները և անձանց հետ խորհրդակցելուց յետոյ, մենք մանրամասն ուշագրութեամբ նայել ենք, — 1867, 1869, 1870 և 1871 թթ. —, զանազան Ալիեննա, Տերլին, Եյպցիդ, Պարիզ և Պետերբուրգի թէ գրավաճառների և արուեստահանդէմների մէջ եղած, և թէ գպրոցների մէջ գործ ածած զանազան եւրոպացւոց լեզուաւ կանոնաւոր և վայելուչ գրութեան օրինակները, որից ամենազոր-ծածականները և առաւել գործնականապէս յօրինուածները ձեռք ենք բերել, մանրամասնաբար քննելու —, հաշուելու և մեր սեփական հաշիւը ստուգելու համար:

Տպած հայ «Ալայելագրութիւններից» մենք ունինք.

Գաղափար Այկական վայելագրութեան գծագրեաց Ակմեօն Վարիկորեան Առւլթանշահեանց (Կոր-Կալիֆանցի), ՚ի լրյու ընծայեալ ՚ի ձեմարանէն տեարց Լազարեանց: Մոսկվա, 1831: Folio, էջ 9: Այս վայելագրութեան փոքրն էլ կայ:

Ա այելագրութիւն ։ Աղեքսանդրի Պալձեանց: Ա իննա: 1836 թ.: 22 էջ հայերէն, 2 անգղիարէն, 1 գերմաներէն և 1 յունարէն, մեծ քառաթերթի վերայ:

Հայկական գեղագրութիւն յօրինեաց Ամբրոսիոս վարդապետ Գալախյան: Պարիզ: 1859, փոքրիկ 8-ծալ, 23 էջ հայերէն և 6 գաղղիարէն: Տիպ երկրորդ (առաջի տիպը 1853 թ.):

Նայկոմկան գեղագրութիւն ըստ օրինակին ։ Ամբողջութիւն  
Գրալֆայեան ի Ամիմթարեան ուխտէ վերսափին ի լցո ընծա-  
յեալ յեղբարց Լնֆիաձեանց ի Տփիսիս: 1855: Առոկվա:  
Փոքր 8-ծալ, 22 էջ:

Կաեղագրութիւն հայերէն, գաղղիարէն, յունարէն և տաճ-  
կերէն յօրինեաց և վիմադրեաց Յարութիւն Պ. Կուրճեան:  
Ա. Գօլիս: 1871 թ.:

Մեր թէ գաղափարները և թէ, տպագրելու ժամանակ,  
կօրենկտուրի թերթերը ցոյց ենք տուել զանազան թէ գիտնա-  
կան և թէ ուսումնասէր անձանց հայոց և միւս ազգերի, լսել  
ենք ուշագրութեամբ նոցա առածը կամ մեզ արած նկատո-  
ղութիւնքը, կշուշ այս բոլորը, աշխատել ստուգել նոցա և  
մեր ասածը գործով, չափի և խաղերի վերայ: Հատ անգամ  
պատահել է, որ մասնաւորապէս վայելուչ գրողները, ընտե-  
լացած լինելով մեր սովորական ոչինչ ճիշդ հաշուի և չափի  
վերայ չը հիմնուած գրութեանը, քանի մի տարբեր գատելով  
մեզանից, բայց լսելով բոլոր մեր այս գործի վերայ ունեցած  
գաղափարը, շատ փորձ են արել միենոյն ճշգութեամբ և հա-  
մաշփութեամբ մեր արածից այլապէս անել և գործը գլուխ  
չի եկել:

Օանօթ. 1. Ակղբնական պարապմունքների համար առա-  
շել գիւրին և յարմար է անմիջապէս գունատ (ԾՐԾԴՆԱՅԻ, կի-  
սասե) մելանով տպած օրինակների վերայ գրել, քան թէ սև  
մելանով տպած գաղափարը բարակ, թափանցիկ թղթի տակ  
դնելով, որովհետեւ տառերը անմի ջապէս տեսանելի չեն;  
գրողը այնպէս անվրէպ, ապահով և հաստատ չէ կարող վա-  
րել իւր գրիչը երբ որ տառի խաղերն նշմարվում են, շողում  
են թղթի տակից; նմանապէս, սոյն կերպ գրելիս աչքերը առա-  
ւել շատ են աշխատում (Ճգնում), առաւել աշխատ առնում

գրելու թղթի տակ եղած գաղափարի խազերը թէ ճիշդ նշան-  
րելու և թէ նոցա ուղղութեանը, գրութեանը համեմատ և ճիշդ  
վերևի գրած թղթի վերայ գրիչը վարելու:

Այս պատճառաւ ամենայն կերպ յարմար է, աչաց օգտա-  
ւէտ և գործի յառաջադիմութեանը առաւել նպաստամառոցց  
սկզբից վարժել ուսանողներին գունատ մելանով տպած վար-  
ժութիւնների վերայ, որ նոքա, սկզբից սովորութիւն<sup>1</sup>,  
բնաւորութիւն շինեն կանոնին համեմատ վարել իւրեանց գրիչը  
կանոնաւոր և վայելուչ գրութեան ընտելանալուն, բայց երբ  
որ նշյալիսի գունատ (կիսասև) մելանով տպած օրինակներ չեն  
գտանվում, այն ժամանակ գրելու է վերոյիշեալ երկրորդ կեր-  
պով։ Այս գիպուտածում շատ օգտաւէտ է, միևնոյն գրելու օրի-  
նակից, միւս օրինակը աչաց առաջեւ ունենալ գրողի հանդէպ։

Գրելու թղթի տակը (ներքոյ) պիտի կակուզ լինի, դիւ-  
րին գրելու համար; այս պատճառաւ գրելու տեսրի տակ գր-  
նելու է մի այլ տետր ևս։

Զքաւոր անձանց զաւակները տողացանցը կարող են կէտ  
անել և, գրելու ժամանակ, № 1 տողացանցը, ամեն մի տող  
գրելուց յետոյ, վերև քարշել, որ տողերի մէջ եղած միջոցները  
որքան կարելի է փոքր լինին և այսպէս թղթի ծախքը պա-  
կասացնեն, խնայութեամբ (զայրաթով) շարժելով։

«Օ անօթ. 2. Աեր տպած կանոնաւոր և վայելուչ գրու-  
թեան պատասների վերայ պարկի (le havre sac; der Tor-  
nister, Ranzen; ранецъ; զինուորների պարկ) ստուերագրե-  
րը շինած են օրինակի համար։

<sup>1</sup> «Կարձնում ենք մերայնոց ուշագրութիւնը «Սովորութեանց  
նշանակութիւնը» վերնագրով (մակագրով) հատուածի վերայ,  
երկրաշափ ճարտարապետ (инженеръ путей сообщенія)՝ Ա. Ալամբեգեանցի գործ, Արարատ ամսագրի 1870 թ., թիւ Ժ,  
էջ 250—264; թիւ Ժա, էջ 291—293; թիւ Ժբ, էջ 312 մին-  
չեւ 316։

Եւրոպայ, ոչ թէ միայն զինուորները, այլ և դպրոց գնացող աշակերտները և աշակերտուհիները գործ են ածում այսպիսի պարկ գրեանց և գրելու նիւթեղենը դպրոց տանելու և բերելու համար: Այսպիսի պարկը զանազան կերպամներից (ետք, մատերիա) կարելի է կարել. կաշէ, հաստ քաթանէ, հաստ բրթէ.... և այլն....:

Վաղավիարի առաջին երեսի օրինակները երեխանց մատիտով վարժմունքի համար է, զանազան կողմեր, որպէս որ նետի ծայրը ցոյց է տալիս, որ երեխայն սկզբից մատիտի վերայ փոքր մի ընտելանայ գրչի կանոնաւոր բունելուն և վարելուն; բոլորակի արտաքին խազի վերայ ժամացուցի տախտակի նկարը թէ երեխանց պարագմունքի համար և թէ նոցա (մանաւանդ գիւղերի մէջ) ժամանակը իմանալու կերպը մեկնելու համար է, առաջարկած:

Պատասի սկզբի թերթի երկրորդ երեսին կան չորս պատկերներ, Շիգբախի գրքից առած, ուսանողների աշաց առաջեւմշտ ապացոյց ունենալու համար, թէ կանոնաւոր և անկանոն նիստերը ինչ հետեւանքներ ունին:

« ա՞նօթ. 3. Ա՞եր տպած կանոնաւոր և վայելու գրութեան գաղափարների գիրքը (Форматъ; format). 1) յարմառացրած է մեր մէջ հասարակ գործածական թղթից շինած աշակերտելոց տեսրի ձևին, մանուկ ուսանողաց թէ գիւրութեան համար և թէ որ թուղթը առաւել խնայութեամբ (զայրաթով) գործ ածելու; 2) այս ձեւը ընտրել ենք այն նպատակաւ, որ սեթանաքով տպած գաղափարը ճշգութեամբ տեղաւորուի չորս ծալ թերթից տեսրի տակ, երբ գրելու լինին այն կերպ:

Առ հասարակ, մեր աշխատութիւնը ջանացել ենք, որքան մեր յիշողութիւնը մեզ օգնել է, ժողովրդեան, այժմեան կեանքի պիտոյից յարմարացնել, պահպանելով գիտութեան և տեսականի կանոնները, համաձայն մեր կեանքի և գրութեան հանգամանքներին: Առարամասն մեկնել, թէ ինչպես ենք այլ

կերպ ևս գործ ածել սոյն մեր գաղափարի մէջ վերոյիշեալ կանոնը աւելորդ ենք համարում, կեանքը, այն գաղափարների գործածութիւնը, մեր աշխատանքի համեմատութիւնը սորանից առաջ տպած օրինակների հետ և տեսականի կանոնների գիտութիւնը ցոյց կ'տան գործի որպիսութիւնը և ի՞նչ լինելը:

՞Օ անօթ. 4. Գունատ (կիսասե) մելանով տպած վարժութիւնների (օրինակների) գինը մենք կ'աշխատենք որքան կարելի է հասարակ անտիպ թղթի գնին մօտացնել, որ ամենայն գասու անձանց տղայոց ձեռընտու լինի: Բայց այս միայն մեզանից չէ կախուած, այլ և ժողովրդից, նայելով. որպիսի ընդունելութիւն կ'ստանայ մերայնոց մէջ այսպիսի աշխատանքը, որը Եւրոպայում շատ հին է, իսկ մեր մէջ ամենելին նոր: Որքան շատ տարածուին գունատ մելանով տպած կանոնաւոր և վայելուչ գրութեան տետրակները, որոնք կը լինին չորս զանազան մասը բաժանած, այնքան, ժամանակով, կը պակասացնենք նորա գինը:

Ակզենաւոր գինն էլ, ինչպէս կարծում ենք, թանկ չեպիտի երկեի մերայնոց, մանաւանդ նայելով ճանապարհի և այլ ծախսերին, որոնք զուտ գրքի գինը կրկնապատկում են, առանց որ և իցէ օգուտ բերելով տպագրողին:

Որովհետեւ ճանապարհի ծախսը փոսթայով այժմ շատ թանկ է Պիտերբուրգից հեռու քաղաքների համար, վասն որոյ մենք, առնողներին այդ ծախսը գիւրացնելու համար, առաջարկում ենք վերոյիշեալ տետրակները Պիտերբուրգից ստանալ զանազան գործակալութեանց (գործակալութիւն, ագենտство) միջնորդութեամբ, զորօրինակ. 1) Կավказъ и Меркурий; 2) Надежда; 3) Двигатель... և այլն...

Բայց ի գրալաճառներից, թուղթ և գրելու նիւթեղէն վաճառող անձանց գործն է Եւրոպայում գրութեան գաղափարներ վաճառելը, վասն որոյ, ժողովրդեան և երեխայոց գիւրացնելու համար, թէ գպրոցների կառավարութիւնները, թէ գրավաճառները, թէ թղթալաճառները և թէ, առ հասարակ,

որ և իցէ վաճառականներ մեր այս նոր տպագրութիւնը (որպէս և նախկին տպած գրեանքը) կարող են ձեռք բերել.

1) Տիֆլիս, մեր սեպհական տանը, Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում; 2) Պետերբուրգ, ուղղակի մեղանից, գիմելով այսպիսի հասցեով. Յ. С.-Պетерբուրգ, на Михайловской площади, въ домѣ № 2/3, Жербина, кв. № 5, Михаилу Месроповичу Мянсарову.

Մինչև փոքրիկ դպրոցների կառավարութիւններին և ուսուցիչներին անմիջապէս մեղանից ստանալու դիւրութեան համար և, այս կերպ, առաւել արժան ձեռք բերելու, նշանակելու ենք, որ մի անգամից համաձայն ենք ուղարկել (—միմիայն Պետերբուրգից—) գունատ գաղափարներից 5 (հինգ) սուբլիմ չափ նիւթ պահանջնողներին, այն պայմանաւ միմիայն, որ բոլոր թէ գաղափարների և թէ ճանպարհի ծախսը կանխիկ վճարեն:

Չէ պիտոյ մոռանալ, որ որքան կանուխ և առաւել պահանջնէն վաճառը, այնքան օգուտ և յարմար է թէ վաճառութիւն և թէ գնողին:

Այսպիսի օգուտը, այն տեղերը, ուր որ դրավաճառներ չ'կան, կարող են պահիկ աշակերտելոց համար դպրոցների կառավարութիւնները, կանխիկ գնելով 4—6 ամսական գործածելու նիւթեղինը և 10% մինչև 12% տոկոս դպրոցի օգուտ աշխատելով ունենոր աշակերտներից:

Որովհետև Պետերբուրգի հեռաւորութիւնը Ուսումից տէրութեան զանազան հայաբնակ տեղերից շատ է թանկացնում ճանապարհի ծախսը և, միւս կողմանէ, ձմեռ ժամանակ, որ և իցէ վաճառք (ապրանք) այս տեղեց ուղարկելը առաւել դժուար է քան թէ ամառը, վասն որոյ զանազան հայաբնակ տեղերից կանոնաւոր և վայելուչ գրութեան գունատ մելանով տպած վարժութիւններ պահանջնողները կարող են տարեկան պատրաստութիւնը, պաշարը, երկու կամ մի անգամից ստանալով — առնել ուղղակի մեղանից, և այս կերպ թեթեացնել ճանապարհի ծախսը թէ իւրեանց համար և թէ աշակերտելոց:

Гимназия аյи հաշիւները ինքն իրան ծանօթ են արդէն մեռայնոց:

### ՅԵՒՆՈՒԾՈՎԱԲ:

1237, 59—62: Руководство гимнастики для действующихъ и резервныхъ войскъ, съ 185 гравированными политипажами въ текстѣ. Спб. 1872, 8°, стр. 194. Ц. 1 р. 25 к. безъ пересылки.

*Гимнастическая упражненія безъ приборовъ.* Журналъ «Семья и Школа», 1871, Августъ, № 6, № 98—131:

Правила для обученія гимнастики въ войскахъ. Спб. 1859, 8°, стр. 192, съ рисунками и чертежами. Ц. 1 руб.

Очеркъ исторіи гимнастики. Сост. А. Берглиндъ. С.-Петербург. 1872, 12°, стр. 78, съ крат. литерат. предмета.

Առ որ կան զինուորներ, այն տեղի մանուկներին պիտի յորդորել ազատ ժամանակ գնալ նոցա զինաշարժութիւնը, հրետ նետելու և մարմնամարզութիւնով պարագմունքներին նայելու և ծանօթանալու.

1238, տող 16: Մետալլական գրիչները Եւրոպայէն հայրենակ տեղորայքը բերելիս, աշակերտելոց և ժողովրդեան գործ ածելու համար, վաճառականները պիտի ուշադրութեամբ նայեն թէ նոցանից գնողների բազմութեանը որպիսի վաճառ է պիտոյ, վասն որոյ մետալլի գրիչները սեպհական գրութեամբ (մեծ և փոքր) փորձելով, նոյն գրիչները զանազան կոթերի վերայ ամրացնելով և նոյնպէս գրելով, այսինքն, փորձելով որպէս գրիչները, նոյնպէս նոցա գրելու զանազան գրչի կոթերի միջնորդութեամբ, զգուշութեամբ և հասկացողութեամբ ընտրել որպէս գրիչները, նոյնպէս նոցա կոթերը:

Առանձին այս գործի համար փորձելով քանի մի մետալլական գրիչներ, մենք, ի միջի քանի հարիւրաւոր ձևեր և կերպեր դրիչներից, կարող ենք առաջարկել. 1) Ակզենական, հիմնական խաղերը և № 1 եւ 2) մեծութեամբ գրած տառերը դիւրին են գրվում այն գրիչով, որի վերայ գրած է.

UNIVERSELLES  
BLANZY POUR et C<sup>ie</sup>. B  
EXTRA

և որի գործարանը (fabrique, фабрика) Բուլոն ծովի վերայ (Boulogne sur mer) է; վաճառապահութիւնը (dépôt, депо) (Պարիզ է և կարելի է նմանապէս գնել Երոպայի տօնավաճառներում) (la foire, ярмарка) և Պետերբուրգ: Մի փոքր տուփը այս կամ միւս կերպ, 144 գրիչներից բաղկացած, կարելի է գնել 40—50 կոպեկով, ասել է, թէ այսպիսի տուփը Տիֆլիսում, Երևանում, Բաքու 70 կոպեկով պիտի կարելի լինի գնել:

Մի և նոյն գործարանի մի և նոյն գրիչներից A տառովը առաւել կակուղ է գրում, իսկ C տառովը առաւել ամուր և վերջնը առաւել հաստ խաղեր է տալիս: Գնելիս, վաճառականը կարող է, օրինակի համար, այսպիսի հաշուով ընտրողութիւն անել. B տառով 100 տուփ, A տառով 35, C տառով 10:

Ա երայիշեալ գրութեան համար կան միւս շատ կերպ գրիչներ ես. J. W. Rudolfi, Warranted, և այն. Փրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի գործարաններից ելած:

Փոքր տառերով արագագրութեան համար յարմար են. Karl Kuhn et C<sup>ie</sup>, Wien, № 27, ոսկեղոծը; Blanzy Pour et C<sup>ie</sup> այն գրիչները, որի վերայ 86 թուահամարը կայ, և սոցա նմանները, որոնց մէջ կան շատ մեծերը:

Երօտը գրով, լիսած կտաւի վերայ հասցէները գրելու, պարսկերէն, տաճկերէն, արաբերէն և սոցա նման գրութեան համար յարմար են ծայրը առաւել հաստ գրիչ, որպէս 227,

B. Sommervil's classical pen, Josiah Mason Manufacturer & supplier *Чистые краски*:

*Синий* краска *Краска для красок* № 515, Karl Kuhn et C<sup>ie</sup>, Wien.

Цвет 34: *Синий* краска № 515, Karl Kuhn et C<sup>ie</sup>, Wien.


*Голубой* краска № 516, Karl Kuhn et C<sup>ie</sup>, Wien.

*Голубой* краска № 517, Karl Kuhn et C<sup>ie</sup>, Wien.

Цвет 102, № 5: *Синий* краска № 518, Karl Kuhn et C<sup>ie</sup>, Wien.


*Охра* № 73, № 12, № 13; № 74, № 8, № 20, № 28; № 75, № 7 (diverse couleurs, разноцветные) краска № 519, Karl Kuhn et C<sup>ie</sup>, Wien.

ԳՐԱՍԵՎԱՆԵՐԻ ԵՒ ԿՈՅԵ ԿԱՏԵՐԱՆԵՐԻ  
ԱՑՈՒԵՐԸ ԳՐԱԲԱՐ:




Հերմաննի տնական գրասեղանը 7—18 տարեկան աշակեր-  
տելոց համար:

Столъ Германа для домашнихъ работъ дѣтей отъ 7—18 лѣтъ.




Կօնի գրասեղանը:


Столъ Коня.




Бу́хнеръвъѣръѣ фра́шибѣлла́нъръ:  
Столъ Бухнера.




Ге́рманъвъѣръѣ фра́шибѣлла́нъръ  
швицеръѣиѣръѣ Ге́рманъ:  
Столъ Германа для домашнихъ занятій.



Ери́сманъвъѣръѣ фра́шибѣлла́нъръ № IV:  
Столъ Эрисмана № IV.



Фарен́трапъвъѣръѣ фра́шибѣлла́нъръ:  
Столъ Фарентрапа.




Երիսմանի գրասեղանը № 1:

Столъ г. Эрисмана № 1.

Փարների գրասեղանը:

Столъ Фарнера.



Կունցեի գրասեղանը:

Столъ Кунце.

Հերմանի գրասեղանը:

Столъ Германа.

## ФРИДРИХС'ІАЛ'ІМ'ІС'ІІР' (ФРШАГІСІП'ІЛ'ІН'Р):

---

**Доктора Фридриха Эрисмана (Friedrich Erismann).**

Училищная гигиена (о близорукости и ее развитии въ школахъ). Педагогический Сборникъ, 1871, кн. II, февраль; кн. III, Мартъ, с. 272—294; кн. IV, Апрѣль (объ искривленіяхъ позвоночного столба отъ неправильного сидѣнья, происходящаго отъ не рациональнаго устройства школьніхъ столовъ и скамеекъ), с. 538—551; кн. V, Май (о школьніхъ столовъ различныхъ системъ, литература предмета и разборъ тѣхъ системъ), с. 637—653; кн. VI, Июнь, с. 755—775; кн. VII, Июль, с. 947—965; кн. VIII, Августъ, с. 1034—1060; кн. XI, Ноябрь (о дневномъ свѣтѣ въ классныхъ комнатахъ и ихъ искусственномъ освѣщеніи), с. 1350—1361; кн. XII, Декабрь, с. 1508—1599.

1872 года, кн. II, Февраль,—о порчѣ воздуха въ жилыхъ помѣщенияхъ и ихъ провѣтриваніи. Продолженіе этой статьи будетъ помѣщаться въ наѣсколькихъ послѣдующихъ книгахъ Педагогическаго Сборника.

**Это же.** Вліяніе школы на происхожденіе близорукости по наблюденіямъ надъ учащимися въ учебныхъ заведеніяхъ въ С.-Петербургѣ. Архивъ Судебной Медицины и Общественной Гигиены, Сентябрь и Декабрь, 1870. Тоже отдельно, Спб. 1870. 8°, с. 133. Разборъ смотри въ Журналѣ «Семья и Школа», 1871, № 2, Февраль, с. 1803—1823.

**Іу'н а гш ш ш р п т' і л' н ե р ե լ ս ա յ ո ց մար մի ա կ ա ն ե ւ  
բ ա շ ր ո յ ա կ ա ն (գլ. XIV, XV, XVI և այլն) շարա-  
դրութիւն կոմք'ի, անդլիացոց թափուհու բժշկի և Եղին-  
բուրդի բժշկական համալսարանի անդամի: Այերէն  
տպագրութիւն, հանդերձ զանազան յաւելուածներով,  
Մ. Միանսարեանց: Ա. Պետերբուրգ, 1868, 8°, էջ  
276 և 28: Գինն է. Տիֆլիս 70 կոպեկ, իսկ Պետեր-  
բուրդից մի օրինակը Առուսիայի միւս քաղաքները ուղար-  
կելով, հանդերձ փոստայի ծախով, մի բուրգ:**

**Ուսումնարանի վնասակար ազգեցութիւնը:** Պե-  
տերբուրդի Այս ուսանողների աշխատասիրութիւններից,  
Արարատ ամսագիր, 1869, թիւ զ, է, Նոկտեմբեր և  
Կոյեմբեր, էջ 153—160:

**Հայեցուածք ուսումնարանների վերայ բժշկա-  
կան կողմանէ (Ա. իրանվ Բերլինի բժշկապետի գր-  
րուածից), Արարատ, 1870, Յունվար, էջ 294—298.**

## § X.

Հայրենի հաւատին և ազգութեանը մինչև յետին  
շունչը հաւատարիմ մնալ; գպրոց, գիտութիւն և  
դաստիարակութիւն սիրել; հայ մանկավարժուհի-  
ների և մանկավարժների գպրոցներ պատրաստել,  
արհեստներ ուսանել, ընկերութիւններ կազմել,  
հայրենի հողին վերայ քրտինք թափել, ոյն հողը  
մեծամեծ անտառներով և այգիներով հարստացնել  
և զարդարել, չարաչար պանդխտութեան չը գիմել;  
իւրեանց որդոց, զաւակներին, մինչև աղջկոց ան-  
գամ, ի մանկութենէ մարմնամարդութեանը, զի-  
նաշարժութեանը, հրացան նետելուն, լող տալուն  
և ձի նստելուն ընտելացնել, մասնաւորապէս գիւ-  
ղօրէից մէջ և մանաւանդ այն տեղերը, ուր տեղ որ  
շրջապատով աւազակաբարոյ և վայրենի ցեղերից  
(որպէս Ա անայ կողմերը քուրդերից) մեր զիւղա-  
ցին որ և իցէ նեղութիւն կամ անբաւականութիւն  
կը կրէ, ամենայն կերպ քաջալերելով և նպաստամա-  
տոյց լինելով ի մանկութենէ այսպիսի նոցա պա-  
րապմունքներին և խաղալուն:

Հասկացողին մէկ, չը հասկացողին  
որքան կ'ուղես:

Խմաստունի հետ քար կրէ,  
Յիմարի հետ փլաւ մի' ուտիլ:

Վթէ գպրոցների գրասեղանների և նստարանների ձալ և  
շէնքը անյարմար է, եթէ գրելու և կարդալու աւարկաները  
(թուղթը, գիրքը) համապատշաճ և բաւականին չեն լուսաւո-  
րուած, կամ կարդալու տիպը շատ մանր է, բոլոր այսպիսի  
պակասութիւնները, քանի մի ժամանակից յետոյ, կարճատե-  
սութեան, ողնաշարի ծոնութեան, աչաց և այլ հիւանդութեանց  
պատճառ կը լինին: Վասպիսի հիւանդութիւնքը, եթէ սաստ-  
կանան, մի սերունդից միւսին կը հաղորդուին, ասել է թէ,  
կարճատես ծնողներից կարճատես զաւակ կը ծնանին և ապա-

գայում, — մանաւանդ քաղաքների մէջ, ուր գպրոցները առաւել շատ են և ուր օդը առաւել աղտօտած է —, բնակիչների մեծ մասը կը լինին կարճատես<sup>1</sup> և կ'ունենան իւրեանց ծնողների բոլոր այն հիւանդութիւնները, որնց առաջը չեն առել: Ասսարակութեան պարտաւորութիւնն է այսպիսի տիուր ապագայի առաջը բռնել:

Կրասեղանները և նոցա նօտարանները ճշգութեամբ յարմարացնելու է ամեն մի գրող անհատի և հասակի անատոմիկական և ֆիզիկական կաղմուածքին հասաւ մատ, եթէ կարելի ասել, նորա հասակին և կաղմուածքին որպէս ձեած յարմարացրած լինին:

Ուր այս ծրագրի մէջ աւելացրել ենք մինչև 20 անասոմիկական պատկերներ մարդկային կազմուածքին վերաբերեալ: Այդ պատկերներից, մանաւանդ ողնաշարի կաղմութիւնից և իւր սեպհական անձին վերայ ուշագրութիւն գարձնելով, գըժուար չենկատել, թէ մարդուս գլուխը ունի կայան ողնաշարի<sup>2</sup> վերայ, որը գլխի բնական պատուանդանն է:

Եթէ գրողի նիստը կանոնաւոր չէ, եթէ սեղանի և նստարանի շենքսի ձեւը և նոցա գրութիւնը անկանոն են և թէ այս պատճառաւ, կամ թէ լուսի պակասութեան պատճառաւ կարգացողը կամ գրողը գլուխը ուղիղ չը բռնեց և ձախ կողմը ծըռեց, — այն ժամանակ կլինի բնական ծանրութիւնը ողնաշարից դէպի ուսերի և թիկունքների գնդերը կը ներգործէ, աջութիկունքների գնդերը կը ձգէ, ձախինը կը սղմէ, երկուքին էլ կը դադարեցնէ: Եթէ կարգացողը կամ գրողը, վերոյիշեալ ան-

<sup>1</sup> Կարճատեսութիւն; la myopie, vue courte; близорукость; die Kurzsichtigkeit. Արաւետութիւն; la presbyopie, vue longue; дальность; die Fernsichtigkeit.

<sup>2</sup> La vertèbre; позвоночный столбъ; die Wirbelbein.

յարմար դրութիւններից և նստարանի գրելու սեղանից հեռու լինելու պատճառաւ, հարկադրուած է մեջքը ծռել դէպի ի առաջ (կարգալուս) և ձախ (գրելուս); այն ժամանակ, բաց ի թիկոնքների և պարանոցի գնդերից, վնասվում է կուրծքը ևս; չնշառութեան կանոնաւոր ընթացքը խանգարվում է.... և այլն..., բայց բոլոր վերսիշեալ անշարմար դրութեանց ժամանակ, ուսանողը, ըստեսանելով գրչի ծայրը, գլուխը դէպի ի ձախ է ծռում, որ տեսանէ թէ գրչի ծայրը և թէ գրչի շարժումը, գրելու ժամանակ; Այսպիսի և սորա նման դիպուածներում գրողի աչկերն էլ, գլխի անկանոն դրութիւնից, ըսկում են խանգարուիլ; Նոցա տեսանելու զօրութիւնը նուազում է.... և այլն:

Այս հարցը առաւել մանրամասն և առանձին քննութեան է արժանի; մենք այս տեղ համառօտ տեղեկութիւն տուինք միայն և երկու աղիւսակ: «Կայելով մեր և աղիւսակի մեջ նշանակած չափերին, միշտ լաւ գիտենալու և հետեւ լու է այս տեղ ցոյց տուած կանոններին, թէ ի՞նչ է կերպ պէտք է յարմարացրած լինի նստողի հասակին և կազմուածքին գրասեղանի և նստարանի ամեն մի մասը»:

Վասսեղանների նստարաններ:

Աստարանների բարձրութիւնը պիտի լինի այնքան, որ գրողի կամ, առհասարակ, նստողի գրութիւնը, նիստը լինի ազատ, նորա հասակին և կազմուածքին յարմար, ինչպէս ցոյց է տուած կանոնաւոր և վայելուչ գրութեան օրինակների պատասի (ծրաբի) վերայ և որպէս մեկնած ենք այս ծրագրի մեջ: Ամենայն տարուայ սկզբումը պէտք է չափել բոլոր ուսանողների հասակը և այդ նոցա հասակին համեմատ և յարմար ընտրել և կարգաւորել գասատունների գրասեղանները:

Գինկը ասում է, որ նստարանի բարձրութիւնը նորա պատուանդանից, կամ գետնից, որի վերայ գնում են

ոտքերը, — պէտք է լինի այնքան, որքան տարակացութիւն կայ նստողի ոտքի կամ կօշիկի կրունկից մինչև նորա ծնկան՝ ներսի փոսը (ծալը), կամ թէ հասակաւորի համար այս բարձրութիւնը հաւասար է ամեն մի անհատի  $\frac{1}{7}$  հասակին + 1,5 մինչև 4 ցենտամետր:

\* Աստողի ոտքը ծունկից մինչև կրունկը ուղղորդ վերուստի վայր<sup>1</sup> գրութիւն պիտի ունենայ դէպի ի ոտքի պատուանդանը և ծունկը; Կողոփոցը (գուճը<sup>2</sup>) ոտքի վերքի մասից, աղդրից, շատ փոքր բարձր լինի: Ոտքի այսպիսի գրութեան ժամանակ, նա հաստատ և ամուռ կը լինի պատուանդանի վերայ, վասն որոյ և բոլոր մարմինը, այս կողմից, կ'ունենայ հաստատ և կանոնաւոր գրութիւն:

Պատուանդանի տախտակը այնքան լայն պէտք է լինի, որ բոլոր ոտքը գարշապարից (կրունկից) մինչև ոտքի մատները արձակ տեղաւորուի պատուանդանի վերայ; Փոքր մի առաւել ես, վասն զի, գրելու ժամանակ, ձախ ոտքը փոքր առաջ են գընում աջու ոտից, այս պատճառաւ պատուանդանի տախտակը այնքան լայն պէտք է լինի, որ, այսպիսի գրութեան ժամանակ, երկու ոտներն էլ ազատ և հաստատ տեղաւորուին պատուանդանի վերայ:

Վայպէս, ոտքի յարմար և պատուանդանի վերայ հաստատ գրութիւնը — նեցուկ<sup>3</sup> է ուղիղ նիստ ունենալու համար:

\* Աստարանի տախտակի լայնութիւնը պիտի լինի այնքան, որ. 1) գրողի բոլոր ազդերքը<sup>4</sup> ազատ հաստատած լինին այն տախտակի վերայ; 2) պիտի փոքր փոս ունենայ, յարմարացը ած ազդերի ուռուցկի ձեին: \* Աստարանի ափը բոլորակ, փոքր բարձր, — որ ազդերքը իւրեանց ձեին յարմար նիստ ունենան և առաջ չը սահին — դեպի ի սեղանը:

<sup>1</sup> Perpendiculairement, перпендикулярно.

<sup>2</sup> Pastella; надколынная чашка; genou, rotule; Kniescheibe.

<sup>3</sup> Կեցուկ, մոյթ — ից — ; soutien, appui; поддержка.

<sup>4</sup> Լզրը — գեր — գերաց; cuisse, jambe; съдалище.

Վիւս կէտը, որը պիտի նեցուկ լինի գրողի գաւակին (тазъ, eroupe), գրասեղանի նստարանի մէջքն է, որի շնչքսի և ձեի մասին շատ իրար տարբեր գրուածներ կան; բայց, զկնի բազմամեայ քննութիւնից յետոյ, ականաւոր գիտնականներից և այս հարցը մշակողներից մի քանիսը, ինչպէս Գրաքները և Անեփերը, ապացուցանում են թէ նստարանի մէջքը միայն գըրողի մէջքին պիտի նեցուկ լինի մինչեւ թիկունքը: Վիւս հեղենակները, ինչպէս այժմս ինքը Հիլդբախը և Լեյպցիգի ականաւոր բժշկապետ Բօկկը, բազմամեայ առաւել նոր փորձառութիւններից յետոյ, հաստատում են, թէ առաւել օգտաւէտ է և կազմուածքին յարմար, որ նստարանի մէջքը երկու տեղ նեցուկ լինի նստողին, մինը մէջքին, միւսը թիկունքներին; բայց երկուքն էլ պյանպէս յարմարացըճ լինին նստողի հասակին, որ վերեկի, թիկունքների նեցուկը արգելք չը լինի ներքեի, մէջքի նեցուկին օրինաւոր կերպիւ մշյթ լինել նստողի մէջքի համար, այսինքն, աշակերտն, երբ որ ուղղորդ նիստ ունէ, կարողանայ հաւասարապէս հանգստացնել, դէմ տալ նստարանի մէջքին իւր թիկունքը և մէջքը:

Վիշտ ի մտի պիտի ունենալ, որ եթէ մարմինը ունենայ նեցուկ միմիայն թիկունքների համար, իսկ մէջքը նեցուկ չունենայ (որպէս որ նստարանների ուղղորդածև մէջքը), այն ժամանակ ողնաշարը կը ծոռւի, մարմինը առաջ կը սահի նստարանից և գրասեղանը կը դառնայ պատճառ զանազան հեւանդութիւնների: «Աստարանի մէջքը պիտի այնպէս յարմար ձեւած լինի նստողի մէջքին, ինչպէս լաւ վարպետի կարած կօշիկը պիտի յարմար ձեւած լինի ոտքի վերայ: «Աստարանի մէջքի վերեկի նեցուկը պիտի մշյթ լինի թիկունքների համար մինչեւ նոցա վերեկի ծայրը և չը հասանէ նստողի ուսերին, որոնցից պիտի փոքր ցած լինի և ոչ բարձր: այս վերեկի նեցուկը պիտի այնքան յետ լինի ներքեի մէջքի նեցուկից, որ, երբ նստողը, ուղղորդապէս նստած գոլով, կամենայ թեքել իւր մէջքը դէպէ

ի յետ, որ թիկունքն էլ նեցուկ ունենան, ներքեխ նեցուկը ոչ  
արգելք լինի, ոչ ցաւ պատճառէ մէջքին և ոչ ինքը մէջքից  
յետ մնայ, երբ որ նստողի թիկունքը հանգստացած լինին վերեկի  
նեցուկի վերայ: Վեր տպած կանոնաւոր և վայելուշ գրութեան  
պատասխ վերայ ցոյց է տուած պատկերներով, թէ ինչպէս,  
երբ որ նստողի մէջքը չ'ունի նեցուկ, կամ թէ միմիայն թի-  
կունքն ունին նեցուկ, իսկ մէջքը ոչ, երկու դիպուածքումն էլ  
ողնաշարը կը ծռուի, ասել է, թէ գրողի մէջքը մի շու և  
անպատճառ պիտի ունենայ նորա սեպհական  
մէջքին յարմարացը ած նեցուկ նստարացնի մէջքը:

Գրասեղանների մէջքի ձևերը, որը նեցուկ է գրողի միայն  
մէջքին, ցոյց են տուած առանձին ստուերագրերով (պատկեր-  
ներով) թէ այս գրուկի մէջ, թէ կանոնաւոր և վայելուշ  
գրութեան պատասխ ներսի երեսին: Առնցէի (Ըիլդբախի)  
գրասեղանի մէջքը եթէ երկարացնեն և մարդուս մէջքին ձևեն  
լաւ կը լինէր, բայց այսպիսի նստարանի մէջքը լաւ և յար-  
մար շնչելը բաւականին գժուար է, թանկ է և, մասնաւորա-  
պէս, լաւ փորձառու վարպետ է պահանջում:

Ոյն պատճառաւ բժշկապետ Շոկը, 1871 թ. վերջին,  
Լեյպցիգու առաջին բիւրգէրշուէլէին առաջարկեց նոր գրա-  
սեղաններ, որոնց նստարանի մէջքը երկու զուգահանգան  
առանձին տախտակներից են կաղմած, մինը համարեա 12 և  
16 սանտիմետր լայնութեամբ, նստողի մէջքին նեցուկ և մէջ-  
քի փոսին յարմարարացրած; միւս տախտակը, փոքր ինչ առա-  
ւել լայն, նեցուկ գրողի ուսին, հաւասար, ներքեխ տախտակից  
փոքր յետ, երկուքն էլ այնպէս յարմարացը ած  
գրասեղանի ներսի ափից այնքան մօտ տարակա-  
ցութեամբ, որ երբ գրողը կանոնաւոր ուղղոր-  
դապէս նիստ ունէ, երկու զուգահանգաներական տախ-  
տակներն էլ յարմար և հանգիստ նեցուկ լինին  
նորա մէջքին և ուսերին, նոցա արտաքին կազ-

մուածքի ձեին յարմարացրած։ Ա երօյիշեալ երկու զուգահեռական տախտակները ունին այնքան երկարութիւն, որքան նստարանն է, և ամրացրած են երկու ուղղորդ հաստ տախտակասիւնի վերայ, որոնք բարձրանում են նստարանի յետի ծայրերից և նորա հետ միատեղ ամրացրած են<sup>1</sup>։

Ոմանք ասում են, թէ ներքեւի նեցուկի և նստարանի միջին աշակերտուհիների հագուստն է հաւաքվում, բայց ոչ ինչ արգելք չէ լինելու աշակերտուհուն երկու երեք անդամ կարգի բերել իւր հագուստը, որը մի բոպէի գործ է... և այն...

Նստարանի և գրասեղանի ներսի ափերի մէջ հորիզոնական տարակացութիւնը (дистанция, разстояние, distance) պիտոյ է լինի կամ հաւասար = 0, կամ թէ, առաւել և յարմար, նստարանի ներսի փոքր բարձրացրած ափը (եզր, ծայր) սեղանի ներսի ափից տակը, խորը անցանէ մինչև հինգ (5) ցենտիմետր<sup>2</sup>։ Եթր որ այս այսպէս լինի, ուսանողը հարկադրուած չի լինի ոչ գրելու և ոչ կարգալու ժամանակ առաջ ծուել, թեքել իւր մէջքը և ողնաշարը, որովհետև սեղանը նորան մօտ կը լինի և նա կարող կը լինի աղատութեամբ գրել, ուղղորդապէս և յարմար պահելով իւր նիստը նստարանի վերայ։ Այս կանոնը առողջապահութեան հիմնական կանոններից մինն է և սորա ճշգութեամբ կատարելուն ուսանողների կողմից ծնօղները և ուսուցիչները միշտ արթուն հըսկողութիւն պիտի ունենան։

Նստարանները անշարժ ամրացրած են գրասեղանի հետ միասին։

<sup>1</sup> Գրասեղանների նստարանների այսպիսի մէջքը մեր տպած ստուերագրերի մէջ ցոյց տուած չ'կայ, վասն որոյ այս մեր արած նկարագրութեան վերայ պիտի առանձին ուշադրութիւն դարձնել, նստարանի նեցուկը շինելիս դպրոցական գրասեղանների համար։

<sup>2</sup> Որպէս որ Կունցէի և Երիսմաննի № I և № VI գրասեղանների մէջ ցոյց են տուած։

Այս ամենայն հանակաւոր անձը, որը գրելու ժամանակ, ուղղորդ նիստ է պահում; աթոռը, որի վերայ նստած է, մօտ ծ ցենտիմետր սեղանի տակն է քարշում և ինքը այնպէս է նստած, որ փորի ձախու կողմով շատ մօտ է գրասեղանին,— ամենայն այսպիսի գրութիւն փորձել կամեցողը, ինքը իրան կարող է նկատել սոյն կերպ նիստ ունենալու յարմարութիւնը:

Ուեպէտ այսպիսի անշարժ նստարանները և գրասեղանները, ուր որ նստարանի ափը գրասեղանի ներքի ափից մինչև հինգ ցենտիմետր խորին է, արգելք է լինում նոյն իսկ նստարանի և սեղանի միջին կանգնել, ուսուցչին պատասխանելու ժամանակ, բայց այսպիսի անյարմարութիւնը երևակայական է և ոչ մի ժամանակ չի պիտի պատճառ դառնայ ապագայ սերունդի առողջութիւնը զոհելուն: Ճառը սոյնպիսի գրասեղանները և նստարանները պիտի շինուն (ինչպէս արդէն Եւրոպայում էլ շինում են) միայն երկու ուսանողների համար, այն ժամանակ ուսուցչին պատասխան տուող ուսանողը իւր տեղից դուրս է գալիս կամ աջ կամ ձախ այն անցի մէջ, որը թողած է գրասեղանների երկու կողմից, և, այն տեղ կանգնած պատասխան տալուց յետոյ, նորից նստում իւր տեղը:

Հաշուած է արդէն, որ այսպիսի երկուտեղանի գրասեղանները նախկին չորս և հինգ տեղանի գրասեղաններից շատ փոքր առաւել տեղ են պահանջում սենեակում:

Կատարանի և գրասեղանի ներսի ափի մէջ եղած բարձրութիւնը, տարակացութիւնը (Դիֆերենց, Differenz) ընդունում են հաւասար հասակի  $1/8 + 1^{1/2}$  մինչև 2 ցենտիմետր, ոչ առաւել: Առհասարակ, անդադար ի մտի պէտք է ունենալ, որ գրասեղանի ներսի ափի բարձրութիւնը նստարանից այնպէս զգուշութեամբ չափաւորած լինի, որ ուսանողը, գրելու ժամանակ, երկու ուսերն էլ հաւասար լինի պահում և ամենեին հարկադրուած չը լինի աջ ուսը ձախ ուսից առաւել ոչ բարձրացնել և ոչ ցածացնել: Այս հիմնաւոր կանոնի հատարելուն ուսուցիչները և ծնողները պիտի անդադար հսկողութիւն ունենան:

**Վարասեղանի վերի մասը երկու մասից է կազմուած. 1) մինը**

**նեղ, հարթ-հաւասար (չորիզանական), որի լայնութիւնը բաւական է 10 ցենտիմետր, որը փոքր խոր պէտք է լինի և բարձրացած ափեր ունենայ, որ այն տեղ տեղաւորուին ուսանողների գրիչը, մատիտը և քանոնը:**

**Արյն տախտակի մէջ ամեն մի ուսանողի համար, նորա նըստելու աջ կողմից, սեղանի մէջ, ներսից, հաստ տախտակի բունով խուլ, չորեք կողմը պատած ամրացրած է թանաքամանը, իսկ տախտակի վերևից թողած կայ մի փոքր բոլորակ, ձագարածե անցք, թէ գրիչը մելանի մէջ թաթախելու համար և թէ թանաքամանի մէջ թանաք ածելու: Ծանաքամանները տարին երկու անգամ, ուսանողաց ձմեռան և ամառան արձակուրդի ժամանակ, մաքրելու համար, կարելի է, գրասեղանի մէջքի տախտակը, որը ծածկում է գրակալի մէջքը, — ամրացրած լինի գրասեղանի վերևի կողքի հետ երկու ծղխնիով<sup>1</sup>, իսկ կողերից, ծայրերից, գրասեղանի սեան արտաքին երկու կողմի տախտակների վերայ ամրացրած լինի բաւականին երկար 3—4 հատ պտուտակներով<sup>2</sup>, փոքր մի ճարպով<sup>3</sup> իւղած, որ յետոյ պտուտակները դիւրութեամբ լուծանել և, թանաքամանները մաքրելուց յետոյ, նորից ամրացնել: Ո՞իկենոյն կերպ պտուտակներով պէտք է խուլ, չորեք կողմից ամրացրած լինին, գրասեղանի հարթ հաւասար տախտակի տակ, թանաքամանները:**

<sup>1</sup> **Օխնի կամ ծղխնի, նւզ, նեաց:** Le gond de porte; pivot; ծղխնի տիփոց; charnière; двे́рная петля, петельный крюкъ, шарниръ, шалнёръ, смычка. Thürangel, Häspe, das Gewinde, Scharnier.

<sup>2</sup> **Ծկեռ, աց:** le clou; гвоздь; der Nagel. **Պտուտակ, աց:** le vis, le treuil, винтъ, горизонтальный воротъ, валъ; die Schraube, die Welle, der Wellbaum.

<sup>3</sup> **Ճարպ, պ:** la graisse; suif; жиръ.

Այս թանաքամանները պէտք է բաւականին մեծ լինին, որ նոցա մէջ ընկած անմաքրութիւնը յատակում մնայ և չը հարկադրէ տարին երկու կամ երեք անգամից առաւել թանաքամանները մաքրել։ Ո՞իմիայն պէտք է նայել, որ այն անցքը սեղանի վերեխց, որից գրիչը թաթախում են թանաքի մէջ, հասարակ մատիտի հաստութիւնից շատ առաւել լայն չը լինի։ Ապահովութեան համար, թանաքամանի վերեկի տախտակի անցը երկաթէ շարժուն սեւաններկ թիթեղնով են ծածկում, փոքր պտուտակներով ամրացրած։

Առաւել գիւրին կը լինէր, եթէ կարելի լինի թանաքամանի կողովը, շինելով բաւականին հաստ տախտակներից, ամրացնել միմիայն մեծ պտուտակներով գրասեղանի վերեկի հարթ հաւասար տախտակի երեսից և նոյն պտուտակները ծածկել, ինչպէս վերել յիշեցինք, ներկած երկածի կտորով, ամրացրած փոքր պտուտակներով։

Գրասեղանի վերի միւս մասը հակեալ գէպ ի գրողը տախտակն է։ Այս տախտակը, առ հասարակ, շինում են անշարժ; այսպիսի շէնքսը գիւրին է և չէ թանկ։ Ո՞իւսները, ունկորները, այս տախտակը շարժուն են շինում, այնպէս որ ամեն մի գրասեղանը երկու առանձին արկղ է կաղմում, ամեն մի ուսանողի համար առանձին։

Գրասեղանի տախտակի ափը, ինչպէս որ գրասեղանի և նստարանի բոլոր կողերը, պիտի փոքր բոլորակած լինին, որ չը վերաւորեն ուսանողի մարմինը։

Գրասեղանի հորիզոն ական խորութիւնը առաջուայ ափից մինչև յետի ափը 50 ցենտիմետրը բաւական է, իսկ գրասեղանի վերի տախտակի հակումը, այսինքն առաջի ափը յետի ափից, մինչև 6 ցենտիմետր։

Լստողների ծունկերը պէտք է, որ ամեն կին չը շօշափեն գրակալի տախտակի ներսի կողմը, որ արգելք չը լինի նոցառողորդապէս կանոնաւոր և ազատ նիստ ունենալուն։

Եցրբ որ գրասեղանի վերի հակեալ տախտակը անշարժ է, գրակալի տախտակի լայնութիւնը բաւականին են համարում 20—24 ցենտիմետր շինել:

Խսկ եթէ գրասեղանի վերի տախտակը շարժուն է և կազմում մի փոքր արկղի պէս առարկայ, աշակերտի համար, և այդ տախտակը, երկու կամ երեք տեղ ծղմնիով ամրացրած գոլով, վերև է բացվում, այն ժամանակ գրակալի տախտակը սիզբից հարթ հաւասարաձև է, իսկ առաջ գալով գեպի նստարանը, բոլորակաձև բարձրանում մինչև գրասեղանի հակեալ տախտակի ափը (որ է գրասեղանի ներսի ափը) և այսպէս արգելք չէ լինում նստողի թէ ծնկերուն և թէ նորա ուղիղ նիստ ունենալուն:

Վրասեղանների հակեալ տախտակները շինում էին նմանապէս այն կերպ, որ տախտակը առանձին մեքենայով ներքեցայ և յետ իւր տեղը բարձրանայ, այս ձև են կունցեի (Շիլդբախի) գրասեղանի տախտակները; Բայց նոցա շէնքսը շատ մանուածոյ, շատ գժուար և մանր ու մոնր կտորներից է բաղկացած, շատ և շատ գժուար է ճիշտ շինելու և վերոյիշեալ շէնքսը իրավէս հեռու է այն յարմարութիւններից, որը սպառում էին նոցանից:

### Վառանձին պատուանդան

6—10 տարեկան ուսանողաց գրասեղանները և նստարանները շատ ցած չը շինելու համար, որ ուսուցչին առաւել գիւրին լինի նայելու և հսկելու փոքրիկ ուսանողաց պարապմունքների վերայ, իսկ մասնաւորապէս խնայութեան համար, վերոյիշեալ սեղանները և նոցա նստարանները փոքր բարձր են շինում ուսանողաց հսասկից և այդ պատճառաւ աւելացնում են առանձին, միւս պատուանդաններ պարկի (բանեց) տախ-

տակի տակը շինած և որոնց ձեզ ցոյց է տուած գրասեղանի ստուերագրերի վերայ, իսկ չափը աղիւսակների մեջ<sup>1</sup>:

Աւելորդ չէ կրկնել, որ այսպիսի սեղանները և նստարանները, վերոյիշեալ կանոններին հետևելով, նմանապէս պէտք է ամենամեծ ճշգութեամբ յարմարացրած, համաշափած և ձեւած լինին ուսանողի թէ հասակին և թէ նորա կաղմուածքին:

Այս երկրորդ պատուանդանները հարկաւոր չեն երբ որ ամեն մի հասակի համար իւր առանձին գրասեղանները կը լինին: Երկրորդ պատուանդանը, որը բանցի տախտակի տակն է, ուսանողին յարմար չէ, հարկադրում է ոտերը առաջ ճգելու և այսպէս ճշգութեամբ ուղղորդ գրութիւն պահելուն արգելք է լինում: Այն պատուանդանները է միմիայն յարմար, որի վերայ ուսանողը բոլորովին ուղղորդած կարող է ամրացնել իւր ոտերը և որը գրասեղանի և նստարանի հիմանց մէջն է, նոցա անցքի մէջ:

՞Օ անօթ. Շիլդբախի աղիւսակի հաշուին հետևելով, չէ պիտոյ մոռանալ, որ եթէ գրասեղանները առանց առանձին (երկրորդ), գրասեղանի և պարկի (բանեց) տախտակի տակ շինած, պատուանդանի (17) են, այն ժամանակ (6) նստարանի բարձրութիւնը չափուում է ոչ թէ այդ առանձին պատուանդանից (17), այլ գետնից, կամ այն պատուանդանատախտակից, որը անմիջապէս նստարանի և սեղանի միջին է, ինչպէս որ տեսանում ենք այժմեան հասարակ գրասեղանների մէջ ևս.

Այն առանձին պատուանդանի բարձրութեան մինչև գետին (8) չափը — ոչնչանում է. Առհասարակ, ամենայն հաշեւ նոյն առանձին պատուանդանին վերաբերեալ ոչնչանում է:

<sup>1</sup> Երիսմաննի № 1 գրասեղանի ստուերագրի թ—ո:

Երբ որ գրասեղանի և նստարանի մէջ եղած պատուանդանի լայնութիւնը բաւականին է, մեր ցոյց տուած չափից ոչ պակաս, այնպէս որ, գրելու ժամանակ, ուսանողը, ձախ ոտքը աջ ոտքից փոքր առաջ գնելով, կարողանում է երկու ոտերն էլ տեղաւորել այս սովորական պատուանդանի վերայ, այն ժամանակ վերոյիշեալ բանցի տախտակի տակ եղած պատուանդանի ոչինչ հարկաւորութիւն չկայ:

‘Օ’ա՞նօթ. Գրասեղանների կաղապարի (մուել) մեծութիւնը ընտրելիս հիմնվում են հասակի զանազանութեան վերայ մինչև 11 ցենտիմետր (ցենտում, լատինի բառ, նշանակում է հարկուր; ցենտիմետր = մետրի  $\frac{1}{100}$ ): Առաջի հասակը 98—109 ցենտիմետրի մեծութեանը 6 տարեկան հասակի երեխայոց համար է; 175 տասն եւ վեց տարեկանների և նոցանից մեծերի համար:

‘Օ’ա՞նօթ. Աեղանները շինելիս և ընտրելիս պիտոյ է լւա հիմնաւորապէս գիտենալ և հիմնուել առաւել և մասնաւորապէս վերոյիշեալ ստորագրութեան վերայ, քան թէ այս աղիւսակի, որովհետեւ սեղանները ընտրվում են և շինվում ամեն մի երկրի աշակերտելոց հասակին և կաղմուածքին յարմար:

‘Օ’ա՞նօթ. Կանոնաւոր և վայելուչ դրութեան ստուերագրերի մէջ ցոյց է տուած գրասեղանը և նստարանի այն մէջքը, որը մենք առաջարկում ենք իրեւ յարմար և գիւրագին; մեր գրածին համեմատ, նոցա շինելը և յարմարացնելը շատ գիւրին է: Իաց ի այնպիսի մէջքից, գրասեղանի բոլոր միւս մասերի շինութիւնը և ձեւը բաւականին նման կը լինի Երիսմանի № I ու VI (սիսալմամբ IV է գրած) և Կունցե՛ի (Ծիլդբախի) գրասեղաններին, առանց աւելորդ պատուանդանի:

‘Օ’ա՞նօթ. Ծիլդբախի և Երիսմաննի աղիւսակներին աւելցրած ենք բանի մի ծանօթութիւններ և նկատողութիւններ, որոնք մասնաւոր հարկաւոր համարեցինք Երիսմանի

## ՏԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

	1	Կարսութիւնների և նոցա նստարանների մեջութեանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ դիմութեանը կամ			
	2	Եշտիւթեանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ			
	3	Վարչութեանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ			
	4	Վարչութեանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ			
	5	Վարչութեանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ պահանջմանը կամ			
10	103 եւ սորանից պակաս:	73	68, <sup>3</sup>	67, <sup>3</sup>	71
9	103—107	73	68, <sup>3</sup>	67, <sup>3</sup>	71
8	107—112	73	68, <sup>3</sup>	67, <sup>3</sup>	71
7	112—118	79, <sup>2</sup>	74	73	77
6	118—125	79, <sup>2</sup>	74	73	77
5	125—133	85, <sup>4</sup>	79, <sup>7</sup>	78, <sup>7</sup>	83
4	133—142	85, <sup>4</sup>	79, <sup>7</sup>	78, <sup>7</sup>	83
3	142—152	91, <sup>5</sup>	85, <sup>3</sup>	84, <sup>3</sup>	89
2	152—163	91, <sup>5</sup>	85, <sup>3</sup>	84, <sup>3</sup>	89
1	163 եւ սորանից բարձրագույնը:	91, <sup>5</sup>	85, <sup>3</sup>	84, <sup>3</sup>	89

ԲԱՅԻ ԸՆԹԱՎԵՐ:

6	$\begin{cases} \text{Արու} \text{ մանուկների } \zeta_{\text{ամար}}, \\ \text{Օրիորդների } \zeta_{\text{ամար}}. \end{cases}$	7	$\begin{cases} \text{Կատաֆանինի } \mu_{\text{բածոյ}} \text{ (շահածոյ, } \mu_{\text{առի; }} \text{ fossil; углубление)} \\ \text{անդի } \mu_{\text{որութիւնը.}} \end{cases}$
8	$\begin{cases} \text{Գատուանինի } \mu_{\text{երի}} \text{ տախտակի, } \zeta_{\text{ագումը.}} \\ \text{անդի } \mu_{\text{արտաքինի }} \text{ և } \mu_{\text{երրքինի }} \mu_{\text{ողովից}} \text{ (զանազանութիւնը) } (1 : 6). \end{cases}$	9	$\begin{cases} \text{Կատաֆանինի } \mu_{\text{երի}} \text{ տախտակի, } \zeta_{\text{ագումը.}} \\ \text{անդի } \mu_{\text{ողովից }} \text{ և } \mu_{\text{երրքինի }} \mu_{\text{ողովից }} \text{ (զանազանութիւնը) } (1 : 6). \end{cases}$
10	$\begin{cases} \text{Արու} \text{ մանուկների } \zeta_{\text{ամար}}, \\ \text{Օրիորդների } \zeta_{\text{ամար}.} \end{cases}$	11	$\begin{cases} \text{Կատաֆանինի } \mu_{\text{երի}} \text{ տախտակի, } \zeta_{\text{ամար.}} \\ \text{անդի } \mu_{\text{երրքինի }} \zeta_{\text{ամար.}} \end{cases}$
12	$\begin{cases} \text{Ժիշեր 13 } \mu_{\text{բրոդ},} \\ \text{անդու: } \text{շերքափի, } \mu_{\text{անու 28 }} \text{ մինչւը. } \end{cases}$	12	$\begin{cases} \text{Կատաֆանինի } \mu_{\text{երի}} \text{ տախտակի, } \zeta_{\text{ամար.}} \\ \text{անդու: } \text{շերքափի, } \mu_{\text{անու 28 }} \text{ մինչւը. } \end{cases}$
53, <sub>6</sub>	52, <sub>1</sub>	1	25, <sub>1</sub>
52, <sub>3</sub>	50, <sub>8</sub>	1	22, <sub>6</sub>
50, <sub>8</sub>	49, <sub>3</sub>	1	19, <sub>4</sub>
55	53, <sub>5</sub>	1, <sub>4</sub>	21, <sub>9</sub>
53, <sub>2</sub>	51, <sub>7</sub>	1, <sub>4</sub>	18, <sub>4</sub>
57, <sub>1</sub>	65, <sub>6</sub>	1, <sub>4</sub>	20, <sub>1</sub>
55	53, <sub>5</sub>	1, <sub>7</sub>	15, <sub>3</sub>
58, <sub>5</sub>	57	1, <sub>7</sub>	16, <sub>1</sub>
56, <sub>1</sub>	54, <sub>6</sub>	1, <sub>7</sub>	10, <sub>4</sub>
53, <sub>4</sub>	52, <sub>1</sub>	1, <sub>7</sub>	4, <sub>6</sub>

## ՏԵՇԿԱԳԵՑ ՀԱՅԻ

1	Պատակաների	և նոցա նստարանների	մեծութեանը լ կամ
		շամարի ինքնութ:	
2	Օպարանի	տախտակի լայնութեանը:	
3	Օպարանի	երկարութեանը միակառագականը:	
4	Օպարանի	աղջուածութեանը:	
5	Օպարանի	աղջուածութեանը:	
6	Օպարանի	աղջուածութեանը:	
7	Օպարանի	աղջուածութեանը:	
8	Օպարանի	աղջուածութեանը:	
9	Օպարանի	աղջուածութեանը:	
10	Օպարանի	աղջուածութեանը:	
11	Օպարանի	աղջուածութեանը:	
12	Օպարանի	աղջուածութեանը:	
13	Օպարանի	աղջուածութեանը:	
14	Օպարանի	աղջուածութեանը:	
15	Օպարանի	աղջուածութեանը:	
16	Օպարանի	աղջուածութեանը:	

ԲԱԼՈՅ ԸՆԴԻՍԵՆՅԻ:

	17	Պղաձիգ վերտուաս ի վայր (perpendiculaire; перпендикуляр) չեմանորութիւնը (բարձրութիւնը) գրանցանի երկրորդ տախտակի (դրագալանի) ներքի կողմից մինչւ պարզի (լանեց) տակ եղած առանձին պատուանգանի տախտակի երեսը (Կուտակի գէի գրանցանի):	
6	18	Վրասդարանի ներքի տախտակի լայնութիւնը, մինչև որ չորեղութանին ձև ունի:	
7	22		
8	22		
9	22		
10	22		
11	24		
12	24		
13	24		
14	24		
15	24		
	19	Լայնութիւնը այն պատուանգանի, որ լանցի տախտակի տակնին:	
	20	* եռաւորութիւնը այն տախտակի, որի վերաց դիմում են պարզը (բանեց), գրադարանի ներքեւ տախտակից:	
	21	Վրասդարանի տախտանգանը ողքան է զուրուգան լիս գրանցանի տակից:	
	3		
	3		
	4		
	4		
	4		
	5		
	5		
	5		

ԲԱՇԿԱՎԵՏ (ԸՆՆԵՐՈՅՆ) — OCULISTE, OKY  
ՄԱՆԻ Ա. ԵՐԵՒԱՆ

Վրաստղաների եւ նոցա հասարամների մեծութիւնը, կամ չամարները:							
Եշակերտների կազմուածքի մեջութիւնը, որին յարկման լացնելու է գրասեղանի և հասարամի ընտրութիւնը:							
Վրաստղաների վերի տարածանիքի ներսուի կողմի բարձրութիւնը, նոր լութիւնը գետանից կամ ուստասուածանից, (Կրոնի) կողմի կու շափէ, 1) գետանից, 2) պասուանիունից):							
Վրաստղաների հայե տախանուի ներսի կողմի բարձրութիւնը գետանից, կամ պասուանիունից:							
Վրաստղաների բարձրութիւնը:							
98—109	50, <sub>5</sub>	44, <sub>5</sub>	30	14, <sub>5</sub>			
109—120	55	49	33	16			
120—131	59, <sub>5</sub>	53, <sub>5</sub>	36	17, <sub>5</sub>			
131—142	65, <sub>0</sub>	59, <sub>0</sub>	40	19, <sub>0</sub>			
142—153	69, <sub>5</sub>	63, <sub>5</sub>	43, <sub>5</sub>	20, <sub>5</sub>			
153—164	75, <sub>0</sub>	69, <sub>0</sub>	47	22			
164—175	80, <sub>5</sub>	74, <sub>5</sub>	51	23, <sub>5</sub>			
175-ից բար- ձր հասակի համար:	85	79	54	25			
Հետանաձև է, այսինքն նախանի արարութիւնը արևոցը է, 5 յինականի զմանդանի անիցից շատ անհամա- պես խորը լինի, ու նախանի անիցից լինի, գրասեղանի և հասարամի անիցից լինի, գրասեղանի թիւ 22 ինչ, գրասեղանի, թիւ 1, ծանհանը, ինչ ինչ, պէտք է լինի, յարկման լացը լինի:							
Վրաստղաների մեջքի բարձրութիւնը նոստանածի վերի տախանուից:							
Օանով, Վասարանի այն մէջքը, որը պիտի լինի նոցու պալձը պէտք է լինի, յարկման է, ուստանից անունից:							
16							
17							
19							
20, <sub>5</sub>							
22							
23, <sub>5</sub>							
24							
26, <sub>5</sub>							

ЛИСТЪ—ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՐԻԳՐԻԴԻԿՈՍ ԵՐԻՄ-  
ԵՐԱՎՈՒՄԿԻ:

Կառագրանի մէջքի տարածոցութիւնը գրասեղանի ներօք գո-  
վլց, այլինքն նաուհը լուրութիւնը:

Օրմակալի ներսի տախտակի շորիոնսական լայնութիւնը, իսո-

բութիւնը:

Վրասինդանի վերի տախտակի ներսի ափի տարակացութիւնը գո-

րասեղանի վերի տախտակից:

12 մինչև 13 վերջողի, կամ 50  
յին ութիւնուի, շինուագի մաս  
28—37 յինութիւնուի:

Վրասինդանի վերի տախտակի ներսի ափի տախտակի լայնութիւնը (այնութիւնը):  
Օսնո թ, Նրինանի տպած աղիւուակի մլչ տպագրական  
մինչև կայ այս մասի շաշունի, մինչք ընդուեցինք այլ շա-  
շիւ, որ ուստիուզի պարագաների պարագաների սեղանուայքը արձակ տեղ-  
հա, գրելու և նկարիւոււ ժամանակի, նա բառականին արձակ տեղ-  
ունենայ սեղանի վերաբյալ:

Անսոսի (նասիւու, ցամացիւ), լայնութիւնը, կամ որքան եր-  
կարուսթեան տեղու չ բանում նասարանի վերաբյալ նասութիւնը; Հա-  
շիւը մի աշեղբարի շամարի է, երկանութիւնու անդամ:

մի և նոյնը:

Օրիկանսական տախտակացութիւնը նստարանից մինչև երկուուր,  
գրասինդանի տակ եղած պատուանդան:

Վոյի պատուանդանի լայնութիւնը:  
Օսնո թ, ասարակի, նստարանի և գրասինդանի ներսի  
կողքերի մլչ պատուանդանի լայնութիւնը պիտօնի 36  
մինչև 40 յինութիւնուի մինի, որ, դրեւու ժամանակի, երբ գործը  
ձախուս ստիլ ստիլ չ գնում, նորա երկուն ուներն էլ ծայրէ  
ի ծայրը շամարակի վերաբյալ շամարան մինին, և ոչ մի սակի ու  
կորուկի ու մասութիւնու գերազանց անցուական:

21,0	20	45
22,5	20	45
24,0	20	45
25,5	22	45
27,0	22	50
28,5	24	50
30	24	50
31,5	24	50

55
55
55
60
60
60
65
65

10
10
12
12
14
14
16
16

15
15
20
20
25
25
30
30

վերջին տիպ (Պедагог. Сборн. кн. VIII, 1871 г.) աղիւսակի համար, որը տպագրական սխալներ ունի, տպարանի և ուղղագրողի անուշագրութիւնից, որոնց հաւասացել էր իւր գործը պ. Երիսմանը:

Ուսանողաց աչաց տեսութեան զօրութիւնը պահպանելու համար և կարձատեսութիւնից ազատելու, հարկաւոր է, որ նոցա դասսա գրքերը տպած լինին բաւականին խոշոր տառերով, պարզ, արձակ, մաքուր և որոշաբար: Մանր, սեղմած և անորոշ տիպը մանուկների աչքերին շատ վնասակար է:

Լոյսը պէտք է լուսաւորէ ոչ թէ գրողի աչքերը, այլ գրելու կամ կարդալու առարկայն; Ըստը պէտք է լինի այնքան, որ ամեն մի ուսանողի կարդալու և գրելու առարկան այնպէս լուսաւորէ, որ ուսանողը հարկադրուած չը լինի, լուսի պակասութեան պատճառաւ, ծոել գլուխը գէպ ի գիրը և թուղթը:

Ոյն պատճառաւ մեծ ուշագրութիւն դարձնելու է դաստանների բաւականին և կանոնաւոր լուսաւորելու վերայ, և գրասեղանների դրութիւնը յարմարացրած լինելուն այնպէս, որ լոյսը լուսաւորէ ուսանողների առաջից, ձախ կողմից, վերեկից ևս, ոչ աջ կողմից միայն: Դասատան պատուհանների շէնքսը յարմարացնելու է այս պահանջմանց: Պատուհանները պիտի լինին լայն, բարձր, առաւել այն կողմը, որ տեղից ցուրտ քամի չէ փչում: Պատուհանների տախտակամածը դբպրոցի սեղաններից ցած չը լինի; առաստաղը որքան կարելի է սենեակի առաստաղին մօտ; պատուհանի տախտակէ ծածկոցները սենեակի ներսից; պատուհանների մէջ եղած պատը որքան կարելի է նեղ: Մեծ ուշագրութիւն պիտի դարձնել, որ, գեշերային պարապմանց ժամանակ, լապտերները (քարաձեթ,

պետրօլ, կերոսին, ֆոտօգէն, ձէթ, ստեարինի մոմ) կանոնաւոր հմտութեամբ տեղաւորուած լինին դասատան մէջ; պատրուգը հանգիստ վառվի, նորա բոցը անդադար աջ և աչեակը շարժի:

Վմենամեծ նշանակութիւն ունի մեր առողջութեան պահպանելու համար, հիւանդութիւնից դիւրութեամբ աղատուելու համար, զանազան վերքերը շուտ առողջացնելու համար... օդի մաքրութիւնը և բարեխառնութիւնը: Մեր քաղաքների գրութիւնը այս մասին ամենավատթար է և, թէ ժողովուրդի աղքատութիւնից, թէ նորա այս հարցի մասին անհոգութիւնից և տգիտութիւնից, գործը այսպէս շարունակվում է համարեա թէ առանց որ և իցէ փոփոխութեան:

Չէ կարելի ասել, որ մեր ուսումն առած աղդակիցները, մանաւանդ բժիշկները, շատ աշխատած լինին այս ցաւալի և ամենավնասակար անհոգութեան և տգիտութեան գէմ իրական միջոցներ գործ ածելը:

Այս հարցը կը պարզուի եթէ յաճախ հրապարակական պարզ և ազգու ընթերցանութիւններ լինին ամեն մի քաղաքի զանազան տեղերը; Նոյն կերպ հատուածներ տըպուին, ամենայն տարի, զանազան աղքային հանգէմների մէջ; առանձին բրոշեւրներ տարածուին ժողովրդեան մէջ.... և այլ սոյն նման միջոցներով գործը յառաջ կերթայ:

Դապրոցների համար հաշուած է, որ, ամեն մի ուսանողի կանոնաւոր շնչառութեան համար, պիտոյ է 9 քառակուսի ֆուտ տեղ և 100 խորանարդ (cubic, cubicque; կյբ) տարածութիւն: Արաւային երկիրներում, երբ որ գպրոցը արձակ տեղ է, մաքուր օդի մէջ, չորս կողմը լի ծառերով և պատուհանները բաց, ուր արտաքին (գրսի) օդը փոխում է—գասատան օդը, այն տեղ վերսիշեալ թիւը կարող է պակաս էլ լինել; բայց ձմեռը, վատ եղանակին, երբ որ պատուհանները փակած են, կրկին վերսիշեալ հաշուից գուրս գալը վնասակար է:

Աենեակների օդը մաքրելու համար, ձմեռ ժամանակ կամ

երբ պատուհանները, վատ եղանակի պատճառաւ, բաց չեն, գործ են ածում զանազան վարարարաններ, զանազան կերպ յարմարացրած օդբանուկներ (շատ յարմար են համարում թիթեղն մանր և որբան կարելի է յաճախ ծակոտած, պատուհանի վերևի ապակիի տեղ):

‘Օռառերը և բոյսերը օդի մաքրութեան համար ամենամեծ նշանակութիւն ունին: Պիտի աշխատել, որքան կարելի է, դպրոցի սրահումը (բակումը), չորս կողմը, լուսամուտների միջին ծառեր տնկել; դպրոցի պատշգամերի վերայ զանազան կանաչներ (դալար) պահել: Ամենից լաւ է, եթէ դպրոցի չորս կողմը պատած լինի լաւ այգիով:

Օդի մաքրութեանը թէ քաղաքների և թէ առանձին տըների մէջ երկու գլխաւոր իրերին պիտի նայել. ա) որ ըմպելու (խմելու) ջուրը լինի ամենամաքուր, ազատ (անխառը) որ և իցէ օտար նիւթի աղտոտութիւնից: Լաւ աղբեիրի ջուրը ամենից լաւ է: Ես տեղերը, ուր լաւ աղբեիրի ջուր գժուար է գտանել և ուր, ինչպէս Տիֆլիսում, գետի ջուրը լի է ապականութեամբ և նոյն ջուրը պիտի գործ ածեն, հարկաւոր է զանազան անվաս միջոցներով սկզբից ջուրը մաքրել և յետոյ գործ ածել, մինչև որ ժողովուրդը թմբրութիւնից զարթնի և աշխատէ որ հեռուից լաւ աղբեիրի ջուր բերէ մինչև քաղաքը; Գետի եղերքը լաւ մաքրէ աղբից և զանազան արգելքներից, որ ջուրը մաքուր եղերքում, ազատ և արագ ընթացք ունենալով, առաւել փոքր ապականութիւն ունենայ... և այլն...:

Այնձ նշանակութիւն ունի առողջապահութեան համար տան արտաքնօցների կանոնաւոր շէնքսը, մանաւանդ բազմամարդ քաղաքների մէջ: Ճմուտ և լուսաւորեալ ճարտարապետներից պէտք է ինդրել այս մասին մանրամասն տեղեկութիւն; իսկ մենք այս տեղ յիշենք այսքան, որ արտաքնօցների փոսք պիտի լաւ քարով և կրով շինած լինի, նոյն պիսի յատակով ևս և նորա մէջը փայտէ ամուր սիներից աղբի

աւազան (առաւել ևս լաւ քարատաշ); աշխատել, որ նորա մէջ ջուր չը ընկնի; փոսը ամիսը գոնեա մի անգամ մաքրել և աղբը տանել քաղաքից դուրս և հեռու տեղ արտերի վրայ ցանելու համար: Խիսլ կարծիք է և շատ վնասակար, թէ գետնի տակ փոքր և սակաւ ջուր ունեցող խողովակներով աղբը նոյն սակաւ ջրի միջնորդութեամբ մինչեւ գետը հանել, որ այն սակաւ ջուրը տանէ: Այդ նպատակը երեսակայական է; փորձը ցցց է տալիս, որ ամենասաստիկ անձրեկ ջուրը անգամ չէ տանում աղբը շատ հեռու; լցնում է միայն խողովակները, խառնելով ջրի հետ, աղտոտ և թոյնաւոր օդ է տարածում չորեքողմը և զանազան հիւանդութեանց պատճառ է դառնում: Այն Անգլիայի աղբի խողովակները, որոնք ջրով են մաքրում, բոլորովին այլ կերպ են շինած; նոցա ջուրը աշագին քանակութեամբ և սաստկութեամբ շարունակաբար հոսում է նոցա մէջ; նոյն խողովակները քաղաքի բոլոր փողոցների տակն են գնում, նոքա շինած են բոլորովին այլ հաշուով, ամենամեծ վարպետութեամբ և միլիոններ ծախսելով; այն միջոցները և վարպետութիւնը մեր մէջ չկայ, նորա ժամանակը մեր երկրորդ կամ երրորդ սերնդի հետ կը գայ:

Պիտի նայել, որ անձրեկ և լրւածքի ջուրը արտաքնօցի փոսի մէջ չ'ածուի և չը հաւաքվի: Արտաքնօցի փոսից մինչեւ տան վերի յարկը, որքան կարելի է երկար, հիմքումը առաւել լայն, վերեւ փոքր նեղ, ձագարաձեւ ուղղորդ խողովակ շինել, որմի մէջ, փոսից վերև մի երեք կամ չորս գազ (արշին), փոքրիկ, ձագարաձեւ անցքերով, որի լայն կողմը գէպ ի դուրս, որ օդը, խողովակի մէջ անցանելով գէպ ի վեր, աղտոտ օդը խողովակով բարձր հանէ, սրահի (բակի) մէջ չը տարածէ և արտաքնօցի փոսը որքան կարելի է չոր պահէ: Ամենից լաւ է, եթէ խոհանոցների խողովակները միացնեն արտաքնօցի վերոյիշեալ խողովակի հետ, որ խոհանոցի վառարանի տաք օդը, անցանելով արտաքնօցի խողովակի վերևի մասով, միշտ վերև քարշէ նորա օդը:

Արտաքնոցի նստելու տեղերից մինչև արտաքնոցի փոսը լաւէ չենուրէ, առաել լաւ զինկէ (Zink, պինկ) խողովակներ լինին դարսած, որ որմը (պատը) միշտ չոր մնայ և աղտօտ հոտ չը տարածէ: Փոշիացած ածուխը, կրի քլոռուկը (хлористая известь, chlorure, de chauz) առաւել ևս կանաչ արջասպը կամ երկաթային ծծմբատը (железный купоросъ, vitriol vert, copperose vert) արտաքնոցների մէջ ածելու և աղտօտ հոտը ոչնչացնելու գործ են ածում:


Արտաքնոցների սենեակները պիտի արձակ լինին, լուլուսամուտ եւ օդաբանուկ ունենան և, օդի մաքրութեան համար, առանձին ճագարաձև խողովակ պատի մէջ, բաց ի արտաքնոցի փոսի խողովակը:

Հին տների մէջ այսպիսի խողովակները կարելի է պատերի (որմերի) կողեց շինել, երկաթէ, մէջը ներկած, կամ հաստ չինուրից փայտով պատած: Ամենից լաւն է, որ արտաքնոցի սենեակի յատակը զինկ մետալից (Zink, պինկ) լինի, հակեալ և փոքր խողովակով, որից խոնաւութիւնը գլխաւոր խողովակը անցանէ; պատի չորեք կողմը, յատակից 8—12 սանտիմետր, մի և նոյն մետալից: Արտաքնոցի փոսի մէջ, անմիջապէս մեծ խողովակի ներքոյ, շինում են երկու մետալական շարժուն աւազաններ, առաջինը ծակոտ; սոյն առաջին աւազանի կամ ամանի մէջ հաւաքվում է աղբը, իսկ կեղտոտ ջրերը ծակերով անցանում ներքեւի ամանը, որը առանց ծակոտ է: Այն ամանները դիւրութեամբ հանում են, ծածկում և գուրս տանում աղբը: Կոյն զինկից շինում են արտաքնոցի այն ամենայն խողովակները, որոնց մէջ որ և իցէ ջուր է անցանում: Արտաքնոցները պիտի շինել կացարանից առանձին և ծածկած, տաք փողով, անցքով, (corridor, корридоръ) միացնել կացարան տան հետ, որ ցուրտ ժամանակ չը մրսին:

Դայց ամենից լաւն է բոլոր խողովակները մետալական, աղբանոցի շարժուն աւազաններ շուտ շուտ մաքրել և լաւ յարմարացրած օդաբանուկներ և օդափոխութիւն:

Ժաղղովրդին պիտի համոզել և հասկացնել, տան սրահի, տան չորս կողմի և փողոցների մաքրութեանը նպյեն, օդը մաքուր պահ է լու համար: Անաւանդ աշխատելու է, որ գիւղացիք իւրեանց տան չորս կողմը և գոմերի մէջ չը հաւաքեն անասնոց և գրաստի աղբը (ապականութիւնը), գիւղաց հեռու տանեն, սփռեն դաշտերի մէջ և աշխատեն ամենայն կերպ, որ նոցա կացարանը, գրաստի գոմերը և գիւղի ամենայն անկիւնը մաքուր պահեն տասերկու ամիս:

Իսյց, կատարելով վերոյիշեալը, մարդ պէտք է իւր մարմինն էլ որքան կարելի է միշտ մաքուր պահէ; Եթէ կարող է, ամենայն օր գետի կամ աւազանի մէջ լողանայ; Լուացքը յաճախ փոխէ, մանաւանդ զանկապանները (գիւլըք, ջորաբ).... և այլն...: Այս հարցին, առհասարակ մարմնական և բարոյական զարգացման վերաբերեալ հարցերի մասին շատ և շատ պիտանի և հետաքրքրական տեղեկութիւններ կարելի է գտանել Կոմըի շարադրութեան հայերէն թարգմանութեան մէջ. «Խոնացարութիւն երեխայոց մարմնական և բարոյական: Ո. Պետերբուրգ»: 1868, 8-ծալ, էջ ժ, 5, VIII, 276, VI և 28:



## ԳՐԱԴՐԱՆՏՈՒԹԻՒՆՆ. ԳԵՐՄԱՆԻԱՆ:

D-r. Schildbach, Director der gymnastisch - orthopädischen Heilanstalt zu Leipzig (Zeitzer Strasse, № 43). Die Schulbanksfrage und die Kunzésche Schulbank. Leipzig, 1869, bei Keil, Königstrasse, № 14. 8°, p. 61, mit 11 in den Text gedruckten Abbildungen. Vid. Gartenlaube, 1869, № 34.

D-r. Guillaume. Die Gesundheitspflege in der Schulen. Arau, 1865, 12°, p. 120. Թարգմանութիւն դաշտերէնից: Ըս. также Архивъ Судебной Медицины, 1866, Сентябрь.

**Frantz Fink.** Gewerbeblatt für das Grossherzogthum Hessen. 1854.

**D-r Farner.** Studien über die Construction des Schultisches. Vide Wiener Jahresschrift für Kindesheilkunde, 1863, T. VI.

— Das Kind und der Schultisch, die schlechte Haltung der Kinder beim Schreiben und ihre Folgen so wie die Mittel derselben in Schule und Haus abzuhelpen. Zürich, 1865.

**D-r Kohn.** Untersuchungen der Augen von 10,060 Schulkindern. Leipzig. 1867.

**D-r Frey.** Der rationelle Schultisch als das hauptsächlichste Verhütungsmittel der schlechten Brustentwicklung, der schlechten Haltung und der Rückgratsverkrümmung. Zürich, 1868.

**D-r. Tswetz.** Das Schulhaus und dessen innere Einrichtung. Weimar. 1864.

**Hermann.** Über die Einrichtung zweckmässiger Schultische. Braunschweig. 1868.

**D-r. Buchner.** Zur Schulbankfrage. Berlin. 1869,

**D-r. Meyer.** Die Mechanik des Sitzens mit besonderer Rücksicht auf die Schulbanksfrage. Zürich, 1868.

---

## ԾԵՒԵԼԱԽԵՐԸ Ե:

Յետագայ հատուածը, որը տպուած էր Արարատ ամսագրի 1870թ., թիւ ժ, էջ 259—264; թիւ ժա, էջ 291—293; թիւ ժբ, էջ 312—316—, այժմ մեծապատիւ չեղինակը բոլորովին սրբագրել է։ Առա կրկին, մանաւանդ սրբագրած և կերպարանափոխած առաւել ձիշդ և ուղիղ տպագրութիւնը կարևոր համարեցինք երկու ստիլովզական պատճառաւ. 1) ընդհանուր գաստիարակական նպատակաւ, և 2) մասնաւորապէս առաւել համոզելու և մասնաւոր կերպիւ ցոյց տալու մերայնոց, թէ որքան ստիլովզական հարկաւորութիւն կայ, — գրութեանը սովորելու սկզբից —, սկսել ընտելանաւ, սովորութիւն շինել իւրեան համար ձեռքի և գրչի կանոնաւոր շարժումը, գրելով կամ

թափանցիկ, բարակ թղթի վերայ, որի տակը գաղափարն է դրած, կամ թէ, առաւել ևս լաւ, գունատ մելսնով տպած կանոնաւոր և վայելուչ գրութեան վարժութիւնների վերայ, որ ձեռքը և գնդերը, յաճախ ու յաճախ կանոնաւոր կերպիւ և տպած գունատ գաղափարների վերայ միշտ և նոյն կերպ կանոնաւոր եալ շարժողութիւններ կատարելուց և կրկնելուց յետոյ, հասանեն վարժութեան և ընտելացման այն աստիճանին, որ միշտ, կամայ և ակամայ, միւնոյն կերպ կանոնաւոր և վայելուչ գրեն:

Առվորութիւնների նշանակութիւնը դաստիարակութեանը  
կութեան գործին մէջ<sup>1</sup>:

Առաջիկայ նիւթը միանգամայն հասկանալի անելու և ընթերցողին շփոթութիւններից ու տարակուսութիւններից հեռու պահելու համար, աւելորդ չենք համարում բացատրել, նախ և առաջ, սովորութիւն բառի նշանակութիւնը, որովհետեւ առօրեայ խօսակցութիւնների մէջ այս բառը շատ անգամ իր տեղը չէ գործ ածվում:

Առաջին անգամ մեզ պատահող իւրաքանչիւր գործը կամ գործողութիւնը մեծ ուշադրութիւն է պահանջում մեղանից իրան կատարելու համար և մինչև անգամ հարկադրում է մեզ

<sup>1</sup> Արտաքին զգայարանքներին վերաբերեալ օրինակները, որ յիշած են յօդուածիս մէջ, բաղած են թառվաս Ի. Վ. Փիշամի «Տարերք իմացական փիլիսոփայութեան» անունով նշանաւոր գործից, որ ընդունուած է Ամերիկայի և Անգլիայի բարձրագոյն դպրոցների մէջ իրեւ ձեռնարկ բարոյական փիլիսոփայութեան եւ որու հայերէն գեղեցիկ թարգմանութիւնն էլ Ա. Պ. աղարու Պ. գործն է եւ ի լոյս է ընծայված Օ. միւռնիայում, 1851 թ., իսկ բոլոր յօդուածը բաղած է ոռւս գիտնական Ուշինսկու «Մարդ իրեւ առարկայ կըթութեան» բաղմօգութեան գործից:

ստիպել և բռնաբարել մեր կամքը, այն ինչ նոյն իսկ գործողութիւնը, յաճախ և յաճախ կրկնելուց, հեշտանում է նա հետ զշետէ մեզ համար, աւելի և աւելի պակաս ուշադրութիւն է հարկաւորում, հետեաբար և առաւել ու առաւել նուազում է այն ստիպողութիւնը և բռնաբարութիւնը, որով հարկադրում է ինք մեր կամքը սկզբում:

Այսպէս մենք մինչև այն աստիճան կարող ենք ընտելանալ նոյն գործողութեան և այնպէս արմատացնել նրան մեր բնութեան մէջ, որ այնուհետեւ կատարենք նրան ակամայ, անգիտակցաբար, այսինքն նոյն իսկ բոպէներում, երբ մեր ուշադրութիւնը դարձրած է լինում միանդամյն ուրիշ գործին: Այս տեսակ գործողութիւններ են, զորօրինակ, վատ սովորութիւններ կոչուած բոլոր մեր գործերը կամ շարժմունքները, որոնց յաղթելը երբեմն նոյնպէս գժուար է լինում մարդուս համար, որպէս որ բնածին հակումների հակառակ վարուելը:

Ասկայն հանապազրեայ կեանքում սովորութիւն բառ խօսակցութեան մէջ անորոշ է գործ ածվում, անխտիր վերաբերելով թէ զուտ հոգեկան զանազան զգացմունքներին և թէ ջղերի բազմատեսակ գործողութիւններին: (Երինակ. ցըրտին, տաքութեանը, ցնցումին, երերանքին, ցաւին և միւս այսպիսի բաներին գիմանալու և հեշտութեամբ տանելու կարողութիւնը շատ անգամ կազմուածքի սովորութիւններ են անուանում: Ուէև մենք կարող չենք բացատրել, ինչպէս հարկն է, սոյն երկոյթները, բայց և այնպէս ակներև է, թէ յաճախ կրկնուող և կազմուածքի վրայ ազդող ու ներգործող տպաւորութիւնները (ցրտի, տաքութեան, երերանքի, ցաւի և ախորժակի և այլ զգացմունքները) պատճառում են նոյն իսկ կազմուածքին տեսակ մի փոփոխութիւններ, որոնց շնորհիւ նա սակաւ առ սակաւ ընդունակ է գառնուամ անվիսաս տանելու այն ազդեցութիւնները, որոնց չէր կարողանում գիմանալ առաջ և որոնք մինչև անգամ կարող էին վեասել նրան: Այսպէս, մարդիկ սակաւ առ սակաւ սովորում են օդի շուտ շուտ փոխիխվե-

լուն, այն ինչ մի և նոյն հանգամանքը կարող էր առաջ հիւանդութիւն պատճառել նրանց: Պատահել է որ մարդիկ սովորել են թոյն ընդունելու այնքան շափով, որ մահ պէտք պատճառէր անշուշտ անսովոր կազմուածքին: Ծակէտ և կազմուածքի այսպիսի դիմացկուութեան խնդիրը մեծ կարևորութիւն ունի մանկավարժութեան գործի մէջ, բայց մեր խօսքը առ այժմ ուրիշ տեսակ սովորութիւնների մասին լինելով, շարունակում ենք մեր նկատողութիւնները:

Առվորութիւն բառի ձիշը և իսկական նշանակութիւնը մենք այսպէս ենք ընդունում: սովորութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ մարդու կազմուածքի այն նշանաւոր ընդունակութիւնը, որու շնորհիւ նա կարողանում է, միենոյն գործողութիւնները յաճախ և յաճախ կատարելուց ու կրկնելուց յետոյ, հասնել վերջապէս վարժութեան և ընտելացման այն աստիճանին, երբ կատարէ մի և նոյնը միանգամայն ակամայ և անդիտակ կցարար: Այսպէս ուրեմն սովորութիւնը կամաւոր և գիտակցաբար արած գործողութիւնները՝ անընդհատ վարժողութեան ձեռքով՝ փոխարկում է ակամայի և անդիտականների և շնում է նրանց, կարծես թէ, բնածին մի յատկութիւններ կազմուածքի համար: Արանից ահա արդէն ինքն իրան հասկացվում է այն մեծ և կարևոր ինդիբը, թէ սովորութեան ձեռքով որքան էական փոփոխութիւններ կարելի է յառաջ բերել մարդուս կազմուածքի մէջ, որոնք հաղորդէին և յատկացնէին նրան այնպիսի ընդունակութիւններ, որպիսիք նա ամենելին ստացած չէր բնութիւնից: Կազմուածքի այս յատկութիւնն է, որ ընդունակ է շինում նրան սեպհականացնել և արմատացնել իր մէջ նորանոր ունակութիւններ և մի և նոյն ժամանակ արմատահան անել հիները իր միջեց, այս յատկութիւնն է ահա, որի վրայ հիմնաւծ են ոչ միայն գաստիարական արարական անելութեան ձեռքով երեխային

Հաղորդած բոլոր սովորութիւնները և ունակութիւնները, այլ և այն սովորութիւնները և ունակութիւնները, որ տալիս է նրան նոյն իսկ կեանքը, առանց մի որ և իցէ դիտաւորութեան, և որոց հետ հարկագուած է լինում շատ անգամ մաքառելնախ դաստիարակիչը և ապա նոյն ինքը մարդը կամ հասարակութիւնը։ Բայց սրանով չէ վերջանում սովորութեան նշանակութիւնը։ Սովորութիւնը ունի և մի ուրիշ, գուցէ և աւելի կարևոր յատկութիւն, որը անուշադիր թողնելու և զանց առնելու չէ երբէք։ Բաւական չէ որ այս կամ այն գործողութիւն կատարելու արդէն սովորութիւն ստացած կազմուածքը առաւել հետութեամբ է կատարում այնուհետև նոյնը, այլ և երբեմն նա ստանում է նոյն գործողութիւնը կատարելու առանձին մի ցանկութիւն, մի ուժեղ հակումն գէպի ի նա։ Այսպէս հարկաւոր է լինում մեղ գործ գնել սկզբում մեծ ուշադրութիւն և կամք, որ կարողանանք կազմուածքի այս կամ այն գործունէութեանը այս կամ այն ուղղութիւնը հաղորդել, իսկ յետոյ ստիպուած ենք լինում գործ ածել նոյնպէս մեծ ուշադրութիւն, գիտակցութիւն և կամք, որ կարողանանք ընդդիմանալ կազմուածքի նոյն իսկ հակումներին, որ մենք ինքներս արմատացրինք նրա մէջ, սկզբում մենք ենք տանում մեր կազմուածքը որ կողմն որ կամինք, իսկ յետոյ նա է քար շում մեզ այն կողմ, ուր, գուցէ, մենք բոլոր ովլին չէինք ցանկանում գնալ։

Այսպէս մենք տեսնում ենք, որ սովորութիւնները կարող են լինել երկու տեսակ, մէկ՝ այնպիսի սովորութիւններ, որ հակումներ չեն դարձած, և երկրորդ՝ միանդամայն հակումների փոխարկուած սովորութիւններ, որոնք ոչ միայն թեթևացնում են կազմուածքի համար գործողութիւններ կատարելը, այլ և յառաջ են բերում ընդմիշտ նրանց կատարելու մի ցանկութիւն։ Առաջին տեսակ սովորութիւնները աւելի ուղիղ կը լինէր

անուանելուն ակութիւններ, որոնց թուիցն են արուեստներին վերաբերեալ բոլոր սովորութիւնները, իսկ երկրորդ տեսակի համար աւելի յարմար է սովորութիւն անունը պահել:

Ա երջի խօսքերից ծագում է մի հետաքրքրական և կարևոր հարց, թէ ի՞նչ պատճառով և ի՞նչ կերպով հասարակ սովորութիւնները կարողանում են հակումների փոխարկուիլ: Այս խնդիրը կը բացատրուի, եթէ ուշ դարձնենք մարդկային հոգւոյ յետագայ յատկութեանը: Ո՞եր հոգին պահանջում է անընդհատ գործունէութիւն և մի և նոյն ժամանակ փախչում է արգելքներից, ուրեմն նրա ցանկացած գործողութիւնը պէտք է հեշտ կատարելու լինի; ահա ի՞նչ պատճառով մի սովոր գործողութիւն կատարելը՝ նոյն իսկ իր թեթեութեամբը և հեշտութեամբը ախորժելի է լինում մեր հոգւոյն, ուստի և հոգւոյ մէջ յառաջ է գալիս և պահպանվում ու արմատացվում անընդհատ մի ցանկութիւն և հակումն գէպ ի նոյն գործողութիւնը: Անէպէտ և Ճշմարիտ է, որ մենք այսպիսի գիպուածներում չենք զրկվում երբէք գիտակցութիւնից և կամքից, և կարող ենք միշտ ընդդիմանալ կազմուածքի այսպիսի հակումներին, բայց բանն այն է, որ, մինչեւ մեր գիտակցութիւնը և կամքը առ հասարակ վայրկենարար, միջաշատուելով են ներգործում, ինքը կազմուածքը անդադար և բոլոր իր հակումներով և սովորութիւններով է ազդում մեր վրայ; և որովհետեւ հակումներին հետեւիլը հեշտ և ախորժ է մեզ համար, ապա ուրեմն և ընդդիմանալ նրանց նոյնքան ծանր և անախորժ է, որքան որ հակառակ ուղղութիւնը գորացած է մեր կազմուածքի մէջ: (Օրինակ ծխելուն սովոր մարդու համար գժուար չէ ամենաեին չը ծխել, որովհետեւ այդ մի անհրաժեշտ հարկաւորութիւն չէ նրա համար, և ոչ մի այնպիսի ախորժանք, որից ծանր լինէր հրաժարուիլ նրան, բայց ծանր և անախորժ այն է, որ ամբողջ տարիներ ամեն մի ժամ, և համարեա թէ ամեն մի րոպէ հարկադրուած պէտք է լինէր նա արթուն պահել և

ժամապահի պէս լարել իր ուշադրութիւնը և կամքը այն սովորութեան վրայ, որ ամենայն բոպէ մղում է նրան գէպ ի ծխախոտը:

Առվորութիւն ստանալու համար մեծ նշանակութիւն ունի նաև մարդուս հասակը, քանի մատաղ է կազմուածը, այնքան շուտ է արմատացնում նա իր մէջ զանազան սովորութիւններ: Անհուկը անհամեմատ շուտ և հեշտութեամբ է սեպհականացնում իրան մի որ և իցէ սովորութիւն, քան թէ ծերը: «Կորածին երեխան, որ օրերով է աճում ու զարգանում, մի որ և իցէ բան երկու երեք անգամ կրկնելոց յետոյ արդէն իսկոյն սովորում է այն, այնպէս, որ մայրերը, որոնք երեխային կանոնաւորապէս ծիծ ծծել սովորցնելը էսօր էգուցի են ձգում, հարկադրուած են լինում մի քանի օրից յետոյ՝ իսկոյն մաքառել երեխայի մէջ արդէն արմատ ձգած և ծիծ առնելուն վերաբերող մի քանի վատ սովորութիւնների հետ, ծալդլած խանձարուրը, այսպէս կամ այնպէս գրած բարձը երկու երեք անգամից յետոյ արդէն յառաջ են բերում երեխայի մէջ զանազան սովորութիւններ, որոց ընդդէմ գործելը աղաղակ է պատճառում երեխային: Ենչ պատճառով անկարգ մօր զաւակները լինում են և անհանդիստ, այն ինչ միշտ նախորոշած կերպով գործող մայրը ոչ մի ժամանակ չէ անհանգտանում երեխայի զուր ճիչերով: Արգուս ջղերը կարծես թէ ծարաւի են ունակութիւններին, գուցէ և առաջին ունակութիւնները և սովորութիւնները արմատանում լինին առաջին անգամից իսկ, բայց քանի որ բազմանում են նրանք մարդուս մէջ, այնքան գժուարութեամբ են արմատանում նորերը ընդդիմադրութեան պատճելով հիների կողմից: Երեխան կարճ միջոցում այնպէս խօսել է սովորում օտար լեզուով, որպէս մեծահասակը կարող չէր սովորել մի քանի տարում: Իսկ եթէ ծեր մարդու սովորութիւնները աւելի նըշ մարելի կերպով են արտայայտվում քան թէ երեխայինը, այս միայն նրանից է, որ ծերունին շատ անգամ նոյնպէս յոգնում

Ե իր գիտակցութիւնը և կամքը լարած պահելուց ինչպէս որ իր մարմինը ուղիղ գիրքում բռնելուց, այսպիսի ծերունին իր սովորութիւններին այնպէս է տրվում, ինչպէս որ ձմռան ժամանակ իր տաք քուրսուն։ Ի՞այց մենք համաձայն չենք նրանց շետ, որոնք, Ինչիօնին համաձայն, կարծում են, թէ երեխայական հասակում ստացած սովորութիւնները դժուարութեամբ են արմատահան լինում։ Այս ճշմարիտ է եթէ միայն այն մըտքով ընդունենք, թէ որքան հին է սովորութիւնը, այնքան հաստատ է նա, որովհետեւ արմատանում է նա կրկնողութիւնից իսկ։ Ի՞այց եթէ երեխան շուտով է սովորում, օրինակ, օտար լեզուն, ապա նոյնպէս և շուտով մոռանում է այն, դադարում է վարժվելուց։ Միով բանիւ՝ որքան դեռահասակ է մարդ, այնքան շուտով է արմատանում սովորութիւններն են այնքան շուտով արմատահան լինում, և որքան հին են նոյն իսկ սովորութիւնները, այնքան և դժուար է արմատահան անել նրանց։

Ունակութիւնների և սովորութիւնների ասպարէզը առաւել ընդարձակ է, քան թէ կարծում են սովորաբար։ Կոյն իսկ ծնած օրից սկսած, երեխան զանազան փորձեր և յարմարողութիւններ է անում, որոնք յետոյ անդիտակցական սովորութիւններ և ունակութիւններ են գառնում նրա մէջ։ Ինախօսութիւնը արդէն ապացուցել է, թէ տեսողական, լսողական, շշափողական, միով բանիւ արտաքին զգացմունքներ կոչուած ընդունակութիւններից շատերը հասարակ, բնածին ընդունակութիւններ չեն ամենենին, այլ թէ բազմակողմանի եղբակացութիւնների վերջին արդիւնքներն են նրանք, այսինքն այն եղբակացութիւնների որ արել է մարդու իր տղայական հասակում, և որ միանգամայն անհետացել են նրա յիշողութեան մէջ, ուստի և արդիւնքները իբրև բնածին յատկութիւններ են դարձել։ Այդ բացատրելու համար բաւական է մի երկու օրինակ առնել և մանրամասն քննել նրանց։

Յայտնի է որ երեք կամ չորս տարեկան երեխան արդէն կարողանում է ինչպէս հարկն է բռնել ձեռքը տուած առարկաները, այն ինչ առաջ բոլորովին չէր կարողանում նա այդ անել: Բայց եթէ մանրամասնաբար հետազօտելու լինենք այդ, ըստ երեսութին հասարակ գործողութիւնը, ապա տեսնելու ենք անշուշտ, որ երեխան՝ յառաջ քան թէ կարողանար իր թաթիկը պարզել և կանոնաւորապէս բռնել իրան տուած առարկան, պէտք էր, որ անշուշտ բազմաթիւ դիտողութիւններ, զանազան փորձառութիւններ, պէսպէս վերաբերութիւններ, դատողութիւններ և յարմարողութիւններ արած ունենար: Եւ իրաւ որ գէպ ի առարկան թաթիկը մեկնելու համար, երեխային պիտոյ էր, ա) սովորած լինել իր ձեռքը իրեւ իր սեպհականութիւն ճանաչել, որովհետեւ ծնելիս նա գեռ ևս զուրկ է այսպիսի մի հմտութիւնից, այս ճանաչողութիւնը հարկաւոր է անշուշտ, որ նա կարողանայ անկասկած համողուած լինել, թէ ձեռքը առարկային մօտեցնելիս իր ստացած շօշափողական տպաւորութիւնը զգում է նա իր սեպհական ձեռքի միջնորդութեամբը, որովհետեւ շօշափողական բոլոր տպաւորութիւնները զգացվում են իրօք ուղեղում, այլ ոչ թէ այն աեղ, ուր առարկան կպած է մորթուն, բաց ի սրանից շօշափումի տպաւորութեանը (շօշափելու իսկ վայրկեանին) այնպիսի արագութեամբ է հետևում նոյն իսկ զգալը (զգացմութիւն, շօշափողական զգացմունքը), որ մտքի ամենարագ թռիչքն անգամ կարող չէ հաւասարիլ այդ վայրկեանների մէջ եղած միջոցին: Այս մինչև այն աստիճան կարձատեւ և փոքր է, որ անհնարին է չափել նրան գէթ երեակայական ամենանուրբ չափով:

Ուրեմն ինչպէս կարող է երեխան համողուած լինել, թէ առարկան իր սեպհական ձեռքումն է, եթէ նա գեռ ևս շատ և շատ դիտողութիւններ, փորձառութիւններ, և դատողութիւններ արած չունէ, որոնցից սովորած լինէր, թէ բոլոր այդպիսի գիտուածներում, իր ունեցած զգացմունքը նա պէտք է միշտ

վերաբերէ այն հպաւորութեանը (rapprochement, proximité, attouchement, прикосновение, соприкасание), որ տեսնում են նրա աշերը մատերի և առակայի մէջ, կամ ուրիշ խօսքերով՝ ուղեղի այդպիսի զգացմունքները և մատերի ու առարկայի մէջ տեսած հպաւորութիւնը նա պէտք է սովորած լինի մի կամ մի և նոյն համարել. իսկ որովհետեւ այն զգացմունքները նրա ներսում են ծագում, նրա կազմուածքի սեպհականութիւնն են, ապա և վերոյիշեալ սովորութիւնից, այն է շօշափողական զգացմունքը և նոյն իսկ շօշափողութիւնը մի և նոյն համարելուց իսկ, ինքն իրան արդէն յառաջ է գալիս երեխայի ինելքում փորձառական մի համոզմունք, թէ իր սեպհական կազմուածքի մասն է այն թաթը, որով բոնած ունինա իրան այս ինչ զգացմունք պատճառող առարկան<sup>1</sup>:

Իաց ի վերոյիշեալ սովորութեան, երեխան պէտք էր. ը) սովորած լինէր զանազանել իր մարմինը, ուրեմն և իր ձեռքը բոլոր միւս առարկաներից, որովհետեւ ինչպէս նրա ձեռքը, նոյնպէս ուրիշի ձեռքերը և բոլոր մարմինները միատեսակ են տպաւորվում նրա աշերում։ Այս սովորութեան անհրաժեշտ հարկաւորութիւնը ինքն իրան էլ ակներեւ է։ Այս

<sup>1</sup> Ուէկ շօշափողական զգացմունքը և նոյն իսկ շօշափողութիւնը իրօք մի համարելը միանգամայն սիսալ է, բայց մարդու ի սկզբանէ լինկնում է և հաստատվում է այդ սիսալնքի մէջ և մինչև այն աստիճանի ընտելանում է նրան, որ ուրիշ կերպ ըմբռնել այդ զգացմունքը անկարելի է լինում նրա համար. նրան միշտ կը թուի, թէ շօշափողական տպաւորութիւնը զգացվում է մատերում, այլ ոչ թէ ուղեղում, ինչպէս և այս պատճառում է ուրիշ շատ զգացմունքների հետ։ Որպա գեղեցիկ ապացոյցը կարող է լինել նոյն փաստը, որ հանրածանօթ է բժշկական աշխարում։ Երբ որ կտրում են մարդուս ձեռքը կամ ոտքը, նա գեռ ևս երկար ժամանակ շարունակաբար զգում է թէ ինչպէս ցաւում կամ քոր են գալի նրա մատերը, այն ինչ այդ զգացմունքը ծագում է իրօք նրա ուղեղում՝ կտրած տեղի ջղերը գրգռուած լինելուց։

տեղ էլ բազմաթիւ փորձառութիւններ և դատողութիւններ են հարկաւոր լինում նրան՝ այդ ճանաչման մէջ հմտութիւն ստանալու համար:

Հարկաւոր է նրան դարձեալ գ) սովորած լինել իսկոյն պարզել իր ձեռքը որ կողմն և կամեցաւ, իսկ սրա համար պէտք է առաջինը՝ ձեռքի մկանունները այնպէս վարժուած ունենար, որ գժուար չլինէր նրան կամեցած կողմն դարձնել իր ձեռքը, և երկրորդ՝ նա պէտք է հասկացողութիւն ունենար զանազան կողմերու մասին: Եթէ նա ի ծնէ ունենար այդ ճանաչողութիւնը, ապա ի՞նչու սկզբում չէ կարողանում նա իմասլաւ, թէ ո՞ր կողմիցն է լավում մօր քաղցրիկ ձայնը, և ի՞նչու մի քանի անյաջող փորձերից յետոյ միայն կարողանում դարձնել իր գլուխը այն կողմը, ուսկից լավում է ձայնը. ուրեմն երեւակայեցէք թէ որքան փորձառութիւններ, յարմարողութիւն և դատողութիւններ է հարկաւոր երեխային անել, մինչև որ կարողանայ սովորել գիտակցաբար դարձնել իր թաթիկները որ կողմն և կամեցաւ:

Հարկաւոր է նոյնպէս հասկացողութիւն և սովորութիւն ունենալ երեխային. դ) չափել առարկաների չեռաւորութիւնը կամ մօտաւորութիւնը, որ կարողանայ գիտակցաբար պարզել իր ձեռքը դէպի ինրան տուած առարկան: Այս հմտութիւնիցն էլ զուրկ է լինում նա սկզբում, ապա թէ ոչ ի զուր չէր պարզի նա իր թաթիկները դէպի ի լուսինը՝ նրան բռնելու գիտառութեամբ:

Ուրիշ էլի շատ ճարտարութիւններ և հմտութիւններ պէտք է ունենայ երեխան իւր ձեռքը դէպի ի մի որ և իցէ առարկան մեկնելու համար, մենք նրանցից ամենագլխաւորները միայն յիշեցինք: Բայց տուած առարկան ինչպէս հարկն է բռնելու համար բաւական չէ, որ երեխան գիտենայ միայն պարզել իր ձեռքերը, թէև գիտակցաբար, դէպի ի առարկան. այլ և ուրիշ հմտութիւններ էլ են հարկաւոր, որոնցից ամենանշանաւորն այն է, որ երեխան պէտք է սովորած լինի. ե) ուղղակի տես-

նել առարկաների հեռանկարը (perspectif, перспектива, перспективное изображение) որովհետեւ ամեն մի առարկայ գծադրվում է մեր աչքում մէկ տափարակի վրայ. միմայն լրւասոյ և ստուերի միջնորդութիւնը ու առարկաների մեծութիւն և փոքրութիւն գիտենալու, հեռաւորութիւն և մօտաւորութիւն չափելու և վերջապէս զանազան մեծութիւն ունեցող մարմինները մի անգամից իսկ բաղդատելու կարողաւթիւնն է, որ միջոց է տալիս մեզ տեսնել ոչ թէ առարկայի տափարակ գծագիրն ուղղակի, այլ նրա հեռանկարը, նրա տարածութիւնը։ Խսկ եթէ երեխան կանոնաւորապէս է ձեռք տալի առարկային, ապառեմն նա սովորել է արդէն՝ իր աչքում տպաւորուած տափառ քակ գծագր ուղղակի տեսնել առարկայի հեռանկարը, ուրեմն որքան զիտողաւթիւններ, վերաբերութիւններ և գատողաւթիւններ պէտք է անէր երեխան մինչև որ համնէր այսպիսի ունակութեան։ Աշ չենք յիշում այն հմտութեան մասին, որ երեխան սովոր պէտք է լինէր փակել և բանալ իր թաթիկը ինչպէս և կամենայ, որ կարողանար կանոնաւորապէս վեր առնել մի որ և իցէ առարկայ. մատերի այդ զանազան շարժմունքները, ինչպէս և ապացուցանում է բնախօսութիւնը, ամենադժուար գործողութիւններ են, որոց համար հարկաւոր է մեծ վարժութիւն մկանունների կողմից։

Աշնք կարող էինք էլի շատ օրինակներ բերել ապացուցանելու համար, թէ բոլոր արտաքին զգայարանքների գործունէութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակ սովորութիւններ և ունակութիւններ։ Օ, որօրինակ՝ հոտառութիւնը մարդուս հոտոտելիքը՝ ի բնէ ընդունակ է ենթակութիւն զանազան մարմինների ներգործութեան, որոնք կարող են անընդհատ արտաշնչել և տարածել իրանց բոլորեշուրջ շատ նուրբ մասնիկներ, բաժանելով նրանց իրանց զանգուածից։ Երբ որ այս նուրբ նուրբ մասերը ներգործում են մեր հոտոտելիքի վրայ, մենք ստանում ենք մի ախորժ կամ անախորժ զգացմունք, որի թելաղբութեամբ և իմանում ենք, որ սա մի պատճառ պէտք

է ունենար, բայց այս թելադրութիւնը ինքն իրան չէ ցոյց տալիս բնաւ, թէ մի անհրաժեշտ նիւթական պատճառ պէտք է լինէր:

Ուրեմն ի՞նչիցն է որ հոտառութեան զգացողութիւնը ինքն իրան՝ մէկ առանձին բան չ'ենք կարծում, այլ այս զգացողութիւնը միշտ մի որ և իցէ արտաքին մարմնին ենք վերաբերում, սրա պատասխանն այն է, որ եթէ ի ծնէ զուրկ լինէինք տեսութեան և շօշափման զգայարանքներից, ապա այս վերաբերութիւնը չէինք կարող անել ամենեին: Արանց օգնականութեամբ արած մեր գիտողութիւնները, փորձառութիւնները և գատողութիւններն են, որ երեխայական հասակից արդէն սովորցրել են մեզ այս վերաբերութիւնն անել միշտ այսպիսի գիպուածներում: Երբ որ վարդ տեսանք, մօտը գնացինք, շօշափեցինք, հոտառութիւն ասուած զգացմունքն էլ ստացանք միշտ: Վանի անգամ որ շուշանին մօտեցանք, կամ պոկեցին՝ մեր ձեռքը տուին, նրա անուշ հոտն էլ այնքան անգամ ըգգացինք և իմացանք: Ահա այսպիսի փորձառութիւններով և գիտողութիւններով սովորում է երեխան, թէ երբ հոտառոր մարմններուն մօտենում է նա, հոտառութեան զգացմունք է ստանում նա միշտ, որով և ունակութիւն է ստանում երեխան հոտառութեան զգացմունքը մի որ և իցէ մարմնոյն վերաբերել, ինչպէս որ շօշափողական զգացմունքը նոյն իսկ շօշափելի առարկային:

Այս օրինակներից արդէն ինքն իրան երեւում է թէ ի՞նչ պիսի կարեոր և բազմակողմանի հոգեկան և մոտաւորական գործունեութեան մէջն է լինում երեխան գեռ ևս այն հասակում, երբ նա թվում է մեզ, հասակ առածներիս, գեռ ևս շատ հեռու մարդ անուն կրելուց:

Գիտութիւնը՝ քննելով և իմաստասիրելով երեխայի հոգեկան, մտաւորական և ֆիզիքական առաջին գործողութիւնները, ոչ թէ միայն բաւականացնում է մեր հետաքրքրութեանը, այլ և մի և նոյն ժամանակ շատ կարեոր գործնական

Խրատներ և օգուտներ է տալիս. որովհետեւ ծնողների և դաստիարակների համար շատ կարևոր է գիտենալ. թէ երեխան իր կեանքի առաջին ամիսներում ոչ միայն ֆիզիքապէս է զարգանում, այլ և նրա ներսում հաստատվում են այն հիմունքները, որոնցից պէտք է բաղկանայ նրա հոգեկան բոլոր ապագայ գործունեութիւնը. այս միջոցումն են յառաջ գալիս և մշակվում այն ուժերը և գաղափարները, որոնց միջնորդութեամբ նա պէտք է ապագայում յարաբերի և կապակցի հասարակութեան և մարդկութեան հետ: Այսպիսի հասկացողութիւն կազմելով մատղաշի մասին, ծնողները և դաստիարակները անշուշտ պարտական կը համարեն իրանց հոգալ նրա ոչ թէ միայն ֆիզիքական առողջութեան, այլ և հոգեկան և մտառական զարգացման մասին: Թէպէտ և այս ժամանակը այնպիսի անթափանցելի քողով է ծածկած մեզ համար, որ, ի հարկէ, կարող չենք երբէք դրականապէս գործել, բայց մենք կարող են բարերար ազգեցութիւն ունենալ երեխայի վրայ այդ ժամանակն ես՝ հեռացնելով նրանից բոլոր այն, ինչ որ կարող էր այսպէս կամ այնպէս արգելել նրա ֆիզիքական, հոգեկան և մտառական կանոնաւոր զարգացմանը: Այսպէս՝ օրինակի համար՝ մենք կարող էինք կարգ ու կանոն մտցնել նրա կեանքում, ինամբ տանել նրա բոլոր կազմուածքի հանդարտութեանը և անդորրութեանը, հեռու պահել նրան բոլոր գրգռիչ ազգեցութիւններից և հեռացնել նրանից բոլոր գարշելի և տգեղ բաները, ինչպէս ֆիզիքականի նոյնպէս և բարոյականի վերաբերութեամբ: Քայտնի է, զորօրինակ, այսպիսի մի համոզմունք, որ և շատերը նախապաշրմունք են կարծում, թէ՝ չար ծծմօր սնուցած երեխան չար է լինում առհասարակ: Աայց այս համոզմունքը մի կողմից և ձմարիտ է: «Աարութիւնը չէ կարող ի հարկէ ներս ծծուիլ կաթնի հետ, թէպէտ և չարացած կնոջ կաթը աւրում է երեխայի ստամոքսը. բայց չար կինը չար է վարլում երեխայի հետ և իւր վարվողութեամբ, ոչ թէ կաթնով, չարաբարյութիւն կամ վախկոտութիւն

է ներս շնչում նրան: Չը պէտք է երբեք մոռանալ, թէ առաջին գաղափարը, որ կաղմում է երեխան մարդկանց մասին և արտայայտում է յետոյ խօսքով, կախում ունի միանգամայն այն բանից, թէ ինչպիսի մարդոց պատկերներ կը տպաւորվին առաջին անգամները նրա հոգւոյ մէջ, այդ պատկերները կը դառնան և հիմք նրա ապագայ յարաբերութիւնների համար գէպ ի մարդիկ, ուրեմն բազգաւոր է այն երեխան, որոյ հոգւոյ մէջ տպաւորվեցաւ առաջին անգամից իր մօր սիրալիր պատկերը:

Կորածին երեխայի հոգեկան զարգացման բոլոր ընդարձակ գործողութիւնից մենք կարողանում ենք տեսնել որոշակի միմիայն այն հատուածները, որոնք մատնացոյց են լինում զարգացման մի ամենալ ժամանակամիջոցին, ահա երեխան այժմ կարողանում է աշքով հետեւիլ շարժող առարկաներին, ահա արգէն պարզում է նաև իր թաթերը գէպ ի նրանց, ահա և ըսկեց ժպտիլ, ճանաչել մօրը, հօրը, դայեկին: Խակ այս բոլորը այնպիսի բազմակողմանի եղանակացութիւններ, հմտութիւններ և գործողութիւններ են, որոց վրայ քիչ չէ աշխատել երեխան, և երբ նա կարողացաւ արգէն արտասանել առաջին բառը, այն ժամանակ երեխայի հոգին ներկայացնում է այնպէս մշակած և հարստացած երեսյթ, այնպիսի բազմաթիւ և բազմատեսակ գիտողութիւններ և փորձեր, միով բանիւ զարգացման այնպիսի բարձր աստիճան, որին չէ կարողանում հասնել մի անբանի կազմուածքը իր հետևաբարօղական զարգացման բոլոր միջացին սկզբից մինչև ի վերջը: Խօսքը իրանով հաստատում է և ամրապնդում տպաւորութիւններ և գաղափարները, սրանից յետոյ և շուտով սկսում է բացուիլ և զարգանալ յիշողութիւնը, որ կապակցելու է ժամանակաւ նրա զանազան կողմերը ի մի անբողջութիւն: Եշ վերջ ի վերջոյ անբան ժամանակամիջոցից կը մնան արդիւնքները միայն, որոնք, հանդիսանալով իրեւ անգիտակցական սովորութիւններ և հակումներ, ահա գին ազդեցութիւն ունին մարդուս ընդունակութիւնների, բը նաւորութեան և բոլոր կեանքի վրայ:

Չորս ամսեայ մանուկի վերաբերութեամբ վերել նկատած բոլոր պարագաներից անկասկած համոզւեցանք մենք, թէ արտաքին զգայարանքներն են այն միակ միջոցները, որոնցով երեխայի հոգին և միտքը հաղորդակցվում է արտաքին աշխարհի հետ: Վասնց զգայարանքների՝ մարդս ամեն բանից միանգամայն զուրկ պէտք է մնար, վերցրէք, օրինակ՝ ականջները, և ահա բոլոր բնութիւնը լուռ՝ անձայն՝ մեռածի պէս կ'լինի, հանեցէք աչքերը, և իսկոյն արեգակի և լուսնի լոյսը կը խաւարի և համայն աշխարհին մութը կը պատէ, զրկեցէք շշափելեաց զգայարանքից, և յայնժամ մարդս ուրիշ բաներու հետ ունեցած հաղորդակցութիւնից այնպէս կը կտրուի, որ ամենայն արարածները ի չիք գարձած և ինքն մենակ մնացածի պէս կը լինի: Ո՞րով բանիւ արտաքին զգայարանաց միջնորդութեամբն է որ մարդս ստանում է բոլոր այն նիւթերը, որոնք կատարելագործուելով և մշակուելով գառնում են հիմք մարդկային մոքի և հոգւոյ բոլոր զարգացմանը և գործունէութեանը:

Ճաէ ինչ նշանակութիւն ունին սովորութիւնները և ունակութիւնները սոյն գործարանների վերաբերութեամբ՝ մենք արդէն ցոյց տուինք վերել ընդհանրապէս, իսկ այժմ մենք մտագիր ենք մի և նոյնը հաստատել աւելի նշմարելի և համոզիչ կերպիւ, այն է՝ ամեն մի զգայարանքին վերաբերեալ առանձին առանձին օրինակներով, որոնք ապացուցանում են թէ արտաքին զգայարանքներն էլ, ենթակայ լինելով սովորութիւններին և ունակութիւններին, կրթութեան և կատարելագործութեան ընդունակութիւն ունին: Վրդէն նկատած և հաստատած է այն իրողութիւնը, որ եթէ մարդս զրկուած է լինում արտաքին զգայանների մէկից կամ մի քանիսից, ապա նա հարկադրուած է լինում յաճախ և յաճախ գործածել մնացածները, կատարել տալով սրանց՝ բացի իրանց յատուկ պաշտօնը՝ այն պաշտօններն էլ, որ պէտք է վարէին անշուշտ միւս զգայարանքները, եթէ միայն զուրկ չը լինէր մարդս նրանցից:

Այսպէս յաճախ և յաճախ գործածելուցն է աչա՛հետեռում, թէ զգայարանքներից մէկը պակաս մարդիկների միւս զգայարանքները այնպիսի զարմանալի ունակութիւններ են ստանում, այնքան ուժեղ, կենդանի և առողգ հանդիսանում, որ մինչև անդամ սքանչելի ենք կարծում նրանց. կոյրերը շօշափման կողմանէ շատ անդամ զարմանալի ճշգութեան են հասնում. խուլ և համր եղողները, որ բոլոր իրանց գիտութիւնը աշքով են ստանում, իրանց հոգիներու բոլոր կարողութիւնը և ոյժը կարծես թէ աչքերու մէջն ունին ժողոված. աչք, ականջ, և լեզու չունեցողներու շօշափման և հոտառութեան կարողութիւնները շափից գուրս են զօրանում, մանաւանդ հոտառելիքը գրեթէ մէկ նոր զգայարանք է դառնում, և մինչև անդամ բարակի (որսի շան) հոտառութեան սրութեանն է հասնում։ (Օրինակ, Հակոբոս Միչէլինը խուլ, կոյր և անբարարա տղայ էր և այս երեք դժբաղդութիւններին ի միասին ենթարկված լինելով հարկադրուած էր հոտառութեան զգայարանքը բոլոր զօրութիւնովը գործածելու, սրանով և հասել է այնպիսի ունակութեան, որ՝ ինչպէս Ասիւարտը վկայում է, եթէ մի օտարական գալու լինէր նրա մօտ, նա միշտ և անմիջապէս այդ իմանում էր հոտից և մինչև անդամ մատով ցոյց էր տալիս, թէ որ կողմն է օտարականը կանգնած։ թէ ինչ սքանչելի սրութեան կարող է հասնել հոտառութիւնը, գեղեցիկ օրինակ կարող է լինել նոյնպէս Վակէրքը ունակի վկայածը «Նմացական կարողութիւններ» գրքի մէջ Վայս փիլիսոփայի մասին, բարեկամները մօտը եկած ժամանակ, նա կարողանում էր ձանաչել հոտից միմիպայն, թէ նոցա հագուստը սե է թէ չէ։

Այն հանդամանքը, թէ ստէպ ստէպ և լաւ լաւ գինի խըմողները ինչպիսի հեշտութեամբ և ճշգութեամբ են որոշում զանազան գինիներու համի տարբերութիւնը, ինքն իրան արգէն ցոյց է տալիս, թէ մարդուս ճաշակման զգացմունքները կրկնուելով կրկնուելով ոչ թէ միայն մի տեսակ նրբութիւն և անսխալ ընտրութիւն են ստանում, այլ և շատ և շատ զօ-

բանում են: **Ճ'աշակման վրայ ունակութեան կողմից արած աղքեցութիւնը այնպիսի նշանաւոր կերպով է յայտնուած,** որ մարդուս հաւատալիքը կը գայ այն երկու մարդոց պատմութեանը, որ պատմում է Անրվանտէսը: Այս Խընդրել են, որ տեսնեն թէ «շատ հին և լաւ է» ասուած մէկ տակառ գինիի համը ի՞նչպէս է: Մէկը համը տեսնելով, շատ լաւ գինի է, կ'ասէ, բայց միայն մի քիչ կաշի համ ունի: Խոկ միւսը, բերանն առած գինին բերանում սակաւ ինչ պտտեցնելուց և մտածելուց յետոյ, նոյն վճիռը կը տայ, աւելացնելով, թէ քիչ երկաթի համ է տալիս: Երբ որ տակառը դատարկում են, մէջ կաշի կապով մէկ հին բանալի է գտնվում:

**Լսողութեան գալով՝ մենք ամեն քայլափոխում տեսնում ենք, որ մարդիկ, որոց ականջը շատ է պարապել և վարժուել դաշնակական ձայներով, կրթութեան և կատարելագործութեան շատ ընդունակ լսելիք ունին. բայց կարելի է և ուրիշ տեսակ օրինակներ բնըել, թէ լսելիքն էլ, միւս զգայարանքների պէս ընդունակ է ունակութիւններ ստանալու կրկնողութիւններից: Կոյրերը, որոնք ուրիշներից շատ աւել լսելիքի պէտք ունին և շատ են գործ ածում այդ զգայարանքը, միջոց են տալիս մեզ համոզվելու, թէ նոցա լսելիքը միշտ զօրանալու և կատարելագործուելու վրայ է: Բնութեան տեսանելի գեղեցկութիւնները վայելելուց զուրկ լինելու պատճառաւ, նրանք լսածներից ուզում են բերկութիւն քաղել և անյագ ցանկութիւնով լսում են քաղցրանուագ երգերը: Արանիցն է, որ երաժշտութիւնը ոչ թէ միայն զրօսանք, այլ նաև ազրուստ ձարելու գործ է գարձած նրանց համար: Եւ այս պատճառաւ կոյրերու դաստիարակութեան մէկ նշանաւոր մասն էլ այս գեղարուեսան է համարուած:**

**Բայց մէջ բերենք լսելիքի զարմանալի ունակութեան մի օրինակ, որ Աբշէ վկայութեամբ պատմում է Ապէրքը մպին: Ֆիլադէլֆիացի երկու կոյր և հասակով պատանի եղայր են եղել, որոնք, փողոցի մէջ մանգալիս, կարողանում են եղել**

իմանալ վազոցների մէջ տեղ տեղ տնկուած սիւնեկներուն մօտենալը՝ սրանց բոլորտիքը գետնին վրայ կոխած ժամանակ յառաջ եկած մասնաւոր ձայնից: «Երանք աղաւնիներ էլ են պահելիս, և փոքրիկ պարտիզի մէջ զբօսանք անելիս, կարողանում են եղել աղաւնիներու անունները առանձին առանձին տալ, լսելով իրանց գլխի վրայով թռչելիս թռերու հանած ձայնը միայն:

Կասկած չկայ, որ կոյրերը աչքով չեն կարող տեսնել իրանց դէմ պատահած մեծ և հաստատուն մարմինները, բայց կարողանում են այնու ամենայնիւ այն մարմիններուն իրանց մօտենալը իմանալ, զգալով մժնոլորտի դիմահարութեան աւելանալը: Վճը տեսնող, բայց ոչ արհեստական լրց և ոչ մի ուրիշ առաջնորդ ունեցող մարդ, այնչափ համարձակ չէ կարող մանգալ տան չորս կողմը մուլթ գիշերը, որքան կոյրը, իր մնացած զգայարանքների շնորհքով՝ մանաւանդ շօշափողականին նրբութեամբը: Բայց թէ ինչ սքանչելի նրբութեան է հասնում շօշափելիքն և ինչպիսի զարմանալի ունակութիւն է ստանում նա, կարող ենք տեսնել արգէն յիշած զակորոս Արչէլի վրայ, որ բացի կուրութիւնը, լսողութիւնիցն էլ զուրկ էր, սա առանց տարակուսանքի՝ իր սեպհական բաները շօշափելով էր որոշում, թէ և իրանը և ուրիշները ձիշդ մի և նոյն ձեի, մի և նոյն նիւթից շինուած լինէին: Եւ զարմանալին այն է, որ պղտիկուց իրանց տան բոլորտիքը երկու հարիւր կանգունի չափ տեղ այնպէս որոնել, ինչ կայ չկայ տեղնիտեղը հասկացել էր, որ սովորութիւն էր արել, առանց առաջնորդի՝ անվախ՝ համարձակ ուզած կողմ ման գալ:

Ա երջապէս՝ տեսողականութեան վերաբերութեամբ էլ տեսնում ենք սովորութեան ազդեցութիւնը, աչքը մինչև այն աստիճան կարող է սրանալ, որ ուրիշներու չտեսած հազարաւոր բաները տեսնէր, այս ունակութիւնը մանաւանդ ուժեղացած ենք տեսնում՝ խուլերու վրայ, որոնք՝ կան այնպիսի օրինակներ, որ կարողանում են ուրիշների ասածը շրթունք-

ներու շարժմունքից հասկանալ քիչ շատ և երբեմն շատ մեծ ճշգութեամբ։ Այս բանը այնպիսի մի ընդհանուր բան է, որ հաստատութեան կարու չէ և հնարաւոր լինելուն շատ վաւերական իրողութիւնների վկայութիւն կարող էինք մեջ բերել, բայց բաւականանանք մեկ օրինակով։ Պրոնէգ եպիսկոպոսը իր մեկ նամակի մեջ այսպիսի մի աղջիկ է պատմում։ «Երկու տարեկան էր, ասում է, իմացուեցաւ որ ականջները խուլացել են. այն ժամանակից դէսը ինչ որ խսուեր, չէր իմանայ, թէպէտ և բարձր ձայն որ հանէին լսում էր, բայց շրջապատողների շրմանց շարժմունքը դիտելով, այնչափ բառ սովորեցաւ, որ նրանցով ծածկաբանութեան պէս մեկ բան շինեց, պատահում էր, որ սրանով խօսողներու հետ խօսակցում էր մինչև ի երեկոյ։ Իսայց մինչև որ խօսողի շրմանց շարժմունքները չը տեսնէր, ամեննեին բան չէր հասկանար։ Իսայց ի սրանից նրա շշափելիքն էլ սաստիկ նրբացած էր»։ «Եւա մեկ քոյր ունէր, շարունակում է Պրոնէգը, որոյ հետ ամենից շատ խօսում էր իր յօրինած լեզուով, գիշերը ձեռքը նրա բերանի վերայ գնելով, հասկանում էր նրա ասած խօսքերը, և այսպէս մութ ժամանակն էլ խօսակցում էր իր քրոջ հետ»։

(Օրինակները վերջացնելով, մենք յարմար ենք համարում մեջ բերել այս տեղ Ույիսի յետագայ խօսքերը։ «Ոչ թէ միայն հասակն առած մարդիկ, այլ և երեխաները, անխելքները ու անբաններն անդամ, ասում է նա, ի ծնէ չունեցած հմտութիւնները ստանում են սովորութիւնով և ունակութիւնով։ Աշարդկանց գրեթէ ամեն պարապմունքը, որպիսի թողնա և իցէ, միշտ տալիս է իրան յատկացած մի տեսակ հմտութիւն պարապողին։ Հովիւը իր հոտի ամեն մի ոչխարը ձանաչում է, ինչպէս որ մենք մեր ծանօթները տեսնելիս իսկոյն կը ճանաշենք. և եթէ նրա հօտը մի ուրիշ հօտի հետ խառնուի, նա իր ոչխարները մեկ մեկ կը ջոկէ առանց սխալվելու։ Ասագործը իր ոչխարներու և արջառներու վրայ գցած մեկ նայեացքից արդէն իմանում է, գեռ ևս չը մորթած, թէ ի՞նչ

պիսի որակութիւն և որչափ ծանրութիւն ունին նրանք: Երկրագործը խոտի գէզը և ցորենի շեղը կարողանում է աչքով կշռել, և որքան բան լինելը խկոյն ասել: «Կաւաստին՝ նաւը գեռ իրանից շատ հեռու՝ նրա ինչ տեսակ շենք ունենալը և մէջը ի՞նչ բեռ և ո՞րչափ հեռու լինելը որոշում է: Չերագրի վարժ մարդը, գիրը տեսնելով, խկոյն և եթ ճանաչում է իր բարեկամը: Փորձառու պատկերահանը ձեռքը պատկեր ընկած ժամանակ՝ կարողանում է իմանալ, եթէ ինչ երեւելի նկարչի գործ է այն: Ո՞յտվ բանիւ ամեն մարդ ստաց ական մէկ մէկ հմտութիւն է ունենում իր զբաղմունք արած գործին և նրան նուիրած սիրոյն, ուշադրութեան և վարժութեան համեմատ»:

Վրիստոտելէս՝ իմաստութիւնը, խոհեմութիւնը, ողջամտութիւնը, գիտութիւնները և արհեստները, առաքիմութիւնը և կեղծաւորութիւնը, անառակութիւնը բոլորն էլ սովորութիւններ էր կոչում. և եթէ նա օրանով ուզում էր ասել, թէ բոլոր այս յատկութիւնները կրկնողութիւնից են ուժեղանում և աւրապնդում, ասպարեմն նրա միտքը միանգամայն ճշմարիտ էր: «Ո՞վ կարող է, հարցնում է Իէկոնը, երկմտիլ սովորութեան ուժի և ազգեցութեան մասին, տեսնելով, թէ մարդիկ որքան անհաստատ են աւ հասարակ մի որ և իցէ բանի համար տուած իրանց բազմաթիւ խօստումներին և երգումներին, վկայութիւններին, օրինաւոր պարտաւորութիւններին և հանդիսաւոր խօսքերին, թէ ինչպէս նրանք այսպիսի խօստումներից յետոյ, ասում են և կատարում են մի և նոյն խսկապէս, ինչ որ և առաջ անում էին. կարծես թէ, նրանք բոլորեքեանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ սովորութեան ձեռքով լարած մեքենաները»: Ո՞աքիավէլն ասում է նոյնպէս, թէ գործ կատարելու մէջ կարելի չէ յոյս դնել և հաւատ ընծայել ոչ մարդուս ընութեանը և ոչ նրա ամենահանդիսաւոր խօստումներին, եթէ երկուսն էլ չեն ամրապնդած և պայմանաւորված սովորութիւնով: Լէիրնիցը մարդուս մտածածի,

Խոսածի և արածի, միով բանիւ բոլոր կեանքի երեք քարորդը սովորութեանն է վերագրում: Խոկ եթէ Շնէկօնը մի տեղում ասում է, թէ, «Մարդուս մաքերը և գաղափարները կախուած են նրա հակումներից և ճաշակից, խոսակցութիւնը—գիտունութիւնից և վարժապեաներից, որոց մօտ ուսում է առել, և այն կարծիքներից, որ նա ընդունել է, բայց թէ սովորութիւնն է նրա գործերը միմիայն որոշողը՝ ապա սովորութեան ասպարէզը այսպէս միմիայն գործնական կեանքի մէջ սահմանափակելու պատճառը այն է, որ Շնէկօնը ուշադրութիւն չի դարձրել հակումն, ճաշակ, ուսումն, կարծիք բառերի իմաստին, ապա թէ ոչ նա, անկասկած կը նըկատէր, թէ այս բոլոր բաների մէջ, որ նա հակադրում է սովորութեանը, դոյն այդ սովորութիւններն և ունակութիւններն են առաւելապէս, եթէ ոչ և բացարձակապէս, գեր խաղում:

Եթէ սովորութիւնը այսպիսի ընդարձակ ասպարէզ է ներկայացնում, ապա ուրեմն ի՞նչ մեծ նշանակութիւն պէտք է ունենայ նա մարդուս բոլոր կեանքում, թէ բարոյական և թէ մտաւորական կողմից: Խորամիտ Շեքսպիրը, որ ամենից լաւ էր ճանաչում մարդկային հոգւոյ բոլոր շարժուածքները, կոչում է երբեմն սովորութիւնը մի հրեշ, որ լափում է մարդուս զգացմունքները, և երբեմն էլ մարդուս պահապան հրեշտակ է անուանում նրան: Եշ իրաւ, մարդկանց բնաւորութիւնների բոլոր պէսպիսութիւնը դիտելով՝ մենք նկատում ենք, որ բարի սովորութիւնը մի բարոյական գալուց իր կեանքում: Առվորութեան դրամագլուխը կեանքում, ինչպէս էլ որ գրամական հիմնագլուխը տնտեսական ասպարէզում, աճում և բազմանում է գործածելուց և միջոց է տալիս իր տիրոջը առաւել և առաւել պտղաւէտ կացուցանել իր ամենաթանգարին զօրութիւնը՝ այն է գիտակցական կամքի ոյժը. սրա հետեւ նա կարող է առաւել ու առաւել և անդադար բարձ-

բացնել իր կեանքի բարոյական շինուածքը, կարիք չ'ունենալով ամեն անգամ՝ սկզբից սկսել նրան և ի զուր փճացնել իւր գիտակցութիւնը և կամքը այն դժուարութիւններին յաղթելու համար, որոնք մէկ անգամ արդէն յաղթուած են եղել: Առնենք, օրինակի համար, ամենահասարակ մի սովորութիւն, այն է է կարգ ու կանոն պահելու սովորութիւնը, ինչպէս սեպհական նիւթերի դասաւորելու, նոյնպէս և սեպհական ժամանակը կարգաւորելու վերաբերութեամբ: Որքան ոյժ և ժամանակ է պահպանում ի զուր կորցնելուց այն մարդը, որի համար յիշեալ սովորութիւնը դարձել է ստիպողական մի պահանջմունք կամ հարկաւորութիւն, բայց և անդիտակց ար կատարուած չէ ամենայն բոպէ դառնալ դէպ ի իր գիտակցութիւնը կարգ ու կանոնի օգտաւէտութեան և հարկաւորութեան մասին, և յիշեալ կարգ ու կանոնը իր կեանքում մըտցնելու և հաստատելու համար բռնաբարել ու ստիպել իր կամքը, այսպիսի մարդը, միանգամայն ազատ ունենալով կարգ պահելու հարկաւորութիւնից իր այս երկու ոյժը, այն է գիտակցութիւնը և կամքը, կարող է գործադրել նրանց մի նոր և առաւել կարևոր բանին:

Բայց եթէ լաւ սովորութիւնը բարոյական դրամագլուխ է, ապա ուրեմն և վատ սովորութիւնը, նոյնպէս և նոյն չափով, մի չը հատուցած բարոյական պարտք է, որ իր անդաբար աճող առկոսիքներով կարող է տանջել մարդուս հոգին, փճացնել և ի գերեւ հանել սկզբիցն և եթ բոլոր նրա գեղեցիկ գիտաւորութիւնները և ձեռնարկութիւնները և հասցնել վերջապէս նրան բարոյական սնանկութեան: «Քանի՛ գեղեցիկ ձեռնարկութիւններ և գործեր և մինչև անգամ որքան գեղեցիկ մարդիկ ընկճուել և փճացել են վատ սովորութիւնների ձեռքից: Եթէ մի որ և իցէ վատ սովորութիւնը արմատահան անելու համար գէթ ամենամեծ ոյժ պահանջուէր գործ գնելու, բայց թէ միայն ո՛չ երկար ժամանակով, ապա դժուար

լինելու չէր աղատուիլ այն վատ սովորութիւնից։ Վարդս ու բախութեամբ կտրել կտար իր ձեռքը կամ ոտքը, եթէ մի և նոյն ժամանակ կարողանային կտրել նրանից իր բոլոր կեանքը թունաւորող վատ սովորութիւնը։ Բայց բանն էլ այն է, որ սակաւ առ սակաւ և կամաց կամաց արմատացող սովորութիւնը արմատահան է լինում նոյնպէս սակաւ առ սակաւ և նրա հետ երկար մաքառելուց յետոյ։ Ա՞ր գիտակցութիւնը և կամքը պէտք է միշտ և անդադար արթուն պահել և իրը ժամապահ կանգնացնել վատ սովորութեան գէմ, որն և արմատ գնելով մեր կազմուածքի մէջ աշխատում է որսալ մեր թուլութեան և մոռացութեան ամեն մի բովէն իրան արտայայտելու համար։ բայց սոյնպէս իսկ լարել և գիտակցութիւնը ու կամքը՝ հոգեկան ամենադժուար եթէ և հնարաւոր գործողութիւն է։

Վակայն մարդկային անշափ ճոխ բնութիւնը երբեմն երբեմն ներկայացնում է մեր առաջ և սքանչելի երեսյթներ, այսինքն թէ հոգեկան մի ուժգին հարուած կամ դրդում, սովորականից վեր հոգւոյ մի սաստիկ ձգտում կամ թռիչք, վսէմ մի ոգեսորուածութիւն կարողանում են մէկ հարուածից իսկ հիմնայատակ անել և տապալել ամենավեսակար հակումները և արմատահան անել ոչնչացնել ամենահին խոր և հաստարմատ սովորութիւնները, կարծես թէ իրանց բոցով այրում և հողի հետ հաւասարում լինեն մարդուս ամբողջ նախընթաց կեանքը՝ նոր գրօշի տակ նոր կեանք սկսելու համար։ Վետարանը Փրկչի հետ խաչած աւազակներից մէկի վրայ ցոյց է տալիս մեղ մի գեղեցիկ օրինակ մարդկային հոգւոյ այդպէս իսկ միանգամից փոխուելու։ Եթէ հետամուտ լինենք թէ ո՞ր քան խոր և ուժգին դրամա պէտք է կատարուէր այն աւազակի հոգւոյ մէջ, որ խաչի վրայ չարշարուելու իսկ վայրկեանին արտասանել տար նրան իր նշանաւոր խօսքերը՝ ապա և կ'հասկանանք թէ ինչ նշանակութիւն ունի Փրկչի տուած պատասխանը թէ։ «Վ, մէն ասեմ քեզ, այս օր ընդ իս իցես ՚ի

դրախտին<sup>1</sup>: Ուժեղ հոգի հարկաւոր էր ունենալ, որ խաչի  
անտանելի տանջանքներում մտածէր ոչ թէ իր սեպհական ան-  
ձի, այլ միւսի համար, որ միանգամայն անմեղ էր չարչար-  
վում, խոստովանէր իր կրած պատժի օրինաւորութիւնը, իր  
անկման բոլոր խորութիւնը և խաչակցի բոլոր մեծութիւնը:  
Այսպիսի վայրկեանը հոգւոյ կատարեալ փոխարկութիւն է  
իսկապէս և կարող է այս աւազակի մեղաւոր հոգին դարձնել  
իբր մանուկի անմեղ և մաքուր հոգի, որի համար և, ինչպէս  
փրկիչն էլ ինքը խոստացաւ, բաց են արքայութեան դռները:  
Այս տեսակ հոգիները և այն էլ վերոյիշած պարագանե-  
րում կարող են, այս կրկնում ենք, մի անգամից իսկ յաղթել  
և ոչնչացնել թէ իրանց հակումները և թէ սովորութիւնները  
և այսպիսով փոխել միանգամայն իրանց բնաւորութիւնը,  
որովհետեւ բնաւորութիւն ասած բանը ոչ այլ ինչ է, եթէ  
ոչ ժառանգական (բնածին) և ստացական (սովորութիւններից  
փոխարկուած) հակումների մի կուտակութիւն: Աակայն սոյն  
երեսոյթները՝ այսինքն բնաւորութիւն փոխելու ընդունակու-  
թիւնը՝ տեսնում ենք առհասարակ և առօրեայ կեանքում, թէ և  
այս տեղ այդ գործը կատարվում է անհամեմատ երկար ժամա-  
նակում: Եւ իրաւ մարդկերանց բնաւորութիւնները դիտելով  
և քննելով հեշտութեամբ կարող ենք զանազանել բնական  
կամ բնածին բնաւորութիւնը ստաց ական ից կամ սեպհա-  
կան ջանքով մշակուած ից, առաջինում ժառանգական հա-  
կումներն են գերազանցում, երկրորդում ստացականները. կան  
մարդիկ որոնք ծնուելու օրից արդէն ունեցել են գեղեցիկ  
յատկութիւններ և լաւ լաւ հակումներ, և որոնք այս պատճա-  
ռով միշտ զգացել և զգում են մի ձգտում դէպ ի ամեն լաւ  
բան. բայց կան և միւս տեսակները, որոնք բոլոր իրանց կեան-  
քում մաքառում են իրանց բնածին բայց վաս ձգտումների  
հետ և փոքր առ փոքր յաղթելով նրանց, մշակում են իրանց

<sup>1</sup> Եւետ, ըստ Պուկասու, գ., իդ, 43:

մէջ և յատկացնում իրանց մի բարի, թէպէտ և արհեստական, բնաւորութիւն: Վռաջին տեսակ բնաւորութիւնները առաւել գրաւող են թուում մեզ, Նրանց համար այնքան բնական բան է բարի գործելը որ նրանք գրաւում են մեզ գործելու նոյն իսկ բնական հեշտութեամիլ և թեթևութեամիլ: Իսայց եթէ ցանկայինք անաչառ և արդարադատ լինել, ապա և գերազանցութեան պատկը պէտք է տայինք երկրորդ տեսակ բնաւորութիւններին, որոնք անխոնջ ջանքով եւ դառնագին ու տաժանելի մաքառումով յաղթել են իրանց բնածին վատ սովորութիւններին և, առաջնորդ ունենալով բարւոյ ձանաչողութիւնը, մշակել են իրանց մէջ բարի բարի կանոններ կենցաղապարութեան համար: Աօկրատեսեան այսպիսի բնաւորութիւնները արմատից իսկ կտրում հանում են չարը ոչ թէ միայն իրանց միջից այլ եւ գուցէ իրանց որդիկերանցից եւ թոռներից եւ այսպիսով մոցնում են բարութեան նոր նոր եւ կենդանի աղքիւրներ մարդկային կեանքի առարեղ:

Մինչդեռ կենդանի է մարդո, նա կարող է միշտ փոխուիլ և բարոյական անկման ամենախորը վհից բարձրանալ բարոյական կատարելութեան մինչ ամենավերին աստիճանը: Մարդկութեան այս համոզունքը քրիստոնէութեան պտուղն է, որ, ազատելով նրան ժառանգական մեղքից և հիններու անբողոքելի և անզերծանելի բարդից, տուեց նրան անձնական ազատութեան մեծ և կենսական սկզբունքը:

Իսկ որ ինչ վերաբերում է սովորութեան նշանակութեանը ուսում առնելու մէջ, այս այնքան պարզ է, որ աւելորդ է մինչև անգամ որ և իցէ երկարաբանութիւն: Զկայ մի այնպիսի գիտութիւն, որի մէջ սովորութիւնը գլխաւոր դեր ըսլինէր խաղում, օրինակի համար մանդալու, խօսելու, կարդալու, գրելու, հաշուելու, նկարելու, և այլն, և այլն գիտութիւնների մէջ: Մինչև անգամ ամենազարգացեալ գիտակցութիւն պահանջող գիտութիւնները, կաղ ի կաղ պէտք է գնային առանց սովորութիւնների, զորօրինակ, մաթեմատի

կայի մէջ սովորութիւնը չնշին դեր չէ խաղում. եթէ մեզ  
 հարկաւոր լինէր ամեն անդամ մտաբերել, թէ Ն անդամ Դ  
 հաւասար է 14-ին, ապա սաստիկ պէտք է խանգարէր այս  
 բանը մեղ մաթեմաթիկական հաշիւներ անելում. բայց սովո-  
 րութիւնը հասցրել է մեզ այն աստիճանի որ երկու ան-  
 դամ եօթը ասելիս, մեր լեզուն իսկոյն և եթ արտասանում  
 է, իսկ ձեռքը գրում տասնեւ չորս: Ամեն արտասանած խօս-  
 քի մէջ, բառ գրելիս ձեռքի արած ամեն շարժմունքի մէջ,  
 ամեն արուեստի մէջ սովորութիւնը իւր նշանաւոր մասն ունի.  
 անկարելի կը լինէր մեղ մեր մտքերը յայտնել, եթէ անդա-  
 դար հարկադրված լինէինք մտաբերելու, թէ ինչպէս պէտք է  
 շարժենք լեզուն և շրթունքները այս կամ այն գաղափարը  
 յայտնելու համար: Ամեներով պէտք է գրէինք մի չնշին  
 նամակ, եթէ ձեռքը ինքն իրան չը շարժուեր ամեն մի տառ  
 գրելիս, այլ պահանջէր մեզանից զանազան մտաբերութիւններ: Ծաէ մինչև որ աստիճանի են հասնում ձեռքի սովորու-  
 թիւնները (ունակութիւնները), գեղեցիկ օրինակ կարող է  
 լինել այն բանը, որ երբ մարդս մոռանում է, օրինակի հա-  
 մար, թէ այսինչ բառի մէջ ո՞ր տառը պէտք է գործածել,  
 «Ե» թէ «Լ», այն ժամանակ բաւական է շտապով և առանց  
 մտածելու գրել նոյն բառը և ձեռքը ինքն իրան կը վճռէ  
 մեղ այդ հարցը: Այսպիսի հաղարաւոր օրինակներ կարելի է  
 ցոյց տալ և բոլորն էլ այն եղանակացութեան կը բերեն, որ  
 եթէ մարդս ընդունակ չը լինէր սովորութիւններին, ապա և  
 կարող չէր լինի ոչ մի քայլ յառաջ գնալ իւր զարգացման  
 մէջ. որովհետև ամեն քայլափոխում նա պէտք է պատահէր  
 հաղթում են սովորութիւնները, ազատ կացուցանելով մեր  
 միտքը և կամքը նոր գործերի և նոր յաղթութիւնների հա-  
 մար: Տերենք էլի մի օրինակ, որ ցոյց է տալիս, թէ սովո-  
 րութիւնը հեշտացնում և թեթևացնում է մարդուս յառաջա-  
 դիմութեան ճանապարհը: Եթէ մարդս հարկադրուած լինէր

ամեն քայլափոխում այնքան ոյժ գործածել մանդալու սաստիկ գժուարութիւնները յաղթելու համար, որքան գործ է ածել նա երեխայութեան ժամանակ, ապա ի՞նչպէս կապուած և կաշկանդուած պէտք է լինէր նա, ուրեմն և ո՞րքան յետ պէտք է մնար նա իր յառաջադիմութեան մէջ, սովորութեան շնորհքն է միայն, որ նա ման է գալիս առանց նշանաբելու և զգալու այնպիսի գժուարութիւնները, որոնց հազիւ թէ կարող էր յաղթել անբան կենդանին, եթէ որ նա ի բնէ չունենար այդ ընդունակութիւնը։ Եհա ուրեմն ինչ պատճառաւ այն գաստիա բակութիւնը, որ անուշադիր թող նէր աշակերտներին օգտաւէտ սովորութիւններ հազորգելու հարցը և աշխատել նոցա մտաւորական զարգացման մասին միայն, կը զօկէր անշուշտ նոյն զարգացումը այն ուժեղ միջոցից, որ ներկայացնում են մեղ սովորութիւնները։

Անդիհացիք իրանց գաստիարակութեան մէջ առաջին տեղն ընծայում են լաւ լաւ սովորութիւններ հազորգելու խնդրին։ Կրթութեան հիմնարութիւնը, ասում են նոքա, սովորութեան ուժգնութեան մէջն է պարունակվում։ Եւ իրաւ, ինչպէս որ ուսումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գաղափարներու հազորգութիւն, նոյնպէս և կրթութիւնները լաւ սովորութիւններ յատկացնելն է, և քանի ուժեղ են արմատացնում մարդուս բնաւորութեան մէջ լաւ լաւ սովորութիւններ, նոյնքան հաստատահիմն է ենրա կրթութիւնը, և սրա վերաբերութեամբ գաստիարակի ձեռքին ուժեղ գործիք են ուսումնարանները, ուր սովորութեան հետ միատեղ ներգործում է և օրինակը։ «Եթէ սովորութիւնը», ասում է Շահկօնը, «այնքան իշխող է իւրաքանչիր անհատի վրայ առանձին, ապա ուրեմն անհամեմատ ուժեղ պէտք է լինի նրա իշխանութիւնը մարդուս վրայ, երբ նա կապակցուած է միւսների հետ ի մի ընկերութիւն, կամ հասարակութիւն, ինչպէս և զօրախումբերում, ուսումնարաններում, մենաստաններում այլ սոյնպիսի պայ-

մաններում»։ Այսպիսի պարագաներում օրինակը ինքը ուսուցանում է և ընթացք հաղորդում։ Ընկերակցութիւնը օգնում է և ոյժ տալի, նախանձաւորութիւնը գրգռում է և դրգում։ Վերջապէս և մեծարանքը աղնուացնում է հոգին և գեղեցիկ ձգտումներ հաղորդում, այնպէս որ՝ այս բոլոր բարեպատեհ պարագաներից ի միասին սովորութիւնը առաւել և առաւել ուժեղանում է և իր վերջին ծայրին հասնում։ Հասկանալի և ուղիղ է միանգամայն այս, որովհետև եթէ սովորութիւնը և օրինակը միատեղ և յօգուտ միմեանց են ներգործում, ապա և համարեա ոչ մի զօրութիւն կարող չէ մաքառել նրանց հետ։ Ահա ինչ պատճառաւ, օրինակ, այն կրթարանները, որոնք միշտ և անընդհատ հաստատ լինելով վաղօրօք որոշած իրանց համար մի ուղղութեանը և ոգույն և որոնք մի և նոյն ժամանակ անփոփոխելի են իրանց գործողութիւններում, աներկբայելի և հաստատուն իրանց պահանջմունքներում։ Բացի սրանից, համապատասխանում են իրանց սանիկների աղջային ընաւորութեանը, կեանքին և նրա կենսական պիտոյքներին ու պահանջմունքներին՝ այսպիսի կրթարանները, ասում ենք, կ'ունենան անշուշտ այն գաստիարակական ոյժը և ազգեցութիւնը, որ ունին Անգղիացիներու և Ամերիկացիներու և մասամբ Կերմանացիներու ուսումնարանները և որին զարմացած է մնացել ամբողջ Եւրոպան։

Ն. Ե. Սալամբէկեանց։

## ՅԵՒԵԼՈՒԾԾՈՅ Ի.

Խանաք շինելու տարազներ։

Օանաղան հայաբնակ տեղերը թանաքը դիւրութեամբ շինելու համար, առաջարկում ենք քանի մի տարազներ, տեխնիկական (արուեստական, արուեստի իմիք սեպհական) բառերի

ռուսերէն և ֆրանսզերէն թարգմանութիւնով, որ դիւրութեամբ կարելի լինի գնել թանաքի նիւթերը:

Երբ որ գրութեան միակ նպատակը կանոնաւոր և վայելուչ գրութեան ընտելանան է և երբ աշակերտելոց գործածական մելանը պիտի միմիայն լաւ սեաւ լինի; 2) գիւրագին, 3) նորա բիծը (աղտը) ձեռների և հագուստի վերայ գիւրութեամբ լուացուի և երբ աշակերտելոց գրածի երկար ժամանակ պահելու հարկաւորութիւն չկայ, սոյնպիսի նպատակի համար շատ գիւրագին և յարմար է յետագայ տարազով շնած մելանը:

Մի քառորդ վեգրօ ջրի մէջ խաւնել մի ֆունտ փոշիացրած ճանդան (le bois de sandal, сандалъ, սանդալ աղածը); եփել կաւէ ամանի մէջ (մանաւանդ լաւ է ջնարակած ամանը, չինուրով լեսած, посуда съ глазурью, verni), որը պէտք է ծածկել խփմամբ (խուփն, խփան; couvercle, крышка, по-крышка); յետոյ մղել (քամել) կամ շատ բարակ մաղով կամ կտաւով և աւելացնել մի զօլոտնիկ քրոմական թթուտ կալիոն (хромокислое кали, potassium chromique acide), խառնել այս բոլորը 10—15 րոպէ և թանաքը պատրաստ է: (Ժանաքը պիտի ածել հաղաղակների (бутылка, бouteille) մէջ և փակել գոճով (сургучъ, cire à cacheter).

Մի ֆունտ սանդալը գեղանցում (аптека) կարող է արժենալ 7 կոպէկ, մի զօլոտնիկ քրոմական թթուտուտ կալիոնը 2 կոպէկ:

Երբ գրիչը նոր է և առաջին անգամ են նորանով գրում, պիտի լեզուի լորձունքով (լորձն, լորձունք, թուք; слюня; saliva, bave) թանալ (թուքը քսել, mouiller, помочить).

**գղթոր** (чернильный орехъ, nois de galle) 9 **Փունտ:**  
**մեխակ** (гвоздика, ձագախոտ, girofle, clou de girofle)

**1/4 Փուտ:**

բոլորը միասին խոժուածե փոշիացնել և եփել 70 **Փունտ:**  
 եռած (եփ եկած) ջրի մէջ, լաւ զտել և յետոյ խառնել յետա-  
 դայ խառնուածի հետ.

**արաբիայի խէժ** (կոէզ; gomme arabique, arabi-  
 bine; аравийская камедь, вишневый клей, ра-  
 стительный клей, камедь, гумми) 2<sup>1/2</sup> **Փունտ:**  
**շաքար** 3 **Փունտ:**

**արջասապ կանաչ** (ծծլմրատ երկաթային, vitriol  
 vert, couperose verte, желтъзный купоросъ) 10 **Փունտ:**

**կապոյտ արջասապ** (ծծլմրատ պղնձոյ, sulfate de  
 cuivre, vitriol bleu, мѣдный купоросъ) 3/8 **Փունտ:**

Ա երոյիշեալ նիւթերը, իրար հետ խառնելուց յետոյ, 115  
 Փունտի չափ կը լինի, որը պիտի ածել բաց ամանի մէջ և բաց  
 պահել քանի մի օր, խառնելով բազմից:

3

**Լ ա պ ո յ տ մե լ ա ն:**

**Լ եղակ** (ивдиго, carmini, l'indigo) 1 լոտ; եռած, բայց  
 սառած ջուր 1/2 **Փունտ:** արաբիայի խէժ (ալուրալու կամ բա-  
 լու ծէբօ) 1 զօլոսնիկ:

Վ այս թանաքով միայն սագի գրիչով կարելի է գրել:

4

**Լ ա պ ո յ տ մե լ ա ն:**

**Ծերլինեան լազուրթի կապուտակ** (берлинская лазурь,  
 կապուտակ լազուրթի, ծովագոյն կապոյտ) 3 զօլոտնիկ; թըր-

**թոշատ** (oxalate, щавелокислая соль) 1 զօլօտնիկ; շատ մանր փոշիացրած, խառնել 14 լուս ջրի մէջ և աւելացնել յետոյ 1 զօլօտնիկ արաբիայի խէժ:

5

Կարմիր մելան:

Ա երառնել կարմրագեղ (կարմիր, карминъ, le carmin)  $\frac{1}{2}$  ունց և խառնել օշակային (աւշակային) ալկօլի (alcool, esprit d'ammoniac, нашатырный спиртъ) 15 ունցի հետ միասին (առանց եփելու); յետոյ աւելացնել 15 ունց հասարակ ջուր և  $1\frac{1}{2}$  ունց արաբիայի խէժ և բոլորը, առանց եփելու, միայն լաւ խառնել:

Օ անալզն թանաքների անուշաչութեան համար աւելացնում են քանի մի կաթիլ անուշոնք (parfum, духи).

Տարրաբանութիւն տեսական և արուեստական յօրինեաց ։ Արանուէլ Քաջունի: Հատոր 1, 2 եւ 3: Ա ենետիկ: 1870, 8-ծալ, էջ 336, 588 եւ 442 (Տարրաբանութեան հետ քաջածանօթ մեր երիտասարդներից լած եմ, որ այս շարագրութեան նիւթը պարունակում է իւրեան մէջ շատ հնացած և արգի գիտութիւնից հերքուած տեղեկութիւններ: Այնուամենայնիւ այս գիրքը կարող է օգուտ բերել մասնաւոր աշխատողներին իւր գիտութեան վերաբերեալ լեզուաւ և համառօտ տեխնիկական հայ-գաղղիաբէն բառարանով):

Հ Քաջունին, գ հատորի, էջ 338—342, հաղորդում է յետագայ տեղեկութիւնները.

Կ ազմութիւն սովորական թանաք:

ա.

Առ ի պատրաստել զսովորական թանաք, պարտ է եռացուցանել ժամն երիս,  $1\frac{1}{2}$  մասն գղթոր մանրեալ ընդ 15 մա-

սունս ջրոյ. և գնել այլ ջուր ի տեղի գոլորշացելոյն: Խռացուցանել զջուրն, և ունել յեռացման իբր ժամն երիս. և յետայնորդիկ առնուլ ի բաց, և թողուլ գնստել նիւթոյն, և ապամզել: Հետ մզելոյ զչեղանիմն, յաւելուլ ի վերայ նորա շման կռէզ, լուծեալ առանձինն ի ջուր գաղջ. ապա յաւելուլ 1 մասն ծծըմբատ երկաթական, և յաճախ ևս սակաւիկ մի ծծըմբատ պղնձոյ, լուծեալ առանձինն ի ջուր սակաւ: Խառնել յաճախ զչեղուկն, և գնել յանօթս բացս, որպէս զի թթուուկն երկաթային կարիցէ ծծել յօդոյ զթթուածին և փոխարկիլ ի թթուուկ երկաթական: Հեղուկն որ թխագոյն էր ի սկզբան, դառնայ հետզհետէ ի սեաւ կապուտակ: Պարտ է դադարեցուցանել զթթուուկացումն, յորժամ առնուցու հեղուկն զգոյն պատշաճ. և յայնժամ գնել ի շիշս, և փակել բարւոք զբերան նոցա: Ոճանաքն ի ժամ գործածութեանն ունի տակաւին բազում թթուուկ երկաթային, և հետքն զորս թողու ի վերայ թթոթոյ, են նախ բացագոյն, բայց ապա մըթագնին, ծծելով յօդոյ զթթուածին, որով դառնայ թթուուկն երկաթային յերկաթական: Ընտրելի են քան զկարի քաջաթուիս թանաքք այն թանաքք՝ որ սակաւիկ մի բացագոյն իցեն և սեանայցեն ի վերայ թղթոյ. զի առաջինքն չեն այնչափ հոսաննուուք:

Եւ քանզի գղթորն ծանրագին է, ոմանք փոխանակեն ըստ մասին ի տեղի նորա զաղտոր, զնդկափայտ և զմանբեալ կեղևս կաղնուոյ. և սակայն թանաքք որ պատրաստին սովիմբք՝ չեն այնչափ հոսաննուուք, և չունին գոյն գեղեցիկ: Պարծածութիւն գղթորի ի կազմութեան թանաքի ոչ անցանէ անդրքան զեօթնեւտասներորդ դար:

Բ.

Պահցուք աստ զայլ կրկին տարազս յօրինման թանաքի, որք են ըստ Շափթալի և ըստ Ուիպոքուրի:

Ըստ Շափթալի, պարտ է խառնել զերիր մասն տաշեղաց

Հնդկափայտի ընդ երկուս երիր մասունս մանրեալ գղթորի, և եռացուցանել իբր ժամն երկու ի քսանևհինդպատիկ ջուր ի կշիռ, փոխանակելով ի տեղի գոլորշացեալ ջրոյն այլ ջուր: Լուծանել առանձինն ի ջուր գաղջ զկուեզ, նոյնակս պատրաստել առանձինն և զլուծումն կրացեալ երկաթական ծծմբատի, որ ցուցանիցէ զ14° հեղուկաչափի Պոմեի, յորոյ վերայ յաւելու զծծըմբատ պղնձոյ իբր զերեքտասաներորդ մասն գղթորի: Խառնել վեց չափ ի խշցյէ գղթորի և հնդկափայտի ընդ չորս չափս խիժացեալ ջրոյ. հեղուկ ապա ի վերայ նորա չորս չափս ի լուծմանէ ծծմբատի երկաթոյ և խառնել զհեղուկն, որ իսկոյն առնու զգեղցիկ սեաւ գոյն: Եւ աւարտել զգործողութիւնն ըստ վերոյիշեալ եղանակի:

## 4.

## Տարազն Ուհպոքուրի այս է.

Պուր . . . . .	12	լիտր
Վղթոր հալցպի մանրեալ ի փոշի . . . . .	8	ունկի
Տաշեղք հնդկափայտի . . . . .	4	»
Ռծըմբատ երկաթոյ . . . . .	4	»
Կուղ . . . . .	3	»
Ռծըմբատ պղընձոյ . . . . .	1	»
Շաքար սպիտակ . . . . .	1	»
Ռծըմբատն պղընձոյ՝ որ վարի առ ի տալ դիւրահասութիւն թանաքի, ունի զայս անդիպութիւն վասն երկաթի գրչաց, կամ վասն այնոցիկ որ չիցեն ջնարակեալ, զի փաղացէ զերկաթ, երկաթն լուծանի ի մեջ թանաքի, փոխանակելով զպղինձ:		

Իռուսական լուծմունք որ մտանեն ի բաղկացութիւն թանաքի՝ այլայլին իւրովի: Իազում այն է զի ծածկին բորբոսիւ, և զնստուցանեն թանձր մրուր: Այլայլութիւնքս այսոքիկ յառաջ գան ի փոքրիկ աննշմարելի կենդանեաց, զորոց մարթ է զառաջս առնուլ յաւելլով սակաւ մի թոյն զօրաւոր: Առ այս

ի գործ ածին հասարակօրէն ուտի՛մ մետաղական և բազմաթիւու-  
ռուկ սնդկի:

Այժմեան սովորական թանաքք ջջնջին քլուաւ, թթու-  
ուտային գոլորշեօք, կալաքարային լուծմամբք, թրթընջա-  
կան թթուուտիւն, և այլն...:

գ.

**Կարմիր թանաք:**

Ըստ Ուիպոքուրի պատրաստի թանաքս այս այսպէս. պարտ  
է թրջել ի քացախ աւուրս երիս 100 գրամ շիկափայտ ի մանր  
կոտորս, ամբառնալ զջերմութիւն թրջածոյն մինչև ի 100°, և  
ունել այնպէս ժամ՝ մի, և ապա մղել: Ուծանել ի մղեալ  
հեղկին 12 գրամ կուզ, 12 գրամ շաքար, նոյնչափ և պաղ-  
լղել. յետ ցրտանալցն՝ դնել ի հագաղակս, և փակել գոճիւ:

Վարթ է ունել զկարմիր թանաք առաւել պայծառագոյն,  
եփելով զկնճաւոր որդանն ընդ աւշակի:

Ի վախճանի, մարթ է ունել քան զայս ընտիր թանաք կար-  
միր, լուծանելով զկարմիրն յաւշակ, և գոլորշացուցանելով զա-  
ռաւելեալ մասն աւշակի, և յաւելով սակաւիկ մի կուզ ի լու-  
ծումն:

ե.

**Թանաք կանաչ:**

Ըստ Կալափրոթի պատրաստի գեղեցիկ թանաք կանաչ,  
եռացուցանելով զիսառնուրգ 2 մասանց ժանգառի, 1 մասին սե-  
րի գինեմրոյ, և 8 մասանց ջրոյ, մինչև հասանիցէ ի կէս. և  
յայնժամ մղել կտաւով, և դնել ի հագաղակս:

զ.

**Թանաք դեղին:**

Ուծանել ի 500 գրամ ջուր եռացեալ զ15 գրամ պաղ-

լեղ, և յաւելու 125 գրամ հատ Վալինյոնի, և ունել յեռացման ժամ մի, և մղել զշեղանիւթն կտաւով, և լուծանելի նմա 4 գրամ կոէզ:

Փոխանակ հատի Վալինյոնի մարթ է ի գործ ածել զծոթրին՝ նուազ չափով, որ յօրինէ թանաք գեղեցիկ դեղին:

**Տարազ**, *ուց*; forme, образъ, видъ, форма; façon, обдѣлка, покрой; manière, образъ, манера; mode, мода; meuble, мебель, домашніе уборы; formule, формула, образецъ, рецептъ; **Տարազ**, *գործ տարազու*; oeuvre artistique, артистическое, мастерское произведение; *տարազ լուսից*; style, слогъ, стиль.

**Անրահաշուական տարազ**; formule algébrique; формула алгебраическая.

**Տարազագործ**, *աց*; artiste, артистъ, мастеръ своего дѣла; ouvrier quis travaille la laine, шерстопрядъ.

**Տարազագործութիւն**; action de travailler à la laine; производство изъ шерсти; métier de fileuse, прядильное ремесло, прядильное производство.

$\text{1 լիոն} = \{8 \text{ շոֆ} = 1,229 \text{ գեկալիտր} = 2,707 \text{ գալոն}$   
 $\text{1 լիոն} = \{10 \text{ կրուժկա} = 12,290 \text{ լիտր} = 10,828 \text{ կուրտ}$   
 $\text{բօշկա} = 40 \text{ լիոն} = 4,916 \text{ գեկալիտր} = 0,859 \text{ պիու}$

**Պուդ** = 40 **Քունտ** = 16,380 **Կիլոգրամ** = 36,113 pds avoir du pois.

**Գունտ** = 3 **զօլոսնիկ** = 12,797 գրամ = 0,451 ounce.  
**Զօլոսնիկ** = 96 տոլէի = 4,266 գրամ = 2,408 drams.

**Ունց** = 2 **լոտ** =  $\frac{12}{16}$  մի **Փունտի**:

**Բժշկական մի Փունտը** = 12 **ունց** = 96 գրամ = 288

**Ակրուպուլ** = 5760 գրան = 84 զօլոսնիկ; **ասել է**, **թէ** 8 բը-  
ժշկական ֆունտը = 7 հասարակ ֆունտին:

**Աղանդիթ**; liquide; жидкай, текучий.

**Առանուած**; coulant, fluide; текучий, жидкай, проточный.

**Աղալ**; tannin, tanin; танинъ, дубильное вещество.

**Գղթոր, գղտոր**; Noix de galle; чернильный оръшекъ.

**Գղթորական թթուուս**; gallique acide; дубильная или чернильно-оръшковая кислота.

**Երկաթական թթուուս**; acide ferrique; желѣзная кислота.

**Կոէզ, խէժ արաբացի**; gomme arabique, arabine; аравийская камедь (растительный клей, гумми).

**Վոլորչի**; vapeur; паръ;

**Վոլորշանել**; s'évaporer; испаряться, улетучиваться, выдыхаться.

**Ողել**; filtrer, distiller; цѣдить, процѣживать.

**Վաղչ**; tiède; тепловатый (*նելա*):

**Օ՞ծլիմաս**; sulfate; сѣрнокислая соль.

**Օ՞ծլիմաս երկաթական**

**Օ՞ծլիմաս պղնձոյ**

**Օ՞ծլուածին**; oxigène, oxygène; кислородъ, кислотворъ.

**Օ՞ծլուուկ**; oxide, oxyde; окись.

**Օ՞ծլուուս**; acide; кислота.

**Օսուխ**; brun, noir; темный, черный, смуглый.

**Օժուուկացում**; oxidation; окисление, окисаніе.

**Աղտոր**; sumac; еумахъ, кожевенное дерево.

**Աղկափայտ**; bois de campêche; кампешевое дерево.

**Տարազ**; formule, façon, forme; рецептъ, формула, форма, фасонъ.

**Կրացուցանել**; calciner; пережигать, обжигать, кальцинировать.

**Խաշոյ, խաշու, արգանակ**; bouillon; наварь, отваръ, бульонъ.

**Խոխ**; caillou; кремень, голышъ, булыжникъ.

**Զնարակ**; sandaraque, vernis; сандаракъ, можжевельная смола, мурава, лакъ, глазурь.

**Զնարակել**; vernir; лакировать, покрывать лакомъ.

**Զնար**; cithare; цитра (музыкальный инструментъ).

**Փաղաղել**; dévorer, consumer; съѣдать, снѣдать, истреблять.

**Բորբոս**; mois, moisissure; плѣсень, плѣснь; заплѣсневѣлый.

**Մրուր**; dépôt, sédiment; положеніе, поставленіе, депо; хранилище, осадокъ, отстой, подонки.

**Գինեմրուր**; tartre; винный камень, тартръ.

**Աւտիչ**; sublimé corrosif; ъдкая ртуть.

**Պարզածանդըկի շղի**; sublimé; сулема, хлористая ртуть.

**Բազմաթթուուկ**; polyoxide.

**Անդիկ**; mercure; ртуть.

**Ազդակ**; actif, agent; дѣйствующій, дѣятельный; дѣйствующая сила, агентъ.

**Քլոր, քլոռ**, хлоръ; chlore; хлоръ.

**Կալաքար, կալէքար**; alcali; щёлочь, щелочная соль.

**Կալի**; potasse; поташъ.

**Կալիոն**; potassium; калий.

**Յօրթընջական թթուուս**; acide oxalique; щавельная кислота.

**Յօրթընջառ**; oxolate; щавелокислая соль.

**Յօրթընջուկ**; oseille; щавель.

**Վլկոհոլ կամ ոգի գինւոյ**; alcool, alcohol, esprit du vin; алкоголь, безводный спиртъ, извинъ.

**Գորշկ**; pot, bocal, mine (mesure); бокалъ, горшокъ, мина (древняя мѣра и монета).

**Ստուար** =  $\frac{1}{8}$  ունկույ (ունկի); once; унцъ.

**Խորանարդ;** cube; кубъ.

**Լեղակ;** indigo, индиго, синяя или кубовая краска.

**Ձրդել;** délayer, mouiller, tremper, macérer, pétrir; разводить, разжижать, мочить, намочить, вымочить, размочить, смачивать, орошать, промачивать.

**Վաֆոյց;** gélatine; желатина, студенистое вещество.

**Վաֆուցային նիւթ;** gélatineux; студенистый.

**Վածուցումն;** viscosité; липкость, вязкость, клейкость.

**Վափուր;** camphre, stéaroptène; камфара, камфора.

**Ըիկափայտ (Կամ փայտ (Իրազելի));** bois de Brésil; бразильское дерево.

**Ըիկաքար (Կամ պաղլեղկատ մագնեսիայ);** spinelle; шпинель, шпинелевый рубинъ.

**Ըիկիարի (Կամ շեկլսարի);** orcanette; красный корень (растеніе).

**Հեղուկ;** liqueur; жидкость.

**Հեղուկ տասնորդ;** liqueur décime.

**Պաղլեղ, արզն, շպլեղ (Կրկնակ ծծըմբատ պաղլեղկի և կալուց) alun; квасцы (շեր):**

**Պաղլեղ քրոմի;** alun de chrom.

**Պաղլեղածին;** aluminium; алюминий, глиній.

**Պաղլեղաքար;** alunite; квасцовыи камень.

**Պաղլեղիկ (Թթվուուկ պաղլեղածնի);** alumine; глиноzemъ, глиній.

**Պաղլեղկատ;** aluminate; алюминатъ, соль въ которой преобладаетъ глиноzemъ.

**Պաղլեղումն, արզնումն;** alunage; квасцованиe, моченіе въ квасцовой водѣ.

**Վաղաղակ;** bouteille; бутылка; пузырь на водѣ.

**Վաղաղակ, աց;** dame-jeanne; большая бутыль.

**Վոռճ;** cire à cacheter; сургучъ.

**Վոռճի լեէժ;** laque, gomme laque; лакъ, гумилакъ.

**Որդան,** **որդան կարմիր;** kermès, écarlate; чермецъ, багрецъ, шарлахъ, червленъ; graine d'écarlate; кошениль, **որդան կնձաւոր:**

**Որդան հանքային** (**ծծլբուկ ծարրոյ բաղադրեալ**); kermès minéral, poudre des chartreux; минеральный кермесь.

**Որդան կնձաւոր;** cochenille; кошениль.

**Որթաքար;** orthite.

**Աւշակ;** ammoniaque; аммоніакъ.

**Աւշակ աղային** (**քլորաջրատ աւշակի**); sel ammoniac; нашатырь.

**Աւշակ գազեղէն;** gaz ammoniac.

**Աւշակ հեղանիւթ;** ammoniaque liquide.

**Աւշակածին;** ammonium; аммоній; четыреводородистый азотъ.

**Ըիլ;** lymphé; пасока; сокъ.

**Ճանդառ;** vert-de-gris; verdet; ярь-мѣдянка.

**Սեր;** crème; сливки, сметана, кремъ (кушанье); fig, все лучшее, отборное; crème de riz, каша изъ сарачинского пшена.

**Սեր գինամրրոյ;** crème de tartre; креморъ-тартаръ.

**Համ Ավինիոնի;** grain d'Avignon; жёлтая зерна.

**Օռոթոր,** ոյ; **ծոթորին,** **որնոյ;** **ծոթորին,** **ընոյ;** serpolet; bogородская трава.

ՅԵՒՆԻԱՆԻ ԳՎ

Ենտառների ստիպողական հարկաւորութիւնը:

Խելքին (կամ հասկացողին) մին, յիւմարին  
քանի կուղես (կամ հաղար):  
Խջ քացուցը բեղամալ մի' ըլնիլ:  
Ըսնը քանի քար գցէս, Էնքան կհաչայ:  
Ըսնը կը հաշայ, քարավանը կը քօչայ  
(կ'երթայ):

Ո՞եր ապագայ, դալոց սերունդի ապրուստի համար, մեր  
բնակութեան երկրի բարօրութեան և օդի մեր վերայ առողջա-  
րար ներգործութեան համար ամեն ամեն և ստիպողական  
նշան ակութիւն ունի ծառերի և անտառների պա-  
հելը, տնկելը, ցանելը և բազմացնելը, մանա-  
ւանդ այն ամենայն հայաբնակ դիւների և քա-  
ղաքների չորս կողմը, որոնք այժմ մերկացած են  
երկրի այս ամենաթանկագին զարդից և մեր կեան-  
քի ամենահարկաւոր պիտոյքից, — որպէս որ ծա-  
ռերը և անտառներն են:

Ի՞ւրաւոր գիտնական քննութիւններով, զննութիւննե-  
րով և փորձերով ապացուցուած է, թէ ուր որ անտառները  
պակասել են, այն տեղ ամառ ժամանակ յաճախանում են կայ-  
ծակները; ծառերի պակասութիւնից կամ նոցա չը լինելուց,  
շոքը առաւել է տաքացնում գետինը, աւելացնում և անտա-  
ռելի դարձնում շոգը, չորացնում երկիրը և ոչչացնում խո-  
տեղենը; ձմեռ, ցուրտ եղանակին, գետինը առաւել է սառում  
և աւելացնում ցուրտը:

Անտառները օդին առողջարար նիւթ են տալիս; պահպա-  
նում են երկիրը հողմի սաստկութիւնից: Ոյն պատճառաւ,  
եթէ անտառներ տնկեն, ցանեն և մեծացնեն երկրի այն կող-

մերը, որ տեղից որ վեասակար հողմ (քամի) է փչում (գալիս), բաւականին կը ապահովացնեն երկրի բնակիչներին նոյն հողմի վեասակար ներգործութիւնից, որովհետև անտառները. մի կողմից, արգելում են, որմի (պատի) պէս կապում քամու առաջը; միւս կողմանէ, տարածելով օդի մէջ թթուածինը, օդի մաքրութեանը. մեծապէս նպաստամատոյց են լինում: Այս պատճառաւ լուսաւորեալ ազգերը ամենայն կերպ տնկում, ցանում, մեծացնում և պահպանում են անտառները թէ ընդհանրապէս և թէ, մասնաւորապէս, երկրի այն կողմերում, որ տեղից կար վեասակար, կամ ցուրտ, կամ սաստիկ, կամ յարատե և ձանձրացուցիչ քամի է փչում; ընդհանրապէս, ուր որ երկիրը չորեք կողմը պատած է անտառներով և կամենում են օդին շարժողութիւն տալ, ոչնչացնում են անտառները մի երկու մղնն լայնութեամբ, ասես թէ անտառների մէջ փողոցներ (քուչայ) են բաց անում այն կողմից, որ տեղից առողջարար և զովացուցիչ քամի կարող է փչել:

Վնասառների բազմութիւնը մեծապէս կակղացնում, մեղմացնում է ձմեռան ցուրտը և երկրի թէ պտղաւէտութեան և թէ առաւել ազնիւ և քնքոյշ տունկերի լինելուն նպաստամատոյց լինում; իսկ, ամառային ժամանակ, թեթևացնելով արեգակնան ջերմութեան ներգործութիւնը, պահպանում է հողմի խոնաւութիւնը, չէ ցամաքացնում գետինը և օդի բարեխառնութեան ու երկրի կրկին պտղաւէտութեան պատճառ է լինում:

Այս երկիրները, որ տեղ կան շատ անտառներ, բացի ամառային մեղմութիւնից, անձրւեներն ել անպակաս են; իսկ այն տեղերը, ուր սպառել են անտառները, ամառային անձրւեները սաստիկ պակասում են և, երբ որ գալիս են, հեղինեղի նման սաստիկ և վեասակար են լինում; ասել է թէ. ամառային անձրւեները յաճախացնելու և նոցա գալը թեթևացնելու համար, որ վեասակար հետևանքներ չ'ունենան, —պէտք է ցանել; տընկել անտառներ և նոցա թիւը բազմացնել, սկսելով աղբիւրների, առուների, գետերի և ծովերից մի երկու, չըւրս,

Հինգ... շար և յետոյ շարունակաբար լայնացնելով դէպ ի երկրի խորութիւնը, սկզբից առաջի երեք շարի ամեն մի ծառի չորս կողմը նորան ըրջապատող միւս ծառերից, ամեն մի կողմից վեց քայլ տարակացութեամբ; 4—5 շարերի ծառերը միմեանցից ուժը կամ տասը քայլ տարակացութեամբ; 6—8 և այլ շարերի ամեն մի ծառը միւսերից 15—20 քայլ տարակացութեամբ, — որ ծառերի զարգանալուն ազատ տեղ լինի... և այլն... որպէս այս հարցին վերաբերեալ գիտութիւնը պահանջում է: Ասատիկ թշնամի է նորաբոյս տունկերի և ծառերի համար այծը, վասն որոյ ուր որ կամենում են նոր արմատներ տնկել կամ նոցա թիւը բազմացնել, այն տեղ այծ պահելու չէ:

Վայսպէս, անտառների բազմանալը աւելացնում է անձրեկի քանակութիւնը երկրի մէջ; տալիս է ջուր աղբիւրներին, գետերին, առուներին; սակաւացնում և թեթևացնում հեղեղները և մրրիկները, մեղմացնում և մաքրում օդը, բազմապատկում երկրի պտղաւէտութիւնը, պարարտացնում հողը; Նպաստամատոյց լինում ժողովրդի առողջութեանը, սակաւացնում հիւանդների և մեռելոց թիւը, մեղմացնում ցուրտը ու շոգը... և այլն... սորա նման օգտաւէտ հետևանքներ է բերում:

Վայն բարձր տեղերը, ուր եղել են անտառներ և նոցա մէջ զանազան աղբիւրներ և առուներ, անտառների անհետանալուց, սպառելոց յետոյ, կորուսուել են ևս ջրի աղբիւրները; բայց երբ մի և նոյն տեղերը 20—40 տարուայ մէջ նոր անտառներ են տնկել, ցանել, մեծացրել — նորից երևել են ջրի աղբիւրները և, համարեա թէ, միշտ մի և նոյն տեղերը ուր որ նոքա առաջ կային: Վայն երկիրները, որ տեղ անխնայաբար անտառները կտրում են, ոչնչացնում, այն երկրի ոչ է միայն աղբիւրների, այլ և լճերի և գետերի ջրերն էլ պակասում են և եղանակը (կլիման) փոխվում դէպ ի վատ:

Վնտառների պակասելու, անհետանալու պատճառները զանազան են, զորօրինակ, այստամի ժողովուրդը միշտ կտրել

է փայտը շինութեան, վառարանի և այլ պիտոյից համար առանց որ և իցէ խնայութեան, անդիտակցաբար; չը թողնելով, տեղ տեղ, սերմի համար, քանի մի ծառ, որ նոցանից նոր ծառեր բուսանին; պատրաստութիւն չին տեսել, ոչնչացրած ծառերի տեղ, ցանել նորերը: «Ամանապէս սաստկապէս պակասացրել են այստանի անտառները զանազան և շարունակեղած պատերազմները:

Անտառների բազմութիւնը ունի այլ ևս փրկարար ներգործութիւն երկրի և ժողովրդեան համար. ուր որ կան բաւականին անտառներ, այն տեղ նոցած ծառերը շատ թեթեացնում են, արգելք են լինում ձիւնի հալած և յանկարծակի ու սատոիկ անձրեների ջրերու արագ և յանկարծակի հոսմունքին և այս կերպ ազատում երկիրը, քաղաքները և գիւղերը հեղշեղ ներից, ջրի սաստիկ և յանկարծակի վնասակար հոսմունքից և աւերակից, որոնք յաճախ լինում են անապատ, անտառից մերկացած տեղերը: Եթէ, օրինակի համար, Տիֆլիսու չորս կողմերը բարձր, լեռնոտ տեղերի անտառները մնային, կամ նորից անկէին քաղաքի չօրս կողմը 5—10 մղոն լայնութեամբ անտառներ, այն ժամանակ Տիֆլիսը և ամենայն նորա գրութեան մէջ գտնուող քաղաքները ազատ կը լինէին անձրեսի այն սաստիկ քանակութեամբ և յանկարծակի եկող հեղեղներից, որոնք, ժամանակ առ ժամանակ, այնքան վնաս են տալիս ժողովրդեան և երկրին: Մենք էլ ոչինչ չենք ասում, թէ ոքան պիտի բարելաւանայ օգը, երբ որ քաղաքը անտառներով շրջապատուի, մանաւանդ օգը առաւել մաքրող և առողջարար անող ծառերով: Անտառը, բաց ի վերայիշեալից, իւր տերեւներով պարարտացնում է հողը, աւելացնում նորա պտղաւշտութիւնը; իւր տունկերով և արմատներով ամրացնում, պահպանում է հողի, երկրի արտաքին ձեր, մանաւանդ լեռնոտ տեղը; պահպանում և արգելք է լինում, որ անձրեային ջուրը և հողմը չը գլորեն գեպ ի վայր, գեպ ի գաշտերը լեռնոտ,

բարձր տեղերի հողը և քարերը; ամրացնում, պահպանում է գետերի, ջրառավակների եղերքը, ... և այլն...:

Տայց որքան առաւել ևս հարկաւոր են լինելու մեր գալոց, ապագայ սերունդի հոմար անտառները տուն շնելու համար, զանազան գործիների, վառարանների և այլ մարդկային կենաց պիտոյից համար:

Ասոկանալի է ուրեմն, թէ, մահու և կեանքի հարցի պէս, ստիպողական հարկաւորութիւն պիտի զգանք մեր համար — ամենայն կերպ և ամենայն միջոցներով աշխատել, որ ամենայն գիւղացիք, որքան կարող են շատ անտառներ տնկեն, ցանեն, մեծացնեն, մանաւանդ գիւղերի չորս կողմը, լեռնոտ և բարձր տեղերը, աղբերների, ջրառավակների, առուների, ջրի խողովակների (արխերի), գետերի և լճերի եղերքին: Այս հարցին մասնաւորապէս տեղեակ ուսումն ստացած աղգայինք մեծ ծառայութիւն արած կը լինէին աղգին և երկրի բոլոր բնակիչներին եթէ առանձին հատուածներով օրագրերի մէջ, բրօշերներով և հրագարակական ընթերցանութիւններով այս հարցի մասին հիմնաւոր տեղեկութիւններ տարածէին աղգի գոնեա կարգացողների մէջ, ցոյց տալով ևս հայերէն, ոռւսերէն և գաղղիարէն գրագիտական ընտիր աղբերները:

Եթէ, օրինակի համար, մի գիւղացի գերգաստան հինգ անձերէ բաղկացեալ, ամեն մինը նոցանից տարին 10—15 ծառ տնկելու լինի, 2—3 տարիից յետոյ կ'ունենան մի փոքրիկ բայց պատուական զբօնալու, երեխայոց խաղալու և մաքուր օդ ծծելու տեղ; 5—10 տարիից յետոյ բաւականին մեծ անտառ, որովհետեւ ծառերն ինքեանք էլ կը բազմանան և վառարանի համար բաւականին ցախ և գրաստի համար խոտ (այծերը, կովի ու եղը և ձին, նոր անտառին շատ վեստ են) կը բերեն; իսկ 25—30 տարուց յետոյ 20—25 հազար ծառից բաղկացած անտառ կը լինի, որը կարող է արժենալ 30 մինչև 50 հազար րուբլի:

Վասն որպէս բոլոր վերոյիշեալ պատճառներով և, մասնա-

сопрацѣи, оѣти мѣаѣропуѣѣкаи համար, թող ամենայն հայ, որ-  
քան նորա տեղը ներում է, զանապան ծառեր տնկէ իւր սրահի  
(բակում) մէջ, փողոցներում, իւր գաշտի սահմանների չորս  
կողմը; ծաղկներով զարդարէ իւր բոլոր սենակները (բաց ի  
ննջարանից, ուր ոչինչ տունկ պահելու չէ գիշեր ժամանակ),  
պատշգամները, սրահը, այդիները և գաշտերը, մանաւանդ ուր  
կայ ջուր; աշխատէ ամենամեծ մաքրութիւն պահել իւր չորս  
կողմը — սենեակի, սրահի, գետերի և աղբիւրների եղերքի,  
փողոցի, մանաւանդ արտաքնոցների և քաղաքի խողովակների  
մէջ; գրաստների և արտաքնոցների աղբը հետու տեղ տանէ և  
նոցանով պարարտացնէ գաշտերը... և այլն...:

Հայց, կատարելով վերոյիշեալը, մարդս պէտք է. իւր  
մարմինն էլ որքան կարելի է միշտ մաքրուր պահէ; եթէ կարող  
է, ամենայն օր պիտի կամ աւաղանի մէջ լողանայ (առուների,  
աղբիւրների անցած ձանապարհին փայտէ մեծ աւաղաններ գը-  
նեն, այտակին աւալ; նոյնը շնորհ գետերի եղերքին; տան  
սրահում ջրորին կից); լուացքը յաճախ փոխէ, մանաւանդ  
զանկապանները (գուրեւք, ջորաք)... և այլն... ինչպէս ազգու-  
կերպիւ ապացուցանում և մեկնում է առողջաբանութեան գի-  
տութիւնը, որի հետ մեր ժողովրդեանը մօտապէս ծանօթա-  
ցնելը առաւելապէս վայել է մեր ուսումն առած և բանիմաց  
բժիշկներին:

Այս մասին ոուսերէն գիտողների ուշագրութիւնը գար-  
ձնում ենք երկու յետագայ գրեանց վերայ:

Популярная гигиена, К. Реклама. Настольная книга  
для сохранения здоровья и рабочей силы въ народѣ.  
Съ приложениемъ «Дѣтской гигиены», соч. д-ра М. С.  
Зеленского, и вступит. ст. В. О. Португалова; «Без-  
предѣльность гигиены». Изд. третье. Ц. 2 р. безъ пе-  
рес. Съ перес. 2 р. 60 к.

Уроки элементарной физиологии, Томаса Гексли  
Издание второе. Перев. съ англійскаго, съ предисло-

віемъ Д. И. Писарева, около 100 рисунковъ. Цѣна  
безъ перес. 1 р. Съ перес. 1 40 к.

— аյերէն, կօմբ'ի «Խնամատարութիւն երեխայոց» գրքի  
վերայ:

### ՅԵՒԵԼՈՒԾԸ Գ:

Յ առաջաբանի եւ վերջաբանի տեղ:

Տիրապետութիւնը գործունեայ և  
զարգացած մտկին է պատկանում:

Ես հայոց ազգին մէկ բան եմ ուզում,  
Եւ այդ մէկ բանն է Հիմնաւոր  
ուսում:

Մերայնոց մէջ հաղեւ չէ լսել, թէ այս կամ այն ազգ  
մեղ չէ սիրում, այս կամ այն կառաւարութիւնը մեղ յառաջ  
չէ տանում և այլ այսպիսի խօսուածներ, դատողութիւններ...  
և այլն...

Մենք կարծում ենք, որ մեղ սիրել և յարգել տալը, մեր  
յառաջ գնալը, հարստանեալը, մեր ամենայն բարոյական և իրա-  
կան բարեաց հասանելը ըստ մեծի մասին մեղանից է  
կախուած:

Եթէ մենք, մեր ամենամեծից մինչև ամենափոքրը —, իրա-  
պէս սիրենք և յարգենք մեր լեզուն ու ազգութիւնը, վար-  
վենք միշտ ճշմարտապէս, յարգելով թէ մեր անձնա-  
կան և թէ այլոց — մեծից մինչև փոքրի — մարդկային (իբրև  
Աստուծոյ պատկեր) պատիւը..., անկարելի է որ ամենայն  
մեղ տեսանող և ճանաչող մեղ չը յարգէ, անկարելի է թէ  
օտարը չը տարածէ իւր ազգայնոց մէջ յարգանք առ մերազ-  
նեալք:

Անենք գիտենք, որ Ոստումիայում, այժմեան օրինասկը լիայսեր օրօք, ոչ ոք — կոմս, իշխան, հարուստ, եպիսկոպոս.... և այլն.... իրաւունք չունի անպատիւ խօսքերով վարվել յետին աղքատի հետ; ոչ մի գաւռառապետ, զօրապետ, խաղաղ ժամանակի, ոչինչ գան, ոչինչ պատիժ, առանց դատաստանական վճռի չէ կարող տալ վերջին ռամփկին, գիւղացուն կամ աղքատին...; եթէ մենք տարածենք մեզ արքայից տուած իրաւանց և պարտաւորութեանց գիտութիւնը և նոցա կատարելու, իրագործի լու կերպը ժողովրդի մէջ, — նոցանից բոլորը կը կարողանան հաստատութեամբ ընդդիմանալ իւրեան իրաւանց որ և իցէ կողմից և որ և իցէ հարստահարութեան կամ անիրաւութեան դէմ.... և այլն....:

Եթէ մեր երիտասարդութիւնը, — մանաւանդ համալսարանական և այլ բարձր ուսումն ստացողները, —, աշխատեն իրական, ապահով և անկախ ապագայ պատրաստել իւրեանց և բոլոր ազգի գործունէութեան համար և ամենը իւր մասնաւոր գործի և պարապմունքների մէջ ամենալաւ վարպետը լինի, այն ժամանակ թէ բարեկամ, թէ չը բարեկամ, կամայ ակամայ, կը դիմեն դէպ ի սոյնպիսի հայերը: Անենք պիտի աշխատենք, որ օտարը կամայ ակամայ կարօտի մեր հայերին: (Օրինակի համար, եթէ մի քաղաքի ամենահմուտ, կատարեալ ուսումնական, մանկաբարձ բժիշկները (accoucheur, акушеръ), վիրաբոյժ բժիշկները (chirurgien, хирургъ), ներքին հիւանդաւթիւնների բժիշկները, արդարավաճառ և ամենավարպետ կօշկակարները, գերձակները, հացաթուինները, զինագործները, մեքենայագործները, այգեպանները... և այլն... հայերը լինին և նոքա միշտ շարժին պատուասիրապէս, ճշմարտութեամբ... նոյն քաղաքի և մերձակայ բոլոր թէ հայ, թէ օտարազգի, ծանօթ թէ անծանօթ, բարեկամ թէ չը բարեկամ կամայ ակամայ դէպ ի նոցա կը դիմեն, նոցա կը հարստացնին, նոցանից կախում կ'ունենան և վերոյիշեալի պէս հայերը մեծ

Ներգործութիւն կ'ունենան ամենայն գործոց մէջ և մեծ ձեռնատութիւն կարող են անել թէ ամենայն մարդու և թէ, մասնաւորապէս, մերայնոց:

Եթէ հասարակաց և մասնաւոր տօնախմբութեանց և պարահանդէսների մէջ ամենալաւ վարպետ գաշնամուր (պիտիո), և այլ երաժշտական գործի զարկողը (ածողը, չալողը) հայուհի և հայ լինին, եթէ ամենալաւ և ամենակատար պարեկողները (վալս, մազուրկա (լեհացու պէս), պօլկա, կադրիլ, լանսիի) հայեր և հայուհիք լինին, նոյն հանդիսին ամեն ներկայ գտնվողները գէպ ի նոցա կը զիմեն...: Եթէ զինաշարժութեան, զինամարզութեան, մարմնամարզութեան, հրաձգութեան (հրանետութեան), ձինստելու, լոլ տալու, և այլ մրցութեանց ու հանդէսների մէջ հայ լինի առաջին, նորան կը ընծայեն առաջին պրիզը (մրցանակ, պարգե), նրան կը աշխատին նմանիլ, նորանից դաս կառնուն... և այլն...: Եթէ հայոց մէջ սովորութիւն դառնայ վարուիլ ամենի հետ այնպէս, որ ամենքն էլ կամայ ակամայ յարգանօք վարվին հայի հետ; եթէ հայըն միշտ և յայտնապէս արհամարհանք ցոյց տար ամենայն անարդար և վնասակար մարդուն; եթէ հայըն յայտնապէս արհամարհէր, չը պատուէր, ոչինչ բարեկամութիւն չ'անէր, ոչինչ հրաւէր ոչ ինքը աներ և ոչ ընդունէր այն հայ մարդուց և նորա բոլոր գերդաստանի անդամներից (որպէս զի տուաւել զգայ նա և բոլոր նորա տունը), որ անօրէն և անարդար է վարուել որ և իցէ իւրեանից թոյլ և անզօր անձանց հետ; զօկել, կողոպտել է նոցա բարին, մանաւանդ ընկերին և նորա որբերին; իւր ստորագրեալինը; մատնողութեամբ իւր բարեկամի, աղգակցի, կեղտոտ և վատ ճանապարհներով առաջ է գնացել, ձեռք է բերել որ և իցէ աստիճան, արտօնութիւն, գանձ... և այլն...; եթէ հայ ժողովուրդը միշտ աշխատէ ամենայն կերպ պահպանել և օգնել որբերին և այրիներին, մասաւանդ որոնց հայրերը հայ հասարակութեան և աղջի համար

աշխատասէր և հաւատարիմ մշակ են եղել<sup>1</sup>; եթէ հայն խօսի  
մեծի և ամենի հետ քաղաքավարութեամբ և համեստութեամբ,  
բայց առանց որ իցէ ստրկական փծուն (կեղտոտ) խոնարհութեան,  
շողոքորթութեան, բայց ոչ առանց մեծ զգուշութեան; եթէ  
հայն երկրորդ անգամ բարե չտայ այն մարդուն, որ նորա բա-  
րեին համեմատ քաղաքավարի բարե չէ տուել; եթէ հայն աշ-  
խատէ հասկացնել ժողովրդին, նորան տէրութիւնից շնորհած  
բոլոր իրաւունքները և պարտաւորութիւնները և նոցա ամենա-  
ճիշդ և հաւատարմութեամբ ու ազնւութեամբ կատարելու եղա-  
նակը; եթէ ամեն մի քաղաքի և գիւղի հայերը, գիտենալով և  
ճշգութեամբ կատարելով այս բոլորը, ոչինչ մինչև անգամ՝  
մի ամենափոքր որ և իցէ հային արած անիրաւութեան դէմ  
կ'անգնին, կառաւարութեան և դատաստանի դիմեն, լաւ հաս-  
կանալով որ մասնաւորի ապահովութեան մէջ հասարակաց ապա-  
հովութիւնն է պարունակուած; եթէ հայն լաւ համոզուի, որ  
ոչ մի հարուստ իւր հարստութիւնը այլոց չէ բաժանելու; եթէ  
ամենայն հայ լաւ հասկանայ մարդկային այն յարգութիւ-  
նը, որ մի որ և իցէ անձն. ստորագրեալ, վաճառական, գիւ-  
ղացի... միւսի առաջն իւր գլուխը, իւր պատիւր որքան չը  
նուազեցնէ, այնքան առաւել յարգանք և կշիռ կ'ունենայ;  
եթէ մենք աշխատէինք մեր ամենայն պակասութիւնները ուղ-  
ղելու գործնական միջոցներ ձեռք բերելու ճանապարհները  
ժողովրդին ուսուցանել, սկսելով ժողովրդի սահպողական ան-

<sup>1</sup> Խնչու համար ունեռոր հայ գպրոցները առանձին որդեգիր-  
ներ չեն պատրաստում, չեն նշանակում ի պատիւ, ի յիշատակ  
և ի նշան երախտահատուցման մեծին Արևիթարայ աբբայի,  
Խաչատուր Աբովեանցի, “Աերսէս Կաթուղիկոսի, Անեսոր  
Օքաղիաթեանցի, Խնձիճեանի և սոցա նմանների...; վատ չէր  
լինիր եթէ “Աերսեսեան գպրոցը միշտ մի որբ վրացուն ուսում  
տար ի պատիւ բարեյիշատակ վրացի իշխան (Օթար Ամբիլախ-  
վարուն, որը, ինչպէս վկայում են, թէ մի այգի է ունեցել  
Ազանլուի գեղջ և այն էլ լոնձայել “Աերսեսեան գպրոցին:

Հրաժէշտ պիտոյքից, աստիճան առ աստիճան, գիտակցութեամբ և գործնական կերպով շարունակելով այս բոլորը..., այն ժամանակ ազգի բարոյական և նիւթական գրութիւնը օրէց օր կը բարելաւանար, ազգը չէր կարօտիլ օտարի սիրոյն, նա բարոյապէս կը նուածէր իւրեան համար պատուաւոր կեցութիւն և, — իւրեան պիտանի ու հարկաւոր կացուցանելով օտարին, — հաւասարապէս մի և նոյն իրաւունքը, մի և նոյն իշխողութիւնը կ'ունենար նորա հետ, եթէ ոչ առաւել:

Այս մեր ասածը ամենեին չէ վերաբերում քաղաքական կամ զենուորական պաշտօնական ծառայութեանը, ուր որ ստորակարգ տեղ և աստիճան ունեցողը միշտ կախումն ունի և ստորագրեալ է իւրեանից բարձր աստիճան և բարձր տեղ ունեցողներից:

Ճայ ժողովուրդը, ցրուեալ գոլով այլ և այլ իւրեան կլիմայով զանազանուող տեղեր, իւրեան բարօրութեան համար պահանջում է այլ և այլ միջոցներ և պարապելու ձերբ: Եթէ մեր մէջ մասնաւոր գիտնականներ իմաստասիրէին ժողովրդի այսպիսի զանազան գրութիւնները և գիւրին, գործնական և ժողովրդի ձեռնտու միջոցները ցոյց տային այն նոցա գրութիւնը բարելաւանելու, անկասկած ժողովուրդը աստիճան առ աստիճան առաջ կ'երթար: (Օրինակի համար, այն ամենայն անտառազուրկ շրջակայքը, ուր հայ շինականի կինը տարին տասներկու ամիս պարապած է չոր կու (աթար, բտիր, գրաստի աղը) հաւաքել փայտի տեղ այրելու համար, եթէ տեղական քահանաներին և կարգալ գիտցող անձանց ցոյց տային, համոդէին և պացուցանէին անտառ անկելու, ցանելու, կանոնաւոր գործածելու և պահպանելու ստիպողական կարևորութիւնը, ամենադիւրին կերպերը... և այն..., 13—30 տարուայ մէջ, նոյն շրջակայքը կ'ունենային լաւ անտառներ, որոնք տարեցարի կ'աճէին և կը տարածուէին:

Այն տեղեր, ուր որ կայ լիութիւն անտառաց, եթէ մի ազգի առաջադիմութեան անձնանուէր ունեոր մարդ բերեր իւրեան հետ երկու վարպետ հարկաւոր գործիներով և երեք չորս ամիս պահէր մի որ և իցէ գիւղի մէջ, ա) ընտրէր նորա բնակիչներից տասնիւ չափ ընդունակ, ճարտար երիտասարդներ և ուսուցաներ նոցա շինել փայտեղենից զանազան ամաններ և առարկանէր, պնակ, տաշտեր, տակառներ, սայլի ակն, դրգալ... և այլն...; բ) ցոյց տար ժողովրդին այգեգործութեան գործնական և կատարեալ սկզբունքները, գինի քամելու կերպը... և այլն...; գ) մի տասնիւ չափ աղջկանց և կանանց կարգալ գրել ուսուցանէր, որ յետոյ նոքա ուսուցանէին միւսներին; դ) առ հասարակ, հրապարական ընթերցանութիւններ անէր ժողովրդեան պիտանի գիտելեաց. մարմամարզութեան, զինաշարժութեան, ձիավարութեան, լողորդութեան (լող տալու), կաքաւ և նոցա կեանքին, պարտաւորութեանց, իրաւանց և ազգին վերաբերեալ տեղեկութիւններ.... — ոյն կերպ չորս ամսեայ գործունէութիւնը անգամ կ'ունենար մեծ և արդիւնաւոր հետևանքներ: Այսպիսի շարժուն դպրոցներ 2—3 վարժապետից և 2—3 մասնաւորապէս արհեստներ գիտցովներից բաղկացած, մին գիւղից միւս գնացող, ամենայն տեղ 4—8 ամիս ժամանակաւ, ունենալով իւրեան հետ դասատուութեան և ժողովրդեան պիտոյից, նորա ամենատգետ և ամենավեսան նախապաշարմունքները փարատելու գործիքները, կազապարները, նմանապէս լուսանկարչութեան պարագայքը (պատկերները և տեսարանները տպելու); եթէ կազմուէր 3—5 չափ հայաստանի ամենաչքաւոր և անկիրթ ծակ ու մուտերը 3—5 տարի շըջելու և գիւղացիներին լուսաւորելու, քարոզելու, ոգի տալու.... ընկերութիւններ, խումբեր կազմելու.... մեծ և արդիւնաւոր հետևանքներ կունենար, մանաւանդ Ա անայ չորս կողմերը... և այլն....

Պատահած կայ մեր մէջ, որ մի որ և իցէ գիւղի կամ  
քաղաքի ժողովուրդի մի մասը, անբաւական և յուսահատուած  
գոլով նոյն տեղի կամ եպիսկոպոսից, կամ քահանայից և կամ  
կալուածատէրերի կողմից, թողել է իւր հայրենի և մայրենի  
Քրիստոսից հիմնուած իսկ առաքելական և միմիայն Քրիս-  
տոս և ոչ մահկանացու անձն իւր գլուխ ունեցող և ճանաշող  
եկեղեցին և գիմել է դէպ ի օտար գաւանութիւն, գառել,  
զորօրինակ—, կատօլիկ կամ լուտերական:

Եթէ նոյն ժողովուրդը լաւ հասկանար, որ մեր եկեղեցին  
— ժողովուրդականէ, հայ հաւատացելոց (արու և էդ) ժողով  
է և առաւելապէս և ոչ պակաս — վայելում է այն ամենայն  
ազատութիւնները, քան թէ, օրինակի համար, լուտերական  
եկեղեցին; եթէ ժողովուրդը հասկանար, որ մեր եկեղեցւոյ  
մէջ միապետական ինքնակալ կամ ինքնակամ իշխանութիւն չէ  
եղած և չէ լինելու ոչ մի ժամանակ; թէ մեր եկեղեցին չէ ըն-  
դունում իւր վերայ հոռմայ պատի պէս իշխող անսիրական  
անձն<sup>1</sup>; թէ մեր եկեղեցւոյ մէջ միապետական իշխանութիւն  
մուծանել և վարել կամեցող որ և իցէ հոգեսր անձը առաջ  
պիտի քար ու քանդ անէ մեր եկեղեցւոյ բոլոր կանոնները և  
յետոյ կարողանայ մտցնէ մեր եկեղեցական հաւատոյ գործոց  
մէջ միապետական ինքնակամ իշխանութիւն, ասել է թէ, պի-  
տի հերետիկոս համարուի; եթէ ժողովուրդը հասկանում լինի,  
որ մեր մէջ սաստիկ հերետիկոսութիւն պիտի համարուի հա-  
ւատի սրբութեան դէմ կոչել որ և իցէ մահկանացու մարդ՝  
այսաստանեաց եկեղեցւոյ գլուխ կամ պետ, ըստ որում մեր  
եկեղեցւոյ գլուխն է միմիայն ինքն Տէրն մեր Յի-  
սուս Քրիստոս; եթէ բոլոր ժողովուրդը գիտենար, թէ  
այսաստանեաց եկեղեցւոյ իրաւունքը նոյն իսկ  
եկեղեցունն է և ոչ եկեղեցականինը; թէ եկեղե-

<sup>1</sup> Վեր խօսքն մեր վերայ է, կատօլիկների և նոցա գաւանու-  
թեան մասին չէ մեր սասածը.

յական և թէ աշխարհական միասին, այսինքն նոյն իսկ ազգը, ժողովուրդը մի առեղջ կը կազմեն մի ազգ և մի եկեղեցի, ուրեմն այստանեայց եկեղեցւոյ աթոռի իրաւունքը անբաժան է բոլոր ազգից; թէ մեր եկեղեցւոյ գլուխը միմիայն Քրիստոն է, որին ոչինչ տեղակալ հարկաւոր չէ; թէ կամուղիկոսը հոգեորականաց — քահանաների, վարդապետների, եպիսկոպոսների — պէտն է (ինչպէս կ'ասեն նորան, եպիսկոպոսապետ, քահանայապետ), թէ կամուղիկոսը եկեղեցականաց և ազգային ժողովների նախագահ է, առաջուց բոլոր ազգից գրած և ընդունած կանոնների կատարողը և ոչ նոր կանոն գնողը; թէ ազգը լաւ հասկանար որ վճիռ տուողը նոյն իսկ ժողովն է (բայց կանոնաւոր և ազատ ազգային ժողով), այսինքն բոլոր ազգը ներկայացուցիչ և նորանից ազատ և կանոնաւոր ընտրողութեամբ նշանակած հոգեորական և աշխարհական պատգամաւորները; թէ մեր եկեղեցւոյ բոլոր պաշտօնեաց, սարկաւագ, քահանաց, եպիսկոպոս և կաթողիկոս, — սարկաւագ, քահանաց, եպիսկոպոս և կաթողիկոս, օրինօք, պարտաւոր է ձեռնադրել սարկաւագ, քահանայ, վարդապետ և եպիսկոպոս միայն ժողովրդից ընտրած արժանաւոր իւրեանց գիտութեամբ և վարդով անձեր և թէ ժողովուրդը, եթէ դժգոհ է քահանայի կամ եպիսկոպոսի վարուց և բարուց մասին, իրաւունք ունի պահանջել հեռացնել նորան և գատել — , այն ժամանակ մեր ազգակիցները առիթ չէին ունենալ յուսահատուելու, չէին գիմել դեպի ի օտար գաւանութիւն, այլ կ'աքսորէին իւրեանց անարժան եկեղեցականները և նոցա տեղ բերել կը տային միւս եկեղեցականներ, արժանաւոր ժողովով օգտին, ազգին և եկեղեցւոյն հաւատարիմ, գոնեա որ և իցէ ուսում և կրթութիւն ստացած անձինք, վասն զի եթէ երկուսը կամ երեքը վատ են, չէ կարելի եզրափակել թէ վատ են և բոլորը:

Ճառղովթի կատարեալ տգիտութիւնից միայն կարող է պատահել, թէ որ և իցէ աստիճան ունեցող անարժան եկեղեցականների պատճառաւ, փոխանակ հեռացնելու, աքսորելու (դուրս նետելու) նոյնպիսի անարժանները և նոցա տեղը միւս պատուարժան անձներ բերելու, ինքը ժողովուրդը թողում է իւր հայրենի և մայրենի առաքելական, ազատ եկեղեցւոյ գոգը և դիմում դէպի օտար գաւանութիւն:

\* Նոյնպէս ժողովրդի իրաւունքի և պարտականութեան գործ է հսկել, նայել եկեղեցեաց եկամտի վերայ և թէ նորանով և թէ այլ ևս աղբեւրներով ամենայն կերպ աշխատել տեղական քահանաների և գպիրների ապրուստը որքան կարելի է լաւ ապահովացնել ու բարեկարգել ազգային և հոգեոր գպրոցները:

\* Այսոց ազգը գիտէ լաւ սիրել և յարգել իւր հաւատարիմ, ազգային օգտին եւ հաւատոյ սրբութեանը գործով վանձնանուէր եկեղեցականները; Նոյնպիսի պատուական եւ ցանկալի անձներ քաղցրութեամբ, իմաստութեամբ, խելացի կերպով վարելով իւրեանց պաշտօնը —, օրինակ են եղել եւ միշտ լինելու են ազգին անձնանուէր աշխատանաց ի փառս ամենակալին Աստուծոյ և հայոց ազգի բարոյական եւ իրական ամենայն բարեացը հասնելու —, բայց մի և նոյն ժամանակ, ազգը թող չը ծածկէ կոյրի նման իւր աչքերը, որ ոչ ոք չ'համարձակուի և չը հանդգնուի ոչ մի տեղ և ոչ մի դիպուածում ինքնակալաձեւ և ինքնակամ իշխանութիւն վարել հակառակ հայոց նոյն իսկ եկեղեցւոյ սրբազն աղատութեան եւ կանոնների դէմ: Կասկանութեամբ լի փառամու անձներին միշտ հերքել է հայոց, առաքելական, ազատ և սուրբ եկեղեցին, իւրեան թշնամի է համարել նոյնպիսի ներուն և նոյն պիտի անէ ազգը միշտ, — որովհետև հայոց եկեղեցին պարունակուած է նոյն իսկ ազգի մէջ; Եկեղեցին ազգինն է, ազգն է կազմում եկեղեցի և հայոց ազգը ոչ մի ժամանակ այնքան տկարամիտ չի եղել և ոչ մի ժամանակ մին-

չեւ այժմս պատահած չկայ, որ նոյն հայոց ազգը իւր եկեղեցին կուրաբար մի որ և իցէ հոգևորականի յանձնած լինի:

Այենք գիտենք պատմութիւնից, որ այն տեղերը, ուր որ մեր ազգը, սորանից առաջ, պատահել է իրանից շատ գերազանց կրթութիւն ունեցող ազգերի հետ,—այնտեղ նա խառնուել է նորա հետ և մոռացել իւրեան լեզուն և կորել: Այս եղել է հայոց հետ Լեհաստան, Խոտալիայ և Նդկաստան: Այժմս ևս տեսանում ենք, որ կամ կատարվում է նոյնը քանի մի տեղեր, կամ օտարը ծաղը է անում մեր վերայ, երբ որ տեսանում է և լսում մէկ երկու հայ միմեանց հետ կամ օտար բարբառով են խօսում, կամ իւրեանց խօսակցութեան մէջ անդադար տաճիկի, պարսկի, վրացու և ռուսաց բառեր և գարճուածներ են խառնում: Այսու կողմանէ շատ գժուար է, (բայց ո՞չ անկարելի) որ և իցէ լեզուաւ տպագրութեան միջնորդութեամբ կրթութիւն տարածել այն ազգի մէջ, ուր որ ժողովուրդը մի որ և իցէ մաքուր և կանոնաւոր լեզուաւ չէ խօսում, ուր որ նորա գործ ածած լեզուն լի է օտար, գրացի ազգերի բառերով:

Որա Ճանապարհի առաջը կտրել, այսպիսի տիուր գրութեան աստիճանաբար և գործնական կերպով գարման տանել մեծաւ մասամբ կախուած է որ և իցէ գիմնազիական կամ համալսարանական ուսումն ստացող հայերից և ազգային հանդիսագրութենէն: (Օրինակի համար, եթէ Արաստանի և անդր կովկասեան հայոց հայերէն և ոռուերէն (—որ մերայինք երկու լեզուն էլ որոշաբար գիտենային և այդ երկու լեզուն էլ պարզ սովորելու համար—) տպուէր մի օրինաւոր և գործնական կերպիւ յօրինած «խօսակցութեան գիրք» (разговоры) ոռուերէն և հայերէն, փակագիծերի (parenthèse, скобка) մէջ նշանակելով տեղական բարբառով գործածական միւս օտար բառերը, օրինակի համար, վրացու և թուրքի; եթէ տեղական գպրոցների և քաղաքաբնակ ժողովրդի մէջ սովորութիւն դաւ-

նար, տան մէջ, զանազան սենեակներում, որմի (պատի) վերայ կախ արած ունենալ զանգած (քարտոն) թղթի վերայ գրած ամենագործածական բառերը (— տան կահ ու կարասիքի, ուտելու, խմելու վերաբերեալ ամենայաձախ գործածական բառերը), որ, երբ հարկաւոր լինի, նայել նոյն թղթի վերայ նոցա նշանակութիւնը յիշելու համար; երբ նոյն բառերը գերգաստանի բոլոր անդամները սովորեցան և բնութիւն շնչցին միշտ նոցա գործ ածելը, թղթի վերայ գրել միւս, նոր բառեր և կպուցանել նոյն զանգած թղթի վերայ, այս կերպին շատ հեշտութեամբ, աստիճան առ աստիճան, խալով — բոլոր գերգաստանը, մանաւանդ մանուկները, — որոնց յիշողութիւնը առաւել սուր և նուրբ է —, կը ընդելանան իւրեանց բոլոր միտքը հայ բառերով յայտնել և հայու հետ պարզ հայերէն խօսիլ:

Եթէ այսպէս ամենայն հայ իւրեան համար կանոն գարձնէ վերոյիշեալ կամ այլ կերպ այնքան ուսանիլ իւր լիզուն, որ իւր տանը, ծնօղաց, կնոջ, զաւակների, ազգականաց և ամենայն հայ լիզու գիտացողի հետ միշտ պարզ հայերէն խօսի, օտար բառերը չը գործածելով, այն ժամանակ նորա զաւակները կամայ ակամայ կը գիտենան հայերէնը, իւրեանց բնութիւնը կը գարձնեն հայերէն խօսիլը և կը սիրեն հայ լեզուն:

Եթէ մի որ և իցէ հայ առաւ կին, որը հայերէն չը գիտէ և երբ զաւակ ծնի, հայը ը, բնութիւն և կանոն շինէ իւրեան համար միշտ հայերէն խօսի իւր զաւակի հետ, հայ օրորոցի և այլ երգեր երգէ<sup>1</sup>), նոյն երգերից մինը բերանացի

<sup>1</sup> Քնար Հայկականի 110—125 եե. օրորոցի երգեր են; Կոմքի հայերէն թարգմանութեանը «իննամատարութիւն երեխայոց մարմական և բարոյական» գրքի Վ. յաւելուածը, էջ 271—276, նոյնն է; նմանապէս Արարատ ամսագրի, 1870 թ. Հոկտեմբեր, էջ 207—208 և Քնար Հայկականից միւս երգերը, օրինակի համար. Այն աշխարհը պատուական է, ուր

սովորցնել տայ գայեկին և ծծմօրը, որ նոքա է Երգեն, — այսպիսի գիտուածում անկարելի է թէ երեխայն և նոյն իսկ մայրը և օտար, գայեակը չը սովորեն հայերէն:

Եթէ բոլոր վերոյիշեալը (հայ լեզու սովորելու և տարածելու) բնութիւն շինէ իրեան համար և հաստատ մտառութեամբ շարունակէ ամենայն հայուհին, որը ամուսնանում է օտարականի հետ, մի և նոյն հետեանքներ կը լինին և նորազաւակները լաւ հայերէն կը դիտենան: Այս մեր ասածը չէ վերաբերում տէրութեան լեզուներին, որովհետեւ մեր սեպհակն օգուտը և պարտաւորութիւնը պաշանջում են լաւ հմուտ տեղեակ լինելու կառավարութեան գործածական լեզուին և նորա ամենալնտիր գրականութեան հետ. — Ուսւիայում — ոռուսաց, — Տաճկաստանում — տաճկի, Պարսկաստան — պարսից, լեզուների հետ:

Մինչև որ մի կանոնաւոր ոռուս — հայերէն այսպիսի նը-

---

րուսնում է նուռն ու խաղող (257 էջ), Անի քաղաք նստէր կուլայ (477), Հայաստան, քաղցր իմ Հայաստան (225—228), Արամ Երգ (210), Մայր Արաքսի ափերով (192), Արեգակ, արեգակ դուրս արի (185), Ամսոս քեզ Հայոց խեղձիկ ժողովուրդ (134), Տաժակներ առնունք, Եղբարք (365), Եղբայր Եմք մեք (435), Օթձեւնակ (498), Երկու ձեռին երկու մոմ (445), Մեղնից շառ առաջ կար մի թագաւոր (491), Թէ իմ ալեւոր հերքս սևնային (205), Խնձ համար չէ գարնան գալը (497), Վզատ Աստուածն այն օրից (542), Մեր հայրենիք թշուառ անտէր (130), Խաչի քոյ, Քրիստոս, երկիր պագանեմք (60—63), Արի Աստուած հարցն մերոց (59), Օառիս տակը մանուշակ, ջան գիւղում ջան, ջան (158—166), Կոռունկ ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ (146), Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատալ (441), Հայոց Օատիկ (378), Հրեշտակ (581), Հիմի Էլ Խօսենք (203.... 198, 208, 202), Ա Երջին վարդ (501), Կատուն մեռաւ (46 վերջը), Քընէ, բընէ իմ հայրենիք (547), Օտարուհին ինձ ասաց (207), Օրհնութիւն գեղացի երիցի (46 վերջ) և միւսները....:

պատակի նպաստամատոյց լինելու խօսակցութեան գիրք չկայ  
այն գերդաստանների համար, ուր հայերէն կը խօսին, բայց  
օտար բառերը խառնելով—, կարելի էր մի տանի շափ սկզբ-  
բնական դասեր միմիայն ուռւսհայ բառերից բաղկացած յօրի-  
նել (ով երկու լեզու էլ գիտէ) և տպել կամ հայ հանդէսների  
մէջ կամ առանձին թերթերով, իբրև յաւելուած։ Այսպիսի  
և այլ սորա նման աշխատութիւնների համար աւելորդ չենք  
համարում հաշորդել ժողովրդին մեր գիտցած աղքիւրները.

1. Русско-армянский словарь, составленный Гавр.  
Ирицпуховымъ. Тифлисъ. 1854. 8°, стр. 583. II. 3 р.  
Կ առ միջակ աշխատութիւն է, շատ պակաս և սխալ, չը  
հասկացած նշանակութիւններ և այլ թերթութիւններ ունի,  
բայց միւսը չկայ։ Այս տեղ մենք ցոյց կը տանք մի քանի  
բառեր, որ կամեցող կարողանայ համեմատել նոյն խոկ բա-  
ռաբանի հետ։

агитаторъ, աղմկարար, խռովարար.

абсолютизмъ, ինքնիշխանութիւն, բռնաւորութիւն.

абсолютно, ինքնիշխանաբար, տիրաբար, անարգել; կտ-  
տարեալ կերպիւ, կտտարելապէս, կտրական կերպիւ.

автографъ, ինքնագիր.

акомпанировать, նուագագից լինել, նուագակցել.

акомпаниментъ, նուագակցութիւն, գաշնակցութիւն.

адъютантъ, համհարդ; старший адъютантъ, աւագ համ-  
հարդ; флигель-адъютантъ, կայսեր համհարդ; дежурный  
адъютантъ, օրապահ համհարդ; генералъ-адъютантъ, զո-  
րագիր համհարդ կայսեր, կայսեր-համհարդ զօրապահ.

аеролитъ, аэролитъ, շն թաքար, օդաքար.

акционеръ, բաժանորդ, բաժանակից.

акция, բաժանորդութեան թուղթ.

антагонистъ, ընդդիմամարտ, հակառակորդ.

арендовать, կապալւ առնել.

арматура, զինանշանք.

армія, զօրաբանակ; дивізія, զօրաբաժին.  
 артерія, շնչերակ, զարկերակ.  
 архивъ, գիւանատուն.  
 баллотировка, քուէարկութիւն.  
 банкъ, դրամասեղան.  
 баталіонъ, վաշտ; баталіонный командиръ, վաշտապետ;  
 дѣлиться на батальоны, վաշտանալ.  
 билль, օրինագիր.  
 бомба, թունդ, պումբ.  
